

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2005

| ՆԱԽԱԲԱՆ | | |
|------------------|---|-----------|
| | <i>Ողջույնի խոսք</i> | 6 |
| | <i>Ներածական</i> | 6 |
| | <i>Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի վերաբերյալ Աշխարհագրական, դեմոգրաֆիական, պատմական ակնարկ</i> | 6 |
| | <i>Ազգային զեկույցի մեթոդոլոգիա</i> | 17 |
| ԳԼՈՒԽ I | <i>Երիտասարդական քաղաքականությունը ՀՀ-ում</i> | 20 |
| | <i>1.1. Պատմական ակնարկ</i> | 20 |
| | <i>1.2. Պետական երիտասարդական քաղաքականություն, գործող կառույցներ</i> | 21 |
| | <i>1.3. Իրավական կարգավորման մեխանիզմներ</i> | 25 |
| | <i>1.4. Ֆինանսավորման աղբյուրներ</i> | 26 |
| | <i>1.5. Երիտասարդական ուսումնասիրություններ</i> | 27 |
| | <i>1.6. Հիմնական կառույցները, մասնակցային մեխանիզմներ</i> | 30 |
| ԳԼՈՒԽ II | <i>Սոցիալ- տնտեսական ոլորտ</i> | 33 |
| | <i>2.1. Երիտասարդության զբաղվածություն</i> | 34 |
| | <i>2.1.1. Տնտեսության զարգացում և զբաղվածության ընդհանուր ցուցանիշներ</i> | 35 |
| | <i>2.1.2. Երիտասարդության զբաղվածության ընդհանուր ցուցանիշներ</i> | 37 |
| | <i>2.1.3. Վարձատրության խնդիրներ</i> | 42 |
| | <i>2.1.4. Հասարակական աշխատանքներ</i> | 42 |
| | <i>2.2. Երիտասարդ ընտանիք</i> | 43 |
| | <i>2.2.1. Երիտասարդ ընտանիքը Հայաստանում</i> | 43 |
| | <i>2.2.2. Արժեքային կողմնորոշում</i> | 49 |
| | <i>2.3. Արտագաղթ և ներքին միգրացիա</i> | 52 |
| | <i>2.3.1. Արտագաղթը, ներքին միգրացիան և երիտասարդները</i> | 53 |
| | <i>2.4. Սարգային երիտասարդություն</i> | 59 |
| | <i>2.5. Երիտասարդության խոցելի խմբեր</i> | 62 |
| ԳԼՈՒԽ III | <i>Կրթություն</i> | 68 |
| | <i>3.1. Հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն</i> | 70 |

| | | |
|-----------------|---|------------|
| | <i>3.1.1. Դանրակրթություն</i> | 70 |
| | <i>3.1.2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն</i> | 73 |
| | <i>3.2. Բարձրագույն կրթություն</i> | 78 |
| | <i>3.3. Դետրուհական կրթություն և գիտություն</i> | 82 |
| | <i>3.4. Ոչ ֆորմալ կրթություն</i> | 85 |
| ԳԼՈՒԽ IV | <i>Դոգևոր-մշակութային ոլորտ</i> | 90 |
| | <i>4.1. Կրոնը և երիտասարդությունը</i> | 91 |
| | <i>4.1.1. Դայ Առաքելական Եկեղեցի</i> | 92 |
| | <i>4.1.2. Դայ Կաթողիկե Եկեղեցի</i> | 94 |
| | <i>4.1.3. Դայ Բողոքականություն</i> | 94 |
| | <i>4.1.4. Ոչ ավանդական կրոնական կազմակերպություններ և ներփակ հոսանքներ (աղանդներ)</i> | 95 |
| | <i>4.2. Մշակութային մասնակցություն</i> | 97 |
| | <i>4.2.1. Մշակութային մասնակցություն. իրավիճակ և խնդիրներ</i> | 97 |
| | <i>4.3. Ազգային փոքրամասնություններ</i> | 101 |
| | <i>4.3.1. Եզդիներ</i> | 102 |
| | <i>4.3.2. Ռուսներ</i> | 103 |
| | <i>4.3.3. Ասորիներ</i> | 104 |
| | <i>4.3.4. Այլ ազգություններ</i> | 104 |
| | <i>4.4. Արժեքային կողմնորոշումներ</i> | 105 |
| | <i>4.4.1. Ժողովրդավարական արևմտյան արժեքային համակարգ</i> | 106 |
| | <i>4.4.2. Ազգային մշակույթ, արվեստ և հայրենասիրական դաստիարակություն</i> | 107 |
| | <i>4.4.3. Ոչ ֆորմալ արժեքային կողմնորոշումներ</i> | 108 |
| | <i>4.4.4. Դոգևոր արժեքային նոր կողմնորոշում ունեցող խմբեր</i> | 109 |
| | <i>4.5. Ազատ ժամանց</i> | 111 |
| | <i>4.5.1. Իրավիճակը՝ հակիրճ</i> | 111 |
| | <i>4.5.2. Երիտասարդական ազատ ժամանց</i> | 112 |
| ԳԼՈՒԽ V | <i>Երիտասարդերի առողջությունը</i> | 114 |
| | <i>5.1. Երիտասարդների առողջական վիճակը</i> | 116 |
| | <i>5.2. Առողջ ապրելակերպ</i> | 118 |

| | | |
|--------------------|---|-----|
| | 5.3. Առողջության պահպանման վերաբերյալ տեղեկատվության և ծառայությունների մատչելիություն | 120 |
| | 5.4. Սեռական և վերարտադրողական առողջություն(անցանկալի վաղաժամ հղիություն) | 123 |
| | 5.5. ՄԻԱՎ/ՁԻԱԳ և սեռավարակներ | 125 |
| | 5.5.1. ՄԻԱՎ/ՁԻԱԳ-ի իրավիճակը ՀՀ-ում | 125 |
| | 5.5.2. ՄԻԱՎ/ՁԻԱԳ-ը երիտասարդների շրջանում | 126 |
| | 5.5.3.Սեռավարակների տարածվածությունը ՀՀ երիտասարդության շրջանում | 130 |
| | 5.6. Ոգելից խմիչքի և ծխախոտի օգտագործում, թմրամոլություն | 132 |
| ԳԼՈՒԽ V I | Քաղաքացիական և քաղաքական մասնակցություն | 137 |
| | 6.1. Քաղաքացիական մասնակցություն (հասարակական կազմակերպություններ, արհմիություններ, ուսանողական կառույցներ և ակումբներ) | 139 |
| | 6.1.1. Հասարակական կազմակերպություններ | 139 |
| | 6.1.2.Արհմիություններ | 141 |
| | 6.1.3.Ուսանողական կառույցներ և ակումբներ | 144 |
| | 6.2. Քաղաքական մասնակցություն | 152 |
| | 6.3. Երիտասարդական տեղեկատվություն | 155 |
| | 6.3.1.Երիտասարդության տեղեկացվածության մակարդակը | 156 |
| | 6.4. Գենդերային խնդիրներ | 160 |
| | 6.4.1. Գենդերային ասպեկտներ | 161 |
| ԳԼՈՒԽ V I I | Իրավական ոլորտ | 166 |
| | 7.1. Իրավական դաշտ | 166 |
| | 7.1.1.Երիտասարդության քաղաքացիության իրավական կարգավորումը | 168 |
| | 7.1.2.Քաղաքացիական իրավահարաբերություններ | 168 |
| | 7.1.3.Կրթության բնագավառի իրավահարաբերություններ | 169 |
| | 7.1.4.Աշխատանքի բնագավառի իրավահարաբերություններ | 170 |
| | 7.1.5.Ընտանեկան բնագավառի իրավահարաբերություններ | 171 |
| | 7.1.6.Զինվորական և այլընտրանքային ծառայության բնագավառի իրավահարաբերություններ | 171 |
| | 7.1.7.Ընտրական բնագավառի իրավահարաբերություններ | 174 |

| | | |
|----------------------|---|-----|
| | <i>7.1.8. Հասարակական կազմակերպություններին և կուսակցություններին երիտասարդների անդամակցության բնագավառի իրավահարաբերություններ</i> | 174 |
| | <i>7.2. Իրավական իրազեկություն և իրավունքների պաշտպանություն</i> | 175 |
| | <i>7.2.1. Իրավական իրազեկություն</i> | 175 |
| | <i>7.2.2. Իրավունքների պաշտպանություն</i> | 179 |
| | <i>7.3. Քրեական արդարադատություն</i> | 184 |
| | <i>7.3.1. Քրեական արդարադատություն</i> | 185 |
| | <i>7.3.2. Թրաֆիկինգ</i> | 186 |
| ԳԼՈՒԽ V I I I | <i>Տարածաշրջանային և միջազգային համագործակցություն, Սփյուռք</i> | 190 |
| | <i>8.1. Հայկական Սփյուռք</i> | 190 |
| | <i>8.2. Միջազգային համագործակցություն</i> | 192 |
| | <i>8.3. Տարածաշրջանային համագործակցության հեռանկարներ</i> | 196 |
| | <i>Հավելվածներ</i> | 198 |
| | <i>Հեղինակային կազմ</i> | |

Ողջույնի խոսք

Ներածական

Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության վերաբերյալ

Աշխարհագրական, դեմոգրաֆիական, պատմական ակնարկ

Պաշտոնական անվանումը՝

Հայաստանի Հանրապետություն, Հայաստան

Մայրաքաղաքը՝ ք.Երևան

Կազմավորման տարեթիվը՝

1990թ. օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին» Հռչակագիրը, որի հիման վրա էլ 1990թ. օգոստոսի 24-ին ընդունվեց «Հայկական ԽՍՀ-ի վերանվանման մասին» օրենքը: 1991թ. սեպտեմբերի 21-ին անցկացեց անկախության հանրաքվե, որի արդյունքների հիման վրա /99 տոկոս կողմ/ Հայաստանի Հանրապետությունը դարձավ անկախ երկիր, իսկ սեպտեմբերի 21-ը ընդունվեց որպես Անկախության տոն:

Դրոշը՝

Պետական դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն երեք հորիզոնական հավասար շերտերով: «Հայաստանի Հանրապետության պետական դրոշի մասին» օրենքն ընդունվել է ՀՀ Գերագույն Խորհրդի կողմից 1990թ. օգոստոսի 24-ին:

Ձինանշանը՝

Վերականգնվել է Հայաստանի Առաջին Հանրապետության /1918-1920թթ./ զինանշանը, որի հեղինակներն են ճարտարապետ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: «Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի մասին» օրենքն ընդունվել է Գերագույն Խորհրդի կողմից 1992թ. ապրիլի 19-ին:

Օրհներգը՝

Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի 1991 թ. հունիսի 1-ի որոշմամբ, որպես երկրի օրհներգ ընդունվել է Հայաստանի Առաջին Հանրապետության /1918-1920թթ./ օրհներգը: Տեքստը՝ Միքայել Նալբանդյանի /1829-1866 թթ./:

Սահմանադրությունը՝

Առաջին Սահմանադրությունը ընդունվել է 1995 թ. հունիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում, որում 2005թ. նոյեմբերի 27-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում փոփոխություններ են կատարվել:

Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգը

Նախագահը՝

Հայաստանի Հանրապետությունը նախագահական կառավարման ձև ունեցող երկիր է: ՀՀ նախագահին ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով:

Կառավարությունը՝

Կառավարությունը մշակում և իրականացնում է ՀՀ ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հանրապետության նախագահի հետ համատեղ: Կառավարությունը կազմված է վարչապետից եւ նախարարներից: Նախագահը նշանակում եւ ազատում է վարչապետին: Վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է նաև կառավարության անդամներին:

Ազգային ժողովը՝

Հայաստանում օրենսդիր իշխանությունն իրականացնում է միապալատ Ազգային ժողովը: Ազգային ժողովը կազմված է հարյուր երեսունմեկ պատգամավորից /40-ն ընտրվում են մեծամասնական, իսկ 91-ը՝ համամասնական կարգով/: Ազգային ժողովն ընտրվում է համաժողովրդական ընտրությունների միջոցով՝ հինգ տարի ժամկետով:

Դատական իշխանությունը՝

Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան: Հայաստանում ընդհանուր իրավասության դատարաններն են՝ առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը: Գործում են նաեւ տնտեսական, զինվորական, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ դատարաններ: Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով:

Տեղական ինքնակառավարումը՝

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում: Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն է ու կարողությունն է սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական մշակութային հարցերը:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխարհագրական դիրքը`

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ասիայի հարավ-արևմուտքում
հարավից` 38 աստիճան հյուսիսային լայնության 50',
հյուսիսից` 41 աստիճան հյուսիսային լայնության 20',
արևմուտքից` 43 աստիճան արևելյան երկայնության 30',
արևելքից` 46 աստիճան արևելյան երկայնության 00':

Տարածքը`

29743 կմ²

անտառներ` 12.7 %

ջրային տարածք` 5.6 %

Առավելագույն ձգվածությունը`

Հյուսիսից` հարավ-արևելք 360 կմ, Արևմուտքից` արևելք 200կմ

Ծովի մակարդակից միջին բարձրությունը`

1800 մետր

Ամենաբարձր կետերը`

Արագած 4090 մետր

Կապուտջուղ 3906 մետր

Աժդահակ 3598 մետր

Ամենաերկար գետերը`

Արաքս 1072 կմ

Որոտան 179 կմ

Դեբեդ 178 կմ

Հրազդան 146 կմ

Աղստև 133 կմ

Արփա 126 կմ

Ամենախոշոր լիճը`

Սևան 1256.0 կմ²

Օգտակար հանածոները`

Հայաստանում արդյունահանում են ածուխ, երկաթ, բոքսիտներ, մոլիբդեն, ոսկի,
արծաթ, կապար, ցինկ: Զգալի են պենզայի, մարմարի, տուֆի, կրի, պեռլիտի,
բազալտի, աղի պաշարները: Կա նաեւ թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերի մեծ
տեսականի:

Միջին ջերմաստիճանը

Հունվար $-4.6^{\circ}C$

Հուլիս $+16.6^{\circ}C$

Հարեւան երկրները՝

հյուսիսում՝ Վրաստան, արեւելքում՝ Ադրբեջան, հարավում՝ Իրան, հարավ-արեւմուտքում՝ Նախիջեւան /Ադրբեջան/, արեւմուտքում՝ Թուրքիա

Ժողովրդագրությունը

Բնակչությունը՝

3215.8 հազ. մարդ

քաղաքային՝ 2062.3 հազ. մարդ

գյուղական՝ 1153.5 հազ. մարդ

Էթնիկ կազմը՝

96 % հայեր, 4% ազգային փոքրամասնություններ՝ ռուսներ, եզդիներ, քրդեր, ասորիներ, հույներ, ուկրաինացիներ, հրեաներ եւ այլն:

Պետական լեզուն՝

Հայերեն

Կրոնը՝

Բնակչության բացարձակ մեծամասնությունը Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ է:

Եկեղեցին՝

Հայկական առաքելական

Կրոնական կենտրոնը՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որտեղ գտնվում են Հայ առաքելական Եկեղեցու Մայր տաճարը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայրը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմությունն ու մշակույթը ստեղծել է Հայկական լեռնաշխարհում (ընդհանուր առմամբ 300.0 հազար քառակուսի կիլոմետր տարածք), որը տարածվում է Փոքր Ասիայի և Իրանական սարահարթերի միջև՝ հարավում սահման ունենալով Սիջազետքը, հյուսիսում ընդգրկելով Փոքր Կովկասի լեռնաշղթան:

Հայերը հնդեվրոպական ծագում ունեցող ժողովուրդ են, Քրիստոսի ծննդից հազարամյակներ առաջ եղել են մայր ժողովրդի բաղկացուցիչ մասը, որը բնակվում էր հնդեվրոպական նախահայրենիքում՝ Առաջավոր Ասիայի հյուսիսում (ավելի որոշակի՝ Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, Հայկական լեռնաշխարհում, Սիջազետքի հյուսիսում և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան մասում): Ք.ա. 3-2-րդ հազարամյակների ընթացքում սկսվել է հայ ժողովրդի կազմավորումը, որն ավարտվել է Ք.ա. 1-ին հազարամյակի կեսերին՝ միասնական պետության ստեղծմամբ:

Հայերի և Հայկական լեռնաշխարհի մասին պատմական առաջին վկայությունները հայտնի են դեռևս Ք.ա. 28-րդ դարից: Շումերական արձանագրություններում հիշատակվում է Արատտա վաղպետական կազմավորումը, որը նույնանուն է աստվածաշնչյան Արարատ-Հայաստանի հետ: Ժողովրդի ինքնանվանումը և՛ ՀԱՅ, հինարևելյան գրավոր աղբյուրներում վկայվում է Ք.ա. 26-րդ դարից, իսկ Ք.ա. 24-23-րդ դարերից հիշատակվում են նաև օտարների կողմից հայերին ու Հայաստանին տրված ԱՐՄԵՆ և ԱՐՄԵՆԻԱ անվանումների նախաձևերը:

Խեթական աղբյուրները Ք.ա. 15-13-րդ դարերում Հայաստանի հյուսիսային և արևմտյան շրջաններում հիշատակում են Հայասա թագավորությունը (խեթերենում - (a)sa վերջավորությամբ կազմվում էին տեղանունները, այսինքն՝ «Հայասա» նշանակում է «Հայերի երկիր», «Հայք»):

Ք.ա. 12-9-րդ դարերում Արարատյան դաշտում հաստատված և Արմավիրը մայրաքաղաք հռչակած Հայկազունների արքայատոհմի իշխանության շրջանում «Արարատ» (ասուրաբաբելական տարբերակը՝ «Ուրարտու») անունը տարածվում է ողջ լեռնաշխարհի վրա և միջագետքյան հուշարձաններում ու Աստվածաշնչում դառնում «Հայաստան» անվան համարժեքը:

Ք.ա. 9-րդ դարի կեսերին Հայկական լեռնաշխարհում հզորանում է Վանի (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) թագավորությունը՝ Տուշպա (Վան) մայրաքաղաքով: Ք.ա. 8-րդ դարի առաջին կեսին (հատկապես Արգիշտի I-ի օրոք՝ 786-764թթ.) Վանի թագավորությունը դառնում է Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունը:

Վանի (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) թագավորությունն ունեցել է սեփական դպրությունը (կիրառվել է 3 գրահամակարգ՝ ասուրաբաբելական սեպագիր, տեղական սեպագիր, տեղական պատկերագրություն), գրականությունը, զարգացած թվաբանությունը, ճարտարապետությունը: Այդ ժամանակաշրջանի քանդակագործական արվեստի բազմաթիվ նմուշներ այժմ ցուցադրվում են թե՛ Հայաստանում, թե՛ աշխարհի բազմաթիվ թանգարաններում (Սանկտ-Պետերբուրգի Էրմիտաժ, Լոնդոնի Բրիտանական, Բեռլինի Առաջավորասիական, Փարիզի Լուվր և այլն):

Ք.ա. 7-րդ դարի վերջին և 6-րդի սկզբին Հայկազունների արքայատոհմը կրկին վերականգնում է իշխանությունը և մինչև Ք.ա. 201թ. Հայաստանում իշխում է Հայկազունների Երվանդական տոհմը: Ք.ա. VI դարում Հայաստան երկիրը Աքեմենյան Դարեհ I թագավորի Բեհիսթունյան արձանագրության մեջ հին պարսկերեն և էլամերեն հատվածներում հիշատակված է «Արմենիա» անունով, իսկ բաբելոներենում՝ «Ուրարտու», ինչն աներկբա վկայություն է այդ անվանումների հոմանիշ և զուգահեռ գործածության մասին:

Ք.ա. 2-րդից 1-ին դարերում Հայաստանում իշխում է Արտաշես արքայի (Ք.ա. 189-160թթ.) հիմնած արքայատոհմը, որի անունով էլ այն կոչվում է Արտաշեսյան: Արքայատոհմն իր հզորության գագաթնակետին հասավ Տիգրան 2-րդի (Տիգրան Մեծ) օրոք (Ք.ա. 95-55թթ.), որի իշխանությունը տարածվեց նաև Ատրպատականի, Սարաստանի, Հյուսիսային Միջագետքի, Սելևկյան տերության, Փյունիկիայի, Պաղեստինի և Կիլիկիայի վրա (Ք.ա. 66թ. Պոնպետսի արշավանքի հետևանքով այդ նվաճումները զիջվեցին Հռոմին):

Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո Մեծ Հայքը պահպանում է թագավորության կարգավիճակը, որի գահին Հռոմը և Պարթևստանը ձգտում են հաստատել իրենց դրածոներին: Ժամանակավոր անկայունությունն ավարտվում է, երբ Մեծ Հայքի գահն անցնում է հայ Արշակունիների արքայատոհմին (66-428թթ.): 387թ. Հայաստանը բաժանվում է Հռոմի և Պարսկաստանի միջև. երկու տարի անց հռոմեական մասում՝ Արևմտյան Հայաստանում վերանում է թագավորությունը, իսկ Արևելյան Հայաստանում Արշակունիները թագավորում են մինչև 428 թվականը:

Մինչքրիստոնեական Հայաստանում դավանում էին հեթանոսություն: Դիցերի Գերագույն եռյակը կազմում էին ամենաստեղծ հայր աստված Արամազդը, դիցուհի Անահիտը (մայրության և պտղաբերության աստվածուհի) և քաջության, ուժի ու ռազմի աստված Վահագնը: Պաշտվում էին երկնային լույսի և սիրո աստվածուհի Աստղիկը, որին նվիրված էր ամենաժողովրդական տոնը՝ Վարդավառը, ողջախոհության, ընտանեկան օջախի պահպան Նանեն, արեգակի, կրակի ու դարբնության աստված Միհրը, դպրության աստված Տիրը, հյուրընկալության աստված Վանատուրը և այլ աստվածներ:

Քրիստոնեությունը Հայաստանում սկսել է տարածվել հենց 1-ին դարից՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության շնորհիվ: 301 թվականին, առաջինն աշխարհում, Հայաստանը քրիստոնեությունն ընդունել է որպես պետական կրոն:

Հայ մշակույթի ամենամեծ նվաճումներից մեկը գրերի գյուտն է, որով իր և ողջ հայության համար փառքի ուղի կերտեց ազգի երևելի այրերից մեկը՝ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցը, 405 թվականին: Մշակութային հզոր ձեռքբերում լինելուց զատ (հայերենի յուրաքանչյուր հնչյունին համապատասխանում է մեկ գրանիշ) այս գյուտը համահունչ էր նաև ժամանակի հասարակական ու քաղաքական պահանջներին: Այբուբենի ստեղծումը նպաստեց հայ ժողովրդի և նրա մշակույթի պահպանմանը, Հայաստանում քրիստոնեության տարածմանն ու արմատավորմանը, հայերենով ինքնատիպ գրականության ստեղծմանը: Մեզ հասած հայագիր աշխատությունների շարքում նշանավոր են հատկապես հայոց պատմահայր Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու (5-րդ դար), Սեբեոսի (7-րդ դար), Ղևոնդի (8-րդ դար) և շատ այլ պատմիչների երկերը:

5-8-րդ դարերի հայ միջնադարյան գիտական գրականության կարևոր բաժիններից էր իմաստասիրությունը (փիլիսոփայություն): Մայրենի լեզվով ստեղծվում են իմաստասիրական նշանավոր աշխատություններ, թարգմանվում են հույն անվանիների (այդ թվում՝ Պլատոնի, Արիստոտելի) ստեղծագործություններից: Վաղմիջնադարյան հայերեն շատ թարգմանություններ արժեքավոր են անհետացած հունարեն բնագրերի իրողությամբ, քանզի հայտնի են միայն հայերենի շնորհիվ: Հայ մտածողների, հատկապես Եզնիկ Կողբացու և Դավիթ Անհաղթի (5-րդ դար) տեսություններն այսօր էլ հետաքրքրության կենտրոնում են. դրանք վերաբերում են տիեզերքի և շրջապատող բնության երևույթների քննությանը: Իսկ 7-րդ դարի հայ ականավոր գիտնական Անանիա Շիրակացին, որն զբաղվել է մաթեմատիկայով, տիեզերագիտությամբ, աշխարհագրությամբ, բնափիլիսոփայությամբ, տոմարագիտությամբ, խորությամբ ու հանգամանորեն, ինչպես Արիստոտելը և Պտղոմեոսը, բացատրել է երկրի գնդաձևության մասին իր տեսությունը, Արեգակի ու Լուսնի խավարումները և աստղագիտական այլ երևույթներ: Նրա «Աշխարհացոյց» աշխատությունը ներկայացնում է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ երկրագնդի աշխարհագրությունը՝ ժամանակի պատկերացմամբ:

Հիշյալ պատմաշրջանում աննախադեպ ծավալներով զարգացան շինարարական արվեստն ու ճարտարապետությունը: Կառուցվեցին պալատներ, տաճարներ, քարավանատներ, իջևաններ, դամբարաններ, որոնց մի մասը կանգուն է նաև մեր օրերում: Դրանցից են Էջմիածնի Մայր տաճարը (301-303թթ.), Երերույքի եկեղեցին (5-րդ դար), Էջմիածնի Սուրբ Ջոիփսիմե տաճարը (7-րդ դար), Դվինի կաթողիկոսարանի պալատը (6-7-րդ դարեր), Ամբերդի ամրոցը (7-րդ դար) և այլն: Միջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցը Ջվարթնոց տաճարն է (7-րդ դար)՝ եռահարկ, քանդակակերպ, կառուցողական-տարածական ինքնօրինակությամբ աչքի ընկած եզակի մի շինություն:

Հայ Արշակունյաց թագավորության վերացումից (428թ.) հետո Հայաստանի արևելյան մասը Իրանական պետության կազմում կառավարում էին մարզպանները՝ պահպանելով երկրի ներքին ինքնավարությունը (428-630թթ.): Հայաստանի քաղաքական կարգավիճակի վրա էական ազդեցություն ունեցավ արաբների կողմից Իրանի և Բյուզանդիայի արևելյան նահանգների գրավումը: Այս շրջանում Հայաստանի մշակույթը սկսեց ծաղկել, սոցիալ-տնտեսական վիճակն ակնհատորեն բարելավվեց: Սկզբնավորվեց և մեծ թափ ստացավ ամրոցաշինությունը: Ընդունելով արաբների գերիշխանությունը՝ Հայաստանը համառ պայքարում ոչ միայն կարողացավ պահպանել սոցիալ-տնտեսական ու ազգային-մշակութային ինքնատիպությունը, այլև Բագրատունյաց տոհմի գլխավորությամբ վերականգնել պետական-քաղաքական անկախությունը: Հայաստանի թագավորական գահին հաստատված Բագրատունյաց

հարստությունը գոյատևեց ավելի քան մեկուկես դար (885-1045թ.): Այդ ժամանակաշրջանի հայոց հասարակական, տնտեսական ու մշակութային զարգացման բարձր մակարդակի մասին են վկայում Անիի ու Աղթամարի ճարտարապետական հուշարձանները, Գրիգոր Նարեկացու (10-րդ դար) «Մատյան ողբերգության» պոեմը, հայ պատմագիտության բազում նվաճումներ (հեղինակությամբ Զովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Տարոնցի Ասողիկի, Մատթեոս Ուռհայեցու, Արիստակես Լաստիվերցու և այլոց):

12-13-րդ դարերը բյուզանդական նվաճողական քաղաքականության և սելջուկյան արշավանքների դեմ մղած ծանր պայքարի կորստաբեր շրջան էին, սակայն Ջաքարյան իշխանների գերակայության պայմաններում Զայաստանում վերսկսվեց տնտեսական, քաղաքական, մշակութային վերելքը: Այդ ժամանակաշրջանը հայոց մշակույթի պատմության մեջ հայտնի է «Արծաթի դար» անունով՝ որպես ոսկեդարյան շրջանում (V դար) ստեղծված մշակութային արժեքների բնականոն շարունակություն (հայտնի անուններ են Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին):

11-րդ դարում Զայաստանի արևմտյան մասում հռչակված հայկական մի շարք նոր իշխանություններից Ռուբինյաններին հաջողվեց ամրապնդել իրենց տիրապետությունը և Կիլիկիայում վերականգնել հայոց պետականությունը (1080-1375թթ.): Կիլիկյան Զայաստանը տնտեսական ու քաղաքական սերտ կապերի մեջ էր ինչպես արևելյան, այնպես էլ խաչակրաց ու Եվրոպական պետությունների հետ:

10-14-րդ դարերում, թեպետ տարանջատ, Զայաստանի պատմական տարածքում գոյություն ունեին մի քանի հայկական թագավորություններ (Վասպուրական/Վանի, Կարսի, Սյունիքի, Տաշիր-Չորագետի/Լոռու) և իշխանություններ (Օրբելյաններ, Վահրամյաններ, Զասան-Ջալալյաններ): Նոր փուլ էր սկսվում պատմագրության, փիլիսոփայության, աստղագիտության, աստվածաբանության, գրականության, իրավագիտության, մանրանկարչության, ճարտարապետության և այլ ոլորտներում: Գործում էր կրթական երկաստիճան համակարգ: Տարրական դպրոցներում, որոնք հիմնականում կից էին եկեղեցիներին ու վանքերին, ուսուցումը տևում էր 3-4 տարի, դասավանդվում էին ընդհանուր գրագիտություն ապահովող առարկաներ: Զիմնվեցին բարձրագույն դպրոցներ, որոնցից առավել հայտնիներն էին Սանահինի ու Զաղպատի (10-11դդ.), Անիի (11-13դդ.), Գլաձորի (13-14-րդ դդ.), Տաթևի (14-15-րդ դդ.) համալսարանները: Այս կրթարաններն ուսուցանում էին բնական ու հասարակագիտական առարկաներ, օտար լեզուներ, ապահովում բազմակողմանի կրթություն:

10-րդ դարից սկսած՝ հայ գրականության մեջ հիմնավորվում է աշխարհիկ ուղղվածությունը: Նրա սկզբնավորողն ու հիմնադիրը Գրիգոր Նարեկացին էր, որի

տաղերն ու հատկապես «Մատյան ողբերգության» պոեմը թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Դեռևս 8-րդ դարում նշանավոր գործիչ Յովհան Օձնեցին ի մի էր բերել հայոց եկեղեցու ստեղծած օրենքները և կազմել «Կանոնագիրք Յայոցը»՝ հայկական ազգային-եկեղեցական օրենսդրության ժողովածուն: 12-րդ դարում հայ իրականության մեջ առաջինը՝ Մխիթար Գոշը ստեղծում է պատմաիրավագիտական հազվագյուտ մի հուշարձան՝ «Դատաստանագիրքը», որը երկրի կյանքի բոլոր բնագավառները՝ պետական, քաղաքական, քրեական իրավունքի, գույքային, հողային, հասարակական-դասային հարաբերություններն ամփոփող օրենսգիրք է:

Աննախադեպ բարձունք են նվաճում բնական գիտությունները՝ մաթեմատիկան, քիմիան, աստղաբաշխությունը, աշխարհագրությունը:

14-րդ դարից հետո քաղաքական անբարենպաստ իրադարձությունների հետևանքով հայերը կորցրին կենտրոնացված պետականությունը և մասամբ արտագաղթեցին այլ երկրներ, հայկական մշակույթը շարունակեց զարգանալ նաև աշխարհասփյուռ գաղթօջախներում:

Երկար ժամանակ Յայաստանի տարածքում էին ընթանում Օսմանյան պետության և Սեֆյան Իրանի միջև ծայր առած արյունալի պատերազմները: Չնայած այդ դաժան պայքարի աղետալի հետևանքներին, կրած ծանր կորուստներին՝ Յայաստանը 16-18-րդ դարերում մեծ ջանքերի գնով պահպանել է իր ազգային դիմագիծը, պետականության վերականգնման հավատը, մշակութային արժեքների մեծ մասը: Այս ժամանակաշրջանում Յայաստանի ազգային առաջընթացն ապահովելու գործին մասնակցել են նաև հայկական գաղթօջախները: Այսպես. 1512թ. Վենետիկում լույս են տեսել հայերեն առաջին տպագիր գրքերը՝ «Ուրբաթագիրքը», «Պարզատունարը» և այլն: Հիմնվել են նորանոր դպրոցներ, կառուցվել եկեղեցիներ ու վանքեր: Միաժամանակ՝ անվանի գործիչները Յայրենիքի ազատագրության նպատակով դիվանագիտական բանակցություններ են վարել այլևայլ պետությունների հետ, փորձել զինված պայքարով վերականգնել ազգային անկախությունն ու պետականությունը: 1722-1730թթ. Արցախում (Ղարաբաղ) և Սյունիքում ծավալված ազատագրական շարժումները մեծապես նպաստել են հայոց քաղաքական ու ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը: 1736թ. Արցախում կազմավորվել է հայկական հինգ մելիքությունների միությունը (Խամսա), որը Իրանի շահ Նադիրը ճանաչել է որպես ներքին ինքնավարությամբ օժտված վարչաքաղաքական իշխանություն՝ Մելիք Եզանի իշխանապետությամբ:

1801-1828թթ. ամբողջ Անդրկովկասը, այդ թվում Արևելյան Յայաստանը, անցնում են Ռուսական կայսրության գերիշխանության տակ, որը կարևոր նշանակություն ունեցավ երկրամասի սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման առումով: 19-րդ դարի

առաջին կեսը նշանավորվում է Դորպատի (Էստոնիա) համալսարանում հիմնարար կրթություն ստացած Խաչատուր Աբովյանի՝ հայ մեծ լուսավորչի ծավալած ազգաշահ գործունեությամբ: Նա դառնում է հայ նոր գրականության և աշխարհաբար լեզվի հիմնադիրը:

1878թ. Բեռլինի վեհաժողովում, երբ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արևմտահայության ազատագրության հարցը («Հայկական հարց» ձևակերպմամբ)՝ որպես հայկական նահանգներում բարեփոխումների ծրագիր, դարձավ միջազգային դիվանագիտության նյութ, ազատագրական պայքարը թուրքական բռնատիրության դեմ թևակոխեց նոր փուլ: 1885-1890 թվականներին ձևավորվեցին հայ ազգային կուսակցությունները՝ Արմենականները, Հնչակյանները և Հայ հեղափոխական դաշնակցությունը, որոնք իրենց ողջ գործունեությունը նպատակաուղղեցին Հայկական հարցի լուծմանը:

Օսմանյան սուլթան Համիդ 2-րդը չիրագործեց եվրոպական տերություններին խոստացած հայկական բարեփոխումները, ավելին՝ 1894-1896թթ. կազմակերպեց հայ բնակչության զանգվածային կոտորածներ, որոնք դարձան 1915 թվականի ջարդերի նախադեպը:

Օգտագործելով Առաջին համաշխարհային պատերազմի պատրվակը՝ Օսմանյան Թուրքիայի ազգայնական ղեկավարությունը վճռեց ոչնչացնել հայ ժողովրդին, հայաթափ անել նրա բնօրրանը: Հայրենի օջախներում, տեղահանման և արքորի ճանապարհին բնաջնջվեցին մեկ միլիոնից ավելի հայեր, հարյուր հազարավոր գաղթականներ ապաստան գտան աշխարհի տասնյակ երկրներում:

Աշխարհի առաջադեմ մարդկությունը շարունակում է դատապարտել Հայոց ցեղասպանությունը: Եվրախորհրդարանը (1987թ.), բազմաթիվ երկրների խորհրդարաններ (Արգենտինա, Ուրուգվայ, Բելգիա, Հունաստան, Լիբանան, Բուլղարիա, Ռուսաստանի Դաշնություն, Վատիկան, Կիպրոս, Շվեդիա, Ֆրանսիա, Իտալիա, Շվեյցարիա, Կանադա, Նիդեռլանդներ, Սլովակիա) ճանաչել ու դատապարտել են այդ ոճիրը՝ այն գնահատելով որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Պատմական Հայաստանի տարածքի մեծ մասը զբաղեցրած Թուրքիայում հայաթափումն ուղեկցվեց հայ մշակույթի հուշարձանների ոչնչացմամբ. ավերվեցին շուրջ 2350 եկեղեցի և մոտ 1500 դպրոց ու վարժարան (ընդհանուր առմամբ ավերվեցին հայկական 66 քաղաք, ավելի քան 2500 գյուղ):

Ողբերգության հետևանքով հարազատ բնօրրանից բռնի տեղահանված ու աշխարհով մեկ սփռված հայերը և նրանց սերունդները բազմաթիվ երկրներում հիմնեցին գաղթօջախներ՝ հայկական Սփյուռքը: Սփյուռքահայությունը շարունակեց արևմտահայ գրականության և արվեստի ավանդույթները, կորուսյալ հայրենիքի

կարոտով ու ցավով, նաև վերադարձի հույսով ստեղծվեցին ազգային և համազգային արժեքներ: Այսպես՝ գրականության ասպարեզում հանդես եկան հայագիր (Շահան Շահնուր, Մնձուրի, Անդրանիկ Ծառուկյան) և օտարագիր (Վիլյամ Սարոյան, Վահե Քաչա, Արթուր Ադամով, Պիտեր Բալաքյան) գրողներ, նկարիչներ (Արշիլ Գորկի, Գառզու, Ժանսեն), կոմպոզիտորներ, երաժիշտներ, երգիչներ (Ալան Յովհաննես, Յանբարձում Բերբերյան, Բարսե Կանաչյան, Տիրան Կառվարենց, Լուսին Ամարա, Շառլ Ազնավուր), կինոգործիչներ (Ռուբեն Մամուլյան, Անրի Վեռնոյ, Ատոմ Էգոյան) և այլ ասպարեզների մեծություններ:

1918թ. մայիսի 28-ին հայ ժողովուրդը վերականգնեց իր պետականությունը, սակայն 1920թ. դեկտեմբերին բոլշևիկյան Ռուսաստանի Կարմիր բանակը նվաճեց Չայաստանի Չանրապետությունը: Չայաստանից անջատվեցին Կարսի մարզը, Սուրմալուի գավառը (բռնակցվեցին Թուրքիային), Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը (բռնակցվեցին Ադրբեջանին): Մնացած փոքր տարածքների վրա ստեղծվեց Խորհրդային Չայաստանը:

Ֆաշիստական Գերմանիայի սանձազերծած Երկրորդ աշխարհամարտի հաղթական ավարտում իր ներդրումն ունեցավ նաև Չայաստանը: 300 հազարից ավելի հայեր իրենց կյանքը զոհեցին այդ պայքարում: 107 հայորդիներ արժանացան ԽՍՀՄ հերոսի կոչման, 4-ը դարձան մարշալ, մոտ 70-ը՝ գեներալ:

Չամաշխարհային պատերազմի ավարտից հետո սկսվեց սփյուռքահայության հայրենադարձությունը, որի շնորհիվ Խորհրդային Չայաստանի բնակչությունն ավելացավ: Նույնիսկ ստալինյան բռնատիրության պայմաններում Չայաստանում տնտեսական ու մշակութային զգալի վերելք արձանագրվեց:

1988թ. դեկտեմբերի 7-ի կործանարար երկրաշարժը ծանր հարված հասցրեց Չայաստանին. զոհվեցին հազարավոր մարդիկ, փլատակվեցին ու ոչնչացան նյութական բազում արժեքներ:

Ադետից առաջ՝ 1988թ. փետրվարին սկսվեց Արցախյան շարժումը: Չամաժողովրդական վերազարթոնքն անկասելի ուժ հաղորդեց վարչահրամայական համակարգից երկիրն ազատագրելու և ժողովրդավարացման ուղով առաջանալու մղմանը: Այդ պայքարի շնորհիվ Լեռնային Ղարաբաղը հաղթեց իրեն պարտադրված պատերազմում և թոթափեց ադրբեջանական ապօրինի տիրապետությունը:

1991թ. սեպտեմբերի 21-ին Չայաստանում անցկացվեց անկախության հանրաքվե, որով վավերացվեց Չայաստանի անկախ Չանրապետության գոյությունը:

1992թ. մարտի 2-ին Չայաստանի Չանրապետությունը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության անդամ: 2001 թվականին մեր երկիրն անդամակցեց Եվրախորհրդին: Ավելի ուշ ընդգրկվեց Արժույթի միջազգային հիմնադրամի, Չամաշխարհային բանկի, Առևտրի միջազգային կազմակերպության և այլ կառույցների

կազմում ու չնայած սոցիալ-տնտեսական որոշակի դժվարություններին, հաստատուն դարձրեց ժողովրդավարացման ընթացքը:

Ազգային զեկույցի մեթոդոլոգիան

Քանակական և որակական հետազոտությունների մեթոդաբանությունը

Սույն հետազոտությունը Հայաստանի երիտասարդության ընդհանուր վիճակի առավել խորը ուսումնասիրության ամենածավալուն փորձն է, որն արվել է վերջին տարիներին: Դա պայմանավորված է նախ և առաջ այն պահանջից ելնելով, որը դրվում է հետազոտական խմբի առջև, այն է՝ ստանալ հնարավորինս լայն և խորը տեղեկություններ երիտասարդության մասին՝ ուղղակի իրենցից, որպեսզի փորձագիտական խումբը հիմնվելով դրանց վրա ի վիճակի լինի կազմել երիտասարդության կյանքի ճշգրիտ պատկերն արտացոլող Ազգային զեկույց:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում է ընդհանուր սոցիոլոգիական տեսությունը: Քանի որ այս ուսումնասիրությունը մեր հիմնախնդրին համակարգային մոտեցման առաջին փորձն է, ուստի առավել շահեկան համարվեց մեթոդաբանական առումով կիրառել միմյանց փոխկապակցված հետազոտական որակական և քանակական մեթոդներ. սոցիոլոգիական հարցում, փորձագիտական հարցում, ֆոկլուս խմբեր:

Հետազոտության առարկան ՀՀ երիտասարդության հիմնախնդիրների համալիրն է՝ իր դրսևորման ներկա փուլում: Հետազոտության օբյեկտը երիտասարդությունն է՝ որպես այդ հիմնախնդիրների կրող:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և երիտասարդության առջև ծառայած սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային, իրավաքաղաքական հրատապ խնդիրները, գտնել դրանց հաղթահարման տարբերակներ: Դրան հասնելու համար հետազոտական խմբի առջև դրվել են հետևյալ խնդիրները.

-պարզել երիտասարդության իրազեկությունը պետական երիտասարդական քաղաքականությանը;

-բացահայտել երիտասարդության արժեքային կողմնորոշումները և դրանցում առկա փոփոխություններում գերակայող միտումները;

-զնահատել նրանց զբազլածության իրական մակարդակը;

-վեր հանել երիտասարդության միգրացիոն մտադրությունները և դրանց պատճառները;

-պարզել երիտասարդության առողջապահական խնդիրները, իրազեկվածությունը թմրանյութերի, ՄԻԱՎ, ՉԻԱՀ և այլ սեռավարակների վնասակար ներգործության մասին;

-պարզել երիտասարդության քաղաքացիական մասնակցության աստիճանը;

-իմանալ նրանց վերաբերմունքը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում առկա բացասական երևույթների նկատմամբ;

-պարզել երիտասարդության կրթությանը, հանգստին ու ժամանցին առնչվող հիմնախնդիրները և այլն: Մի խոսքով, խնդիրների շրջանակը չաձազանց լայն է , ինչը ևս մեկ անգամ ընդգծում է հետազոտության կարևորությունը:

Ահա այս խնդիրներից ելնելով է որոշվել ընտրել ուսումնասիրության վերոհիշյալ մեթոդները:

Բնականաբար, կազմվել, փորձագետների հետ համաձայնեցվել է հարցաթերթերի, ֆոկլուս խմբերի ուղեցույցերի բովանդակությունը /Տես հավելված 1/:

Քանակական հետազոտության ընտրանքը

Ուսումնասիրության գլխավոր համախմբությունը ՀՀ 16-30 տարեկան բնակչությունն է, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության մոտ 25 տոկոսը, կամ ըստ պաշտոնական վիճակագրության՝ 840 հազար մարդ: Մեր կողմից հարցմանը մասնակցելու նպատակով ընտրվել է 1000 մարդ, ինչը կազմում է գլխավոր համախմբության 0.012 տոկոսը: Ընտրանքը համամասնական է՝ ըստ մարզերի, քաղաքային ու գյուղական բնակչության, սեռի և տարիքի: Հարցվողները բաշխվել են երեք տարիքային խմբերում՝ 16-18, 19-25, 26-30: Բնակավայրերի ընտրությունը կատարվել է տիպային մոտեցմամբ/Տես հավելված 2/:

Հարցումներն անցկացվել են ուղղակի հարցազրույցի ձևով, երբ հարցազրուցավարի հարցերին անմիջականորեն, առերես պատասխանում է հարցվողը: Դրանք կատարվել են փետրվարի 2-ից 20-ը “Սոցիում” ՀԿ 30 հարցազրուցավարների կողմից: Լրացված հարցաթերթիկները ստուգվել են, կողավորվել և ենթարկվել համակարգչային մշակման սոցիոլոգիական տվյալների մշակման SPSS հատուկ ծրագրով, որը թույլ է տալիս արդյունքները խմբավորել ըստ տարբեր պարամետրերի և գտնել համահարաբերակցական/կորելիացիոն/ կապերը , կառուցել տարբեր դիագրամներ, աղյուսակներ, սխեմաներ:

Որակական ուսումնասիրությունների համար, ինչպես նշվեց, դիմել ենք փորձագետների միանգամյա հարցման և ֆոկլուս խմբային մեթոդների:

Փորձագիտական հարցման թեմաներն են՝

ա) երիտասարդության զբաղվածություն, գործարարություն

բ) երիտասարդական քաղաքականության առաջնահերթ խնդիրները:

Ընդգրկվել են համապատասխանաբար 8 և 12 փորձագետներ:

Ֆոկլուս խմբերի թեմաներն են՝

ա) երիտասարդ ընտանիք,

բ) երիտասարդության կրթական հիմնախնդիրներ,

գ) երիտասարդության համագործակցություն:

Այս մեթոդի էությունն այն է, որ նախապես առանձնացված հարցերի շրջանակը հատուկ մեթոդներով ընտրված մասնակիցների հետ քննարկվում է զրույցը վարողի՝ մոդերատորի միջոցով և կարծիքների փոխանակման արդյունքում վերհանվում են որոշակի հիմնախնդիրներ կամ դրանց լուծման հնարավոր ուղիներ:

Ֆոկուս խմբերին մասնակցել են 28 երիտասարդներ, քննարկումների ողջ ընթացքը տեսագրվել և ձայնագրվել է: Որակական հետազոտությունների նյութերը վերծանվել են, նշակվել և խմբագրվել:

ԳԼՈՒԽ I

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1.1. Պատմական ակնարկ

Խորհրդային Միության փլուզումից հետո երիտասարդության հոգևոր-բարոյական դաստիարակության ոլորտում զգալի բաց առաջացավ: Դրա անմիջական պատճառը մինչ այդ Խորհրդային Միությունում գոյություն ունեցած գաղափարական դաստիարակության պետական համակարգի մերժումն էր, որը հիմնված էր արդեն կայացած կառույցների վրա՝ «հոկտեմբերիկություն», «պիոներություն», «կոմերիտականություն»: Գաղափարական դաստիարակության այդ համակարգի մերժման հետևանքով հաջորդ տասնամյակում անհնարին դարձավ երիտասարդության հոգևոր-գաղափարական կյանքի և ընկալումների վերահսկումը: Դա կարելի է բացատրել գաղափարախոսական որևէ համակարգի բացակայությամբ: Ուստի պատահական չէր, որ երիտասարդությունը մեծ մասամբ մերժեց արժեքային ծանոթ համակարգը:

Տնտեսական վերափոխումների և պետականության ամրապնդման մեր ժամանակներում արմատապես փոխվում են ոչ միայն տնտեսության, այլև հասարակական հարաբերությունների, բարոյահոգեբանական արժեքների համակարգերը: Կատարված փոփոխություններն ստեղծում են միանգամայն նոր իրավիճակ, որն ունի իրեն հատուկ զարգացման օրինաչափությունները:

Անցումային շրջանի բոլոր հասարակությունների նման՝ Հայաստանում ևս, հասարակական առանձին խմբերի, շերտերի ձևավորման բուռն գործընթացը հիմնականում ինքնակարգավորվող բնույթ ուներ:

Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված երիտասարդական կազմակերպությունները երիտասարդության փոքր մասն էին ընդգրկում և միմյանց գոյության մասին տեղեկություն անգամ չունեին: Երիտասարդական քաղաքականության իրականացման մի շարք գործառույթներ կազմակերպություններն իրենք էին տարերայնորեն հանձն առել՝ առանց պետական համակարգված, նպատակաուղղված աջակցության: Երիտասարդության վրա բարդվել էին ոչ միայն հասարակությանը, այլև հենց իրեն՝ երիտասարդությանը հատուկ սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմնախնդիրներ:

1990-ականների վերջերից բավականին աշխուժացել է երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական պետության կայացման

գործում: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գրանցված է մոտ 3000 հասարակական կազմակերպություն: Նրանց մոտավորապես 50%-ը կամ երիտասարդական են, կամ զբաղվում են երիտասարդության խնդիրներով:

1.2. Պետական երիտասարդական քաղաքականություն, գործող կառույցներ

ՀՀ-ում պետական երիտասարդական քաղաքականությունը, որպես համակարգված քաղաքականություն, իրականացվում է 1995 թվականից:

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունն է: Նախարարության աշխատակազմում 1995թ. ստեղծվել է երիտասարդության հարցերի (այժմ՝ երիտասարդական քաղաքականության) վարչությունը, ինչը երիտասարդական հասարակական դաշտի կարևորագույն ձեռքբերումներից է:

1998թ. նախարարության ներսում կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ, ըստ որի առանձնացվեցին փոխնախարարների կոորդինացման ոլորտները, և որպես առանձին ուղղություն, վերաձևավորվեց «երիտասարդության հարցերի» ոլորտը՝ 2002թ.-ին վերանվանվելով «երիտասարդական քաղաքականության» ոլորտի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատվեց պետական երիտասարդական քաղաքականության ոլորտին առնչվող առաջին փաստաթուղթը՝ **«Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը»:**

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 734 որոշմամբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության վարչապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը:

ՀՀ Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման գործում, կառուցվածքային փոփոխություններից բացի, ստեղծվել են նաև պետական նոր կառույցներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 11-ի թիվ 520 որոշմամբ ստեղծվել է «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամը, որի նպատակն է հանրապետության, Սփյուռքի և արտասահմանի երիտասարդության համագործակցության զարգացումը, համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը: Կենտրոնին Ծաղկաձորում տրամադրվել է շենք և տարածք, որը կարող է հավակնել Եվրախորհրդի տարածաշրջանային երիտասարդական կենտրոն դառնալու կարգավիճակի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի թիվ 418 որոշմամբ ստեղծվել է «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի նպատակն է երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ¹ 2004 թվականին ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում վերականգնվեց երիտասարդության հարցերի մասնագետի հաստիքը:

Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում 2005թ. սկզբին ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (Յունիսեֆ) աջակցությամբ մշակված և ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարություն» փաստաթուղթը: Փաստաթղթի պատրաստման նպատակով ստեղծված աշխատանքային խմբում ընդգրկված էին փորձագետներ ՀՀ պետական կառավարման մարմիններից և երիտասարդական հասարակական կազմակերպություններից:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության նպատակն է՝ բարելավել երիտասարդների կենսապայմանները, կազմակերպել նրանց հանգիստը և բարձրացնել նրանց մասնակցության աստիճանը հասարակական, քաղաքական զարգացումներին: Այն ներառում է երիտասարդներին առնչվող հասարակական-քաղաքական, սոցիալական և մշակութային խնդիրներ: Սույն ռազմավարության մեջ երիտասարդությունը անմիջական շահառու է և ծավալվող գործընթացներում իր ավանդը ներդնող կարևոր մասնակից:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության կարևոր նպատակներից է նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համատեքստում կառավարության՝ երիտասարդներին առնչվող գործողությունների լայն շրջանակ ձևավորելը, ըստ որի՝ կառավարությունը նրանց բնորոշ գերակայություններ կսահմանի առաջիկա տարիների համար՝

ա) ծառայությունների և տեղեկատվության մատչելիության բարելավում,

բ) հասարակական-քաղաքական կյանքին մասնակցություն,

գ) երիտասարդների զբաղվածության ապահովում,

¹ ՀՀ վարչապետի 1997թ.-ի դեկտեմբերի 8-ի N598 որոշմամբ ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում նախատեսվում էր ստեղծել երիտասարդության հարցերով մասնագետի հաստիք:

դ) երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ հնարավորությունների ընդլայնում և երիտասարդների մասին իրազեկվածության աստիճանի բարձրացում:

2006թ. նախատեսվում է ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից իր բնույթով աննախադեպ ծրագրի իրականացում. որպես «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցչություններ նախատեսվում է ստեղծել «Մարզային երիտասարդական կենտրոններ»՝ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, որոնց նպատակն է՝ պետական երիտասարդական քաղաքականությունը հասանելի դարձնել մարզերի երիտասարդությանը, ծրագրերում առավել արդյունավետ կերպով ներգրավել նրանց, բարձրացնել մարզերի երիտասարդության իրազեկության մակարդակը երիտասարդական քաղաքականության վերաբերյալ: Մարզային երիտասարդական կենտրոնները ղեկավարվելու են վերոնշյալ կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված կառավարման խորհուրդների կողմից: Երիտասարդական կենտրոնները գործելու են որպես ռեսուրս կենտրոններ, ուր երիտասարդները հնարավորություն կունենան օգտվել իրենց անհրաժեշտ բազմաբնույթ ծառայություններից (իրավաբանական և առողջապահական խորհրդատվություն, համակարգչային ծառայություններ, գրադարան, ընթերցասրահ), կազմակերպվող դասընթացների միջոցով ստանալ գիտելիքներ, մասնագիտական կողմնորոշում, արդյունավետ կազմակերպել իրենց ազատ ժամանակը:

2004թ.-ից հրատարակվում է պետական երիտասարդական քաղաքականության և երիտասարդության հիմնահարցերը լուսաբանող պարբերական, որտեղ լուսաբանվում են ՀՀ-ում երիտասարդության հետ առնչվող իրադարձությունները, վեր են հանվում երիտասարդների առջև կանգնած հիմնախնդիրները, հնարավորություն է տրվում երիտասարդներին և երիտասարդական կազմակերպություններին ներկայացնելու իրենց գործունեությունը, հրապարակավ արտահայտելու կարծիքներ: Պարբերականը նպատակ է հետապնդում բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը երիտասարդության քաղաքականության վերաբերյալ:

2005թ.-ից գործում է ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության էլեկտրոնային վեբ-կայքը (www.youthpolicy.am) հայերեն և անգլերեն լեզուներով: 2006 թվականի ընթացքում կգործի նաև էլեկտրոնային վեբ-կայքի ռուսերեն տարբերակը: 2006թ.-ի սկզբից ամիսը երկու անգամ կհեռարձակվի երիտասարդական հեռուստահաղորդաշար, որը կներկայացնի երիտասարդության կարիքները, խնդիրներն ու սպասումները, կլուսաբանի երիտասարդական հասարակական այն

իրադարձությունները, որոնք դուրս են մնում հիմնական լրահոսից, երիտասարդության պասիվ հատվածին կծանոթացնի հասարակական կազմակերպությունների կյանքին և կխրախուսի միջազգային հանրությանն ինտեգրման գործընթացը:

ՀՀ Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացում կարևորվում է համագործակցությունը տարբեր կառույցների, այդ թվում նաև այլ երկրների պետական երիտասարդական քաղաքականություն իրականացնող մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՀ-ում երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացում ներգրավված են ինչպես պետական, այնպես էլ հասարակական կազմակերպություններ, ինչն ավելի արդյունավետ է դարձնում վերջինիս իրականացումը: Հատկապես կարելի է առանձնացնել համագործակցությունը Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի (ՀԵԱԽ) հետ: 1998թ.-ին ՀԵԱԽ-ին հատկացվել է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով համալրված գրասենյակ:

1998թ-ի դեկտեմբերին ՀՀ Նախագահի հովանավորությամբ ստեղծվել է Համահայկական երիտասարդական հիմնադրամը, որը երիտասարդության հիմնախնդիրների լուծմանն ուղղված կարևորագույն օղակ է: Համահայկական երիտասարդական հիմնադրամի կողմից ֆինանսավորվել և իրականացվել են բազմաբնույթ երիտասարդական միջոցառումներ:

2001թ-ից ՀՀ Վարչապետի հրամանագրով ամենամյա մրցանակներ են տրամադրվում Հանրապետությունում տարվա ընթացքում իրենց հասարակական-քաղաքական, մշակութային և հասարակական կարևորության այլ գործունեությամբ առավել աչքի ընկած երիտասարդներին, երիտասարդական կազմակերպությունների նախագահներին:

ՀՀ նախագահի 2004թ.-ի դեկտեմբերի 24-ի ՆՀ-219-Ն հրամանագրով սամանվել է «Հանրապետության նախագահի երիտասարդական մրցանակ» որոնք շնորհվում են կերպարվեստի և կինոյի, երաժշտության և գրականության բնագավառների տաղանդավոր և շնորհալի երիտասարդ ստեղծագործողներին:

Սկսած 1998թ.-ից մեծ ուշադրություն է դարձվել երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցության և կապերի զարգացմանը: Ակտիվ համագործակցություն է ընթացել միջազգային կազմակերպությունների հետ: Հատկապես կարևոր է նշել Եվրախորհրդի երիտասարդության հարցերի տնօրինության հետ համագործակցությունը (միջազգային կոնֆերանսներ, երիտասարդության հիմնախնդիրներին նվիրված մի շարք ուսուցողական դասընթացներ և հանդիպումներ): 1998թ-ին Եվրախորհրդի երիտասարդության հարցերի տնօրինության խորհրդում ընդգրկվեց ՀՀ ներկայացուցիչը: Այս հարցում 2004 թվականի կարևոր ձեռքբերումներից էր Եվրախորհրդի երիտասարդության

հարցերով ղեկավար կոմիտեի բյուրոյի կազմում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի ընդգրկումը:

Երիտասարդական հասարակական ոլորտի կարևոր ձեռքբերումներից է 2004 թվականի նոյեմբերին «Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդի» Եվրոպայի երիտասարդական Ֆորումի (Youth Forum) լիիրավ անդամ դառնալը (2000թ.-ի ապրիլից ՀԵԱԽ-ը Եվրոպայի երիտասարդական Ֆորումի անդամության թեկնածու էր):

Երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցության զարգացման առումով կարևորվում է, ոչ միայն համագործակցությունը տարբեր կարգի միջազգային կառույցների շրջանակներում, այլ նաև երկկողմանի կապերի հաստատումը, համաձայնագրերի կնքումը և համատեղ ծրագրերի իրականացումը:

1.3. Իրավական կարգավորման մեխանիզմներ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված 2005թ.-ի Հայաստանի վիճակագրական տարեգրքի տվյալների՝ 16-30 տարեկան բնակչության թվաքանակը կազմել է 840200 մարդ, որն ընդհանուր բնակչության 26,1%-ն է:

Երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացումը պահանջում է իրավական դաշտի ապահովում՝ ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման միջոցով: Այս առումով ՀՀ կառավարության 1998թ.-ի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված «Պետական երիտասարդական քաղաքականության» հայեցակարգը առաջին և առաջին, միակ իրավական նորմատիվային փաստաթուղթն է, որում ամրագրված դրույթներով է առաջնորդվում ՀՀ-ում իրականացվող պետական երիտասարդական քաղաքականությունը:

Համաձայն վերոնշյալ փաստաթղթի երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտներ են՝

- ա) Հայաստանի Հանրապետության 16-30 տարեկան քաղաքացիները,
- բ) 16-30 տարեկան օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ այնքանով, որքանով Հայաստանի տարածքում նրանց գտնվելն առաջացնում է համապատասխան պետական մարմինների պարտավորություններ,
- գ) Հայաստանում գրանցված հասարակական այն կազմակերպությունները, որոնց անդամների տարիքը չի անցնում 30-ից կամ որոնք զբաղված են մինչև 30 տարեկան քաղաքացիների շրջանում տարվող աշխատանքներով,
- դ) երիտասարդ ընտանիքները, եթե ամուսիններից մեկի տարիքը չի անցնում 30-ից:

2003թ.-ին ՀՀ Կառավարությունը, ի դեմս ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, ստանձնեց «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը: Օրենքի այս նախագծին վերջնական տեսք տալուց հետո կազմակերպվեցին մի շարք հասարակական քննարկումներ, հաշվի առնվեցին ՀՀ հասարակական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների երիտասարդների և երիտասարդության հիմնախարցերով զբաղվող մասնագետների, պետական այլ մարմինների ներկայացուցիչների կարծիքները: «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ին կայացած նիստում հավանության է արժանացել և օրենքով սահմանված կարգով ներկայացվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, որտեղ էլ արդեն ընդունվել է առաջին ընթերցմամբ:

2005թ. Հայաստանի Հանրապետությունը միացել է Երկարաժամկետ կամավորական երիտասարդական անդրազգային ծառայությունների խթանման կոնվենցիային և Եվրոպայում երիտասարդության տեղաշարժմանը նպաստող երիտասարդական քարտի մասնակի համաձայնագրին:

1.4. Ֆինանսավորման աղբյուրներ

ՀՀ պետական բյուջեից երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի համար նախատեսված է ֆինանսավորում, որը արտահայտվում է առանձին տողով և, որի չափը տարեցտարի ավելանում է՝ ելնելով նախատեսվող նպատակային ծրագրերից:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության զարգացմանը տրվող կարևորությանը՝ ստորև ներկայացվում է երիտասարդական ծրագրերի համար նախատեսված 1997-2006թթ. համար տարեկան բյուջետային հատկացումների պատկերը.

| Տարի | միլիոն դրամ | | | | | | | | | |
|-------------------------------|-------------|--------|--------|--------|--------|---------|---------|---------------------|----------|----------|
| | 1997թ. | 1998թ. | 1999թ. | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. ² | 2005թ. | 2006թ. |
| Ֆինանսավորման չափը | 30 | 58.45 | 85 | 108.5 | 108.5 | 153.075 | 197.875 | 183.811 | 279.9256 | 316.2234 |
| 1997թ. համեմատ աճը տոկոսներով | - | 95% | 180% | 260% | 260% | 410% | 560% | 513% | 933% | 1054% |

² Ծանոթություն. 2004թ.-ի ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարի մեջ ներառված չէ «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն հիմնադրամին» ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից տրամադրված 50 մլն. դրամ գումարը որը ներառված է 2002- 2006թ.թ.-ների գումարներում

Հաշվի առնելով, որ պետության կողմից ՀՀ պետական բյուջեով կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև այլ ոլորտներին տրամադրվող ֆինանսական միջոցների մի մասը ուղղորդվում է երիտասարդներին՝ կարելի է արձանագրել, որ հանրապետության երիտասարդությանն ուղղված պետական ֆինանսավորման չափը շատ ավելի է:

Բացի ՀՀ պետական բյուջեից երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի համար արվող հատկացումներից հանրապետությունում երիտասարդական քաղաքականությանն ուղղորդվող ֆինանսական միջոցների այլընտրանքային աղբյուրների շարքում (տեղական և միջազգային հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ, համայնքային բյուջեներ, բարեգործական կազմակերպություններ և այլն) իր ներդրման չափերով առանձնանում է Համահայկական երիտասարդական հիմնադրամը:

Հիմնադրամն իր 1998-2006թթ. գործունեության արդյունքում իրականացրել է մոտ 600 միլիոն դրամի երիտասարդական ծրագրեր, ինչպես նաև ԲՈՒՀ-ական հիմնադրամների միջոցներով կատարվել է սոցիալապես անապահով և գերազանց սովորող ուսանողների 8 միլիոն դոլարին համարժեք դրամի ուսման վարձերի զեղչեր:

1.5. Երիտասարդական ուսումնասիրություններ

Ներածություն

Երիտասարդական ուսումնասիրությունները հանդիսանում են երիտասարդական քաղաքականության կարևորագույն տարր և միանշանակորեն կարևորվում են բազմաթիվ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկված Ազգային երիտասարդական քաղաքականությունների ինդիկատորների թվում:

Հայաստանում երիտասարդական ուսումնասիրությունները սկսեցին առավել կարևորվել վերջին 5-6 տարիների ընթացքում, իրականացվեցին որոշ աշխատանքներ՝ ձևավորվեց երիտասարդական քաղաքականության դերակատարների և հիմնախնդիրների վերաբերյալ հստակ վերլուծական տվյալներ ունենալու պահանջ:

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը կարևորվում է Եվրոպայի խորհրդի համապատասխան կառույցների կողմից, և այս ուղղությամբ իրականացվում են տարբեր աշխատանքներ: Հարկ է նշել, որ բազմաթիվ երկրներում պատրաստված երիտասարդական քաղաքականության ազգային զեկույցները մշակվել են Եվրոպայի խորհրդի երիտասարդության և Սպորտի տնօրինության մասնակցությամբ: Հայաստանի երիտասարդական ոլորտի կառույցների ներկայացուցիչների մասնակցությունը տարբեր միջազգային ծրագրերին խթանել է ուսումնասիրությունների զարգացումը:

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի զարգացումը

Միջազգային կազմակերպությունների փորձագետների կողմից (Եվրոպայի խորհրդի երիտասարդության տնօրինություն, Ազգային երիտասարդական քաղաքականության միջազգային խորհուրդ և այլն) մշակված Ազգային երիտասարդական քաղաքականությունների ինդիկատորների շարքում նշված է *երիտասարդական ուսումնասիրություններ* հասկացությունը:

Երիտասարդական ուսումնասիրություն(ներ).

Անհատի կամ կազմակերպության կողմից իրականացվող հետազոտական-վերլուծական աշխատանք, որի ուսումնասիրման հիմնական առարկան է հանդիսանում երիտասարդությանն ուղակիորեն առնչվող, վերաբերվող խնդիրը(ները): Պարտադիր չէ, որ ուսումնասիրություն իրականացնող անձը կամ անձիք լինեն երիտասարդ. այստեղ առավել կարևոր է նրանց արհեստավարժ լինելու հանգամանքը:

Նրանց կողմից ընդգծվում է հետազոտական տարրի առկայությունը, որի շնորհիվ կմաշկվեն երիտասարդներին վերաբերվող այնպիսի տվյալներ և գիտելիք, որոնց միջոցով կմշակվի համապատասխան քաղաքականություն և հետագայում կզնահատվի իրականացման ընթացքն ու արդյունավետությունը: Միջազգային փորձագետները այս համատեքստում կարևորում են նաև համապատասխան լսումներն ու երիտասարդության վիճակի, դիրքորոշման ուսումնասիրությունները (attitude surveys on the situation of youth): Անհրաժեշտ է նաև պարբերաբար թարմացնել ուսումնասիրության արդյունքները (երիտասարդական քաղաքականության իրականացման մոնիտորինգ)^{3,4}:

Այս առումով առավել կարևորվում է նաև Եվրոպայի խորհրդի համապատասխան կառույցների մոտեցումը: Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը դեռևս 1967թ.-ին իր «Եվրոպայում երիտասարդության հիմնախնդիրների ուսումնասիրության հանձնարարականում» կարևորել է երիտասարդական ուսումնասիրությունները՝ իբրև անհրաժեշտ ներածական Եվրոպական երիտասարդական քաղաքականության մշակման համար: Հարկ է նշել նաև Նախարարների կոմիտեի 1992թ. երաշխավորությունը /Ռեկոմենդացիան/, որտեղ ուղղակիորեն նշվում է երիտասարդական ուսումնասիրությունների կարևորությունը, սոցիալական հետազոտությունների շարքում երիտասարդական հետազոտությունների խրախուսումը, ինչպես նաև անդամ պետություններին առաջարկվում է հիմնադրել/զարգացնել երիտասարդության խնդիրներին վերաբերվող գրադարաններ:

1990-ական թվականների սկզբներին, երբ ստեղծվեցին բազմաթիվ երիտասարդական և ուսանողական ՀԿ-ներ, առանձնացան որոշ ՀԿ գործիչներ որոնց հետաքրքրության շրջանակներում էր երիտասարդությանն առնչվող տարբեր

³ 11 Indicators of national youth policy. Presented by the Directorate of Youth and Sport of the Council of Europe during the launch of the National Action Plan for Youth Policy in Romania in 2001.

⁴ Basic indicators of a national youth policy. International Council of National Youth Policy, www.icnyp.net

ուսումնասիրությունների իրականացումը: Սակայն այդ շրջանում դեռևս չէր կարևորված *երիտասարդական քաղաքականություն* հասկացությունը ինքնին, որի մշակման և իրականացման կարևորագույն միջոցն է հանդիսանում *ուսումնասիրությունների* ինստիտուտը:

Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը⁵ կարող է հենակետային հանդիսանալ Հայաստանում ազգային երիտասարդական քաղաքականության զարգացման մեկնաբանության տեսանկյունից (թեև բազմաթիվ փորձագետներ այն համարում են զուտ դեկլարատիվ): Ունենալով բազմաթիվ առաջադեմ տարրեր, հայեցակարգը չի անդրադառնում երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտին (սկզբունքների, իրականացման համար անհրաժեշտ առաջնահերթ միջոցառումների և այլ մասերում):

Նույն ժամանակաշրջանում փորձի փոխանակման, միջազգային շփումների ակտիվացման արդյունքում սկսվեց առավել կարևորվել ուսումնասիրությունների անհրաժեշտությունը, հիմնականում որոշումներ ընդունելու գործընթացում օբյեկտիվ տեղեկատվություն ունենալու տեսանկյունից: Բազմաթիվ անգամ քննարկվել էր երիտասարդության ազգային զեկույցի ծրագիրը, որի կարևորությունը արդեն իսկ գիտակցվում էր երիտասարդական քաղաքականության բոլոր հիմնական դերակատարների կողմից:

Առանձին, ավելի փոքր ուսումնասիրություններ իրականացվել են տարբեր կազմակերպությունների կողմից, մասնավորապես Հայկական երիտասարդական կազմակերպությունների ցանցի, «Փարոս» երիտասարդական միություն ՅԿ-ի և այլն⁶:

Երիտասարդական ուսումնասիրությունների համատեքստում կարևոր նշանակություն ունեն մաև ուսումնասիրական այցերը: Հայաստանում մի քանի անգամ տարբեր Եվրոպական երիտասարդական կազմակերպությունների կողմից իրականացվել են նման այցեր՝ այդ կազմակերպություններին Հայաստանի համապատասխան ՅԿ-ների անդամակցության կամ այլ խնդիրների լուծման նպատակով: Հարկ է նշել Եվրոպական երիտասարդական ֆորումի իրականացված ուսումնասիրական (ճանաչողական) այցերը:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանի որոշ կազմակերպություններ նույնպես նախաձեռնել են նմանօրինակ այցեր: Բավականին հետաքրքիր արդյունքներ և մեծ արձագանք ունեցավ 2004թ. աշնանը «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված միջազգային ուսումնասիրական այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

⁵ Հաստատված է ՀՀ կառավարության 1998թ.-ի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ

⁶ Ռ.Մարկոսյան, Ա.Թադևոսյան, Ա.Սիմանյան «Երիտասարդական քաղաքականության, միջազգային համագործակցության և հակամարտությունների կարգավորում» դասընթացի ուսուցողական զեկույց: «Փարոս» երիտասարդական միություն ՅԿ, Երևան, 2002:

Երիտասարդական ուսումնասիրությունների և տեղեկատվության առումով առավել կարևորվում են նաև տարբեր զեկույցների պատրաստումը, պարբերականների տպագրումը և տեղեկատվության մատչելիության խնդիրները: Դեռևս չկան ձևավորված ավանդույթներ, սակայն զգացվում է որոշակի առաջընթաց. ստեղծվել է Երիտասարդական կազմակերպությունների ցանց պորտալը, շուրջ մեկ տարի է ինչ գործում է ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության «Պետական երիտասարդական քաղաքականության կայք էջը», տպագրվում է պարբերաբերթ և այլն:

2006թ.-ին ՀՀ կառավարության հավանությանը արժանացած «Երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007թթ. ռազմավարություն» փաստաթղթի բազմաթիվ դրույթներ հիմնված են տարբեր կառույցների կողմից իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների վրա, որտեղ նշված է, որ «պարբերաբար պետք է ուսումնասիրել և գնահատել երիտասարդների վիճակը»:

Ամփոփում


Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ ներկա փուլում անհրաժեշտ է առավել կանոնակարգել և խթանել երիտասարդական ուսումնասիրությունների իրականացման գործընթացը, տալ երիտասարդական ուսումնասիրությունների չափանիշներ, մշակել մեխանիզմներ այդ աշխատանքների արդյունքների հրապարակման ու քննարկման նպատակով, ինչպես նաև միջոցառումներ իրականացնել ուսումնասիրություն իրականացնողների մասնագիտական աճի նպատակով:

1.6. Հիմնական կառույցները, մասնակցային մեխանիզմներ

Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականությունը, որ պետության կարևորագույն գործառույթներից է, ունի ռազմավարական նշանակություն: Այն կոչված է ստեղծելու ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից, հայրենիքի և ժողովրդի նկատմամբ պատասխանատվության խոր գիտակցում ունեցող երիտասարդ սերնդի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման իրավական, տնտեսական և կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ:

Երիտասարդական պետական քաղաքականությունը երիտասարդական քաղաքականության սուբյեկտների միջոցով իրականացնում են պետական կառավարման մարմինները:

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականություն իրականացնող կառույցները և քաղաքականությանն առնչվող հասարակական կազմակերպություններն ու հիմնադրամները



Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումներին զուգահեռ՝ երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացումը պահանջում է համակողմանիորեն մշակված գործողությունների համալիր ծրագիր, որը հնարավոր է միայն երիտասարդության շրջանում հետազոտական աշխատանքներ կազմակերպելու, հասարակական կազմակերպություններին պետական քաղաքականության ձևավորմանը և իրագործմանը ներգրավելու պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համագործակցելու ճանապարհով: Այս հարցում առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 734 որոշմամբ ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը: Այժմ երիտասարդության հարցերի խորհուրդներ են ստեղծվում Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին կից, որոնց նպատակը տեղերում երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների գործուն

ներգրավվածության և մասնակցության ապահովումն է, երիտասարդությանն առնչվող որոշումների կայացումը և դրանց իրագործումը:

Այսօր երիտասարդական քաղաքականության իրականացման գործում մեծ դեր են խաղում երիտասարդական հասարակական կազմակերպությունները: Երիտասարդական հասարակական կազմակերպությունները հանդիսանալով երիտասարդական պետական քաղաքականության ամենակազմակերպված սուբյեկտը, մշտապես պետք է լինեն պետական երիտասարդական քաղաքականության կրողը և իրականացման գլխավոր միջոցը:

Երիտասարդական պետական քաղաքականության այս կարևոր ուղղության առաջիկա տարիների ռազմավարությունը նախատեսում է հասարակական նախաձեռնությունների և ծրագրերի խրախուսում, հասարակական, քաղաքական զարգացումներին հանրապետական և տեղական մկարդակներում երիտասարդների մասնակցության աստիճանի բարձրացում:

Ամփոփում

Բնական սահմանափակ պաշարներ ունեցող Հայաստանի կառավարման ոլորտում կարևոր նշանակություն ունի մարդկային գործոնը: Երիտասարդները, որոնք Հայաստանի Հանրապետության բնակչության գրեթե մեկ քառորդն են (26,1%), երկրի կարևորագույն ներուժն են:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և հատկապես երիտասարդները պետք է հիմնական հմտություններ ձեռք բերելու և դրանք զարգացնելու հնարավորություն ունենան: Պետք է կարողանան խնդիրներ հետազոտել և լուծել, կատարելագործել հմտությունները, օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, տիրապետեն մայրենի լեզվին, միաժամանակ, խոսեն օտար լեզուներով, ունենան պետական և ազգային մտածողություն, լինեն ֆիզիկապես կոփված, եռանդուն, ազատ և պատասխանատու քաղաքացիներ, որոնց համար գերակա են ազգային ավանդույթների պահպանումը և զարգացումը, Հայաստանի Հանրապետության հզորացումը:

ԳԼՈՒԽ II

ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ


Ներածություն

Խորհրդային Միության փլուզմանը նախորդող վերջին տարիները լի էին տնտեսական ցնցումներով և դժվարություններով: 1988թ. Հայաստանի հյուսիսային շրջաններում (ք. Սպիտակ, Գյումրի, Վանաձոր) տեղի ունեցավ աղետալի երկրաշարժ, զոհվեցին և հաշմվեցին հազարավոր մարդիկ, իսկ ավերիչ հետևանքները երկար տարիներ հնարավոր չեղավ վերացնել:

Հայաստանը հարևան Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ենթարկվեց տրանսպորտային և էներգետիկ շրջափակման (որն, ի դեպ, մինչ օրս չի դադարեցվել): Անկախության առաջին տարիներին երկիրը հարկադրված էր ներքաշվել պատերազմական գործողություններում. եղան բազմաթիվ զոհեր: Երկիր ներգաղթեց ավելի քան 380000 փախստական:

Անցած տարիների ընթացքում Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցան հսկայական փոփոխություններ: Դրանք ունեին բարոյահոգեբանական, արժեքային, կառուցվածքային, իրավական և այլ բնույթ: Ձևավորվեցին նոր իրավատնտեսական հարաբերություններ, ստեղծվեցին հարկային, մաքսային, ֆինանսական և երկրի տնտեսական կյանքի բնականոն ընթացքը ապահովող այլ հաստատություններ: Նախկինում գործող և մեծ համբավ ունեցող արդյունաբերական ձեռնարկությունները դադարեցին աշխատել, իսկ հետագայում ենթարկվեցին մասնավորեցման, որի արդյունքում ձևավորվեց նախկին հասարակարգին խորթ սեփականատերերի խավ:

Վերը նշված և բազմաթիվ այլ գործոնների արդյունքում երկրի սոցիալ-տնտեսական կյանքում առաջացան լուրջ հիմնախնդիրներ, որոնք թողեցին ծանր հետևանքներ:



Նկար 1. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ըստ տարիների ԱՄՆ դոլարով արտահայտված

Սակայն վերջին 4-5 տարիներին երկրի մի շարք տնտեսական ցուցանիշներ ունեն բավականին դրական դինամիկա, որոնք վկայում են տնտեսական աճի մասին: Տարբեր մասնագիտական զնահատականների համաձայն ՀՀ տնտեսական զարգացման ցուցանիշը վերջին տարիներին կազմում է 10-13%:

Խոստում է նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, որը 2005թ.-ին նախորդ

տարվա համեմատ աճել է շուրջ 39%-ով⁷ (նկար 1). Ի դեպ, պետք է հաշվի առնել նաև այն փաստը որ նշված ժամանակահատվածում որոշ չափով դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է: 2005թ. միջին աշխատավարձը (համաձայն պաշտոնապես ներկայացրած հաշվետվությունների) կազմել է 44366 դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 21%-ով: Իսկ միջին կենսաթոշակը 2005թ. կազմել է 11153 դրամ (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է շուրջ 13%): Ի դեպ աղքատության ընդհանուր գիծը մեկ շնչի հաշվով կազմում է 13053 դրամ: Այդուհանդերձ հարկ է նշել, որ տարբեր գնահատականներով երկրի բնակչության շուրջ 50%-ը համարվում է աղքատ⁸: Ըստ էության, տնտեսական գործունեության և աճի արդյունքները հավասարապես չեն բաշխվում հասարակության անդամների միջև. տարբեր ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ Հայաստանի ազգաբնակչությունը խիստ բևեռացված է: Այդ բևեռացումը նվազեցնելու համար կառավարությունը ընդունել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր(ԱՀՌԾ):

Երկրի համար մեկ այլ կարևոր խնդիր է հանդիսանում նաև կոռուպցիան, որի չափերը մտահոգիչ են: Այն հնարավորություն չի ընձեռում լիարժեք զարգանալ տնտեսությանը և ստեղծում է բազմաթիվ խոչընդոտներ: Կառավարության կողմից մշակված է կոռուպցիայի դեպ պայքարի ռազմավարություն:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը լուրջ ազդեցություն է թողնում երիտասարդությանը առնչվող բազմաթիվ խնդիրների վրա: Կրթական, առողջապահական, մշակութային, մասնակցության և մի շարք այլ հարցեր անմիջականորեն կապված են զեկույցի այս գլխում քննարկվող և ամփոփված խնդիրների հետ:

2.1. Երիտասարդության զբաղվածություն

Ներածություն

Բնակչության և, մասնավորապես, երիտասարդության զբաղվածությունը խորհրդային ժամանակաշրջանում չի դիտարկվել որպես լուրջ խնդիր, ավելին՝ այն հանդիսացել է հասարակարգի գաղափարական սյուններից մեկը՝ իբրև սոցիալիստական համակարգի ցայտուն առավելություն (գործազրկության երեւոյթը պաշտոնական ճանաչում ստացավ 1992թ.): Խորհրդային համակարգի փլուզումից հետո՝ 1990-ականների սկզբին, շրջափակման ու էներգետիկ ճգնաժամի ժամանակաշրջանում դադարեցին գործել արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, տեղի ունեցան լուրջ սոցիալ-տնտեսական ցնցումներ, որոնց արդյունքում

⁷ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 և 2006թ. հունվարին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

⁸ ՀՀ կառավարություն, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, 2003:

գործազրկությունը դարձավ կարևորագույն գերխնդիր, հազարավոր մարդկանց կենսամակարդակի անկման ու արտագաղթի պատճառ:

Ներկայումս Հայաստանի երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրը էապես կարևորվում է պետական և ոչ պետական ինստիտուտների կողմից և հանդիսանում գերակա խնդիր: Ջբաղվածության զարգացումը կարևոր խնդիր է հանդիսանում կառավարության համար, որը արձանագրված է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003թ. հունիսի 20-ին հավանության արժանացած «Կառավարության գործունեության ծրագրում»:

2.1.1 Տնտեսության զարգացում եւ զբաղվածության ընդհանուր ցուցանիշներ


Հայաստանի անկախության ձեռքբերումը զուգորդվեց լուրջ հասարակական-քաղաքական ցնցումներով, որոնց պատճառով գրեթե ողջ տնտեսությունը գտնվում էր կաթվածահար վիճակում: Հազարավոր մարդիկ դարձան գործազուրկ:

Գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակների տեսակների), աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

1990-ականների կեսերից որոշ չափով նկատվում էր տնտեսական աշխուժացում և աճ, սակայն, այդուհանդերձ, համաձայն պաշտոնական վիճակագրության տվյալների, մինչեւ 2001 թվականը տնտեսական աճի արդյունքում զբաղվածությունը չի աճել, իսկ 2002 թվականին 1 տոկոս տնտեսական աճը բերել է 0.104 տոկոսային կետով զբաղվածության աճի⁸:

Վերջին տարիներին նախկին խորհրդային երկրների մեջ Հայաստանն ունի համեմատաբար արագ զարգացող տնտեսություն: Համաձայն «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-օգոստոսին» Ազգային վիճակագրական ծառայության ներկայացրած տվյալների, նշված ժամանակաշրջանում նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի աճը եղել է շուրջ 11.7%: Նման կարգի տնտեսական աճ են արձանագրում տարբեր զեկուլյցներում նշված պաշտոնական մակրոտնտեսական ցուցանիշները: Այդուհանդերձ տարբեր փորձագետներ գտնում են, որ բարձր տնտեսական աճի հետ զուգահեռ տնտեսական աճի կառուցվածքը չի նպաստում զբաղվածության վիճակի շոշափելի բարելավմանը:

Գրաֆիկ 1. Բնակչություն, աշխատանքային ռեսուրսներ, գործազուրկներ



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, 2004թ. դրությամբ ՀՀ բնակչության թվաքանակը եղել է 3210 հազար մարդ, որից երիտասարդությունը (16-30 տարեկան) կազմում է շուրջ 840 հազար մարդ կամ 26%-ը:

Աշխատանքային ռեսուրսները գնահատվել են 2008.4 հազար մարդ, որից 1232.4-ը՝ տնտեսապես ակտիվ բնակչություն (զբաղված են տնտեսության ճյուղերում, գյուղացիական տնտեսություններում, ինքնազբաղվածներ, պաշտոնապես գրանցված գործազուրկներ), իսկ 776.0-ը՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն (աշխատունակ տարիքի սովորողներ, տնային տնտեսության մեջ զբաղված աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունը և այլն): Ջբաղվածության ծառայությունում գրանցված 124.8 հազար գործազուրկներից 33.9 հազարը կամ 28.5%-ը կազմել են երիտասարդները⁹:

2005թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքերում սոցիալական պաշտպանության մասին» օրենքը, համաձայն որի զբաղվածություն համարվող գործունեության տեսակներն են՝ գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը, գործատուի աշխատանքային գործունեությունը, անհատ ձեռնարկատիրական գործունեությունը, ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը, ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը: Այստեղ հարկ է նշել, որ մինչև այդ գործող օրենքներում զբաղված էին համարվում աշխատանքով ինքնուրույն իրենց ապահովող անձինք կամ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում աշխատողները: Այսպիսով, օրենքի պահանջներից ելնելով, գյուղական համայնքներում մեխանիկորեն բազմաթիվ իրականում գործազուրկ քաղաքացիներ


⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2004

կհամարվեին զբաղված: Նման խնդիրները, հաշվարկի մեթոդաբան և այլ գործոնները կարող են եական ազդեցություն ունենալ վիճակագրական պատկերի վրա:

2.1.2 Երիտասարդության զբաղվածության ընդհանուր նկարագիր


Ըստ պաշտոնական տվյալների զբաղվածության ծառայությունում գրանցված է 33.9 հազար երիտասարդ, որը կազմակում է երիտասարդության շուրջ 4%-ը: Ձեկույցի շրջանակներում իրականացված հարցման արդյունքներով պարզվել է, որ երիտասարդների շուրջ 22 տոկոսը չունի աշխատանք (այս երիտասարդների թվում չկան ուսանողներ, հաշմանդամներ, ֆիզ. արձակուրդում գտնվողներ և տնային տնտեսուհիներ, ընդ որում, որպես աշխատողների թվի մեջ հաշվարկված են նաև «թաքնված աշխատատեղերում» զբաղվածները): Ի դեպ, երիտասարդների 13.2%-ը չաշխատելու պատճառը ունի «չկա աշխատատեղ», 3.6%-ը՝ «չկա մասնագիտական աշխատանք», իսկ 1.1%-ը՝ «ձեռնարկատիրությամբ զբաղվելու խոչընդոտները»:

Երիտասարդների զբաղվածությունը ըստ ոլորտների և զբաղմունքի.



Հատկանշական է նաև, որ բարձրագույն կրթություն ունեցողների 21.9%-ը չունի աշխատանք, իսկ աշխատանք չունեցողների մեջ նրանց թիվը կազմում է 6%:

Աշխատանք չունեցող երիտասարդներն ըստ տարիքային խմբերի.



Երիտասարդների բաշխումը ըստ տարիքային խմբերի և սեռի.¹⁰

| N | Տարիքային խմբեր | Ընդհանուր երիտասարդ գործազուրկների թվից (%) | Երիտասարդ տղամարդիկ (%) | Երիտասարդ կանայք (%) |
|---|-----------------|---|-------------------------|----------------------|
| 1 | 16-18 | 0.7 | 0.6 | 0.4 |
| 2 | 18-22 | 20 | 34 | 66 |
| 3 | 23-30 | 79.3 | 38 | 62 |

Այս աղյուսակից երևում է, որ երիտասարդ կանանց գործազրկության ցուցանիշները գրեթե կրկնակի անգամ գերազանցում են տղամարդկանց ցուցանիշներին: Այս առումով կարծես թե կարելի եզրակացնել, որ պատկերը համընկնում է ընդհանուր բնակչության ցուցանիշների հետ (2005թ. օգոստոսի վերջի դրությամբ, պաշտոնապես գրանցված գործազուրկների 70.3%-ը կազմել են կանայք):

Սակայն, ըստ փորձագիտական դիտարկումների և ըստ ուսումնասիրության արդյունքների կարող ենք ասել, որ աշխատաշուկայում երիտասարդ տղամարդկանց համեմատ երիտասարդ կանանց համար աշխատանքի առաջարկը հաճախ գերազանցում է՝ հիմնականում ի հաշիվ զարգացող սպասարկման ոլորտի: Ըստ ուսումնասիրության արդյունքների, հարցված երիտասարդ կանանց 35%-ը աշխատանք չունի, իսկ տղամարդկանց՝ 56%-ը: Նշված եզրահանգումն է հաստատում նաև այն փաստը, որ գործատուների կողմից տրվող հայտարարություններում բավականին հաճախ կարելի է հանդիպել տարիքային սահմանափակումների՝ ի օգուտ երիտասարդների, ինչպես նաև ի օգուտ երիտասարդ կանանց:

Անցած տասնամյակում Հայաստանում, ինչպես եւ այլ անցումային երկրներում, արագորեն ընդլայնվել եւ ամրապնդվել է ոչ ֆորմալ զբաղվածությունը՝ ինքնազբաղվածությունը եւ չգրանցված զբաղվածությունը: Ըստ տարբեր գնահատականների, ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը հանրապետության քաղաքային բնակավայրերում տատանվում է զբաղվածների ընդհանուր թվի 30 տոկոսի սահմաններում:

Հարկ է նշել, որ զբաղվածության ուսումնասիրության համար, ինչպես մի շարք այլ ոլորտներում, էապես կարևոր են վիճակագրական տվյալների, տարբեր ցուցանիշների ճշտությունը, դրանց ստացման մեթոդաբանությունը և այլն: ՀՀ կառավարության կողմից 2003թ. օգոստոսի 8-ին հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում նշված է. «Հայաստանում, ինչպես նաև այլ ԱՊՀ երկրներում, զբաղվածության վիճակագրությունը հաշվի չի առնում ստվերային զբաղվածությունը եւ ինքնազբաղվածությունը, որը հիմնականում կենտրոնացված է ծառայությունների ոլորտում: Միևնույն ժամանակ, էականորեն գերազանհատվում է զբաղվածության աստիճանը գյուղատնտեսության ոլորտում, որը հաշվարկվում է որպես գյուղացիական տնտեսությունների անդամների թվաքանակ»:

¹⁰ Սկզբնական տվյալների աղբյուրը Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2004

Այս առումով լուրջ խնդիր են հանդիսանում երիտասարդության զբաղվածության վերաբերյալ խորը և մասնագիտական ուսումնասիրություններն ու տվյալների հավաստիությունը:

Զբաղվածության ծրագրերը ներառում են գործազրկության նպաստները, աշխատանք գտնելու եւ աշխատանքի տեղավորելու օժանդակությունը, գործազուրկների վերապատրաստումը, ինչպես նաեւ գործազուրկներին տրամադրվող դրամական օժանդակությունը: Այդ, ինչպես նաեւ հասարակական աշխատանքների ծրագրերը, իրականացվում են ՀՀ զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնների կողմից, որոնց պահպանման ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից, իսկ իրականացվող ծրագրերը (բացառությամբ հասարակական աշխատանքների, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից) ֆինանսավորվում են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի միջոցներից:

Համաձայն ուսումնասիրության տվյալների, հարցված երիտասարդների 62.6%-ը տեղյակ չեն և չեն լսել Զբաղվածության պետական ծառայության մասին: Տեղյակ անձինք (36.8%) նշել են Զբաղվածության պետական ծառայության հետևյալ գործառույթները.

Հարցման մասնակից երիտասարդների կողմից Զբաղվածության պետական ծառայության գործառույթների մասին իրազեկություն.

| Գործառույթներ | Երիտասարդներ, որոնք նշել են համապատասխան գործառույթը /հնարավոր էր մի քանի պատասխան/, % |
|--|--|
| 1. Գրանցում է գործազուրկներին | 20.3 |
| 2. Տալիս է նպաստներ | 6.5 |
| 3. Մշակում է ոլորտի քաղաքականությունը | 4.2 |
| 4. Կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ | 4.2 |
| 99. Դժվ. են պատ. | 4 |

Երիտասարդների միայն 4.2%-ն էր տեղյակ Զբաղվածության պետական ծառայության կողմից իրականացվող վերապատրաստման/ուսուցման դասընթացների մասին: Հարկ է նշել նաև, որ ԱՀՌԾ-ի 7.1.4. «Զբաղվածության ծրագրեր» գլխում, վերլուծելով առկա վիճակը, նշվում է. «Գործազուրկների վերապատրաստման, ինչպես նաեւ աշխատանքի տեղավորման համակարգը խիստ անարդյունավետ է, իսկ վերապատրաստման արդյունքում կադրերի որակը չի համապատասխանում ներկայիս շուկայի պահանջներին»: Երիտասարդների զբաղվածության խնդիրների լուծման առումով կարևոր է նաև մասնագիտական կողմնորոշման պարագան, սակայն Զբաղվածության պետական ծառայության կողմից իրականացվող մասնագիտական կողմնորոշման խորհրդակցության մասին երիտասարդները տեղյակ չեն:


Այս ցուցանիշները վկայում են զբաղվածության պետական ծրագրերի վերաբերյալ իրազեկության և արդյունավետության ցածր մակարդակի մասին, ինչը լուրջ խոչընդոտ է այս բնագավառում տարվող աշխատանքների արդյունավետության համար: Այս

հարցը առավել կարևորվում է, քանի որ հարցված երիտասարդների 75.5% գտնում է, որ «պետությունը պետք է իր քաղաքացիներին ապահովի աշխատանքով»:

Գործազրկության նպաստ ստանալու իրավունք ունեն այն անձինք, ովքեր առնվազն 12 ամիս մուծել են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Նպաստ ստանալու ժամկետը կախված է նպաստի համար դիմողի աշխատանքային ստաժից եւ տեւում է 6-ից մինչեւ 12 ամիս: Գործատուները նույնպես հաճախ նշում են, որ աշխատանքի կընդունեն աշխատանքի փորձ ունեցող անձանց: Այս մոտեցումը ըստ էության լուրջ խոչընդոտ է երիտասարդներին, քանի որ աշխատանքի փորձը (ստաժը) նախապայման է աշխատանք գտնելուն, իսկ աշխատանքային ստաժ չունեցող երիտասարդներին աշխատանքի ընդունելու խրախուսման մեխանիզմները բացակայում են:

Հետաքրքիր արդյունքներ են ստացվել նաև մասնագիտությամբ աշխատելու հարցի շուրջ: Աշխատող երիտասարդների 56%-ը չի աշխատում իր մասնագիտությամբ:

Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո տեղի ունեցան նաև զգալի գաղափարախոսական փոփոխություններ, որոնց արդյունքում երիտասարդների մոտ բավականին աղավաղված պատկերացումներ են ձևավորվել աշխատանք ունենալու վերաբերյալ: Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են երիտասարդների մոտեցումները նշված խնդրի վերաբերյալ.



Երիտասարդների պատկերացումները, թե ինչ է նշանակում աշխատանք ունենալ՝


1. Եթե շաբաթվա մեջ առնվազն 3-4 օր աշխատում եք,
2. Եթե ստանում եք բավականաչափ բարձր աշխատավարձ,
3. Եթե պաշտոնապես ձևակերպված եք որևէ հիմնարկում,
4. Եթե սեփականատեր եք կամ մշտապես ունեք որևէ եկամուտ:

Ինչպես երևում է՝ միայն 18.9%-ն է կարևորել պաշտոնապես գրանցված (օրենսդրությամբ նախատեսված կարգով) աշխատանք ունենալու հանգամանքը:

Հարկ է նշել, որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդների զգալի մասը շփոթում է Զբաղվածության պետական ծառայությունը մասնավոր հիմունքներով գործող և ըստ էության շահույթ հետապնդող «Աշխատանքի տեղավորման գործակալությունների» հետ: Ներկայումս աշխատանք գտնելու խնդիրը լուծելու նպատակով բազմաթիվ մասնավոր կազմակերպություններ առաջարկում են

իրենց ծառայությունները: Հարցված երիտասարդների 20.5%-ն է դիմել նման ծառայություններին, և սա իսկապես բավականին մեծ թիվ է:

Ստորև բերված գրաֆիկում ներկայացված են աշխատանքի տեղավորման գործակալություններ դիմած երիտասարդների ունեցած արդյունքները:




Մասնավոր աշխատանքի գործակալություններ դիմած երիտասարդների արդյունքները

1. Առաջարկել են սպասել
2. Իրենց առաջարկածն ինձ չի բավարարել
3. Չի եղել մասնագիտական կամ նախընտրելի աշխատանք
4. Աշխատանք են գտել

Հարկ է նշել նաև, որ երիտասարդների շուրջ 20%-ը չի վստահում նման մասնավոր կազմակերպություններին, որի պատճառով չի դիմել նրանց:

Երիտասարդության միջև անցկացվել է հարցում աշխատանքի ընդունվելու համար անհրաժեշտ գործոնների վերաբերյալ: Յուրաքանչյուրը նշել է ըստ հերթականության/կարևորության 3 գործոն, որոնք հետագայում իրենց կշռի ցուցանիշով համապատասխանաբար խմբավորվել են և ստացվել է ամփոփ աղյուսակ:




Այսպիսով ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ըստ երիտասարդների ամենակարևոր գործոնը թերևս հանդիսանում է կրթությունը, այսինքն արհեստավարժ լինելը:

Կարևոր հանգամանք է նաև երիտասարդների սեփական բիզնես ունենալու ցանկությունը: Հարցվածների 64%-ը նման ցանկություն է հայտնել, սակայն նշել են տարբեր խոչընդոտներ այն հիմնելու ճանապարհին, որոնցից 3 ամենաշատ նշվածներն են՝ ֆինանսական խնդիրները, հարկերն ու տուրքերի չափերը և կոռուպցիան:

2.1.3 Վարձատրության խնդիրներ

Հարցված երիտասարդների միայն 3.4%-ն է նշել, որ իրեն մինչև 45000 դրամ աշխատավարձը կբավարարի առաջիկա 1-2 տարիների ընթացքում: Ի դեպ, հարկ է



Միջին անվանական աշխատավարձը ըստ տարիների:

Եկամուտը 50000-100000 դրամի սահմաններում է եղել:

Աշխատավարձի չափի խնդիրն ունի էական նշանակություն, և նույնիսկ բարձրագույն կրթություն ունեցող բազմաթիվ անձինք, ովքեր ունեն աշխատանք, չեն կարողանում բավարարել իրենց նվազագույն կարիքները:

Այս հանգամանքի հետ զուգահեռ հարկ է նշել, որ երիտասարդների 38.7%-ը վստահ է, որ ապագայում կունենա աշխատանք, որը կապահովի նվազագույն կենսապայմանները, իսկ 20.3%-ը վստահ է, որո ապագայում կունենա կենսաթոշակ, որը նույնպես կապահովի նվազագույն կենսապայմանները:

2.1.4 Հասարակական աշխատանքներ

2001 թվականից ՀՀ-ում պետական բյուջեով ֆինանսավորվում է «Նպաստներ՝ աշխատանքի դիմաց» ծրագիրը (500 մլն դրամ՝ 2001 եւ 2002 թթ): Ծրագրի նպատակն է՝ աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների գործազուրկ կամ աշխատանք փնտրող չգբաղված անձանց ժամանակավոր զբաղվածության ապահովումը՝ սոցիալական ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաեւ տարածքների, պատմա-ճարտարապետական հուշարձանների բարեկարգման եւ սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման միջոցով: Այդուհանդերձ պետք է նշել, որ հասարակական աշխատանքների իրականացման պրակտիկան լուծում է միայն կենսական ապահովման խնդիր. այն չի նպաստում զբաղվածության խորքային խնդիրների լուծմանը:

2.2. Երիտասարդ ընտանիք

Ներածություն

Սոցիալական արժեքների հիերարխիայում ընտանիքը զբաղեցնում է

ամենակարևոր դիրքը: Ընտանիքը հասարակության հիմնական սոցիալական ինստիտուտներից է և հետևաբար այն պետք է լինի պետության և հասարակության հատուկ ուշադրության առարկան՝ աջակցություն ստանալով իր գործառույթների լիարժեք իրագործման համար:

ՀՀ-ում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային

պայմանագրերով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Համաձայն «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ»-ի երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտ է հանդիսանում այն ընտանիքը, որտեղ ամուսիններից մեկի տարիքը ոչ ավելի է, քան 30 տարեկանը կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 30 տարեկանը:

Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտմամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ որդեգրման համար արձակուրդի իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, Հոդված 35.

Ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը Հայաստանի Հանրապետությունում հասարակության ու պետության հովանավորության և պաշտպանության ներքո են:

ՀՀ ընտանեկան օրենսգրք, Հոդված 1.

Ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը:

ՀՀ ընտանեկան օրենսգրք, Հոդված 1.


Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ կանանց համար՝ 17, իսկ տղամարդկանց համար՝ 18 տարեկան տարիքի հասնելը:

ՀՀ ընտանեկան օրենսգրք, Հոդված 10.

2.2.1 Երիտասարդ ընտանիքը Հայաստանում


Ըստ Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մարդահամարի արդյունքների՝ 16-30 տարեկան բնակչության թվաքանակը կազմել է 779361 մարդ, որն ընդհանուր բնակչության 24,3%-ն է: Հայաստանի Հանրապետության երիտասարդներից ամուսնացած է 242710-ը, ամուսնալուծված՝ 10215-ը, ընդ որում՝ ամուսնացած տղամարդկանց թիվը 82401 է: 20-29 տարեկան երիտասարդ տղամարդկանց միայն 33,9%-ն է ընտանիք կազմել մինչև երեսուն տարեկանը, իսկ 20-29 տարեկան երիտասարդ կանանցից՝ 60%-ը: 18-19 տարեկան երիտասարդ տղամարդկանցից ամուսնացած են՝ 2,05%-ը, իսկ 17-19 տարեկան կանանցից ամուսնացած են՝ 13,3%-ը:

Երիտասարդության շրջանում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների ընթացքում տրված այն հարցին, թե որն է կանանց և տղամարդկանց ամուսնության օպտիմալ տարիքը, ստացվել է հետևյալ արդյունքը.




Տղամարդկանց համար օպտիմալ տարիք ըստ հարցվածների համարվում է 21-30-ը, իսկ կանանց համար՝ 17-25-ը: Ընդ որում եթե հարցվածների կարծիքը տղամարդկանց անուսնական օպտիմալ տարիքի առումով երկու սեռերի մոտ էլ հիմնականում համընկնում է, ապա կանանց անուսնության օպտիմալ տարիքի առումով տարբերվում է (ըստ հարցված կանանց՝ 17-20 տարեկան՝ 36.5%, ըստ հարցված տղամարդկանց՝ 17-20 տարեկան՝ 53.3%):

Ընտանիք կազմելու կարևորությունը, ըստ երիտասարդների շրջանում կատարված սոցիոլոգիական հետազոտության, ստացել է հետևյալ պատկերը.



Ըստ 2005թ. Հայաստանի վիճակագրական տարեգրքի բերված են 2000-2004թ.թ. ամուսնությունների և անուսնալուծությունների թիվը.



Վիճակագրական տվյալներից երևում է, որ 2000թ. համեմատ ամուսնությունների թիվը 2004թ.-ին աճել է՝ 54,5%-ով, իսկ անուսնալուծությունների թիվը՝ 46,5%-ով: Եթե ամուսնությունների թվի աճը ունի մեծամասամբ դեմոգրաֆիական և մասամբ սոցիալ-

տնտեսական պատճառներ (2004թ.-ին ամուսնության օպտիմալ տարիքի (20-29 տարեկան) երիտասարդների թիվը 2000թ. համեմատ ավելացել է՝ կախված 70-80թ.թ.-երի ծնելիության աճից), ապա ամուսնալուծությունների աճը մտահոգության տեղիք է տալիս:

Կարծում ենք ամուսնությունների թվի աճը կպահպանվի, իր բարձրակետին հասնելով՝ 2019-2021թ.թ., որից հետո կգնա դեպի նվազում:

Երիտասարդ ընտանիքի սոցիալական վիճակը

Տնտեսական անկումը, սոցիալական անհավասարության խորացումը, ավանդական արժեքների քայքայումը և գործազրկության բարձր աստիճանը անկախության առաջին շրջանում վատթարացրել են Հայաստանի բնակչության համարյա բոլոր շերտերի, այդ թվում՝ երիտասարդ սերնդի կենսապայմանները: Անցումը շուկայական տնտեսության գործազրկության բարձր մակարդակ է պայմանավորել նաև երիտասարդության շրջանում: Երիտասարդների գործազրկությունն ավելացնում է արտագաղթողների թիվը և սոցիալ երևույթների տարածումը, այն ազդում է երիտասարդների վրա, ստիպում նրանց կորցնել վստահությունն իրենց ուժերի և ունակությունների նկատմամբ, հետևաբար՝ բացասական ազդեցություն ունի ողջ հասարակության վրա:

Ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների երիտասարդները ընտանիք կազմելու հարցում պարտադիր պայման և խոչնդոտ են համարում ֆինանսական, զբաղվածության և բնակարանային խնդիրները.

Արդյո՞ք ամուսնության համար պարտադիր պայման է (%)

| | | Այո | Ոչ | Դժվ. եմ պատ. |
|----|--------------------------------------|------|------|--------------|
| 1. | Աշխատանք ունենալը | 92.7 | 5.3 | 2.0 |
| 2. | Բնակարան ունենալը | 90.0 | 9.1 | 0.9 |
| 3. | Կրթությունը | 40.8 | 56.0 | 3.2 |
| 4. | Նույն ազգությանը պատկանելը | 40.8 | 56.4 | 2.8 |
| 5. | Նույն կրոնը դավանելը | 72.9 | 22.3 | 1.0 |
| 6. | Հարսնացուի . փեսացուի հարուստ լինելը | 24.5 | 66.1 | 9.4 |

Ձեր կարծիքով ո՞րն է ամենակարևոր խոչընդոտը ընտանիք կազմելու հարցում(%)

| | | |
|-----|---------------|------|
| 1. | Ֆինանսական | 42.5 |
| 2. | Բնակարանային | 19.4 |
| 3. | Աշխատանքային | 15.1 |
| 4. | Առողջական | 14.8 |
| 5. | Անորոշ ապագան | 2.5 |
| 6. | Այլ | 1.0 |
| 99. | Դժվ. եմ պատ | 4.7 |

Ձեր կարծիքով ո՞րն է երիտասարդ ընտանիքի առջև ծառայած ամենակարևոր խնդիրը(%)

| | | |
|-----|------------------------------------|------|
| 1. | Նյութական. ֆինանսական | 41.4 |
| 2. | Բնակարանային | 21.6 |
| 3. | Աշխատանքային | 9.6 |
| 4. | Առողջական | 6.1 |
| 5. | Երեխաների խնամք և դաստիարակություն | 12.0 |
| 6. | Երեխաների կրթություն | 5.7 |
| 7. | Այլ | 0.4 |
| 99. | Դժվ. եմ պատ | 3.2 |

Կարելի է եզրակացնել, որ ընտանիքի կազմավորման և լիարժեք կենսագործունեության համար երիտասարդները առաջնահերթություն են համարում աշխատանքի և բնակարանի առկայությունը, երեխաների խնամքի և դաստիարակության, նրանց կրթության խնդիրները: Գրեթե նույն հիմնախնդիրներից է կախված նաև ընտանիքում երեխաների հնարավոր թիվը ըստ հարցվածների.

Ի՞նչ գործոններից է կախված երեխաների թիվը ընտանիքում(%) մինչև 3 պատասխան).

| | | |
|-----|------------------------|------|
| 1. | Նյութական. ֆինանսական | 70.5 |
| 2. | Բնակարանային | 44.3 |
| 3. | Աշխատանքային | 53.8 |
| 4. | Առողջական | 23.2 |
| 5. | Պետական աջակցությունից | 26.3 |
| 6. | Մոր ցանկությունից | 28.3 |
| 7. | Հոր ցանկությունից | 22.3 |
| 8. | Այլ | 0.1 |
| 99. | Դժվ. են պատ | 2.3 |

Ներկայիս հասարակության զարգացման օրինաչափ փոփոխությունները հանգեցրել են նրան, որ նախկինում գերակայող ավանդական ընտանիքը (գյուղաբնակ, բազմանդամ, բազմազավակ) իր տեղը զիջում է քաղաքաբնակ, մեկ-երկու երեխա ունեցող կամ երեխաներ չունեցող ամուսիններից բաղկացած ընտանիքին: Թեև երիտասարդների 78,6%-ը ցանկություն ունի ունենալ 2-4 երեխա, իսկ 13,4%-ը 5 և ավելի, սակայն 72,7%-ը հնարավոր են համարում 1-2 երեխաների առկայությունը ընտանիքում և միայն 12,2%-ը՝ 3 երեխայի: Այս տենդենցի շարունակելիությունը կարող է ապագայում հանգեցնել լուրջ դեմոգրաֆիական խնդիրների և բնակչության ծերացման: Արդեն այժմ հանրապետությունում ծնելիության մակարդակը 90-ականների սկզբի համեմատ նվազել է երկու անգամ (37,5 հազար՝ 2004թ., 2000թ. համեմատ՝ 9.7% աճ և սա այն դեպքում երբ ամուսնությունների թիվը աճել է 54,5%-ով):

Իսկ ինչ իրավական կարգավորում են ստացել վերոնշյալ սոցիալական խնդիրները և պետական ինչպիսի ծրագրեր են ուղղված դրանց լուծմանը:


Պետության կողմից երեխայի ծննդյան դեպքում տրվում է միանվագ վճար՝ 35000 դրամի չափով, իսկ մինչև նրա մեկ տարին լրանալը խնամող մորը տրվում է ամսական նպաստ՝ 3900 դրամի չափով, եթե նա ծնունդից հետո մեկ ամսվա ընթացքում դիմել է ՀՀ սոցիալական ապահովության հիմնադրամի տարածքային մարմնին: ՀՀ տարածքում առողջապահական հաստատություններում երեխայի ծնունդը և մինչև 7 տարեկանը լրանալը նրանց առողջապահական սպասարկումը անվճար է (իրականացվում է պետպատվերով): Անվճար է նաև ուսուցումը հանրակրթական ուսումնական

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրացման համար:
ՀՀ Սահմանադրություն, Հոդված 34.


հաստատություններում: Սակայն պետք է նշել, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքեր լրիվ անվճար հիմունքներով տրամադրվում են միայն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

Պետության կողմից օրենսդրորեն կարգավորված չեն երիտասարդների զբաղվածության ապահովման (հատկապես՝ ուսումնական հաստատությունները նոր ավարտած, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված երիտասարդներին վերաբերող) և բնակարանային ապահովվածության խնդիրները: Վերջինիս լուծման ուղի կարող է դիտարկվել ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ (20-30 տարով) հիպոթեկային վարկերի տրամադրումը: Ներկայումս Հայաստանյան բանկերի կողմից տրվում են հիպոթեկային վարկեր, սակայն դրանց տրամադրման բարձր տոկոսադրույքների և մարման կարճ ժամկետների պատճառով հասանելի չեն հասարակության մեծամասնության և հատկապես երիտասարդների համար, ինչը հաստատվում է նաև սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներով:


Փորձե՞լ եք արդյոք հիպոթեկային վարկավորմամբ լուծել բնակարանային խնդիր.





Ինչու՞ չեք փորձել.



Ինչու չեք փորձել հարցին «նման խնդիր չունենմ» պատասխանների մեծ տոկոսը բացատրվում է հարցված (ամուսնացած) երիտասարդների ծնողների հետ ապրելու հանգամանքով:



Ամուսնացած երիտասարդների շրջանում կատարված հարցումների արդյունքները ունեն հետևյալ պատկերը.



Հարցումների արդյունքները վկայում են, որ ամուսնացած երիտասարդների 54.7%-ը չունի հիպոթեկային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու խնդիր, ինչը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով.

- ամուսնացած երիտասարդների 44.1%-ը բնակվում է առանձին՝ սեփական տանը,
- հարցված տարիքի ամուսնական զույգերը դեռ ունեն ընտանիքի կայացման և այս առումով ծնողների կողմից սոցիալական աջակցության խնդիր,
- ընտանիքում զավակը միակն է և երիտասարդ ընտանիքը չունի բնակարանային տարածքի բարելավման խնդիր,
- գյուղական բնակավայրերում երիտասարդ ընտանիքներին համայնքների կողմից տրամադրվում են հողատարածքներ և դրանցում տան կառուցման խնդրում աջակցում են ծնողներն ու հարազատները:


Վերջին երեք խմբերին են դասվում ամուսնացած երիտասարդների 10.1%-ը:

Ի դեպ, մայրաքաղաքի և մարզերի, հատկապես բարձր լեռնային, աղետի գոտու և սահմանամերձ գյուղերի երիտասարդության բնակարանային խնդիրները տարբերվում են, և դրանց լուծմանը պետք է ցուցաբերվի տարբերակված մոտեցում: Սոցիալ-տնտեսական խնդիրները իրենց առավել վնասակար ազդեցությունն են թողնում

ծայրամասային, գյուղատնտեսական շահագործման առումով ոչ բարենպաստ գոտիների բնակավայրերի երիտասարդների վրա: Այստեղ առավել արտահայտված է ոչ այնքան բնակելի տարածքի խնդիրը (դրանց մեծ մասից բնակչության վերջին տարիների միգրացիան դեպի մայրաքաղաք, արտերկիր և մարզկենտրոններ հագեցրել է ազատ բնակելի տարածքների առկայության), որքան զբաղվածության, առողջապահական, ազատ ժամանցի, կրթական խնդիրները: Թեև այս ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվում են առանձին քայլեր, ասենք վերանորոգվում են վերոնշյալ բնակավայրերը մարզկենտրոնների հետ կապող համայնքային ավտոճանապարհները, լուծվում են կոմունիկացիոն առանձին խնդիրներ, գազիֆիկացվում են, ստեղծվում կամ վերանորոգվում է ոռոգման համակարգը, սակայն վերոնշյալ բնակավայրերում դեմոգրաֆիական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել պետական ռազմավարական համալիր ծրագրեր:

Անդրադառնալով պետության կամ համայնքների կողմից երիտասարդ ընտանիքներին տրվող սոցիալական աջակցության վերաբերյալ երիտասարդների տեղեկացվածությանը, հարկ ենք համարում նշել, որ այն բավականին ցածր է, ինչի մասին վկայում են կատարված հետազոտությունների արդյունքները, ըստ որի երիտասարդների շուրջ 95%-ը տեղյակ չէ:

Պետության կամ համայնքի կողմից երիտասարդ ընտանիքին տրվող աջակցության ի՞նչ հնարավորությունների մասին եք տեղեկացված.



2.2.2 Արժեքային կողմնորոշում

Ըստ ազգային դաստիարակչության դասական մոդելի՝ ընտանիքը հանդիսանում է հասարակության հիմնաքարը: Երեխայի մեջ ազգային, քաղաքացիական դաստիարակությունը, հայրենասիրությունը սկիզբ է դրվում ընտանիքում: Հետո դրանք

Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար:

ՀՀ Սահմանադրություն, Հոդված 36.

հղկվում են ուսումնական հաստատություններում: Մարդը իր բնույթով լինելով սոցիալական էակ չի կարող դիտվել հասարակությունից անկախ, նրա սոցիալական

կայացման սկիզբը դրվում է ծննդյան օրվանից՝ ճանաչելով և իր գիտակցության մեջ ձևավորելով շրջակա աշխարհը, ընտանիքի անդամների հետ փոխհարաբերվելով, այնուհետև դրանք զարգացնելով հասարակության մեջ՝ փոխհարաբերությունների և շփումների միջոցով:


Մարդու առաջին մուտքը հասարակություն սկիզբ է դրվում դեռևս վաղ տարիքից՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում, բակում իրեն հասակակիցների, ուսուցիչների հետ ունեցած շփումներով: Այստեղ առաջին անգամ երեխայի գիտակցության մեջ տեղի են ունենում լուրջ փոփոխություններ, սկիզբ է դրվում նրա հասարակական գիտակցությանը, նա իրեն զգում է որպես փոքր, սակայն ամբողջական կոլեկտիվի անբաժանելի մասնիկ, որում առաջին անգամ առանձնանում են առաջնորդներ:

Կարևորելով ընտանիքի դերը մարդու սոցիալական կայացման խնդրում՝ դաստիարակությունը պետք է սկսել ընտանիքից:

Երիտասարդների շրջանում արված սոցիոլոգիական հարցման ընթացքում երեխաների դաստիարակության հարցում առանձնացվել է հետևյալ անձանց/ հաստատությունների դերը ըստ կարևորության.

| | |
|---------------------|--------------------------|
| 1. Մայր | 5. Ընտանիքի այլ անդամներ |
| 2. Հայր | 6. Մանկապարտեզ |
| 3. Ամուսնու ծնողներ | 7. Դպրոց |
| 4. Կնոջ ծնողներ | 8. Բակ |

Թեև մինչև դպրոց հաճախելը երեխայի խնամքի վստահության հարցում առաջնային տեղ զբաղեցնում են ծնողները և տատիկներն ու պապիկները, միևնույն ժամանակ նրանց մեծ մասը նշում են երեխայի խնամքով զբաղվող հաստատությունների կամ անհատների ծառայությունների մատչելիությունը.




Երիտասարդների կարծիքով երիտասարդ ընտանիքների առանձնացումը ծնողներից սխալ է, քանի որ երեխան պետք է մեծանա տատիկի և պապիկի հետ: Այդ սերը նրանք չեն կարող ստանալ ո՛չ դպրոցում, ո՛չ էլ մուր-մանկապարտեզում:

Ընտանիքում երեխաների դաստիարակության, նրանց համակողմանի զարգացման պայմանների ապահովման առումով, ելնելով հայկական ընտանիքի առանձնահատկություններից, հարկ է նշել, որ չնայած սոցիալական խնդիրներին, ծնողները երեխաների խնամքը և դաստիարակությունը ապահովելու նպատակով պատրաստ են նույնիսկ ծայրահեղ նյութական զոհողությունների:

Դարերի ընթացքում ձևավորված, խորհրդային տարիներին որոշակի փոփոխությունների ենթարկված հասարակությունը և մասնավորապես հայկական ընտանիքը անկախության տարիներին ձեռք է բերում նոր արժեքային կողմնորոշումներ: Երիտասարդ ընտանիքներում տեղի են ունենում փոփոխություններ: Եթե խորհրդային տարիներին տղամարդիկ կարողանում էին ֆինանսապես ապահովել իրենց ընտանիքը, ապա այժմ տղամարդկանց մեծ մասը այս հարցում ակնկալում են նաև իրենց կանանց աջակցությունը: Ըստ երիտասարդների՝ երբ կինը սկսում է աշխատել նրանց դերն ընտանիքում հավասարվում է: Մյուս կողմից՝ նրանք փորձում են հետևել հայ ընտանիքի ավանդույթներին, այսինքն՝ պատրիարխատին: Ահա այս դեպքում առաջանում է հակասություն և կոնֆլիկտային իրավիճակ:


Կնոջ և տղամարդու այսօրինակ հարաբերություններն արդյոք սպառնո՞ւմ են հայ ընտանիքին: Կարծում ենք ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ գիտելիքներն անհրաժեշտ են: Դրանք պետք է տրվեն արդեն դպրոցից և զարգանան բարձրագույն ուսումնական հաստատություններում: Իսկ այն հարցին թե ինչպիսի՞ն պետք է լինի հայկական ընտանիքը, հարցվողների պատասխանները բաժանվել են հետևյալ կերպ.



Ընդ որում ընտանիք կազմելու հարցում երիտասարդները որպես կարևոր պայման են դիտարկում նույն կրոնին դավանելը (քրիստոնյա լինելը)՝ 72.9% և նույն ազգության պատկանելը՝ 40.8%: Ամուսնական պայմանագրերի և քաղաքացիական ամուսնության վրա հիմնված ընտանիքի կազմման կողմնակիցները կազմում են համապատասխանաբար 4.6% և 5%, ինչը բացատրվում է մեր հասարակությունում դրանց որպես նոր և արևմուտքից ներմուծված լինելուն, ի դեպ ամուսնական

պայմանագրով առաջացող ընտանեկան հարաբերությունները կարգավորված են 33 օրենսդրությամբ:

Եթե Հայաստանում մինչև խորհրդային կարգերի հաստատումը ամուսնական արարողությունը տեղի էր ունենում եկեղեցում և գրանցվում նրա կողմից, իսկ խորհրդային տարիներին քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում (ՔԿԱԳ), ապա այն հարցին թե որտե՞ղ պետք է տեղի ունենա ամուսնական արարողությունը, երիտասարդները տվել են հետևյալ պատասխանները.



2.3. Արտագաղթ եւ ներքին միգրացիա

Ներածություն

Հայաստանի պատմությունը լի է զանգվածային միգրացիայի օրինակներով ու բացառություն չէր նաև 20-րդ դարը, որը սկսվեց և ավարտվեց լայնածավալ միգրացիոն գործընթացներով:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում ձևավորվեցին տարբեր միգրացիոն հոսքեր:

1988 թվականի աղետալի երկրաշարժը Հայաստանի հյուսիսային շրջաններում միգրացիայի առաջին հոսքի պատճառը հանդիսացավ:

Երկրորդ հոսքը ղարաբաղյան հակամարտության հետևանքն էր: Ադրբեջանի տարածքում 1989 թվականին տեղի ունեցած արյունալի ջարդերից հետո հարյուր հազարավոր հայեր գաղթեցին Հայաստան և Ռուսաստան: 1989-1991 թվականների ընթացքում Ադրբեջանից փախստականների թիվը կազմել է 360 հազար մարդ, այնուհետև մոտ 48 հազար փախստականներ գաղթեցին Լեռնային Ղարաբաղից և մոտ 72 հազար՝ Ադրբեջանի հետ սահմանամերձ հայկական գյուղերից¹¹:

1991 թվականի վերջից սկսվեց միգրացիայի երրորդ ալիքը՝ բնակչության զանգվածային արտագաղթը դեպի ԱՊՀ և այլ երկրներ, որը շարունակվեց մինչև 90-ականների վեջը: Ընդհանուր առմամբ, ըստ տարբեր գնահատականների Հայաստանից

¹¹ Տե՛ս Վ. Ե. Խոջաբեկյան, «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին», Երևան 2001, էջ 283 և 289:

արտագաղթել է 1 միլիոն 100 հազար մարդ: Ուշագրավ է նաև այն, որ արտագաղթածների մոտ 70%-ը Հայաստանը լքել է հենց վերոնշյալ ժամանակահատվածում¹²: Այս ժամանակաշրջանում միգրացիայի հիմնական պատճառը Հայաստանում բարդ սոցիալ-տնտեսական վիճակն էր, որը հանդիսանում էր երկրաշարժի, Ղարաբաղյան երկարաձգված հակամարտության, տրանսպորտային շրջափակման, էներգետիկ ճգնաժամի և այս ամենից բխող կենսամակարդակի շեշտակի անկման արդյունք: Հայերի էմիգրացիան հեշտանում էր արտասահմանում մեծ հայկական սփյուռքի գոյությանը և ավանդական դարձած սեզոնային միգրացիայի առկայությանը:

Եվ վերջապես միգրացիայի վերջին՝ չորրորդ, ալիքը սկսվեց 1999-2000թթ.-ից և շարունակվում է մինչև այժմ: Այս փուլն հիմնականում առանձնանում է սոցիալ-կենցաղային էմիգրացիայի փոխարինմամբ, այսպես կոչված, սոցիալ-հոգեբանական էմիգրացիայով, որի հիմքում ընկած են ընտանիքների վերամիավորմանը նպատականդված էմիգրացիան, սոցիալ-տնտեսական իրավիճակը: Այսինքն, առավելապես ռեէմիգրացիայով ավարտվող հոսքին փոխարինելու է եկել որպես կանոն բնակավայրի մշտական փոփոխություն բերող էմիգրացիոն հոսքը:

2.3.1 Արտագաղթը, ներքին միգրացիան և երիտասարդները

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին հանրապետությունում նկատվում է բնակչության «ծերացման» միտում, որը պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմաններից բխող ամուսնությունների, մեկ ընտանիքին բաժին ընկնող երեխաների և ծնունդների քանակի կրկնակի¹³ նվազման հետ: Եթե նշվածին հավելենք նաև այն, որ երկիրը լքողների մեջ ծանրակշիռ մասն է կազմում երիտասարդ, աշխատունակ տարիքի բնակչությունը (20-30 տարեկան երիտասարդների տեսակարար կշիռն արտագաղթածների ընդհանուր թվաքանակի մեջ կազմում է 18 %, ¹⁴), ապա ակնհայտ է դառնում, որ Հայաստանում բնակչության ծերացման գործընթացը դրսևավորվում է ոչ թե դասական իմաստով, այլ հանդես է գալիս որպես յուրատիպ երիտասարդագրկման գործընթաց:

Վերը նշվածը հաստատվում է նաև երիտասարդների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքների ամփոփումից:

¹² Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ.-ի հունվար-դեկտեմբերին», Տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001:

¹³ Եթե 1990թ. ծնվածների թիվը կազմում է 79882 մարդ, 2000թ. 34278, ապա 2005թ. այն կազմել է 37520 մարդ: Աղբյուրը՝ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005թ.


¹⁴ Աղբյուրները՝ ՀՀ 1991-98 թթ. արտաքին միգրացիայի գործընթացի ուսումնասիրություն, TACIS, Երևան 1999թ., Զեկույց ՀՀ հսկիչ անցագրային կետերի ուղևորաշրջանառության (միգրացիայի) ընտրանքային հետազոտության, Երևան 2002թ., Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 1940-2000թթ., Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005թ.,

Հարցմանը մասնակցած երիտասարդների 29%-ը 16 տարին լրանալուց հետո եղել է արտերկրում, ընդ որում 13,8%-ը երկու և ավելի անգամներ: Ինչպես պարզվում է նաև, հարցման մասնակիցների 62.4%-ը ունի արտերկրում գտնվող մտերիմներ, իսկ ահա 23.8%-ը՝ ընտանիքի անմիջական անդամ:


Նշվածը վկայում է զարգացած միգրացիոն ցանցերի առկայության փաստը, որոնք էապես հեշտացնում են երիտասարդների արտագաղթի գորընթացը՝ նվազեցնելով ուղղակի և անուղղակի ծախսերը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանից մեկնած երիտասարդները, իրենց երկրից հեռանալու հիմնական պատճառ են համարում (տես գրաֆիկ).

Հայաստանից մեկնելու հիմնական պատճառները.



Երիտասարդների 76.8%-ը ցանկություն է հայտնել հնարավորության դեպքում մեկնել Հայաստանից: Սակայն այստեղ նկատվում է որոշակի տարբերություն երկրից հեռանալու նպատակների մեջ (տես գրաֆիկ).



Մի փոքր այլ է ներքին միգրացիոն տեղաշարժերի պատկերը: Այստեղ երիտասարդությունն ավելի քիչ շարժունակություն է դրսևորում. հարցման

մասնակիցների միայն 10.4%-ն է վերջին հինգ տարիների ընթացքում փոխել Չայաստանում իր մշտական բնակավայրը:

Էապես տարբերվում են նաև բնակավայրի փոփոխման պատճառները. այսպես եթե առաջին դեպքում դրանք սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական բնույթի էին, ապա այստեղ հիմնական պատճառը դա ամուսնությունն է՝ 53,8% , իսկ ահա աշխատանքի բացակայության պատճառով իրենց բնակության վայրը լքել է հարցման մասնակիցների միայն 13,5%-ը.

Չայաստանում մշտական բնակավայրը փոխելու պատճառները (տոկոսներով).

| | | |
|----|--------------------------|------|
| 1. | Աշխատանքի բացակայության | 13.5 |
| 2. | Ոչ բավարար վարձատրության | 7.7 |
| 3. | Ամուսնության | 53.8 |
| 4. | Կրթության | 13.5 |
| 5. | Դժվ.եմ պատ. | 11.5 |

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ երիտասարդներից միայն 21%-ն է ցանկություն հայտնել շարունակել բնակվել ներկա բնակավայրում, իսկ ահա 64.8% կնախընտրել բնակվել մայրաքաղաքում կամ արտասահմանում (30.4% և 34.4% համապատասխանաբար): Երիտասարդների շրջանում նման մտադրությունները առավելապես պայմանավորված են մայրաքաղաքից հեռու ընկած շրջաններում կենսապայմանների ու սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակով, ինչպես նաև այն հանգամանքով, որ մայրաքաղաքը հանդիսանում է աշխատուժի հիմնական սպառողը: Ասվածը վկայում է նաև այն փաստը, որ նրանց անձնական ներդրումը ընտանեկան բյուջեում չնչին տոկոս է կազմում, իսկ 45.8%-ի մոտ՝ ընդհանրապես բացակայում է.

Ընտանեկան բյուջեի մեջ հարցված երիտասարդների անձնական ներդրումը (տոկոսներով).

| | | |
|-----|--------------------------|------|
| 1. | 0 | 45.8 |
| 2. | 1-10% | 7.5 |
| 3. | 11-20% | 4.1 |
| 4. | 21-30% | 8.8 |
| 5. | 31-40% | 2.0 |
| 6. | 41-50% | 6.7 |
| 7. | 51-60% | 2.7 |
| 8. | 61-70% | 2.2 |
| 9. | 71-80% | 4.9 |
| 10. | 81-90% | 1.7 |
| 11. | 91-100% | 7.9 |
| 12. | Դժվարանում են պատասխանել | 5.7 |

Սակայն, ի տարբերություն սրան, բավական մեծ է կախվածությունը դրսից ստացվող դրամական օգնություններից. հարցման մասնակիցների մեկ երրորդի մոտ այդ թիվը կազմում է 50% և ավելին.

Ընտանեկան բյուջեի ո՞ր տոկոս է կազմում դրսից ստացվող դրամական օգնությունը.

| | | |
|----|--------------------------|------|
| 1. | 0-10% | 2.9 |
| 2. | 10-25% | 13.6 |
| 3. | 25-50% | 16.1 |
| 4. | 50-75% | 11.8 |
| 5. | 75-100% | 22.0 |
| 6. | Դժվարանում են պատասխանել | 33.6 |

Վերը բերված փաստերը չեն կարող չանհանգստացնել, քանի որ դրանք իրենց մեջ կրուն են վտանգավոր տարրեր երկրի սոցիալ-տնտեսական ու անվտանգության տեսանկյունից:

Հայաստանում, զարգացող երկրներից շատերի նման, երիտասարդության շրջանում տեղ գտած հիմնախնդիրներից է հանդիսանում նաև մարդկանց առևտուրը կամ այսպես կոչված թրաֆիքինգը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ երիտասարդությունը հասարակության այն շերտն է, որն ավելի զգայուն է կատարվող փոփոխությունների նկատմամբ, ավելի շատ է հակված ինքնադրսևորման: Անօրինական միգրացիայի, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկվելու պատճառներից մեկը հանդիսանում է մարդկանց թյուր տեղեկացվածությունը այլ երկրներում սպասվելիքի վերաբերյալ: Աօրինի փոխադրվածների գերակշիռ մասը քաղաքաբնակ են, հիմնականում՝ Երևանից, Գյումրիից և Վանաձորից, որտեղ առկա է գործազրկության բարձր մակարդակ, աշխատանքի ցածր վարձատրություն, գործունեության ոլորտների սահմանափակություն: Այդ իսկ պատճառով առանձնակի ուշադրության է արժանի նաև միգրացիոն հոսքերի՝ թե ներքին և թե արտաքին, կառուցվածքը ըստ ՀՀ մարզերի:

Էմիգրացիոն ակտիվության առումով, մարզերը կարելի է բաժանել երեք խմբերի:

1. Մարզեր, որոնց բնակչության էմիգրացիոն ակտիվությունը հարաբերականորեն ցածր է: Դրանք են՝ Արարատը և Արմավիրը՝ այսինքն Արարատյան դաշտավայրի առավել բարեբեր հողերի վրա տեղակայված, առավելապես գյուղական բնակչություն ունեցող երկու մարզերը:


2. Երկրորդ խումբը կազմում են այն մարզերը, որոնց բնակչության էմիգրացիոն ակտիվությունը քիչ է տարբերվում հանրապետական միջինից: Հետաքրքիր է այս խմբի բավական խայտաբղետ կազմը: Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի ծայրամասային մարզերի կողքին է կենտրոնական դիրք ունեցող Արագածոտնի մարզը: Նշենք, որ տվյալ մարզերի բնակչության ոչ այնքան բարձր էմիգրացիոն ակտիվությունը կանխորոշած գործոնները նույնը չեն: Եթե Արագածոտնի համար այդպիսին ակներևաբար հանդիսացել է մասամբ Արարատյան դաշտավայրում տեղաբաշխման հանգամանքը և մայրաքաղաքի, որպես գյուղմթերքների սպառման շուկայի հարևանությունը, ապա առաջին երեքի դեպքում ըստ երևույթին վճռորոշ են հանդիսացել մի կողմից բնակչության զգալի մասի կապվածությունը հողին, մյուս կողմից էմիգրացիոն ավանդույթների ոչ այնքան զարգացած լինելը:

3. Ինչ վերաբերվում է մայրաքաղաք Երևանին ու մնացած 4 մարզերին՝ Գեղարքունիք, Կոտայք, Լոռի և Շիրակ, ապա դրանց բնակչության էմիգրացիոն ակտիվությունը զգալիորեն գերազանցում է միջին մակարդակին: Սրանք այն մարզերն

են, որտեղ առավել մեծ չափերի է հասնում գործազրկությունը, որի պատճառները, սակայն, այս մարզերից յուրաքանչյուրում տարբեր են:

Ստորև բերված գծապատկերը նույնպես փաստում է ասվածը.

ՀՀ միգրացիոն բարձր ակտիվությամբ մարզերը և դրանց արտագաղթի ու գործազրկության տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (%-ներով)¹⁵.



Այժմ տեսնենք, թե ինչպես է գործում վերը նշված կապը երիտասարդների շրջանում՝ օգտվելով սոցիոլոգիական հարցման արդյունքներից.

| Մեկնել եք արդյո՞ք Դուք երբևէ Հայաստանից 6 տարին լրանալուց հետո | | | | Կցանկանալի՞ք մեկնել արտերկիր | | | |
|--|-------------|---------------|--------------|------------------------------|-------------|---------------|--------------|
| N | Մարզ | Այո (%-ներով) | Ոչ (%-ներով) | N | Մարզ | Այո (%-ներով) | Ոչ (%-ներով) |
| 1. | Արմավիր | 33.7 | 66.3 | 1. | Արմավիր | 72.1 | 27.9 |
| 2. | Արարատ | 28.6 | 71.4 | 2. | Արարատ | 92.9 | 7.1 |
| 3. | Արագածոտն | 34.1 | 65.9 | 3. | Արագածոտն | 86.4 | 13.6 |
| 4. | Գեղարքունիք | 26.1 | 73.9 | 4. | Գեղարքունիք | 75.4 | 23.2 |
| 5. | Կոտայք | 28.7 | 71.3 | 5. | Կոտայք | 74.5 | 20.2 |
| 6. | Լոռի | 39.8 | 60.2 | 6. | Լոռի | 84.7 | 11.2 |
| 7. | Շիրակ | 20.8 | 79.2 | 7. | Շիրակ | 75.0 | 21.9 |
| 8. | Տավուշ | 19.5 | 80.5 | 8. | Տավուշ | 78.0 | 17.1 |
| 9. | Սյունիք | 32.0 | 68.0 | 9. | Սյունիք | 72.0 | 28.0 |
| 10. | Վայոց Ձոր | 25.0 | 75.0 | 10. | Վայոց Ձոր | 71.4 | 28.6 |
| 11. | Երևան | 28.1 | 71.9 | 11. | Երևան | 72.6 | 26.5 |

| Դուք վերջին 5 տարում արդյո՞ք փոխել եք Հայաստանում Ձեր մշտական բնակավայրը | | | |
|--|-------------|----------------|--------------|
| N | Մարզ | ԱՅՈՒ (%-ներով) | ՈՉ (%-ներով) |
| 1. | Արմավիր | 19.8 | 80.2 |
| 2. | Արարատ | 13.1 | 86.9 |
| 3. | Արագածոտն | 11.4 | 88.6 |
| 4. | Գեղարքունիք | 14.5 | 85.5 |
| 5. | Կոտայք | 4.3 | 95.7 |
| 6. | Լոռի | 10.2 | 89.8 |
| 7. | Շիրակ | 7.3 | 92.7 |
| 8. | Տավուշ | 12.2 | 87.8 |
| 9. | Սյունիք | 8.0 | 92.0 |
| 10. | Վայոց Ձոր | 0 | 100 |
| 11. | Երևան | 10.0 | 90 |

¹⁵ Աղբյուրները՝ ՀՀ 1991-98 թթ. արտաքին միգրացիայի գործընթացի ուսումնասիրություն, TACIS, Երևան 1999թ., Զեկույց ՀՀ հսկիչ անցագրային կետերի ուղևորաշրջանառության (միգրացիայի) ընտրանքային հետազոտության, Երևան 2002թ., Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 1940-2000թթ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005թ., Աշխատաշուկան Հայաստանի Հանրապետությունում, 2004թ., «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000-2005թթ.-ի հունվար-դեկտեմբերին», Տեղեկատվական-վերլուծական ամսական գեկույց, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001-2006թթ., Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005թ:

Այստեղ մենք որոշակիորեն այլ պատկեր ենք ստանում: Մասնավորապես, առաջին խմբում, հարաբերականորեն ցածր ակտիվությամբ, հայտնված մարզերում նկատվում է բավական բարձր միգրացիոն ակտիվություն երիտասարդության շրջանում: Դա մեծապես պայմանավորված է այն փաստով, որ վերը նշված մարզերը առավելապես գյուղական բնակչություն ունեցող, տնտեսության ագրարային ուղղվածությամբ մարզեր են, որը երիտասարդների համար ոչ այդքան գրավիչ է: Ասվածի մասին է վկայում նաև երիտասարդների զբաղվածության և նրանց միգրացիոն նպատակների փոխկապվածության փաստը արտացոլող աղյուսակը, որը բերված է ստորև.

Երիտասարդների զբաղվածության և միգրացիոն նպատակների փոխկապվածությունը.

| | Երիտասարդների ներկայիս զբաղվածությունը | Արտերկիր մեկնելու նպատակամղվածություն | | |
|-----|--|---------------------------------------|-----|-------------|
| | | Այո | Ոչ | Դժվ. են պատ |
| 1. | Գյուղատնտեսություն | 65 | 10 | 0 |
| 2. | Արտադրություն | 30 | 2 | 0 |
| 3. | Շինարարություն | 10 | 7 | 9 |
| 4. | Առևտուր | 77 | 31 | 1 |
| 5. | Սպասարկում | 64 | 11 | 0 |
| 6. | Կրթություն. գիտություն | 48 | 22 | 0 |
| 7. | Առողջապահություն | 32 | 3 | 0 |
| 8. | Բանակ. ոստիկանություն | 1 | 0 | 0 |
| 9. | Պետական ծառայող | 21 | 6 | 0 |
| 10. | Ընտրովի պաշտոնյա | 1 | 2 | 0 |
| 11. | Այլ | 8 | 1 | 0 |
| 12. | Չեն աշխատում | 411 | 119 | 7 |

Ամփոփում

Այսպիսով, անվիճելի է, որ սկզբնական ժամանակաշրջանում միգրացիայի ամենաազդեցիկ դրդապատճառներից էին նախ ռազմաքաղաքական, ապա սոցիալ-տնտեսական գործոնները: Այնուհետև, գերիշխող էր հատկապես սոցիալ-տնտեսական գործոնը: Այլ կերպ ասած՝ նյութական աղքատությամբ պայմանավորված միգրացիան փոխարինվեց մարդկային աղքատությամբ պայմանավորված միգրացիայի:

Կարելի է նշել, որ բերված փաստերը մեկ անգամ ևս փաստում են միգրացիայի կարգավորման ու վերահսկման կարևորությունը, որպեսզի այն դարձնել հնարավորին չափ արդյունավետ ու նվազեցնել բացասական հետևանքները:

Պետական քաղաքականության ու կառավարման պոտենցիալ ազդեցությունները միգրացիոն հոսքերի վրա կարելի է բաժանել երկու կարգի՝ անուղղակի և ուղղակի: Անուղղակի ազդեցությունները պայմանավորված են տնտեսության զարգացմամբ: Ուղղակի ազդեցությունները հիմնվում են կառավարման որակով պայմանավորված, անմիջականորեն, բնակչության կենսամակարդակի բարելավման միջոցով արտագաղթի միտումների վրա ազդելու և վարչական կառույցների ու կառավարության կողմից իրականացվող քաղաքականության միջոցով միգրացիան վերահսկելու և կարգավորելու վրա:

Երիտասարդության շրջանում արտագաղթի ծավալները նվազեցնելու, միգրացիոն հոսքերը կարգավորելու և վերահսկելու համար իրականացվող միջոցառումները պետք է կրեն համակարգված բնույթ, իրենց մեջ ներառեն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու քաղաքական իրավիճակի կայունացման տարրեր՝ ելնելով պետության ամրապնդման ու սոցիալ-տնտեսական առաջընթացի պահանջներից:

2.4 Մարզային երիտասարդություն

Ներածություն

Կարելի է հարց տալ, ինչու՞ է առանձնացվել մարզային երիտասարդությունը, այն պետք է որ լինի նույնը ամեն տեղ, նույն խնդիրներով, նույն հույզերով, պարտություններով և հաղթանակներով: Սա միայն առաջին հայացքից, իրականում մարզային երիտասարդության խնդիրների թնջուկը ավելի ամուր է, լուծման հնարավոր տարբերակների սակավության, աջակցող կառույցների բացակայության, ազատ ժամանցի կազմակերպման գրեթե անհնարին լինելու և այլ պատճառներով: Հարցման ժամանակ փորձեցինք պարզել, թե որոնք են մարզային երիտասարդության հիմնական խնդիրները և ահա թե ինչ պատկեր ունեցանք.

| | | |
|-----|--|------|
| 1. | Գործազրկություն/զբաղվածություն | 55.0 |
| 2. | Մշակութային խնդիրները (հանգիստ, ժամանց, սպորտ) | 15.1 |
| 3. | Կրթությունը | 14.5 |
| 4. | Սոցիալ-տնտեսական խնդիրները | 8.1 |
| 5. | Վատ կենցաղային պայմանները | 4.0 |
| 6. | Առողջապահական խնդիրները | 3.2 |
| 7. | Արտագնա աշխատանքը | 2.7 |
| 8. | Անվստահությունը ապագայի նկատմամբ | 2.1 |
| 9. | Ամուսնությունը | 2.0 |
| 10. | Այլ | 1.0 |
| 11. | Բնակարանային | 0.9 |
| 12. | Դժվ. են պատ. | 21.8 |

Առաջին հայացքից կարծես նույն խնդիրների փաթեթն է և տարբերություն չկա, սակայն որպես օրինակ, մարզային երիտասարդությունը բնակարանային խնդիրներին առավել քիչ ուշադրություն է դարձնում: Հատկանշական է նաև այն որ կրթությունը և մշակութային խնդիրները գրեթե նույն կարևորության աստիճանի վրա են գտնվում: Աղյուսակում տեղ գտած խնդիրները ավելի հանգամանալից տեղ են գտել ազգային զեկույցի այս կամ այն գլխում և կարծում են որ առանձնահատկությունների վրա է, որ պետք է փորձենք բևեռել մեր ուշադրությունը:

Գործազրկություն/զբաղվածություն

Զբաղվածությունը մարդու կամ հասարակության կենսագործունեության կարևորագույն գործոններից է: Երիտասարդի համար աշխատանքը կարևորվում է երկու առումներով, ստացված եկամուտով և սոցիալ-հոգեբանական պահանջներին բավարարմամբ (ինքնաիրացում, բավարարվածություն աշխատանքով և այլն): Մարզային երիտասարդության զբաղվածության

առանձնահատկությունը այսօր այն է, որ նա հիմնականում գյուղացիական տնտեսություններում է ընդգրկված, իսկ մնացած աշխատանքները կրում են օժանդակ բնույթ: Այս ընդհանուր դրույթից ելնելով՝ մարզային երիտասարդության հնարավոր աշխատատեղերը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի խմբերի.

- արտագնա (սեզոնային),
- մասնավոր տնտեսություններում, արհեստանոցներում,
- գյուղատնտեսության մեջ կիրառվող տեխնիկայի, տրանսպորտային և այլ միջոցների հետ,
- մարզկենտրոնում, շրջկենտրոնում (վարչական, առևտուր և այլն),
- գյուղում գործող խանութներում, կրպակներում

Երիտասարդների զբաղվածության տեսակետից գյուղական տնտեսություններում հատկանշականն այն է, որ հայ երիտասարդը ամբողջ տարվա ընթացքում կարող է աշխատել միայն մի քանի ամիս, բացի այդ՝ միապաղաղ կյանքը ձանձրացնում է նրան: Երիտասարդը ունի միայն իրեն հատուկ պահանջներ, որոնց բավարարման համար շատ ընտանիքներում բյուջեն կարող է չբավարարել: Բացի դրանից՝ այդ դեպքում երիտասարդը չի կարող ինքնուրույն ստեղծագործական մոտեցում ցուցաբերել: Մնացած բոլոր հնարավորությունները՝ իրենց բոլոր դրսևորումներով, այնուամենայնիվ չեն կարող միջինացված ցուցանիշներով զբաղվածության բավարար մակարդակ ապահովել:

Նման պայմաններում արտագնա աշխատանքը կարծես թե ելք է: Սակայն վերջինիս դրսևորումը երիտասարդների շրջանում էապես տարբերվում է այլ տարիքային խմբերից, և եթե միջին տարիքի տղամարդկանց մոտ, ընտանեկան կապերի շնորհիվ կրում է հիմնականում սեզոնային, ապա երիտասարդների մոտ այն ավելի շուտ անկանոն է, և ցավոք հաճախ մշտական:

Մշակութային խնդիրները (հանգիստ, ժամանց, սպորտ)

Երիտասարդության համար ժամանցը կարևոր նշանակություն ունի, այն երիտասարդի կենսագործունեության հիմնական գործոններից է: Ժամանցը, լինելով ազատ ժամանակ ֆիզիկական, հոգևոր, սոցիալական պահանջներին բավարարմանն ուղղված գործունեության ձևերի ամբողջություն, իրականացնում է այնպիսի կարևոր գործառույթներ, ինչպիսիք հանգիստը, ծախսված ֆիզիկական և մտավոր ուժերի և ունակությունների զարգացումը, զվարճանքն ու շփումը: Ելնելով վերոհիշյալ գործառույթներից՝ հարկ է նկատել, որ ժամանցի արդյունավետ կազմակերպումը կարևորվում է մարզային երիտասարդության կենսագործունեության համար:

Ըստ էության՝ ժամանցի տարածված ձևերն են.

- զանգվածային մշակութային հանդիսություններին մասնակցությունը,

- խաղերը, ֆիզկուլտուրան և սպորտը,
- էքսկուրսիաներն ու ճանապարհորդությունը,
- ստեղծագործական և սիրողական զբաղմունքները:

Խորհրդային շրջանում մշակութային սցենարները, ցանկը և հանդիսությունների քանակը պետությունը դիրեկտիվային տեսքով իջեցնում էր վերևից, գործում էին մշակույթի տները, անցկացվում էին տարբեր ազգագրական, թատերական և այլ միջոցառումներ երիտասարդության համար: Այսօր երիտասարդները ստիպված են իրենք հոգալ իրենց մշակութային պահանջները, սակայն միշտ չէ որ դա հաջողվում է:

Կրթություն

Շուկայական տնտեսության ձևավորման հետևանքով կրթական համակարգը բավականին վերափոխվեց: Այսօր մարզային երիտասարդությունը ավելի շատ առնչվում է միջնակարգ մասնագիտական կրթության հետ: Մարզերում կրթությունը այսօր կենսապահովման համար անհրաժեշտ եկամտի աղբյուր հանդիսացող աշխատանքի ձեռք բերման լիարժեք նախադրյալ չէ՝ ի տարբերություն խորհրդային շրջանի: Այն ժամանակ գյուղական համայնքը սոցիալ-մասնագիտական առումով ավելի բազմազան էր, գյուղացին գյուղատնտեսության ոլորտում չունեի այսօրվա բարդությունները, կազմակերպչական խնդիրները: Գյուղատնտեսական աշխատանքները՝ տեխնիկական սպասարկումը, իրացումը կազմակերպվում էին պլանային տնտեսության շրջանակներում: Երիտասարդն ուներ բավարար ժամանակ, ազատ ֆինանսական միջոցներ ներդնելու որևէ մասնագիտական կրթություն կամ արհեստ ձեռք բերելու համար. բացի այդ՝ զանազան արհեստները պահանջված էին: Այսօր դրանք սոցիալ-տնտեսական փոփոխությունների, ներմուծվող էժանագին ապրանքների զանգվածային գործածության հետևանքով հիմնականում դարձել են ոչ եկամտաբեր գործառույթ: Այսօր մասնագիտական կրթության կամ արհեստների ժամանակակից (վարսավիրություն, համակարգչային զանազան կուրսեր, կոսմետոլոգիա, հաշվապահություն և այլն) տեսակները դարձել են բարձրագույն կրթության՝ ավելի քիչ ծախսատար և ժամանակատար այլընտրանքներ: Բարձրագույն կամ միջին մասնագիտական որևէ կրթություն ստանալը այսօր կապված է մի շարք դժվարությունների հետ. գյուղում կայացած չէ “ռեպետիտորների” ինստիտուտը, առանց որի այսօր անհնար է անցումը հանրակրթականից բարձրագույն կրթության, ինչպես հետևում է հետևյալ աղյուսակից այս կարծիքի հետ համաձայն է նաև երիտասարդությունը.

Ինչ եք կարծում. հնարավո՞ր է ԲՈՒՀ /Քոլեջ ընդունվել դպրոցում ստացած գիտելիքների հիման վրա.

| | |
|--|------|
| Այո | 5.9 |
| Ոչ. անհրաժեշտ են նաև նախապատրաստական դասընթացներ | 16.2 |
| Ոչ. անհրաժեշտ են նաև մասնավոր դասընթացներ | 72.3 |
| Դժվ. պատ. | 5.6 |

Մեկ այլ ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ Երևանում «ուսանող պահելը» բավականին զգալի նվազեցնում է ընտանիքի բյուջեն, առավել ևս որ այդ դեպքում ընտանիքը զրկվում է նաև պոտենցիալ աշխատուժից: Մարզային երիտասարդության բարձրագույն կրթություն ստանալու մեկ այլ դրդապատճառ նույնպես ձևափոխվել է, երիտասարդների շրջանում այն արդեն չի ընկալվում որպես սոցիալական ճկունություն ապահովող կարևոր մեխանիզմ, հետագայում եկամտաբեր աշխատանք ունենալու երաշխիք, հիմա այն ընկալվում է որպես քաղաքում հաստատվելու հնարավոր միջոցներից մեկը:

Ամփոփում

Մարզային երիտասարդության խնդիրները այնքան բազմազան են և յուրահատուկ, որ դրանք ինքնին բավականին ծավալուն և բազմաբնույթ զեկույցի են արժանի: Այս զեկույցի գրեթե բոլոր գլուխներում փորձագետները այսպես թե այնպես անդրադարձել են դրանց, սա ուղղակի փորձ էր ուրվագծել այդ խնդիրները, ակնկալիքով, որ դրանց անդրադարձը երիտասարդական քաղաքականություն վարող հիմնական դերակատարների կողմից իրենց ուշացնել չեն տա:

2.5. Երիտասարդության խոցելի խմբեր

Չաշմանդամներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալներով 2003թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հաշվառված է 115 100 հաշմանդամ, որից 11 600-ը՝ առաջին, 68 300-ը՝ երկրորդ, 26 400-ը՝ երրորդ խմբի և 9 800 մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաներ:

Աշխատանքային տարիքի հաշմանդամները կազմում են հաշմանդամների ընդհանուր թվի 56%-ը, կամ 64 456 մարդ, որոնցից երիտասարդ հաշմանդամները կազմում են աշխատանքային տարիքի հաշմանդամների 27%-ը կամ 17404 մարդ:

Չաշմանդամության հիմնական պատճառներից է ի ծնե հաշմանդամությունը, սակայն որպես հաշմանդամության պատճառ անհրաժեշտ է նշել նաև 1988 թ. Սպիտակի երկրաշարժը և Ղարաբաղյան հակամարտությունը:

Խորհրդային ժամա-նակներից մենք ժառանգել ենք հաշմանդամների համար ոչ մատչելի մի միջավայր, որը լրջորեն արգելակում է հաշմանդամ երիտասարդների ինտեգրումը հասարակությանը:

«Մատչելի» կամ «անարգել» միջավայր տերմինը կիրառվում է շրջակա միջավայրի տարրերի մասին խոսելիս, որտեղ կարող են ազատ մուտք գործել եւ օգտվել ֆիզիկական, զգայական կամ մտավոր շեղումներ ունեցող մարդիկ: Սկզբնական շրջանում այդ արտահայտությունը օգտագործվում էր շենքերի եւ սարքավորումների նկարագրման համար, որոնցից կարող էին օգտվել անվասայլակ օգտագործող մարդիկ: Սակայն հետագայում այդ տերմինի բնորոշման մեջ ընդգրկվեցին այնպիսի չափանիշներ, որոնք հարմար էին նաեւ հաշմանդամության այլ ձևեր ունեցող մարդկանց համար: Լայն իմաստով, մատչելին դա այն է, երբ ստեղծում է առավել հեշտ եւ անվտանգ պայմաններ որքան հնարավոր է շատ թվով մարդկանց համար ու նաաստում է նրանց անկախ կենսաձեւի զառազմանը:

Անցկացված հետազոտության այն հարցին թե հաշմանդամները որքանով են ինտեգրված հասարակությանը, հարցվողների ընդամենը 4%-ն է համարում, որ հաշմանդամները ինտեգրված են, 32.6%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին իսկ 40.1 %-ը պատասխանել է, որ ինտեգրված չեն: Ինտեգրման համար բավականին լուրջ արգելք է նաև կրթության մատչելի չլինելը: Օրենսդրությունը 1-ին եւ 2-րդ կարգի հաշմանդամներին իրավունք է տալիս դիմել պետական բուհեր մրցույթից դուրս անվճար տեղերի համար (պետպատվերի շրջանակներում): Միևնույն ժամանակ միայն քիչ թվով հաշմանդամներ կարող են օգտվել այդ հնարավորությունից, քանի որ ԲՈՒՅ-երը բոլորովին հարմարեցված չեն ֆիզիկապես հաշմվածների համար: Բացի այդ, քիչ չեն նաև այնպիսի հաշմանդամները, որոնք վերը նշված պատճառներով չեն ստացել նույնիսկ միջնակարգ կրթություն և բնականաբար չեն կարող ուսանել ԲՈՒՅ-ում: Արդյունքում հաշմանդամների զգալի մասը չունի բարձրագույն կրթություն: Ինտեգրման կարևորագույն գործոններից է աշխատատեղերի առկայությունը հաշմանդամների համար: Խորհրդային տարիներին գործում էին կույրերի, խուլերի եւ այլն արտադրական կոմբինատներ: Հայաստանի անկախացումից հետո փակվեցին ձեռնարկությունների, այդ թվում նաև հաշմանդամների արտադրական կոմբինատների մեծ մասը: Այդպիսով աշխատանքից զրկվեցին և՛ հատուկ հաստատություններում աշխատող հաշմանդամները, և՛ նրանք, ովքեր աշխատում էին սովորական ձեռնարկություններում: Անկախության առաջին տարիներին Հայաստանում գործում էր օրենք, համաձայն որի այն ձեռնարկությունները, որոնց աշխատողների 50%-ը հաշմանդամներ էին, օգտվում էին հարկային զգալի արտոնություններից: 2000թ. օրենքի այդ դրույթը վերացվեց, եւ ձեռնարկությունները, որտեղ աշխատում էին շատ հաշմանդամներ, չկարողացան դիմանալ հարկային բեռին ու ստիպված էին ազատել իրենց հաշմանդամ աշխատակիցներից շատերին: Պաշտոնական տվյալներով, Հայաստանում աշխատունակ հաշմանդամների միայն 7%-ը աշխատանք ունի:

Հայաստանում հաշմանդամների սոցիալական ապահովության հարցերը կարգավորող հիմնական օրենքներն են Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքը (ընդունվել է 1993-ին, փոփոխությունները մտցվել են 1997-ին, 1998-ին, 2000-ին և 2002-ին) և ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին օրենքը: Կենսաթոշակների (այդ թվում՝ հաշմանդամության) չափը սահմանվում է ՀՀ Կառավարության որոշումով: Ներկայումս գործում է «Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքից բխող կառավարության 1470 որոշումը (2005թ. նոյեմբեր 1) «Բազային կենսաթոշակի չափի մասին, որի համաձայն հաշմանդամության բազային կենսաթոշակի չափը 4250 դրամ է: Բազային կենսաթոշակի 120 %-ն են ստանում երկրորդ խմբի հաշմանդամները: Առաջին խմբի

հաշմանդամները եւ մինչև 16 տարեկան հաշմանդամ երեխաները ստանում են բազային կենսաթոշակի 140%, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 100 %-ը:

1993-ին ընդունված Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքը նախատեսում էր սոցիալական ապահովության բավականին լավ մեխանիզմներ: Մասնավորաբար, հաշմանդամները կոմունալ ծառայությունների, էլեկտրաէներգիայի եւ հասարակական տրանսպորտի համար վճարելիս օգտվում էին զեղչերից ու արտոնություններից: Կարելուր նշանակություն ունեւր օրենքի այն դրույթը, ըստ որի այն հիմնարկները, որոնց աշխատողների առնվազն 50% հաշմանդամներ էին, օգտվում էին շոշափելի հարկային արտոնություններից: Հետագայում Օրենքը բազմաթիվ անգամ ենթարկվել է փոփոխությունների, որոնց գերակշռող մասը վատթարացրեց հաշմանդամների սոցիալական վիճակը: Գրեթե ի սպառ վերացան բոլոր արտոնությունները:

Ներկայում հաշմանդամների համար գործում են հետեւյալ 2 արտոնությունները.

- 1) Առաջին և երկրորդ խմբի հաշմանդամներն իրավունք ունեն անվճար օգտվել ներքաղաքային էլեկտրատրանսպորտի միջոցներից:
- 2) Հաշմանդամների բուժօգնությունն իրականացվում է անվճար՝ պետական պատվերի շրջանակներում:

Կարևոր էր նաև պարզաբանել թե երիտասարդության կարծիքով որքանով են պաշտպանված հաշմանդամների հետևյալ իրավունքները, ահա ինչ պատկեր ստացվեց՝

| Իրավունքներ | Լիովին | Ավելի շուտ այո | Ավելի շուտ ոչ | Չեն պաշտպանվում | Դժվ. են պատ |
|---------------------|--------|----------------|---------------|-----------------|-------------|
| Աշխատանքի և հանգստի | 2.1 | 13.9 | 24.9 | 28.3 | 30.8 |
| Կրթության | 4.4 | 30.0 | 18.3 | 22.6 | 24.7 |
| Բուժօգնության | 8.6 | 36.6 | 14.1 | 15.7 | 25.0 |
| Ընտրական | 8.2 | 21.8 | 22.3 | 18.9 | 28.8 |
| Բնակարանային | 1.3 | 15.4 | 18.2 | 34.1 | 31.0 |
| Ազատ տեղաշարժվելու | 2.4 | 15.9 | 21.6 | 26.1 | 34.0 |

Ամփոփում

Քսաներորդ դարի վերջին տասնամյակը ՄԱԿ-ը հայտարարել էր հաշմանդամների տասնամյակ՝ «Հասարակությունը բոլորին» կարգախոսով: Հարցվածների 33.8%-ը դժվարացել է պատասխանել թե ինքը ինչպես է վերաբերվում հաշմանդամներին, իսկ 12.7%-ը գթասրտորեն է վերաբերվում նրանց: Ներկայացված վերլուծությունը հաշմանդամ երիտասարդների ներկա վիճակի մասին ցույց է տալիս, որ թերևս վաղ է խոսել հաշմանդամին որպես հանրույթի լիարժեք անդամ լիովին ընկալող հասարակության մասին, կամ որ հասարակությունը ընդունում է, որ հաշմանդամ երիտասարդը նույնպես ունի իրավունք ապրելու, կրթություն ստանալու, աշխատելու, օգտվելու հանրային կառույցներից և հասարակական տրանսպորտից:

Գթասրտությունը իհարկե կարևոր է, սակայն հաշմանդամը, հատկապես երիտասարդ, կարիք ունի որ իրեն վերաբերվեն որպես հասարակության լիարժեք անդամի, որը ինքնուրույն է որոշում ուր գնալ, որտեղ սովորել կամ աշխատել, ընտրել կամ լինել ընտրված, կազմակերպել իր հանգիստը ինչպես կամենար:

Փախստականներ

ԽՍՀՄ փլուզումը և նոր պետությունների առաջացումն ուղեկցվեցին խոշորածավալ միգրացիոն տեղաշարժերով: Հաշվի առնելով Ադրբեջանի իրականացրած էթնիկական գտնան քաղաքականությունը և սանձազերծած պատերազմը, Հայաստանում դրանք մեծ չափերի հասան: Այդ տարիներին Հայաստանում իրենց ապաստանը գտան շուրջ 360 հազար փախստականներ Ադրբեջանից: Եվս 11 հազար հայեր Հայաստան ներգաղթեցին նախկին ԽՍՀՄ այլ տարածքներում ծագած հակամարտությունների հետևանքով: Արդյունքում մինչև 1994-95թթ. Հայաստանն ստիպված եղավ ընդունել շուրջ 385 հազար փախստականների, որը կազմում էր հանրապետության այդ ժամանակվա բնակչության մոտ 11 %-ը:


1990-ական թվականների կեսերից, երբ վերջնականապես պարզ դարձավ, որ Ադրբեջանից և ԱՊՀ այլ երկրներից հայազգի փախստականների կամավոր և անվտանգ վերադարձը նախկին բնակության վայրեր անհնար է, Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ փախստականների ինտեգրման քաղաքականության իրականացմանը:

Այսպիսի քաղաքականության առաջնային նպատակն է հասարակության մեջ փախստականների արդյունավետ ներգրավման /ինտեգրման/ և ինքնիրացման /նատուրալիզացիայի/ ապահովումը, ինչը մեծամասամբ պայմանավորված է փախստականների համար կենսական կարևորություն ներկայացնող մի շարք խնդիրների լուծմամբ.

- ա) սոցիալ - տնտեսական (սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում, կենսամակարդակի բարձրացում և այլն),
- բ) իրավա-քաղաքական (իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրության ստեղծում, դրանց իրագործման պետաիրավական երաշխիքների ապահովում),
- գ) հոգևոր-մշակութային (հայոց լեզվի տիրապետման պայմանների ապահովում, հոգևոր մշակույթի արժեքներից լիարժեքորեն օգտվելու պայմանների ստեղծում և այլն),
- դ) բարոյա-հոգեբանական (բռնի տեղահանման ժամանակ ապրած բարոյահոգեբանական ցնցումների հաղթահարում, նոր սոցիալական կապերի հաստատում),

ե) անհատական մտածելակերպ (փախստականներից շատերը մտավախություն ունեին նաև, որ ՀՀ քաղաքացիություն ընդունելով միանգամից դուրս կմնան ինչպես պետության, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից ցուցաբերվող ուշադրությունից):

Միայն այս խնդիրների համակողմանի լուծումը կարող է տրամաբանորեն հանգեցնել փախստականների ինտեգրմանը: Պարզելու համար, թե որքանով է երիտասարդությունը տեղյակ փախստականների խնդիրներին, հարցման ընթացքում խնդրեցինք նրանց նշել, թե որոնք են փախստականների երեք ամենակարևոր խնդիրները: Ահա թե ինչ պատկեր ստացանք.



Հարկ ենք համարում նշել, որ փախստական երիտասարդները ելնելով սոցիալական խնդիրների առանձնահատկություններից (քաղաքացիության, բնակարանի, տարրական սոցիալ-կենցաղային պայմանների բացակայություն և այլն) ստիպված են լինում կրթությունը շարունակելու փոխարեն աշխատել, իհարկե, հիմնականում որակավորում չպահանջող աշխատաշուկայում: Ուստի մեծ է հավանական վտանգը, որ մոտ ապագայում կունենենանք անմրցունակ աշխատողների մի մեծ զանգված, որը ավելի է խորացնելու տեղացի և փախստական երիտասարդների միջև եղած անջրպետը եվ ուղղակիորեն խոչընդոտելու է փախստականների ինտեգրումը հասարակությանը:

Արդյո՞ք փախստականները տարբերվում են տեղաբնակներից հարցին երիտասարդությունը կարծում է որ՝

| | | |
|-----|---------------------------|------|
| 1. | էականորեն | 17.5 |
| 2. | ավելի շուտ տարբերվում են | 39.9 |
| 3. | ավելի շուտ չեն տարբերվում | 21.4 |
| 4. | բոլորովին չեն տարբերվում | 5.2 |
| 99. | դժվ. պատ. | 16.0 |

Անփոփում

Երիտասարդության ավելի քան 57 %-ը համարում է, որ փախստականները տարբերվում են տեղաբնակներից: Սա ինքնին խոսում է, և երիտասարդական քաղաքականություն վարող պետական մարմինները, երիտասարդական քաղաքականությանն աջակցող միջազգային կազմապերպությունները, երիտասարդության հարցերով ՋԿ-ները պետք է ձգտեն իրենց ծրագրերում ներգրավել փախստական երիտասարդերին, իրականացնեն ծրագրեր՝ ուղղած փախստական երիտասարդերի հիմնախնդիրների լուծմանը:

ԳԼՈՒԽ III

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

ՀՀ կրթական համակարգը, սկսած 1991 թվականից, անցել է փոփոխությունների դժվարին փուլ: Անկախությանը հաջորդած առաջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ տնտեսության ճգնաժամն իր բացասական ազդեցությունն ունեցավ կրթական համակարգի վրա:

ՀՀ կրթական համակարգը կրթական ուսումնական հաստատությունների և հիմնարկների կարգավորված ամբողջությունն է, որի հիմնական մասերն են նախադպրոցական կրթությունը, ընդհանուր միջնակարգ կրթությունը՝ կազմված տարրական, միջին (հիմնական) և ավագ դպրոցից, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը, հետբուհական կրթությունը, մասնագետների վերավորակավորման և որակավորման բարձրացման հաստատությունները:

1990-ական թվականներին, երկրի տնտեսական զարգացմանը զուգընթաց, սկսվել է հանրակրթական ոլորտի բարեփոխումը: Մինչ 2003 թվականը՝ բարեփոխումները հիմնականում կառուցվածքային բնույթի էին և միտված էին լուծելու համակարգի ֆինանսական և կառավարման խնդիրները: 2003 թվականից սկսվել է բարեփոխումների նոր փուլ, որն ընդգրկում է նաև բովանդակային հիմնահարցեր՝ կրթակարգ, նոր ուսումնական ծրագրեր, գնահատման նոր համակարգ և այլն:

Այսօր պետական ու ազգային կարևորագույն խնդիր են համարվում կրթության համակարգի առաջնահերթ զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը: Դրա մասին են վկայում անկախության հռչակումից հետո ընդունված օրենքներն ու որոշումները:

1999 թվականին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որոշակիորեն ուղղորդեց վերափոխվող համակարգի զարգացումը: Օրենքն ընդունելուց հետո, հրատապ խնդիրների լուծման առաջնայնությունից ելնելով, այն ժամանակ առ ժամանակ ենթարկվում է փոփոխությունների և լրացումների:

Կրթության համակարգի կառուցվածքը բխում է «Կրթության մասին» ՀՀ օրենքից:

Հանրապետության կրթության համակարգն ընդգրկում է՝

- պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի համալիրը.
- այդ ծրագրերն իրականացնող տարբեր տիպի ուսումնական հաստատությունների ցանցը.

- կրթության կառավարման մարմինների, նրանց ենթակայության հիմնարկների և հաստատությունների համակարգը¹⁶:

Հանրապետությունում գործում է պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների համակարգ՝ դպրոցներ, վարժարաններ, բուհեր, որոնք ոչ միայն ապահովում են կրթության համակարգում կրթական ծառայությունների շուկայի գոյությունը, այլև էական ներդրում ունեն կրթության համակարգի զարգացման գործում:

Սոց. հարցումները ցույց են տալիս, որ պետական ուսումնական հաստատությունների նկատմամբ երիտասարդների վստահության ցուցանիշները մի քանի անգամ գերազանցում են ոչ պետական ուսումնական հաստատություններին:

ՀՀ կառավարության որոշումներով հաստատվել են բոլոր տիպի ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները, որոնցով սահմանվել են դրանց իրավասությունները, ինչպես նաև կառավարման մարմիններից յուրաքանչյուրի (խորհուրդ, ռեկտոր, տնօրեն և այլն) իրավասությունները և լիազորությունները:


Սակայն լիազորությունների հստակեցման հարցում դեռևս առկա են անորոշություններ: Պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև օպերատիվ կապերը թույլ են:

Ուսումնական հաստատությունները գտնվում են տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ, որը դժվարացնում է նրանց միասնական կառավարումը և տվյալների ստացման խնդիրները:

Հայտնի է, որ անցումային շրջանն իր բացասական ազդեցությունն է թողել ՀՀ կրթական համակարգի ֆինանսավորման վրա, սակայն վերջին տարիներին կրթությանը հատկացված պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են որոշակի դրական միտումներ:

Երիտասարդների շրջանում անցկացված սոց. հարցումների արդյունքները կրթության ոլորտի վերաբերյալ տալիս են հետևյալ պատկերը.

Ինչպես կզնահատեք կրթության որակը և նրա մրցունակությունը ՀՀ աշխատաշուկայում.



¹⁶ «կրթության մասին» ՀՀ օրենք

ՀՀ կրթության ոլորտի ներկա փուլի զարգացումը սերտորեն կապված է կրթական հանրության զարգացման միջազգային միտումների հետ, որն էլ իր հերթին պայմանավորված է համաշխարհային տնտեսության զարգացման մեջ տեղի ունեցող անշոջելի վերափոխումներով:

3.1 Հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն

Ներածություն

Համաշխարհային տնտեսության մեջ կատարվող փոփոխությունները հանգեցնում են ազգային տնտեսությունների մերձեցման և համաշխարհային (գլոբալ) տնտեսության ձևավորման: 20-րդ դարի արդյունաբերական տնտեսությունը 21-րդ դարի սկզբին վերափոխվում է «գիտելիքների տնտեսության», հասարակությունը՝ «գիտելիքների հասարակության»:

Նոր դարաշրջանին բնորոշ են արմատական փոփոխություններ հասարակության արժեքային համակարգում: Առաջ են քաշվում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, համբերատարությունը, ազատությունը, արդարությունը, հարգանքն ուրիշների նկատմամբ և քաղաքացիական հասարակությանը բնորոշ այլ արժեքներ:

ՀՀ Կառավարությունը նախաձեռնել է բովանդակության բարեփոխումներ. վերանայել պետական չափորոշիչը, ուսումնական ծրագրերը, ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաներ, պայմաններ ստեղծել մանկավարժական կադրերի մասնագիտական կատարելագործման համար, հարստացնել դպրոցների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազան և այլն:

3.1.1 Հանրակրթություն

Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը¹⁷:

Սկսած 2003թ. ակտիվ քննարկումներ են անցկացվել միջնակարգ կրթության տևողությունը 12-ամյա դարձնելու վերաբերյալ:

Սակայն սոց. հարցումները արդյունքում հարցված երիտասարդների 61.7 տոկոսը բացասական, իսկ 7.8 տոկոսն են դրական վերաբերվում 12-ամյա կրթական համակարգին:

Համաձայն հանրակրթության պետական կրթակարգի՝ նախատեսվում է ՀՀ-ում միջնակարգ ընդհանուր կրթությունը իրականացնել 12-ամյա տևողությամբ:
Անցումը նախատեսվում է կատարել 2006 թվականից՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.
ա) տարրական դպրոց՝ 4 տարի (1-4-րդ դասարաններ),
բ) միջին դպրոց՝ 5 տարի՝ (5-9-րդ դասարաններ),
գ) ավագ դպրոց՝ 3 տարի (10-12-րդ դասարաններ):

¹⁷ «Հանրապետության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ», Երևան 2004.

ՀՀ-ում գործում է 1323 պետական միջնակարգ ընդհանուր դպրոց, որոնցից 18-ը տարրական, 148-ը հիմնական և 1157-ը միջնակարգ ուսումնական դպրոց են: Գործում են նաև 36 վարժարան և 26 արհեստագործական դպրոց:


Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած և արտակարգ ունակություններ ունեցող) երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով հանրապետությունում գործում են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ (երկարօրյա և գիշերօթիկ) ռեժիմով, որոնք իրականացնում են հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրեր:

Գործող 54 պետական հատուկ հանրակրթական հաստատություններից 41-ը նախատեսված է մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար, 5-ը՝ առանց ծնողական խնամքի մնացած և սոցիալապես անապահով ընտանիքների, 8-ը՝ օժտված և արտակարգ ունակություններ ցուցաբերած երեխաների ուսուցմանն աջակցելու համար:

Հատուկ հանրակրթական հաստատություններում ընդգրկված է 10585 սովորող, որոնց 52%-ը գիշերում է հաստատություններում: Հատուկ հաստատությունների թիվը 1991 թվականի համեմատությամբ (47 հաստատությունում) աճել է 14,8%-ով, դրանցում ընդգրկվածների թիվը (8500 սովորող)՝ 19,6%: Ոչ պետական հատուկ հանրակրթական հաստատություններ հանրապետությունում չեն գործում:

Վերջին տարիներին աշխատանքներ են տարվում ֆիզիկական կամ մտավոր արատ ունեցող երեխաների ուսուցումը հանրակրթական դպրոցում կազմակերպելու, նրանց հասարակության մեջ լիարժեք ինտեգրելու ուղղությամբ: Նախատեսվում է նաև հատուկ կրթության հաստատությունների անցումը կառավարման և սովորողների թվով ֆինանսավորման նոր եղանակի:

Ինչպես 2004-2006թթ., այնպես էլ 2005-2007թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերով, կրթության բնագավառում պետության հիմնական գերակայություն է հանդիսանում հանրակրթության ոլորտը, որին էլ ուղղված է կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը:



Հանրակրթության ոլորտում ընթացող բարեփոխումները պայմանականորեն կարելի է բաժանել 2 փուլի՝

1998-2002թվականներ - արմատական կառուցվածքային բարեփոխումներ և բովանդակային բարեփոխումների հիմքերի ստեղծում.

2003 թվականից հետո - բովանդակային բարեփոխումներ և կառուցվածքային բարեփոխումների շարունակում:

Հանրակրթության կառուցվածքային բարեփոխումներն ուղղված էին հանրակրթության կառավարման ապակենտրոնացմանը և կրթական հաստատությունների ինքնավարության աճին՝ ներառելով.

- հանրակրթական հաստատությունների ինքնուրույն կազմակերպարարական կարգավիճակի հաստատումը,
- կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը դրանցում,
- դպրոցների ղեկավար կադրերի կառավարման կարողությունների բարձրացումը,
- հանրակրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Այսօր արդեն հանրապետության բոլոր դպրոցներն անցել են դպրոցական խորհուրդներով կառավարման նոր ձևին և ըստ աշակերտների թվի՝ ամբողջական գումարով ֆինանսավորման մեխանիզմին:

Ֆինանսավորման նոր կարգի կիրառումը մեծացնում է դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության ինքնուրույնությունը, հնարավորություն է տալիս ինքնուրույն կազմել բյուջե՝ ելնելով դպրոցի և համայնքի կրթական կարիքների առաջնայնություններից և նպատակային

1997 թվականին ներդրվել է այսօր գործող դասագրքերի իրացման համակարգը, որը հնարավորություն է ընձեռել աշակերտներին ապահովել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հիմնական առարկաների դասագրքերով, դրանք տրամադրելով մեկ տարի օգտագործման հիմունքով: Միաժամանակ ստեղծվել է «Դասագրքերի շրջանառու հիմնադրամ» (ԴՀՀ), որն ապահովում է դասագրքերի իրացման գումարների հավաքագրումը և կազմակերպում է դպրոցների պահանջարկների հիման վրա դրանց հետագա հրատարակումը: Սկսած 2002 թվականից դասագրքերի հրատարակումը կատարվում է դպրոցների կողմից հավաքագրված գումարներով:

օգտագործել սեփական միջոցները՝ կատարելով էական խնայողություններ:

Բարեփոխումների առաջին փուլում դրվեցին նաև հանրակրթության բովանդակության վերափոխման հիմքերը, վերանայվեցին ուսումնական ծրագրերը, համապատասխանեցվեցին ստեղծված սոցիալ-հասարակական պահանջներին, իրականացվեց դասագրքերի հրատարակման և սովորողներին դասագրքերով լիարժեք ապահովման գործընթացը:

1997-2002 թվականներին հրատարակվել և դպրոցներին են բաշխվել 112 անուն դասագիրք ու 47 անուն ուսուցչի ձեռնարկ:

Կրթության ոլորտի ներկա փուլի բարեփոխումները աջակցվում են Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի միջոցով, որը մասնավորապես ուղղված է.

- ա) հանրակրթության որակի բարձրացմանը.
- բ) հասարակության ու տնտեսության արդի պահանջներին Հայաստանի կրթության համակարգի համապատասխանության ապահովմանը:

Հանրակրթական համակարգի գերակա խնդիրը աշխատավարձերի բարձրացումն է:

3.1.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն

Ներածություն

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակն է հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա սովորողներին նախապատրաստել նախնական մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքային գործունեությունը¹⁸:

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:


Նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, համապատասխան լիցենզիա ունեցող և անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ: Նախնական մասնագիտական կրթության տևողությունը՝ կախված դիմորդների նախընթաց կրթությունից և ընտրած մասնագիտությունից, 1-3 տարի է: Նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում է 26 արհեստագործական ավագ դպրոցներում և 12 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում: Համակարգում ընդգրկված են շուրջ 2700 սովորողներ:

Միջին մասնագիտական կրթության նպատակը միջին մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն է, հիմնական ընդհանուր կամ միջնակարգ ընդհանուր կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը¹⁹:

¹⁸ «Ռազմավարություն ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման», Երևան, 2004թ.

¹⁹ «Կրթությունը Հայաստանում», Երևան, 2004թ.

Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՄՈւՅ)՝ քոլեջներում և ուսումնարաններում: Այսօր գործում են 81 պետական ՄՄՈւՅ, որոնցում ուսանում են շուրջ 29500 սովորողներ, ինչպես նաև 23 ոչ պետական ՄՄՈւՅ՝ շուրջ 1800 սովորողով:



Միջին մասնագիտական կրթության ոլորտում ներդրվել է վճարովի ուսուցման ընդունելության նոր կազր, ինչպես նաև կառավարության որոշումով հաստատվել է միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչը, որը սահմանում է՝

- միջին մասնագիտական կրթության ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատության սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը,
- միջին մասնագիտական կրթության շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:

Ուսուցումը մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվում է անվճար և վճարովի հիմունքներով:

Պետական հաստատությունների անվճար ուսուցման ընդունելության տեղերի թիվն ըստ մասնագիտությունների յուրաքանչյուր տարի հաստատում է ՀՀ կառավարությունը՝ ելնելով համապատասխան մասնագետների պահանջարկից և պետական բյուջեով մասնագիտական կրթության համար նախատեսված գումարների ծավալից:

Վճարովի ուսուցման ընդունելության տեղերի թիվն ըստ հաստատությունների և դրանց մասնագիտությունների սահմանում են համապատասխան նախարարությունները:


Ուսման վարձի չափերը սահմանում են ուսումնական հաստատությունները:

Դրանք կազմում են 30-ից մինչև 200 հազար դրամ և կախված են ինչպես մասնագիտությունից, այնպես էլ ուսումնական հաստատությունից: Առավել բարձր են այն մասնագիտությունների ուսուցման վարձավճարները, որոնց կազմակերպումն առավել մեծ ծախսեր են պահանջում:

Ուսուցումը նախնական և միջին մասնագիտական հաստատություններում իրականացվում է մասնագիտությունների ուսումնական պլաններով, որոնք իրենց մեջ ներառում են ուսուցանվելիք առարկաների ցանկը, դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ժամանակը և բաշխումն ըստ կիսամյակների:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ուսումնական պլանները և առարկայական պլանները, կրթության լիազորված պետական մարմնի հաստատած պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, մշակում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների ուսանողների թիվը՝ ըստ մասնագիտական խմբերի.



Ուսումնական հաստատություններում դասավանդող մանկավարժների 73.8% կանայք են, ինչը հիմնականում պայմանավորված է տղամարդկանց համար անհրապույր վարձատրության պայմաններով:

Մտահոգության տեղիք է տալիս նաև դասախոսների տարիքային կազմը: Միջին տարիքն այստեղ 55-ն է: Միջինում մեկ դասախոսին ընկնող ուսանողների թիվը կազմում է 7.0, ինչը ռացիոնալ հարաբերակցություն չէ:

Սոց. տվյալների համաձայն հարցված երիտասարդների զգալի մասը գտնում է, որ դպրոցը համալրված չէ համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով: Ցավոք դա իր բացասական ազդեցությունն է թողնում կրթության որակի վրա :

Ուսումնառության ընթացքում հիմնականում շարունակում է գերիշխել տեսական ուսուցումը: Սովորաբար եռամսյա-քառամսյա տեսական ուսուցմանը հաջորդում է 2-4 շաբաթ տևողությամբ գործնական ուսուցումը (պրակտիկան): Կիրառվում են պրակտիկայի հետևյալ տեսակները. ուսումնական (իրականացվում է ուսումնական

հաստատություններում), տեխնոլոգիական (իրականացվում է կազմակերպություններում), նախադիպլոմային (իրականացվում է ավարտական ատեստավորումից անմիջապես առաջ):

Ներկայումս մասնագետների պահանջարկի կտրուկ նվազման և ձեռնարկությունների սեփականաշնորհման հետևանքով լուրջ դժվարություններ են առաջացել պրակտիկաների կազմակերպման գործում: Այդ իսկ պատճառով պրակտիկաները հաճախ թերի են իրականացվում, առանձին դեպքերում էլ կրում են ձևական բնույթ, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակի վրա:

Չնայած ՀՀ-ում մասնագիտական ուսումնական բոլոր հաստատություններն ունեն իրենց սեփական շենքերը, սակայն խիստ տարբեր է դրանց ապահովվածությունը ուսումնական բազայով՝ լաբորատոր և արհեստանոցային սարքերով և սարքավորումներով, դիդակտիկ պարագաներով, ուսումնական և ուսումնամեթոդական գրականությամբ:

Դասագրքային ապահովվածությունը նույնպես շարունակում է մնալ անբավարար, քանի որ վերջին ժամանակաշրջանում ՀՀ-ում մասնագիտական գրականություն գործնականում չի հրատարակվել, իսկ օտարերկրյա գրականության զանգվածային ձեռքերումը հնարավոր չէ ֆինանսական միջոցների սղության, նաև անիմաստ է ուսանողների օտար լեզուների անբավարար իմացության պատճառներով:


ՀՀ-ում գոյություն չունեն բնակչության խոցելի խմբերի (հաշմանդամներ, սոցիալապես մերժվածներ և այլն) համար նախատեսված հատուկ կրթական և ուսուցման ծրագրեր: Օրենսդրությամբ միայն սահմանված է, որ հաշմանդամները, ծնողական երեխաները և զոհված զինծառայողների երեխաներն ու ամուսիններն օգտվում են պետական մասնագիտական ուսումնական հաստատությունները ընդունվելու արտոնություններից:

Չնայած բոլոր այս դժվարություններին, սոց. հարցումները ցույց են տալիս, որ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը ՀՀ-ում մատչելի է: Հարցված երիտասարդների 13.9 տոկոսը գտնում է, որ լիովին մատչելի է, 43.5 տոկոսը՝ գտնում է, որ բավական մատչելի է, իսկ 7.3 տոկոսը՝ ընդհանրապես մատչելի չէ:

ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է: Սակայն մի շարք այլ նախարարություններ ևս իրենց ենթակայության տակ ունեն միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ²⁰:

²⁰ «Հայաստանի քոլեջները, ուսումնարանները և վարժարանները 2005-2006թթ.» Երևան, 2005թ.

Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների թիվը՝ ըստ ենթակայության.



Պետական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն անվճար համակարգում ամբողջովին իրականացվում է պետական բյուջեից: Սակայն պետությունը գործնականում ապահովում է միայն պահպանման ծախսերը հոգալու համար(մանկավարժների աշխատավարձ, կրթաթոշակ, որոշ կոմունալ ծախսեր): Ընդ որում այդ հատկացումները կատարվում են ելնելով միայն անվճար ուսուցման համակարգում սովորողների թվից²¹:

Մտահոգության առարկա է ուսուցիչների ցածր վարձատրությունը: Կրթության վրա կատարված պետական ծախսերի բաժինը համախմբված բյուջեում առաջիկա տարիներին կմեծանա: Ծրագրված է ավելացնել կրթական ծրագրերի բաժինը համախմբված բյուջեում՝ 2006 թվականին 13% է, իսկ 2015թվականին՝ մոտ 16%-ի՝ 2003թվականի 9.4%-ի փոխարեն:

Անփոփում

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Կրթության ոլորտի էական բարեփոխումը և զարգացումը անհրաժեշտ է, քանի որ այսօր գերխնդիր է դառնում ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Այս պայմաններում կրթության հիմնախնդիրը սովորողներին ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիքների հաղորդումն ու ուսուցումն է, այլև որոշումներ ընդունելու, ակտիվ հաղորդակցվելու ունակ քաղաքացու ձևավորումը:

Թեև կրթության ոլորտում կատարվող ծախսերի գերակշիռ մասը բաժին կընկնի հանրակրթությանը, սակայն գերակա խնդիր է նաև մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերի որակի բարելավումը, դրանց՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին համապատասխանելու ապահովումը:

²¹ «Գր սոցիալ-տնտեսական բարեփոխումները և մասնագիտական կրթության զարգացման հեռանկարները», Երևան, 2001թ.

3.2 Բարձրագույն կրթություն

Ներածություն

Բարձրագույն մասնագիտական կրթությունը՝ առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթություն է²²:

Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստումն ու որակավորումն է:


ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը իրականացվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի ծրագրերով՝ պետական և ոչ պետական ուսումնական

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով պետությունն ապահովում է անցումը բարձրագույն կրթության որակավորման երկաստիճան համակարգին, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գիտելիքների ստուգման և որակի գնահատման, ուսուցման կազմակերպման նոր ձևերի, ներառյալ՝ կրեդիտային համակարգի ներդրմանը: Օրենքը բարձրագույն ուսումնական հաստատության սովորողին իրավունք է տալիս նաև իր հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների ընտրել մասնագիտություն, բուհի տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել այլ բուհ, ներառյալ օտար պետություններում, թեև այս հարցում առկա են որոշ խոչընդոտներ և սահմանափակումներ:

հաստատություններում, առկա է հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գործում են ասպիրանտուրա և դոկտորանտուրա:

Սոց. հարցումները ցույց են տալիս, որ բարձրագույն կրթությունը ՀՀ-ում այնքան էլ մատչելի չէ երիտասարդների համար: Դպրոցում ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար և անհարժեշտ են մասնավոր նախապատրաստական դասընթացներ, որն իրականացվում է վճարովի հիմունքներով: Այդպես են կարծում հարցված երիտասարդների ավելի քան 80 տոկոսը:

Ինչ վերաբերվում է բուհերում սովորելու շարժառիթին, ապա սոց. հարցումների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.



2004-2005 ուսումնական տարում հանրապետությունում գործող պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ընդհանուր թիվը կազմել է 77944 մարդ: Այդ ուսումնական տարում

²² «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.3, 2004թ.

հանրապետությունում գործել են 20 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (բուհ), 10 մասնաճյուղ և 73 ոչ պետական բուհ, որից 33-ը հավատարմագրված են կամ ունեն հավատարմագրված մասնագիտություններ:

Ներկայումս հանրապետության 9 բուհերում գործում են ասպիրանտուրա և դոկտորանտուրա, իսկ 3 բուհերում՝ մագիստրատուրա, որոնցում անվճար հիմունքով սովորում են 576 մագիստրանտ, 1196 ասպիրանտ և 28 դոկտորանտ, վճարովի հիմունքով՝ 1295 մագիստրանտ և 96 ասպիրանտ:

Համալսարանների պատկառելի թիվը երիտասարդների համար չի նշանակում մեծ միջոցների և տեխնիկական հնարավորությունների առկայություն: Միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են մասամբ բավարարել ուսանողների կարիքները, մինչդեռ այդ խավի մի կարևոր հատվածի համար դա մնում է դժվարին հիմնախնդիր, որովհետև պետական կրթաթոշակի ներկա չափը (ամսական 5000 դրամ) նրանց հնարավորություն չի տալիս հոգալ նույնիսկ հիմնական ծախսերը:

Մասնագիտական գրականության և ուսումնական ձեռնարկների ձեռքբերումը ևս խնդիր է և սոց. հարցումների արդյունքում մենք ունենք հետևյալ պատկերը.

Չեր ընտանեկան բյուջեն հնարավորություն չունի մեզ բերել մասնագիտական գրականություն. ուսումնական ձեռնարկներ

| | | |
|----|--------|------|
| 1. | Այո | 20.4 |
| 2. | Մասամբ | 47.3 |
| 3. | Ոչ | 29.2 |

Ինչ վերաբերվում է ինքնակրթությանը, ապա սոց. հարցումների ցուցանիշները հետևյալն են.

Ինքնակրթության ո՞ր ձևերից եք Դուք առավելապես օգտվում (մինչև 3 պատ.) %

| | | |
|---|---------------------------|------|
| 1 | Գրքեր. ամսագրեր | 56.3 |
| 2 | Ինտերնետ | 24.8 |
| 3 | Մամուլ | 20.3 |
| 4 | Հեռուստատեսություն | 86.7 |
| 5 | Ռադիո | 43.1 |
| 6 | Թանգարաններ. ցուցասրահներ | 2.1 |
| 7 | Կինո. թատրոն | 7.1 |
| 8 | Շրջապատից | 0.8 |

Նշվածներից ո՞րը Չեր համար մատչելի չէ (մի քանի պատասխան) %

| | | |
|---|---------------------------|------|
| 1 | Գրադարաններ | 19.0 |
| 2 | Ինտերնետ | 54.8 |
| 3 | Մամուլ | 7.4 |
| 4 | Հեռուստատեսություն | 1.4 |
| 5 | Ռադիո | 2.6 |
| 6 | Թանգարաններ. ցուցասրահներ | 48.9 |
| 7 | Կինո. թատրոն | 41.0 |
| 8 | Բոլորն էլ մատչելի են | 25.6 |

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական ֆինանսավորումը կազմում է կրթության բյուջեի մոտ 12 %-ը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում ձեռնարկված բարեփոխումները ներառում են կրթության կառուցվածքը,

բովանդակությունը և կառավարումը: Իրականացվում է բարձրագույն կրթության նոր մասնագիտությունների բացում (աստվածաբանություն, արվեստաբանություն, սոցիալական աշխատանք, քաղաքագիտություն և այլն), հենքային հումանիտար պատրաստության ընդլայնում (իրավունք, տնտեսագիտություն և հումանիտար այլ պարտադիր ու այլընտրանքային դասընթացների ներմուծում) և ուսուցման հումանիզացում. ընդլայնվել է բուհերի ինքնավարությունը կառավարման և ֆինանսավորման հարցերում:

ՀՀ կառավարության հաստատած լիցենզավորման և հավատարմագրման կարգերի կիրարկման շնորհիվ կանոնակարգվում է ոչ պետական բուհերի գործառույթունը, ինչը խթանում է մրցակցությունը բարձրագույն կրթության ոլորտում:

Նախատեսված են բարձրագույն կրթության բարեփոխումների հետևյալ ուղղությունները.

- բարձրագույն կրթության համակարգի ներքին և արտաքին արդյունավետության աճի ապահովում.
- աշխատանքային շուկայի հետ կապերի ուժեղացում.
- բարձրագույն կրթության համակարգի մատչելիության ապահովում բնակչության բոլոր խավերի համար.
- բարձրագույն կրթության համակարգի կառավարման բարեփոխում.
- պետական ֆինանսավորման բարեփոխում.
- բարձրագույն կրթության համակարգի ինտեգրում եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և ընդգրկում Բոլոնիայի գործընթացում:

1999 թ. հունիսի 19-ին Բոլոնիայում եվրոպական 29 երկրների կրթության նախարարները ստորագրեցին Բոլոնիայի հիմնադիր հռչակագիրը, որտեղ ստորագրյալ երկրները պարտավորություն ստանձնեցին

| |
|--|
| Բոլոնիային գործընթացի հիմնական ուղենիշն է՝ մերձեցնել բարձրագույն կրթությունը եվրոպայում մի միասնական, թափանցիկ և փոխճանաչված համակարգի, որը կընդգրկի բազմազան ազգային համակարգերը կազմակերպական ընդհանուր շրջանակի մեջ, արդյունքում նախատեսելով երեք՝ բակալավրի, մագիստրոսի և դոկտորական մակարդակների: |
|--|

վերակառուցել և մերձեցնել իրենց բարձրագույն կրթության համակարգերը: Բոլոնիայի հռչակագրի հիմնարար սկզբունքները, ըստ էության, եվրոպական բարձրագույն կրթական բարեփոխման ծրագիր է, որը հայտնի է որպես Բոլոնիայի գործընթաց:

Բարձրագույն կրթության նոր որակի հասնելու համար, մասնավորապես, նախատեսվում է նաև իրականացնել.

- բարձրագույն մասնագիտական կրթության հիմնահարցի լուծում, այդ թվում՝ մասնագետների պատրաստման պատվերի ձևավորում, պայմանագրային կադրերի պատրաստում և կադրային քաղաքականության իրականացում գործատուների և սոցիալական այլ գործընկերների մասնակցության ապահովմամբ.

- մասնագիտությունների ցանկի օպտիմալացում, մասնագիտական կրթության կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերակառուցում, հաստատությունների ցանկի օպտիմալացում, համալսարանական համալիրների ստեղծում.
- բարձրագույն ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի արմատական բարելավում.
- բուհական գիտության զարգացում՝ որպես մասնագետների պատրաստման բարձր որակի ապահովման, մասնագիտական կրթության բովանդակության շարունակական նորացման հիմնական գործոնի կարգավիճակի բարձրացում.
- կադրերի շարունակական մասնագիտական աճի համար պայմանների ստեղծում, մասնագիտական կրթության տարբեր մակարդակների հաջորդայնության ապահովում և լրացուցիչ մասնագիտական կրթության արդյունավետ համակարգի ստեղծում, որը կապահովի բնակչության հոգեբանական աջակցությունը գործունեության ձևերի փոփոխման դեպքում:

Հայաստանի կրթական ոլորտի զարգացման համատեքստում Բոլոնիայի գործընթացին ներկայումս առանցքային տեղ է հատկացվում: Այն անհրաժեշտ է արդյունավետ բուհական մասնագիտական կրթական համակարգի կայացման և միասնական չափանիշների մշակման ու ներդրման համար՝ նվազեցնելով եվրոպական առաջատար կրթական հաստատությունների հետ տարբերություններն ու հակասությունները: Այն յուրահատուկ «կրթական չափանիշ» է, որը պահանջում է նոր կրթական որակ:

Խնդիրը բարդանում է նրանով, որ անհրաժեշտ է արմատապես փոխել բավականին «պահպանողական» այնպիսի մի ոլորտ, ինչպիսին է բարձրագույն մասնագիտական կրթության գործող համակարգը: Սակայն այս փոփոխությունները հնարավորություն կտան ապագայում միջկրթական համակարգերի ինտեգրման միջոցով՝ Հայաստանի համար կայուն տեղ ապահովել կրթական համաշխարհային տարածության մեջ:

Բոլոնիայի գործընթացին Հայաստանի մասնակցությունը զգալիորեն կբարելավի և կմեծացնի ինքնակրթության դերը, որը, ի դեպ, ներկայումս բավականին ցածր է, որովհետև համաձայն որոշ փորձագետների՝ շատ են լսարանային պարապմունքները, կրկնվող տեսական դասընթացները, անարդյունավետ են ուսանողների մասնագիտական պրակտիկայի կազմակերպումը և առկա է մասնագիտական նոր գրականության պակաս: Նշված խնդիրների պատճառով էլ ուսանողները հնարավորություն չեն ունենում առավել արդյունավետորեն կազմակերպել իրենց ինքնակրթման գործընթացը: Դրա հետ զուգահեռ, կբարձրանա նաև հետբուհական մասնագիտական կրթության որակը, գիտական աշխատանքների կատարման և որակյալ գիտական կադրերի վերապատրաստման մակարդակը:

3.2. Հետբուհական մասնագիտական կրթություն և գիտություն

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում մեծ տեղ է հատկացվում գիտությանն ու կրթությանը: Բարձրագույն կրթական համակարգը կառավարվում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հետբուհական մասնագիտական կրթություն՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն.

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք. հոուն 3


Դեռևս Խորհրդային Միության ժամանակներից հայաստանյան գիտական միտքը աշխարհահռչակ ձեռքբերումներ է ունեցել: Բարձր զարգացած են եղել գիտատար արդյունաբերական ճյուղերը, հատկապես հիշառժան է Հայաստանի ատոմակայանը, քիմիական արդյունաբերությունը, ինչպես նաև էլեկտրոնիկայի զարգացումը, հաշվիչ սարքավորումները: Ներկայումս պետության կողմից պաշտոնապես առաջնային են ճանաչվել գիտական այնպիսի ուղղվածություններ, ինչպիսիք են բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումը:

Երիտասարդությունը և հետբուհական կրթությունը

ԲՈՒՀ ավարտելուց հետո շատ երիտասարդներ ցանկություն են հայտնում ուսումը շարունակել հետբուհական ուսումնական հաստատություններում: Ընդունելության կարգը մրցութային է, ինչը և իրականացվում է նախկինում ցուցաբերած առաջադիմության և ընդունելության քննությունների միջոցով:

Ձեկույցի մշակման շրջանակներում իրականացվել է սոցիոլոգիական հարցում երիտասարդության շրջանում, որի արդյունքում հստակ է դարձել հետևյալ իրավիճակը: Բարձր որակավորված մասնագետ դառնալը իբրև ԲՈՒՀ-ում սովորելու հիմնական շարժառիթ են դիտում հարցմանը մասնակցած երիտասարդների 46.3%-ը, իսկ հետբուհական մասնագիտական կրթությանը մատչելիությունը, ըստ մեր հարցման մասնակիցների, ավելի ցածր է, քան բարձրագույնինը:

Հետբուհական կրթության վերաբերյալ կարծիքները բաշխվում են հետևյալ տոկոսային համամասնությամբ, որտեղ 1-ը բոլորովին մատչելի չէ, իսկ 5-ը լիովին մատչելի.




Չետրուհական կրթության մատչելիության խանգարող հանգամանքներից նրանք առաջինը մշել են գիտական աշխատողների ցածր աշխատավարձը՝ 65%, նրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող անորոշ ապագան՝ 51,8% և երիտասարդներին գիտական աշխատանքներում ներգրավվելու մրցույթային մեխանիզմներում սուբյեկտիվ մոտեցումը՝ 48,6%:

Աղյուսակ 1. Ասպիրանտների թվաքանակը ըստ տարիների, թեկնածուական ատենախոսությունների թիվը:

| տարի | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|------|------|------|------|------|
| Ասպիրանտների թվաքանակը (տարեվերջին) | 1032 | 992 | 1327 | 1292 | 1377 |
| Ասպիրանտների պատրաստումը | 256 | 310 | 276 | 344 | 331 |
| Ընդամենը ավարտածներից պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն | 98 | 127 | 113 | 121 | 118 |

Այնուհետև, ինչպես փաստում են սոցիոլոգիական հարցման արդյունքները,




Նկար 1. Գիտության ֆինանսավորման ցուցանիշներ (մլն. դրամով արտահայտված):

մասնագիտական կրթություն ստանալուց հետո իրենց մասնագիտությամբ աշխատելը լիովին հավանական են համարում միայն հարցվածների 12%, իսկ բոլորովին անհավանական 20,5%:

ՀՀ գիտության ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեից՝ թեմատիկ և բազային ֆինանսավորման սկզբունքներով. մեկ գիտական աշխատողին հասնում է ոչ ավել, քան 25 000 դրամ աշխատավարձ, ինչը զիջում է աշխատավարձին: Իսկ հարցմանը հանրապետությունում գրանցված միջին պատասխանած երիտասարդների միայն 3,4%-ն են պատկերացրել իրենց առաջիկա մեկ-

երկու տարվա աշխատավարձը մինչև 45 000 դրամ (նկար 2): Այս պատճառով շատ մեծ մտավոր ներուժ ունեցող երիտասարդներ լքում են գիտական ոլորտը:

Նկար 1-ում բերված են 1999-2003թթ. պետական բյուջեից գիտության ֆինանսավորման ցուցանիշները (մլն. դրամ): Ինչպես երևում է այդ ցուցանիշներից ֆինանսավորման աճ գրեթե չկա և այս պարագայում հարկ է նշել, որ գիտական կազմակերպությունների թիվը 1999 թվականի համեմատ 2003թ. 82-ից դարձել է 99-ը:



Նկար 2. Բարձրագույն կրթությամբ երիտասարդների առաջիկա 1-2 տարիների համար ցանկալի աշխատավարձի չափը

Մեկ նկատառում ևս. քանի որ պետությունը էական դեր է հատկացնում գիտության զարգացմանը, ապա ըստ ՀՀ օրենսդրության՝ ասպիրանտուրայում սովորող երիտասարդ տղաները ստանում են տարեկետման իրավունք (ՀՀ բանակում պարտադիր զինվորական ծառայություն անցնելուց), իսկ հետագայում այս իրավունքը պահպանվում է, եթե նրանք սահմանված ժամկետում պաշտպանում են թեկնածուական ատենախոսություն և աշխատում են իրենց մասնագիտությամբ: Այս սկզբունքն ունի կարևոր նշանակություն երկրի զարգացման, գիտության երիտասարդացման և գիտության ասպարեզում սերնդափոխություն ապահովելու համար:

Մեր կրթության որակը և նրա մրցունակությունը Հայաստանի աշխատաշուկայում ըստ հարցման մասնակիցների մեծամասնության (45,8%) միջին մակարդակի է: Իսկ որոշ փորձագետների կարծիքով՝ նրա որակը ցածր է և չի համապատասխանում համաշխարհային արդի չափանիշներին: Ըստ տրված պատասխանների՝ հեռուստատեսությունը դարձել է երիտասարդների տեղեկատվություն ստանալու, ինքնակրթության ամենատարածված ձևը, նրան են հաջորդում գրքերն ու ամսագրերը, ապա ռադիոն: Ինտերնետը չորրորդ տեղում է, և դա բացատրվում է այն հանգամանքով, որ առաջինը ըստ ոչ-մատչելիության հենց ինտերնետն է (54.8%): Իսկ սա նշանակում է, որ այս ոլորտը դեռ առավել ուշադրության և աջակցության կարիք ունի: Համաշխարհային ներկա զարգացվածության պայմաններում և տեղեկատվական

բարձր տեխնոլոգիաների համակարգում ինտերնետից օգտվելու ոչ-մատչելիությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում գիտության զարգացմանը և երիտասարդ գիտնականների թվի աճին: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Հայաստանը պատկանում է եվրոպական այն երկրների թվին, որոնց համար, ապա հասկանալի է դառնում, որ գիտական ներուժի զարգացումը ռազմավարական նշանակություն ունի:

3.3. Ոչ ֆորմալ կրթություն

Ներածություն

Արդեն շուրջ 10-15 տարի է Հայաստանի հասարակական սեկտորը փորձում է կրթական ոլորտում ի հայտ եկած մարտահրավերներին արժանավայել պատասխանելու ձևեր գտնել: Ինչպես միշտ այն գործում է ֆորմալ համակարգերին զուգահեռ եւ փորձում է իր աշխատանքով կոմպենսացնել համակարգի թերությունները եւ բացթողումները: Կրթական համակարգում հասարակական սեկտորի առաջարկը հանդես է գալիս ոչ ֆորմալ կրթության ինստիտուտի տեսքով: Ի՞նչ է սա, եւ ինչո՞վ է տարբերվում ֆորմալ ակադեմիական համակարգից:

Մեզանում ներկայումս կրթությունը դիտարկվում է որպես անհատի և հասարակության զարգացման հիմնական գործոններից մեկը: Միաժամանակ հարկ է արմատական փոփոխություններ: Ներդրվել են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ էլեկտրոնային կրթություն (e-education), դիստանցիոն կրթություն (distance learning), անընդհատ կրթություն (life-long learning) և այլն²³:

Երիտասարդության Ազգային Ձեկույցի այս մասում խնդիր է դրված նկարագրել ՀՀ-ում ոչ-ֆորմալ կրթության իստիտուտի զարգացման ներկայիս աստիճանը եւ անդրադառնալ վերջին ժամանակներս ի հայտ եկած զարգացման տեղեկանքներին:

Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների շրջանում անցկացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երիտասարդական կազմակերպությունների համար ոչ ֆորմալ կրթությունը զբաղեցնում է կարևոր տեղ: Կազմակերպությունները նշել էին բոլոր այն ոլորտները, որոնցում նրանք ներգրավված են (ընդ որում, կար բազմակի ընտրության հնարավորություններ, և նրանք կարող էին ընտրել մեկից ավելի ոլորտներ): Հարկ է նշել, որ 51,6%-ը ընտրել էր ոչ ֆորմալ կրթությունը, և այն չորրորդ տեղում է (առաջինը մարդու իրավունքներն են՝ 62,1%): Երիտասարդական ՀԿ-ների ղեկավարները հարցման ժամանակ նշել են նաև այն ոլորտները, որտեղ, ըստ իրենց, անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ: Կարևորվել են հասարակայնության հետ աշխատանքը (34,5%) և միջազգային ծրագրերի կազմակերպումը (41,4%), կառավարման, մարդու իրավունքներին առնչվող խնդիրները (27,6%), ուսուցողական

²³ Building Bridges for Learning. The recognition and value of non-formal education in youth activity, (a study carried out by Dr. P. Sahlberg). European Youth Forum in cooperation with the National Board of Education – Finland, 1999.

կենտրոնների ստեղծումը, մասնակցության և քաղաքացիության դասընթացները (24,1%)²⁴:

Հարկ է նշել նաև, որ այն ՀԿ-ները, որոնք զբաղվում են ոչ ֆորմալ կրթությամբ, հաճախ այլ կերպ են պատկերացնում այդ մեթոդները, և այստեղ մենք գործ ունենք տեղեկատվության պակասի հետ: Ուսանողության շրջանում (որը երիտասարդության ամենաակտիվ մասն է) կատարած հարցման արդյունքներով՝ ուսանողների գրեթե 86%-ը պատասխանել է, որ տեղյակ չէ ոչ ֆորմալ կրթության մասին: Սակայն «տեղյակ» ուսանողների գրեթե 65%-ը չի կարողացել որոշ չափով ընդունված պատկերացումներին համահունչ բացատրել այս հասկացությունը:

Այսպիսով, կարող ենք վստահ նշել, որ երիտասարդության շրջանում ոչ ֆորմալ կրթության մասին իրազեկությունը գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա:

Երիտասարդական քաղաքականության զարգացման և գնահատման համար մշակվել են տարբեր ինդիկատորներ: Այդ ինդիկատորների թվում նշվում է նաև ոչ ֆորմալ կրթությունը: Երիտասարդական քաղաքականության հիմնասյուներից է համարվում, թե ինչպես երիտասարդները կարող են դառնալ ակտիվ քաղաքացի և հասարակության օգտակար ներդրողներ:

Կարևոր չափանիշ է, թե ինչպես է կառավարությունը խթանում ակտիվ կրթական գործընթացները ֆորմալ կրթության համակարգից դուրս:

Ոչ ֆորմալ կրթության խթանումը պետք է հանդիսանա ուժեղ ոչ կառավարական երիտասարդական հատվածի ստեղծման գրավականը: Երիտասարդական դասընթացները և երիտասարդ աշխատողների կարողությունների զարգացումը երիտասարդական ՀԿ-ներում և կառավարական կառույցներում պետք է ամրացնեն նրանց ունակություններն ու հմտությունները իբրև առաջնորդ, ինչպես նաև ուժեղացնեն նրանց ներդրումը երիտասարդական քաղաքականության զարգացմանը ²⁵²⁶:

1998թ. ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգում չեն արժարժվում ոչ ֆորմալ կրթություն կամ դասընթացներ հասկացությունները: ՀՀ կրթության ոլորտը ղեկավարող համապատասխան օրենսդրական ակտերում նույնպես դեռևս որեւէ տեղ չի գտել ոչ ֆորմալ կրթություն հասկացությունը:

Ակնհայտ է մի բան, որ առանց լուրջ, կազմակերպված, համակրգվող կրթական գործընթացի հնարավոր չէ կյանքի կոչել հայեցակարգում նշված սկզբունքներն ու նպատակները: Սակայն հարկ է նշել, որ պետական բյուջեից տարբեր

²⁴ Ռ.Մարկոսյան, Ա.Թադևոսյան, Տ.Մարգարյան,-«Երիտասարդական կամուրջներ դեպի Եվրոպա» Հայաստանի երիտասարդական կառույցները, ինտեգրացիա և կայուն զարգացում: «Փարոս» երիտասարդական միություն ՀԿ, Հայկական երիտասարդական կազմակերպությունների ցանց, Երևան, 2003.

²⁵ Basic indicators of a national youth policy. International Council of National Youth Policy, www.icnyp.net

²⁶ 11 Indicators of national youth policy. Presented by the Directorate of Youth and Sport of the Council of Europe during the launch of the National Action Plan for Youth Policy in Romania in 2001.

երիտասարդական սեմինարների, դասընթացների կազմակերպման համար հատկացվել են զգալի միջոցներ:

Ոչ ֆորմալ կրթության զարգացման համար պետք է տարվի նպատակասլաց քաղաքականություն համապատասխան դասընթաց վարողների (թրեյներների) խմբերի (ակունքների) զարգացման համար: Այս խնդիրը նույնպես կարևոր ինդիկատոր է երիտասարդական քաղաքականության համար²⁶:

| ՈՉ-ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ |
|--|
| <p>Ոչ ֆորմալ կրթությունը նկարագրվում է որպես մի կրթական գործընթաց, որն ընկած է չֆորմալիզացված (informal) եւ ֆորմալ (formal) ակադեմիական կրթությունների միջև: Հաճախ օգտագործում են նաև հետևյալ սահմանումը՝ «կազմակերպված կրթական գործունեություն, որը դուրս է գործող ֆորմալ կրթական համակարգից»:</p> <p>Այն բնութագրվում է պակաս համակարգվածությամբ եւ պակաս միտվածությամբ դեպի քննություններ եւ դիպլոմներ, քան ֆորմալ կրթական համակարգը, եւ որը առավել գիտակցական եւ կազմակերպված է, քան չֆորմալիզացված կրթությունը: Այս կրթական մեթոդի հիմքերն ընկած են «այլընտրանքային կրթական մտածողության» կոնցեպցիայում, որն առնչվում է 70-ական թվականների կոնստրուկտիվիստական դպրոցի ներկայացուցիչներ Գրունդվիգի, Պաուլ Ֆրեյրեի, Մարիա Մոնտեսորիի, ինչպես նաև այսօրվա կրթական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներ Պետրիկ Ալաթերիի եւ Կինչելոյի, Սթեյնբերգի եւ Հինչիի աշխատանքներին: Ոչ ֆորմալ կրթական համակարգը սերտորեն կապված է նաև հոգեբանական թրեյնինգային տարբեր մեթոդալոգիաների հետ, որոնցից բազմաթիվ տարբեր հարմարեցված են ոչ ֆորմալ կրթական թրեյնինգային ծրագրերում կիրառելու համար:</p> |
| <p>* Այստեղ չֆորմալիզացված կրթություն (informal education) ասելով հասկանում ենք այն կրթությունը, որը մարդը ստանում է իր սոցիալիզացիայի ընթացքում՝ ինքնաբերաբար: Այստեղ են դասվում բոլոր այն գիտելիքները, վարվելակերպի եւ շփման մոդելները, որոնք մարդը ստանում է ընտանիքի անդամների, ընկերների եւ այլ անծանց հետ շփվելիս, ինչպես նաև ՁԼՄ-ներից, ընթերցանությունից, ֆիլմերից եւ այլն:</p> <p>** Ֆորմալ կրթություն (formal education) ասելիս այստեղ հասկանում ենք ակադեմիական կրթական համակարգը՝ իր բոլոր փուլերով (դպրոց, բուհ, պրոֆեսիոնալ սովորեցման, մագիստրատուրա եւ այլն):</p> |

Հեղինակավոր միջազգային կազմակերպություններ, նպատակ ունենալով կանոնակարգել իրենց աշխատանքները ոչ ֆորմալ կրթության ոլորտում, ստեղծել են այսպես կոչված թրեյներական խմբեր (trainers pool), օրինակ՝ Եվրոպայի խորհրդի երիտասարդական տնօրինությունը, Եվրոպական երիտասարդական ֆորումը և ուրիշներ: Նման խմբերի գոյությունը աջակցում է մեթոդական և տեսական պատրաստվածության բարձրացմանը, նպաստում է թրեյներների ունակությունների և հմտությունների զարգացմանը և այլն: Հայաստանում առաջին թրեյներների խումբը ստեղծվել է Հայկական երիտասարդական կազմակերպությունների ցանցի կողմից (2001թ.):

Ոչ ֆորմալ կրթության զարգացման գործում մեծ դեր ունի Եվրոպայի խորհրդի երիտասարդական տնօրինությունը, որի շնորհիվ Ստրասբուրգում և Բուդապեշտում գործում են Եվրոպական երիտասարդական կենտրոններ: Երկար տարիների ընթացքում ձևավորվել է լուրջ փորձառություն այս բնագավառում, և երիտասարդության ոլորտը դարձել է ոչ ֆորմալ կրթության համար բնական միջավայր: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 1437 երաշխավորությամբ (Recommendation) ճանաչել է ՀԿ-ների կողմից հիմնականում

կիրառվող ոչ ֆորմալ կրթությունն իբրև կյանքի ողջ ընթացքի կրթության ինտեգրալ մաս, և Նախարարների կոմիտեին առաջարկել դիմել կառավարություններին՝ ճանաչելու ոչ ֆորմալ կրթությունն իբրև գործընկեր երիտասարդական քաղաքականությունում: Առաջարկվել է նաև ոչ ֆորմալ կրթությունը խրախուսել Եվրախորհրդի ծրագրերում և, մասնավորապես, երիտասարդական ոլորտում²⁷:

Հայաստանում առաջին երիտասարդական դասընթացը, որը համահունչ էր եվրոպական երիտասարդական կառույցների կողմից որդեգրած չափանիշներին, կազմակերպվել է 2002թ. ապրիլին և կրում էր «Երիտասարդական քաղաքականություն, միջազգային համագործակցություն և հակամարտությունների ձևավորում» խորագիրը: Դասընթացը կազմակերպվել էր Եվրոպայի խորհրդի երիտասարդական տնօրինության աջակցությամբ՝ այս կազմակերպության նոր անդամների աջակցության ծրագրի շրջանակներում: Դասընթացը ցույց տվեց Հայաստանում ոչ ֆորմալ կրթության մեթոդների հնարավոր խոչընդոտները: Երիտասարդների համար կիրառվող այս մեթոդները բավականին խորթ են՝ նրանք հստակ տարբերակում են դերերը (ուսուցանող և սովորող), հաճախ ծիծաղելի ու անլուրջ են դիտում առաջարկվող վարժությունները: Սա ֆորմալ (ակադեմիական) կրթության մոտեցումների հետևանք է, որտեղ գրեթե բացակայում են ինտերակտիվ մեթոդները կամ, օրինակ, սինուլիացիոն վարժությունները²⁸:

Նշված դասընթացներին հաջորդեցին մի քանի այլ ծրագրեր, որոնք ձևավորեցին նմանօրինակ և Եվրոպական երիտասարդական կառույցների շրջանում մեծ տարածում գտած երիտասարդական դասընթացների կազմակերպման մշակույթ:

Ներկայումս ՀՀ Կառավարության կողմից ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և ՀԿ սեկտորի նախաձեռնությամբ սկիզբ են դրվել Հայաստանում Ոչ-ֆորմալ կրթության Հայեցակարգի պատրաստման աշխատանքները: 2006թ. մարտին տեղի ունեցավ «Ոչ-ֆորմալ կրթության ինստիտուտը Հայաստանում» կոնֆերանսը, որտեղ քնարկվեցին Հայեցակարգի մշակման հնարավոր ուղիները: Այն փաստը, որ կոնֆերանսին մասնակցում էին պետական բոլոր համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀԿ սեկտորի տվյալ ոլորտի հիմնական փորձագիտական կառույցները, մեզ հնարավորություն տվեց տարբեր կողմերից քննարկել պետական հայեցակարգի մշակման եւ հաստատման գործընթացը, դրա ստեղծման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հիմնական սկզբունքները, որոնցով պետք է կառավարվի այս գործընթացը:

²⁷ Laurence Eberhard, The Council of Europe and youth: Thirty years of experience, Council of Europe, 2002.

²⁸ Ռ.Մարկոսյան, Ա.Թադևոսյան, Ա.Սինանյան «Երիտասարդական քաղաքականության, միջազգային համագործակցության և հակամարտությունների կարգավորում» դասընթացի ուսուցողական զեկույց: «Փարոս» երիտասարդական միություն ՀԿ, Երևան, 2002:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ ոչ-ֆորմալ կրթության ինստիտուտը Հայաստանում արդեն իսկ ունի իր ուրույն տեղը եւ գրանցվում են այս ոլորտի զարգացման լուրջ տեմդեմցներ:

Ամփոփում

- ա) ՀՀ հասարակական կազմակերպությունների սեկտորը խիստ կարեւորում է ոչ-ֆորմալ կրթության ինստիտուտի զարգացումը Հայաստանում:
- բ) Պետական համապատասխան գերատեսչությունների կողմից արդեն իսկ սկսվել է Ոչ-ֆորմալ կրթության ինստիտուտի զարգացման գործընթաց: ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակվում է Ոչ-ֆորմալ կրթության Հայեցակարգ:
- գ) Ոչ ֆորմալ կրթությունը հանդիսանում է պետական երիտասարդական քաղաքականության կարեւորագույն ինդիկատորներից մեկը, եւ այն անպայման կերպով պետք է համակողմակիորեն զարգացվի, թե՛ պետական սեկտորի եւ թե՛ համապատասխան հասարակական կազմակերպությունների կողմից:

ԳԼՈՒԽ IV

ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Ներածություն

Հայաստանը ավանդական երկիր է, դարերի ընթացքում ձևավորված հոգևոր-մշակութային բազմազան ժառանգությամբ և արժեքային համակարգով: Լինելով աշխարհի հնագույն քաղաքակրթություններից մեկի ներկայացուցիչ՝ հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում ստեղծել է մշակութային հարուստ ժառանգություն, որի արմատները հասնում են մինչև խոր հնադար, և որն իր ուրույն տեղն ունի համաշխարհային հոգևոր մշակույթի պատմության մեջ: Հայաստանի հոգևոր-մշակութային ոլորտում իրականացվող փոփոխություններն ու բարեփոխումները այսօր հնարավորություն են տալիս նորովի ներկայացնել, ամբողջացնել և վերաժեքավորել հայ բազմադարյա մշակույթը՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով և տարատեսակ դրսևորումներով: Հայաստանի հոգևոր-մշակութային ոլորտում երիտասարդության մասնակցությունը այսօր կարևորվում է, քանի որ այս ոլորտում առկա մի շարք խնդիրներ անմիջականորեն առնչվում են ՀՀ երիտասարդության ակիվ գործունեության, մշակութային մասնակցության և հոգևոր պահանջունքների բավարարման հետ: ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարությունը» երիտասարդությանն ուղղված քաղաքականության գերակայությունների թվում կարևորում է նաև հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակությունը: «Պետությունը երիտասարդության հոգևոր և ֆիզիկական զարգացումը դիտում է որպես ազգային զարգացման անհրաժեշտ մաս և հասարակական մեծ արժեք:»²⁹:

Ըստ անցկացված ուսումնասիրության թեկուզ քիչ, բայց այնուամենայնիվ Հայաստանում հոգևոր-մշակութային կյանքը առաջընթաց է արձանագրում, որին նպաստում են մի շարք ոլորտներում բարեփոխումները և հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումը: Ուսումնասիրության արդյունքները հոգևոր-մշակութային ոլորտի վերաբերյալ տալիս են հետևյալ պատկերը.

Հոգևոր-մշակութային կյանքի ներկա վիճակի ո՞ր գնահատականն է առավել մոտ Ձեր տեսակետին.

| | |
|--|-------------|
| 1. Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքը վերելք է ապրում | 10.3 |
| 2. Առկա են որոշ դրական միտումներ | 29.9 |
| 3. Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքում էական տեղաշարժեր չկան | 19.1 |
| 4. Առկա են որոշ բացասական միտումներ | 4.8 |
| 5. Հոգևոր-մշակութային կյանքը ճգնաժամ է ապրում | 4.7 |
| 99. Դժվ պատ.: | 31.2 |

²⁹ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարություն, Գլուխ 1. կետ 1.3

Ընդհանուր առմամբ, Հայաստանում առկա գործընթացները երիտասարդության համար նախատեսում են առաջընթաց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Հոգևոր-մշակութային ոլորտում առկա խնդիրների և պրոբլեմների վերհանումը, զնահատումը և դրանց լուծմանն ուղղված քայլերի ձեռնարկումը և իրականացումը պահանջում է ամբողջական և համապարփակ մոտեցում, որը պետք է իրականացվի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում առկա խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների ընդհանուր համատեքստում:

4.1 Կրոնը և երիտասարդությունը

Ներածություն

Ետխորհրդային Հայաստանի կարևոր ձեռքբերումներից է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 26) ամրագրված խղճի ազատության և կրոնական հանգձնումների ազատորեն արտահայտելու իրավունքը, որին նպաստում է դեռևս 1991թ. ընդունված և 1997թ. և 2001թ. լրամշակված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը: Հայաստանի կրոնական համայնքների թվաքանակի վերաբերյալ ստույգ տեղեկություններ չկան: Հայաստանում 2001թ. իրականացված մարդահամարը կրոնական պատկանելության վերաբերյալ հարց չի պարունակել, որի պատճառով այդ մասին կարող ենք դատողություններ անել միայն այդ համայնքների կողմից տրված ինքնազնահատականներով:

ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունները 2006թ. հունվարի 1-ի դրությամբ հետևյալն են.

- 4 հնավանդ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի («Գանձասար» աստվածաբանական կենտրոնով), Կաթողիկե Եկեղեցի՝ 2 համայնքներ (Մխիթարյան կենտրոնով), Ռուս Պրավոսլավ Եկեղեցի՝ 4 համայնքներ, Արևելյան Նեստորական Եկեղեցի՝ 1 համայնք,
- 4 բողոքական՝ ավետարանական՝ 4, մկրտական՝ 9, հոգեգալստական՝ 14, ադվենտիստական՝ 1, կրոնաբարեգործական՝ 6 կազմակերպություններ,
- մոր կրոնական շարժման 6 կազմակերպություն,
- էքյումենիկ շարժում՝ 1,
- հուդայական՝ 1,
- հեթանոսական՝
- արևապաշտական՝ 2:

Հայաստանի անկախացումից հետո պատմականորեն ձևավորված կրոնական ավանդական գործող եկեղեցիների (Հայ առաքելական եկեղեցի, Հայ կաթողիկե եկեղեցի) կողքին ի հայտ եկան նաև տարբեր կրոնական կազմակերպություններ, որոնք լայն թափով սկսեցին գործունեություն ծավալել հանրապետության ամբողջ տարածքում: Այդ կազմակերպությունների մեծ մասն այսօր գործում է օրինական հիմքերի վրա և գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում: ՀՀ-ում գործող կրոնական համայնքները իրենց փաստական և իրավական կարգավիճակով կարելի է բաժանել երեք խմբի.

- գրանցված կրոնական կազմակերպություններ,

- հասարակական կազմակերպության անվան տակ գրանցված, սակայն ակնհայտորեն կրոնական գործունեություն իրականացնող կրոնական կազմակերպություններ,
- կրոնական, աշխարհայացքային կամ փիլիսոփայական վարքականոնային կազմակերպություններ, որոնք չունեն պետական գրանցում և որոնց իրավական կարգավիճակը սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:³⁰

4.1.1 Հայ Առաքելական եկեղեցի

Հայ ժողովրդի հոգևոր արժեքների հիմնական կրողը դարերի ընթացքում եղել է Հայ Առաքելական եկեղեցին: Ըստ վիճակագրական տվյալների Հայաստանի բնակչության 96 %-ից ավելին կազմում են հայերը, որոնց մեծ մասը համարվում է Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ: 1991 թ. Հայաստանի Հանրապետության

Հայ ժողովուրդը առաջինն էր աշխարհում, որը 301թ. քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն: Սկսած չորրորդ դարից Հայ Առաքելական եկեղեցին դարձավ հայ ժողովրդի կրոնական, հոգևոր-մշակութային, կրթական ոլորտների հիմնական պատասխանատուն և լինելով ազգային քրիստոնեական եկեղեցի կարողացավ դառնալ հայ ժողովրդի գլխավոր համախմբող ուժը և հասարակական կյանքում հայերի հոգևոր պահանջների հիմնական բավարարողը: Հայ Առաքելական եկեղեցին համարվում է քրիստոնեական ավանդական ազդեցիկ եկեղեցիներից մեկը, որի թողած ավանդը մեծ է համաշխարհային քրիստոնեական մշակույթի զարգացման պատմության մեջ:

հռչակումից հետո Հայ Առաքելական եկեղեցու դերը նորից բարձրացավ և եկեղեցին սկսեց ավելի ակտիվորեն մասնակցել հասարակական կյանքին, որոց զրկված էր Խորհրդային տարիներին: Այսօր բավականին մեծ է եկեղեցու դերը հասարակական, հոգևոր-մշակութային կյանքում, անվիճելի է հատկապես եկեղեցու դերը մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության գործում, որի խոսուն վկայությունն է այն, որ ՀՀ Կառավարության որոշմամբ հանրակրթական դպրոցներում ուսուցանվող պարտադիր առարկաների ցանկում այսօր ներառված է «Հայ Առաքելական եկեղեցու պատմություն» առարկան: Վերջին տասնամյակում մեծացել է Հայ Առաքելական եկեղեցու դերը հատկապես երիտասարդության շրջանում: Ավելի մեծ թվով երիտասարդներ են հաճախում եկեղեցիներ, մասնակցում ծիսապաշտամունքային արարողությունների: Մեծ թվով երիտասարդներ անդամակցում են Հայ Առաքելական եկեղեցու երիտասարդական կազմակերպություններին, միություններին և այլն: Մեծ թիվ են կազմում նաև այն երիտասարդները, որոնք ուսանում են Հայ Առաքելական եկեղեցու կրթական հաստատություններում: Այս առումով բավականին հետաքրքիր են երիտասարդների շրջանում անցկացված ուսումնասիրության արդյունքները.

³⁰ Այս և հետագա մյուս տվյալները բերված են ըստ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության հրատարակած տվյալների: Մանրամասն տես՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն, «Խղճի, դավանանքի և համոզմունքի ազատություն», Երևան, 2004: Վերջին մեկ տարվա ընթացքում կրոնական կազմակերպություններից ՀՀ-ում գրանցվել է նաև Եհովայի վկաներ կազմակերպությունը:

Ո՞ր կրոնական ուղղությանն եք դուք պատկանում.³¹ (%-ով)

| | | |
|-----|------------------------|------|
| 1 | Հայ Առաքելական Եկեղեցի | 89.4 |
| 2 | Հայ Կաթողիկե Եկեղեցի | 1.5 |
| 3 | Եհովայի վկա | 1.3 |
| 4 | Հիսունական | 0.1 |
| 5 | Հայ ավետարանչական | 0.8 |
| 6 | Նեստորական | 0.1 |
| 7 | Արևորդիներ | 0.7 |
| 98. | Աթեիստ են | 1.4 |
| 99. | Դժվ. պատ. | 4.7 |

Դարերի ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու հիմնական գործառույթներից է եղել հայկական ավանդական ընտանիքի ձևավորումը և քրիստոնեական դաստիարակությունը և այսօր մեծ թվով երիտասարդ ընտանիքներ Հայաստանում ձևավորվում են Եկեղեցում իրականացվող ավանդական պսակադրության արարողության արդյունքում: Սոց. հարցումները ցույց են տալիս, որ Հայաստանի երիտասարդության մեծ մասն այսօր ամուսնանալիս կարևորում է պսակադրության ավանդական, եկեղեցական խորհրդի իրականացումը:

Որտե՞ղ պետք է տեղի ունենա ամուսնական արարողությունը. (%-ով)

| | |
|-------------------|------|
| 1.Եկեղեցում | 27.9 |
| 2.Քվվզ /ՁԱԳՍ/-ում | 9.9 |
| 3.Երկուսը միասին | 60.4 |
| 99. Դժվ. են պատ | 1.8 |

Հայ Առաքելական Եկեղեցին աստիճանաբար վերագտնում է իր տեղը Հայաստանի հասարակական կյանքում, ավելի ակտիվ դարձնելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իր դերակատարությունը: Հատկապես անուրանալի է Հայ Առաքելական Եկեղեցու մեծ դերն ու նշանակությունը սփյուռքահայության ազգապահպանության և ազգային դաստիարակության գործում: Հայ Առաքելական Եկեղեցու դեմ այսօր ծառայած հիմնական խնդիրներից մեկը ժամանակակից հայ երիտասարդության հոգևոր պահանջմունքների բավարարման պատշաճ մակարդակ ապահովելն է՝ հիմնված հայ դարավոր հոգևոր և մշակութային ժառանգության վրա: Չնայած իրականացվող ակտիվ քայլերին, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այսօր երիտասարդության մի մասն անտեղյակ է եկեղեցու գործունեությունից, ծանոթ չէ եկեղեցու դավանաբանական առանձնահատկություններին և, լինելով հոգևոր-մշակութային նույն արժեքների կրող, լիարժեքորեն չի գիտակցում իր դերն ու նշանակությունը ազգային արժեքների պահպանման գործում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ երիտասարդության հիմնական պահանջը եկեղեցուց ակտիվ քարոզչությունն է:

³¹ Այս և հետագա մյուս սոցիոլոգիական հարցումների մեջբերումները վերցված են 2006 թ. փետրվար ամսին ՀՀ երիտասարդության Ազգային Ձեկույցի համար անցկացված սոցիոլոգիական ուսումնասիրության ամփոփիչ արդյունքներից:

Ի՞նչ ակնկալիք ունեք, որպես երիտասարդ. Հայ Առաքելական Եկեղեցուց. (%-ով)

| | | |
|-----|------------------------------------|------|
| 1. | Ակտիվ քարոզչություն | 18.8 |
| 2. | Աղանդավորների դեմ պայքար | 2.8 |
| 3. | Հոգևոր աջակցություն | 2.7 |
| 4. | Ժողովրդին համախմբելի իր շուրջ | 10.0 |
| 5. | Նյութական օգնություն. աջակցություն | 0.3 |
| 6. | Այլ | 0.3 |
| 98. | Ակնկալիք չունեմ | 56.3 |
| 99. | Դժվ. պատ. | 8.8 |

Ըստ այդմ, կարևորվում է ավելի ակտիվ քայլերի ձեռնարկումը՝ բարձրացնելու համար Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի հասարակական կյանքում և անհրաժեշտ պայմանների ստեղծումը երիտասարդների քրիստոնեական դաստիարակության համար՝ նրանց հաղորդակից դարձնելով ազգային և համամարդկային քրիստոնեական արժեքներին: Երիտասարդների հայրենասիրական և քրիստոնեական դաստիարակության գործում այսօր կարևորվում է ՀՀ ազգային բանակում գործող Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասավորների ներկայությունը, ովքեր իրենց լուծան են ներդնում հայ երիտասարդ զինվորների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

4.1.2 Հայ Կաթողիկե Եկեղեցի

Հայաստանում գործող ավանդական եկեղեցիներից է Հայ կաթողիկե եկեղեցին, որի միջոցով համաշխարհային հանրությանն է ներկայանում հայ կաթոլիկական համայնքը: Այսօր հայ կաթոլիկ համայնքը հիմնականում գործում է Հայաստանի հյուսիսային մարզերում: Հայ կաթոլիկ

Հայ կաթողիկե եկեղեցին ձևավորվել է միջնադարյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության արդյունքում: Դարերի ընթացքում հայ կաթոլիկ համայնքը, կարողացել է իր ուրույն դերակատարություն ունենալ հայ ժողովրդի հասարակական կյանքում և ձևավորել է մշակութային մնայուն արժեքներ, որոնք հայ ժողովրդի հզուկ-մշակութային ժառանգության անբաժանելի մասն են կազմում: Այս առումով հատկապես կարևորվում է Վենետիկի Ս. Դազար կղզում առ այսօր գործող Մխիթարյան միաբանության հզուկ-մշակութային գործունեությունը:

Երիտասարդությունը համարվում է նույն արժեքային համակարգի կրող, ինչպես հայ երիտասարդությունն ընդհանրապես և այսօր հանրապետությունում հնարավոր չէ, նույնիսկ արհեստականորեն, հայ կաթոլիկներին բաժանել կամ առանձնացնել հանրապետության հասարակությունից: Սոցիոլոգիական հարցումներին մասնակցած երիտասարդների 1,5 % -ը իրեն համարում է կաթոլիկ: Այնուամենայնիվ, հայ կաթոլիկական ավանդությունները, սովորությունները, բարոյական և հզուկ-մշակութային արժեքները, որոշ չափով տարբերվում են Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ համարվող հասարակության նույնատիպ արժեքային համակարգերից:

4.1.3 Հայ Բողոքականություն

Խորհրդային Միության փլուզումից հետո արևմտյան արժեքային այլ համակարգերի հետ միասին Հայաստան ներթափանցեցին և ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել տարատեսակ կրոնական կազմակերպություններ, որոնք հիմնականում ունեն բողոքական ծագում: Այդ կազմակերպություններին

անդամակցում են մեծ թվով երիտասարդներ, որոնց գիտակցության մեջ արդեն ամրագրված են բողոքականության կրոնաբարոյական, հզևոր-մշակութային նոր արժեքները: Այս ոլորտը Հայաստանում դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ, և տալ հայ բողոքականության և դրանում

Բողոքականությունը Հայաստան է ներթափանցել 19-րդ դարի կեսերին: 1915 թ. Հայոց Մեծ եղեռնից հետո հայ բողոքականների մեծ մասը արտագաղթեց հայրենիքից և զարգացում ապրեց սփյուռքում՝ ձևավորելով արդեն մի քանի ինքնուրույն եկեղեցիներ՝ Հայ Ավետարանական եկեղեցի, Հայ Ավետարանական ընկերակցություն և այլն: Ավանդական այս բողոքական եկեղեցիների կողքին ետխորհրդային շրջանում Հայաստանում սկսեցին գործել նաև բողոքական նոր կրոնական կազմակերպություններ: Բողոքականությունը Հայաստանում ներկայացված է ավետարանական, մկրտական, հոգեգալստական, աղվենտիստական և այլ հարանվանություններով:

երիտասարդության ընդգրկվածության հստակ պատկերը առայժմ հնարավոր չէ: Միայն կարող ենք մշել որ բողոքական մի քանի եկեղեցիներ, ունենալով ֆինանսական հզոր միջոցներ և արևմուտքի սփյուռքահայ բողոքականության աջակցությունը, ակտիվ գործունեություն են ծավալել հանրապետության ողջ տարածքում, ստեղծել են մշակութային օջախներ, իրականացնում են ակտիվ քարոզչություն համայնքներում, հանրակրթական դպրոցներում, Ձև-ների միջոցով և ունեն բավականին մեծ թվով հետևորդներ, որոնց կոնկրետ թիվը հայտնի չէ: Համենայնդեպս վերջին սոց. հարցումները ցույց են տալիք որ հարցվածների 2%-ից ավելին իրենց համարում են բողոքական կամ ոչ ավանդական կրոնական ուղղության հետևորդ:

4.1.4 Ոչ ավանդական կրոնական կազմակերպություններ և ներփակ հոսանքներ (աղանդներ)

Հայաստանի անկախացումից հետո Հայաստան ներթափանցած տարբեր կրոնական կազմակերպությունների գործունեության հետևանքով բնակչության շրջանում առաջացել է արհեստական բաժանում, առաջացել են այնպիսի կրոնական համայնքներ, որոնք լիարժեքորեն չեն մասնակցում համայնքային աշխատանքներին, իրենց համարում են այդ համայնքի բնակիչներից առանձնացված ինքնուրույն համայնք, որի արդյունքում համայնքի միասնականությունը խաթարված է և պառակտված:

Ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների և ներփակ հոսանքների հետևորդների թվում մեծ թիվ է կազմում երիտասարդությունը, որն ակտիվորեն ընդգրկված է այդ կրոնական համայնքների գործունեության մեջ և հիմնական շարժիչ ուժն է: Այդ համայնքների երիտասարդների գիտակցության մեջ ձևավորվել են նոր արժեքներ, որոնք երբեմն հակասում են ավանդական ազգային, հզևոր-մշակութային արժեհամակարգերին և հեռանում են ավանդական հայկական պատկերացումներից: Հայաստանում գործող այս տիպի ոչ ավանդական կամ նորաստեղծ կրոնական կազմակերպություններ են «Եհովայի վկաներ», «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի» (ավելի շատ հայտնի են «մորմոններ» անունով), «Կյանքի խոսք», «Հայաստանի բահայիների համայնք», «Կրիշնա գիտակցության ընկերություն», «Ազնի

յոգա» և մի շարք այլ կազմակերպություններ: Այս կրոնական կազմակերպությունների անդամներն իրենց գործունեության ընթացքում, ելնելով իրենց կրոնական համոզմունքներից և հոգևոր պահանջմունքներից, երբեմն հակասության մեջ են մտնում ոչ միայն հասարակության, այլև պետության հետ, որի արդյունքում չեն կատարում իրենց քաղաքացիական պարտքը, չեն մասնակցում տարբեր մակարդակների ընտրություններին, իրենց Հայաստանի հասարակության լիարժեք անդամ չեն համարում և ստեղծում են ավանդականորեն ձևավորված արժեհամակարգերին հակադիր հոգևոր, մշակութային, կրոնական նոր պատկերացումներ և մոտեցումներ: Այս բոլոր գործընթացներում ընդգրկված են երիտասարդության մի շարք անդամներ, որոնց գործունեությունը երբեմն հանգեցնում է անցանկալի հետևանքների: Այս առումով հատկապես ցավալի խնդիր էր մի շարք զորակոչային տարիքի երիտասարդների (հիմնականում Եհովայի վկաներ) ՀՀ բանակում ծառայելուց խուսափելը կամ հրաժարվելը, որի արդյունքում շատ երիտասարդներ պատասխանատվության էին կանչվում դասալքության համար: Կրոնական համոզմունքների պատճառով զինծառայությունից հրաժարվող երիտասարդների համար այս ցավոտ խնդրի լուծմանն էր ուղղված 2003-2004թ.թ. ընդունված «Այլընտրանքային առաջության մասին ՀՀ օրենքը», որը, հնարավորություն տվեց մի շարք երիտասարդների իրենց կրոնական համոզմունքներին դեմ շօնալուծ ծառայել ՀՀ բանակում:

Հայաստանում կրոնական կազմակերպությունների գործունեության հետ կապված հրատապ է նաև այն խնդիրը, որ որոշ կազմակերպություններ ակնհայտորեն զբաղված են հոգևորությամբ և իրականացնում են պետական անվտանգության տեսանկյունից պառակտիչ գործունեություն:

Այսօր Հայաստան են ներթափանցել և գործունեություն ծավալել նաև այնպիսի կրոնական կազմակերպություններ, որոնք գրանցված են որպես հասարակական կազմակերպություններ, սակայն ակնհայտորեն իրականացնում են կրոնական պրակտիկա: Ըստ որոշ տվյալների այդ կազմակերպություններում մեծ թիվ են կազմում երիտասարդները, հատկապես՝ ուսանողները: Այդպիսի կրոնական կազմակերպություններից են «Ամբողջ աշխարհում խաղաղության և միասնության համար ընտանիքների դաշնություն» (Մունի հետևորդներ), «Գոյատևում» (Սայենթոլոգիա կամ Դիանետիկա), «Հայկական ռեբիխյան ընկերություն» (Ազնի յոգա արևելյան թեքման սինկրետիկ օկուլտային ուսմունք), «Տրանսցենդենտալ մեդիտացիա» («Մահարիշի վեդայական կենտրոն» կրթական հիմնադրամ) և այլ հասարակական կազմակերպությունները:³²

³² ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն, «Խղճի, դավանանքի և համոզմունքի ազատություն», էջ 23:

Ամփոփում

Այսօր Հայաստանում հրատապ խնդիր է դարձել գործող կրոնական կազմակերպությունների միջև համագործակցության, փոխադարձ հանդուրժողականության և վստահության կայացումը, որը կնպաստի պետական անվտանգության ամրապնդմանը և հասարակական հարաբերությունների զարգացմանը: Կարևոր է հատկապես երիտասարդության դերի բարձրացմանը, գործող կրոնական կազմակերպությունների գործունեության թափանցիկությանը և դրանցում ընդգրկված երիտասարդների փոխադարձ շփումներին և համագործակցությանն ուղղված ծրագրերի իրականացումը, որը կնպաստի ավանդական և նոր կրոնական պատկերացումների, արժեքային համակարգերի և մոտեցումների երկխոսության կայացմանը երիտասարդության շրջանում:

4.2 Մշակութային մասնակցություն

Ներածություն

Հայաստանը աշխարհին է ներկայանում բազմադարյա բազմազան և զարգացած մշակույթով: Մշակութային կյանքն այսօր Հայաստանում շարունակում է իր բնականոն զարգացումը և այդ գործում մեծ է երիտասարդության մասնակցությունը: Ձևավորված մշակութային արժեքներն այսօր զարգանում են յուրովի, իրենց մեջ ներառում են ինչպես ազգային, այնպես էլ համաաշխարհային ժամանակակից մշակութային արժեքներ, որի հիմնական կրողը և ստեղծողը դարձել է ՀՀ ժամանակակից երիտասարդությունը: Հայաստանում գործում են մշակութային տարբեր կազմակերպություններ, խմբեր, որոնցում ընդգրկված է նաև երիտասարդությունը: Հատկանշական է, որ հայ ժողովրդի ազգային առանձնահատկություններից մեկն այն է, որ ընտանիքներում երեխաների և հետագայում երիտասարդների մշակութային մասնակցության հարցը բավականին կարևորվում է և ծնողները, որպես կանոն, իրենց երեխաների ընդհանուր դաստիարակության պարտադիր պայմաններից մեկն են համարում նրանց մշակութային մասնակցության ապահովումը: Արդեն մանուկ հասակում հայ ընտանիքների երեխաների մեծ մասը անպայմանորեն, ծնողների նախաձեռնությամբ ընդգրկվում է մշակութային տարբեր (երգ, երաժշտություն, պարարվեստ, սպորտ) խմբերում, որը նպաստում է ապագա երիտասարդության հոգևոր-մշակութային և գեղագիտական դաստիարակությանը: Սակայն հետագայում, երիտասարդ տարիքում այդ երեխաների քիչ մասն է շարունակում ակտիվ մասնակցություն ունենալ մշակութային կյանքում:

4. 2. 1 Մշակութային մասնակցություն. իրավիճակ և խնդիրներ

Մշակութային մասնակցության առումով Հայաստանում երիտասարդության շրջանում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք հրատապ լուծումներ և գործնական քայլեր են պահանջում ինչպես պետության, այնպես էլ հասարակական

կազմակերպությունների և բնակչության կողմից ընդհանրապես: Պետության կողմից իրականացվող մշակութային քաղաքականությունը որոշ չափով արձանագրել է առաջընթաց, սակայն այն դեռևս հասու չէ հասարակական լայն զանգվածներին, այդ թվում նաև երիտասարդության լայն շրջանակներին: Իրականացված ուսումնասիրությունը երիտասարդության մշակութային մասնակցության մասին ի հայտ է բերում մի շարք լուրջ խնդիրներ, որոնց վերացման համար ցանկալի է մշակել և կիրառել հատուկ ռազմավարություն:

Այսպես, ուսումնասիրությունը և այս ոլորտում մեր դիտարկումները փաստում են, որ երիտասարդության մի մասն ակտիվորեն չի մասնակցում մշակութային գործընթացներին, որը պայմանավորված է մի շարք գործոններով: Մշակութային կանքին ներգրավվածության և մասնակցության առումով երիտասարդությունը բաժանված է երկու խմբի, քաղաքային (հիմնականում երևանաբնակ) և մարզային: Եթե մայրաքաղաքում մշակութային կյանքը բավականին աշխույժ է և լայն հնարավորություն է ընձեռնվում երիտասարդությանը ակտիվ մասնակցություն ունենալ և ընտրություն կատարել նախընտրած մշակութային ոլորտի, արվեստի, երաժշտության և այլ ոլորտների միջև, ապա մարզային կյանքը չունի մշակութային բազմատեսակ առաջարկի հնարավորություն և երիտասարդության համար ընտրություն կատարելը բավականին դժվար է: Մարզերում առկա մշակութային խնդիրներից հիմնականում պետք է առանձնացնել գյուղական բնակավայրերում մշակութային կենտրոնների կամ համապատասխան հաստատությունների բացակայությունը կամ ոչ բավարար գործունեությունը:

Ըստ ուսումնասիրության մարզային երիտասարդության համար կարևոր հիմնախնդիրների շարքում կարևորվում է նաև մշակութային մասնակցությունը, որ 8,9%-ով նպաստում է նաև գյուղական բնակավայրերից երիտասարդության արտագաղթին:

Որո՞նք են մարզային երիտասարդության հիմնախնդիրները . (մինչև 2 պատ.՝ (%-ով)

| | |
|---|-------------|
| 1.Կրթությունը | 14.5 |
| 2.Գործազրկությունը | 55.0 |
| 3.Սոցիալ-տնտեսական խնդիրները | 8.1 |
| 4.Առողջապահական խնդիրները | 3.2 |
| 5.Արտագնա աշխատանքը | 2.7 |
| 6.Վատ կենցաղային պայմանները | 4.0 |
| 7.Մշակութային խնդիրները/հանգիստ.ժամանց. սպորտ/ | 15.1 |
| 8.Անվտանգությունը ապագայի նկատմամբ | 2.1 |
| 9.Ամուսնությունը | 2.0 |
| 10.Այլ | 1.0 |
| 11. Բնակարանային | 0.9 |
| 99. Դժվ. են պատ. | 21.8 |

Քանի որ մշակութային կյանքը քիչ թե շատ աշխույժ է և հիմնականում կենտրոնացած մայրաքաղաքում և հանրապետության խոշոր քաղաքներում, արդյունքում մշակութային արժեքներին և արվեստին անհաղորդ են գյուղական բնակավայրերի բնակիչները, այդ թվում երիտասարդությունը, ում համար հորգևոր-

մշակութային արժեքների մասին պատկերացումներն ու մոտեցումները հիմնականում ձևավորվում են տարերայնորեն, այս կամ այն գործոնի առկայության պայմաններում, կամ, լավագույն դեպքում, հեռուստատեսության միջոցով: Մշակութային մասնակցության առումով հատկապես կարևորվում է կրթության աստիճանը, քանի որ բարձրակարգ մշակույթի հետ երիտասարդության շփումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մշակութային ավելի մեծ մասնակցություն է արձանագրվում կրթական ավելի բարձր ցենզ ունեցող երիտասարդության շրջանում: Մշակութային կյանքին հաղորդակից չլինելու պատճառներից են նաև սոցիալական պայմանները, երբ շատերն ուղղակի հնարավորություն չունեն մասնակցել մշակութային տարատեսակ միջոցառումների, տեղեկատվության և կրթական համապատասխան աստիճանի բացակայությունը, ցածրակարգ մշակույթի գովազդումը և մատուցումը, որի արդյունքում երիտասարդության մոտ ձևավորվում է ցածրակարգ արժեհամակարգ, կրթական ցածր մակարդակ և այլն:

Հանրապետության մշակութային կյանքին երիտասարդության մասնակցությունը գրեթե ամբողջությամբ ներկայացնում են կատարված հարցումները, որոնք վեր են հանում երիտասարդության շրջանում առկա մեծ թվով խնդիրներ: Երիտասարդությանը հատկապես մատչելի չեն մշակութային խոշոր օջախները՝ թանգարաններ, ցուցասրահներ, կինո, թատրոն, որի պատճառները բազմազան են, սկսած դրանց նկատմամբ անտարբերությունից, կրթության պակասից, վերջացրած սոցիալական ծանր պայմաններով:

Նշվածներից ո՞րը Ձեր համար մատչելի չէ. (մի քանի պատասխան՝ %-ով)

| | | |
|----|---------------------------|------|
| 1 | Գրադարաններ | 19.0 |
| 2 | Ինտերնետ | 54.8 |
| 3 | Մամուլ | 7.4 |
| 4 | Հեռուստատեսություն | 1.4 |
| 5 | Ռադիո | 2.6 |
| 6 | Թանգարաններ, ցուցասրահներ | 48.9 |
| 7 | Կինո, թատրոն | 41.0 |
| 8 | Բոլորն էլ մատչելի են | 25.6 |
| 99 | Դժվ. պատ. | 4.7 |

Չնայած տարվող մշակութային ակտիվ քաղաքականությանը, նույնիսկ Երևանում մշակութային տարեր միջոցառումների, մշակութային տարբեր օջախների այցելության մակարդակը, այնուամենայնիվ, հետու է ցանկալի արդյունքից:

Որքա՞ն հաճախ եք Դուք այցելում. (գնահատել ըստ սանդղակի) (%-ով)

| | Ամեն օր | Շաբաթը մի քանի անգամ | Շաբաթը մեկ | Ամիսը 1-2 անգամ | Տարին մի քանի անգամ | Երբեք |
|-----------------------|---------|----------------------|------------|-----------------|---------------------|-------|
| Համերգ/ Փառատոն | 0.0 | 0.2 | 1.7 | 9.7 | 48.2 | 40.2 |
| Թատրոն | 0.0 | 0.1 | 0.9 | 5.8 | 38.9 | 54.3 |
| Ակումբ, կինոթատրոն | 0.0 | 0.6 | 2.3 | 12.8 | 39.9 | 44.4 |
| Թանգարան, ցուցահանդես | 0.0 | 0.0 | 0.6 | 4.7 | 32.4 | 62.3 |
| Պարասրահ/դիսկոտեկ | 0.0 | 0.0 | 1.5 | 8.5 | 23.4 | 66.6 |
| Սրճարան, բար, կարտոկե | 0.8 | 1.4 | 6.4 | 24.7 | 36.5 | 30.2 |
| Խաղասրահ | 0.1 | 1.0 | 1.4 | 3.4 | 8.4 | 85.7 |

Բավականին ցածր է նաև երիտասարդության ընդգրկվածությունը և մասնակցությունը տարբեր մշակութային խմբերին:

Արդյո՞ք Դուք որևէ մշակութային խմբի/կուլեկտիվի անդամ եք. (%-ով)

| | |
|--------------|------|
| 1.Երգի-պարի | 15.4 |
| 2. Ասմունքի | 9.8 |
| 3. Թատերական | 5.3 |
| 4. Նկարչական | 1.5 |
| 5. Այլ | 0.3 |
| 98. Ոչ: | 67.7 |

Երիտասարդության անհրաժեշտ մասնակցության այս պասիվ դրսևորման հիմնական պատճառները մեկն այն է, որ երիտասարդության մեծ մասը դեռևս կապված է տարերայնորեն ձևավորվող և կրթության պակասի հետ անիջականորեն առնչվող, ցածրակարգ, անորակ երաժշտության, մշակույթի հետ, որը բավականին հեռացել է ազգային ակունքներից և որակապես չի կարող լիարժեքորեն նպաստել ազգային հոգևոր պահանջմունքների բավարարմանը և երիտասարդության հայրենասիրական և զեղազիտական դաստիարակմանը: Այսօր երիտասարդության համար հնարավորություն է ընձեռնվել հաղորդակցվել համամարդկային մշակույթի հետ, սակայն, այդ մշակութային արժեքների կողքին տարերայնորեն զարգացող ժողովրդական մշակույթը երբեմն հեռանում է բարձրարժեք համակարգից և ներկայանում ցածրորակ, ոչ ազգային և ոչ էլ համամարդկային մշակութային դրսևորումների տեսքով:

Այս առումով հատկանշական է հայ երիտասարդության շրջանում երաժշտության նախընտրության հարցը.

Ի՞նչ երաժշտություն եք առավել նախընտրում լսել. (%-ով)

| | |
|-------------------------|------|
| 1.Ժողովրդական | 8.9 |
| 2.Դասական | 8.6 |
| 3.Հայկական էստրադա | 15.8 |
| 4.Արտասահմանյան էստրադա | 20.2 |
| 5.Ռուսական էստրադա | 19.0 |
| 6.Ռոք/Փոփ/.Ջազ | 6.3 |
| 7.Ռաբիս | 17.2 |
| 8.Հոգևոր | 1.0 |
| 9.Այլ | 0.7 |
| 98.Նախընտրելի չունի | 2.0 |
| 99. Դժվ. պատ. | 0.3 |

Ակնհայտ է, որ երիտասարդությունը նախընտրում է ժամանակակից երաժշտություն, սակայն դրա հետ միասին հետին պլան է մղվում ազգային և դասական բարձրակարգ երաժշտությունը, ի տարբերություն «ռաբիս» կոչված երաժշտության, որը հիմնականում արևելյան, երբեմն արևմտյան տարբեր ոճերի և ազգային երաժշտության ցածրորակ խառնուրդ է, «նմանակում» և չի կարող համարվել անանց մշակութային արժեք:

Անփոփում

Հայաստանի ժամանակակից երիտասարդության մշակութային ակտիվ մասնակցությունը ապահովելու համար անհրաժեշտ է ավելի մեծ թվով

երիտասարդներ ընդգրկել մշակութային գործընթացներում, կազմակերպել և անցկացնել բազմաբովանդակ մշակութային միջոցառումներ ոչ միայն հանրապետության խոշոր բնակավայրերում, այլև՝ հեռավոր գյուղական համայնքներում: Ժամանակակից երիտասարդության մեջ հատկապես կարևորվում է համամարդկային և ազգային մշակույթի նկատմամբ բարձրարժեք ճաշակի և պատկերացումների ձևավորումը: Այս գործում ակտիվ մասնակցություն պետք է ունենան պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, եկեղեցին և այլն: ՀՀ կառավարության կողմից երիտասարդությանն ուղղված քաղաքականության մեջ այսօր առկա են դրական զարգացումներ, որոնք ներկայանում են տարբեր միջոցառումների տեսքով: Այս առումով հատկապես կարևոր է «Բազե» համահայկական ամենամյա փառատոնի անցկացումը, որը երիտասարդության միջև համագործակցության, փոխադարձ շփումների և հայրենիք-սփյուռք կապերի զարգացմանը զուգահեռ, նպաստում է նաև երիտասարդության հոգևոր-մշակութային դաստիարակությանը և մշակութային ակտիվ մասնակցությանը, քանի որ փառատոնի ծրագրերի շրջանակներում կարևորվում են նաև մշակութային զանգվածային միջոցառումների անցկացումը և դրանցում երիտասարդության անմիջական մասնակցությունը:

4.3 Ազգային փոքրամասնություններ

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը էթնիկ միատարր երկիր է, որի բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են: ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները համարվում են ՀՀ լիարժեք քաղաքացիներ և օգտվում են ՀՀ քաղաքացիների համար նախատեսված բոլոր իրավունքներից: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները լիարժեքորեն ընդգրկված են հասարակական գործընթացներում, ունեն հասարակական կազմակերպություններ, որոնց միջոցով իրականացնում են իրենց հուզող խնդիրների և հարցերի լուծմանն ուղղված քաղաքականություն: Հայաստանի կայացած կրոնական ուղղությունների շարքին են դասվում ազգային փոքրամասնությունների դավանած ուղղությունները: Հայաստանում գործում է 11 էթնիկ-ազգային կազմակերպություն (ասորիներ, բելառուսներ, հույներ, քրդեր, ռուսներ, հրեաներ, գերմանացիներ, լեհեր, ուկրաինացիներ, վրացիներ, եզդիներ): ՀՀ-ում գրանցված են 4 ռուսական, 2 եզդիական, 1 ասորական և 1 հրեական ազգային կրոնական կազմակերպություններ:³³ Ազգային փոքրամասնությունների նկատմամբ

³³ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն, «Խղճի, դավանանքի և համոզմունքի ազատություն», էջ 16-22:

Հայաստանում առկա է հանդուրժողականության մթնոլորտ, տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ապրում են կողք կողքի փոխադարձ բարեկամության, վստահության և հարգանքի պայմաններում: Դա է հաստատում նաև անցկացված ուսումնասիրությունը, ըստ որի այն հարցին, թե ինչպես կընդունեք այն իրողությունը, որ ձեր հարևանը պատկանում է այլ ազգի, միայն 4,9%-ն պատասխանել «վատ»:

4.3.1 Եզդիներ

Ազգային փոքրամասնություններից իրենց թվով առաջին տեղում են եզդիները, որոնք անհիշելի ժամանակներից ապրում են հայերի հետ կողք կողքի: Վերջին տարիներին Հայաստանում զգալիորեն նվազել է այս համայնքի ներկայացուցիչների թիվը, որի հիմնական պատճառը արտագաղթն է: Արտագաղթի հիմնական պատճառը սոցիալ-

Եզդիները համարվում են աշխարհի ինքնուրույն և ինքնատիպ ազգային համայնքներից մեկը՝ իրենց յուրահատուկ մշակույթով և կրոնով: Եզդիների հզորմշակութային առանձնահատկություններից է ազգային կրոնը, որը դարերի ընթացքում ձևավորված ազգային հավատալիքների, ավանդությունների, սովորությունների և ծիսապաշտամունքային արարողությունների բարդ համակարգ է՝ հիմնված հեթանոսական, գրադաշտական, իսլամական և որոշ չափով, հիմնականում հայերի հետ շփման արդյունքում, քրիստոնեական հավատալիքների վրա: Այս ժողովրդի ներկայացուցիչներն ապրում են ինչպես խառը համայնքներում, այլ ազգերի ներկայացուցիչների հետ կողք կողքի, այնպես էլ այնպիսի համայնքներում, որոնք բաղկացած են միայն եզդիներից: Բնակվելով հիմնականում գյուղական համայնքներում՝ եզդիների մեծ մասն ընդգրկված է գյուղատնտեսության մեջ և հիմնականում զբաղված է անասնապահությամբ:

տնտեսական ծանր պայմաններն են, գործազրկությունը և գոյության միջոցների դժվար հայթհայթումը: Այս առումով հատկապես խոցելի են այս ազգային համայնքի երիտասարդ ներկայացուցիչները, ովքեր չունենալով ապրուստի նորմալ պայմաններ ստիպված արտագաղթում են հիմնականում Ռուսաստանի Դաշնություն, որոշ չափով էլ Եվրոպական երկրներ: Սակայն, այս խնդիրը ոչ միայն եզդիներին է վերաբերում, այլև հրատապ խնդիր է ողջ հանրապետության համար: Երիտասարդ եզդիների համար Հայաստանում հիմնական խնդիրներից է ազգային ավանդությունների և մշակութային արժեքների պահպանումը, ազգային կրթությունն ու դաստիարակությունը: Այս հարցում վերջին տարիներին արձանագրվել է առաջընթաց: Մասնավորապես, եզդիների մայրենի լեզվով արդեն հրատարակվել է այբբենարան, որը հնարավորություն է ընձեռում եզդիական դպրոցներում հայերենի հետ միասին ուսումնասիրել և սովորել մայրենի լեզուն: Եզդի երիտասարդներին վերաբերող հիմնական խնդիրներից մեկն էլ ընտանիք ձևավորելու ազգային սովորությունն է, որն անմիջականորեն առնչվում է այս ազգի ազգային առանձնահատկությունների հետ և կապված է մի շարք դժվարությունների հետ: Ընտանիք ձևավորելու ազգային ավանդական մեթոդները այսօր էլ հիմնականում այնպիսին են, ինչպիսին դարեր առաջ: Նախ, եզդիները այն յուրահատուկ ազգերից են, որոնց ընտանիքները ձևավորվում են միայն իրենց համայնքի ներսում, և եթե հաշվի չառնենք մի քանի բացառություններ, եզդիների ընտանիքները ազգային են և խառնամուսնություններ

գրեթե չկան: Ընտանիք կազմելու ավանդական առանձնահատկություններից է երիտասարդներին ոչ անուսնական տարիքում անուսնացնելը, որի արդյունքում ձևավորվում են եզդիական ընտանիքներ, որոնց անդամների տարիքը երբեմն չի համապատասխանում ՀՀ օրենքով սահմանված անուսնության համար նախատեսված տարիքին՝ տղաների համար 18, աղջիկների համար 17: Նմանատիպ ընտանիքների ձևավորումը հետագայում անդրադառնում է եզդի երիտասարդության ինտելեկտուալ մակարդակի վրա, որի արդյունքում, նվազում է կրթություն ստացող եզդի երիտասարդների թիվը, որով էլ պայմանավորված է երիտասարդների համար հրատապ խնդիր համարվող կրթության ցածր մակարդակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եզդի երիտասարդների շատ չնչին տոկոսն է ընդգրկված հանրապետության բարձրագույն և միջին մասնագտական կրթական հաստատություններում, որի հիմնական պատճառներից մեկը հանրակարգական դպրոցներում թերի, լավագույն դեպքում մինչև ութերորդ դասարանի կրթություն ստանալն է: Այս առումով այսօր ՀՀ իշխանությունների ազգային փոքրամասնություններին վերաբերող քաղաքականության մեջ պետք է ներառել եզդի երիտասարդության համար վերոհիշյալ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր, որոնք կնպաստեն եզդի երիտասարդների կրթական և ինտելեկտուալ մակարդակի բարձրացմանը: Այսօր ՀՀ-ում գործում են եզդիական մշակութային խմբեր, որոնցում ընդգրկված են եզդի երիտասարդներ, որոնց հնարավորություն է տրված ներկայացնելու ազգային մշակույթն ու արվեստը:

4.3.2 Ռուսներ

ՀՀ բազմաքանակ համայնքներից է ռուսական համայնքը: Ռուս համայնքի երիտասարդության համար ևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք ընդհանուր են բոլորի համար: Ռուս համայնքի երիտասարդության համար նույնպես հանրապետությունում առկա է հանդուրժողական մթնոլորտ և այս

Այս համայնքը հոգևոր-կրոնական տեսանկյունից հանդես է գալիս երկու խմբով՝ Ռուս ուղղափառ եկեղեցու հետևորդներ և 19-րդ դարի սկզբին Ռուսական կայսրության ծայրագավառներ արքայական մոլոկանների հետևորդներ: ՀՀ ռուս բնակչությունը ապրում է ՀՀ ողջ տարածքում, բացառությամբ մոլոկանների մի քանի գյուղական համայնքների, որտեղ ռուս բնակչությունը հանդես է գալիս ստվարածավալ էթնիկ համայնքի տեսքով: Հետխորհրդային շրջանում այս համայնքում ևս առկա է արտագաղթի միտումներ, որը կապված է հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով և պատմական հայրենք վերադառնալու միտումներով: Համեմատաբար քիչ է մոլոկանների արտագաղթը, ովքեր Ռուսաստանում այսօր էլ համարվում են կրոնական փոքրամասնություն և լիարժեքորեն ինտեգրված չեն այս պետության հասարակական կյանքին:

ազգի ներկայացուցիչները լիարժեքորեն ընդգրկված են հասարակական գործընթացներում, օգտվում են հանրապետության քաղաքացիների համար նախատեսված բոլոր իրավունքներից: Ռուս երիտասարդության համար ի տարբերություն մյուս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, ստեղծված են ավելի բարենպաստ պայմաններ կրթություն ստանալու և ազգային մշակութային արժեքների հետ շփվելու համար: Այս ամենը պայմանավորված է

հատկապես այն հանգամանքով, որ երկար տարիներ Յայաստանը գտնվում է ռուսական քաղաքական, մշակութային ազդեցության գոտում, և ՀՀ այսօր համարվում է Ռուսաստանի Դաշնության ռազմավարական գործընկերը: Ռուս երիտասարդները հնարավորություն ունեն մայրենի լեզվով կրթություն ստանալ հանրապետության ռուսական թեքում ունեցող մի քանի հանրակրթական դպրոցներում: Բարձրագույն կրթության ձգտող Ռուս երիտասարդության համար ՀՀ պետական մի քանի բուհերի համապատասխան ֆակուլտետներից բացի, գործում է նաև Հայ-սլավոնական համալսարանը: Ռուս երիտասարդության համար ազգային հոգևոր-մշակութային արժեքների պահպանման տեսանկյունից կարևոր են հատկապես ՀՀ տարածքում վերահեռարձակվող մի քանի ռուսական հեռուստաալիքները, Երևանում գործող ռուսական դրամատիկական թատրոնը, ռուս-հայկական մշակութային ակտիվ շփումները, պարբերաբար կազմակերպվող և անցկացվող մշակութային օրերը, համերգները և այլն:

4.3.3 Ասորիներ

ՀՀ ազգային ստվար համայնքներից է ասորական համայնքը, որի ներկայացուցիչներն հիմնականում բնակվում են գյուղական համայնքներում: Ասորական համայնքը ՀՀ կազմակերպված համայնքներից մեկն է, իր յուրահատուկ մշակութային առանձնահատկություններով, ավանդություններով

| | |
|--|--|
| ՀՀ ներկայացուցիչները նեստորական ներկայացուցիչներ տարիներին ավանդական հոգևոր պրակտիկայի մեծ թվով ասորիներ Սակայն, Հայաստանի հետո նեստորական ակտիվացավ, հատկապես նեստորական առկայությունը: | ասորական համայնքի հիմնականում եկեղեցու են: հորհրդային գրկված լինելով ազգային եկեղեցու միջոցով իրականացումից, դարձել էին նաև եկեղեցու հետևորդ: անկախացումից նորից նպաստեց հոգևորականի |
|--|--|

և սովորություններով: Ասորիներով բնակեցված համայնքների հանրակրթական դպրոցներում դասավանդվում է ասորերեն, որը նպաստում է այս համայնքի երիտասարդների ազգային կրթությանը և դաստիարակությանը: Գործում են ասորական ազգային հասարակական կազմակերպություններ, որոնցում ընդգրկված են նաև այս համայնքի երիտասարդները: Ասորի երիտասարդությունը այսօր ակտիվորեն ընդգրկված է հասարակական գործընթացներում, մասնակցում է մշակութային միջոցառումների, որտեղ հնարավորություն ունի ներկայացնելու ասորական մշակույթն ու արվեստը:

4.3.4 Այլ ազգություններ

ՀՀ ազգային փոքրամասնությունների թվին են պատկանում նաև հույները, վրացիները, հրեաները, լեհերը, ուկրաինացիները, քրդերը և այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնք թվաքանակով այնքան էլ շատ չեն և պատկանում են տարբեր կրոնական ավանդական հոսանքների՝ ուղղափառ (ուկրաինացիներ, բելառուսներ, հույներ, վրացիներ), հուդայականություն (հրեաներ), լյութերական բողոքականություն (գերմանացիներ): Այս փոքրամասնությունների համար էլ

հանրապետությունում ստեղծված են լիարժեք գործելու բարենպաստ պայմաններ: Ի տարբերություն վերը նշված ազգային փոքրամասնությունների, հույների, վրացիների, ուկրաինացիների և հրեաների համայնքները հիմնականում ներկայանում են միջին և բարձր տարիքի բնակչությամբ, որի հիմնական պատճառն այն է, որ այս համայնքների ներկայացուցիչները հիմնականում հայերի հետ ամուսնացած միջին և բարձր տարիքի քաղաքացիներ են: Այս համայնքների երիտասարդները փոքր թիվ են կազմում, որոնք այնուամենայնիվ լիարժեքորեն ընդգրկված են հասարակական գործընթացներում և ներկայանում են իրենց ազգային, հոգևոր-մշակութային առանձնահատկություններով և ՀՀ լիիրավ քաղաքացիներ են:

Այս գործընթացում ընդգրկված են նաև ազգային փոքրամասնությունների երիտասարդ ներկայացուցիչները, որոնք ակտիվորեն մասնակցում են հասարակական կյանքին և ՀՀ հիմնական բնակչության և ազգային այլ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ շփումներում ներկայացնում իրենց ազգային մշակույթը, լեզուն, ավանդություններն ու սովորությունները:

Անփոփում

Ազգային փոքրամասնությունների երիտասարդության համար առկա խնդիրները հոգևոր-մշակութային ոլորտում ավելի շատ համապետական նշանակություն ունեն, քան ներազգային, որի պատճառով այդ խնդիրները պետության կողմից պետք է ներառվեն համընդհանուր երիտասարդական մշակութային քաղաքականության մեջ և լուծվեն հաշվի առնելով նաև ազգային փոքրամասնությունների կրոնական, ազգային և մշակութային առանձնահատկությունները:

4.4 Արժեքային կողմնորոշումներ

Ներածություն

Հետխորհրդային շրջանում նորանկախ Հայաստանի Հանրապետությունը կանգնեց մի շարք դժվարությունների առաջ, որոնք ընդգրկում էին հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Ավանդաբար ձևավորված արժեքային համակարգի մի շարք բաղադրիչների նկատմամբ ի հայտ եկած նոր պատկերացումներն ու մոտեցումները, ընթացող փոփոխությունները իրենց կնիքը

Այսօր առավել հրատապ է համագործակցության ու շփումների նոր ուղիների որոնումը, որոնք ներկա հազարամյակում հրամայական պահանջ են դարձել: Գլոբալիզացիայի պայմաններում առավել դժվարանում է պատանիներին ու երիտասարդներին ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելը: Արժեքային համակարգի ձևավորումը պետք է ընթանա ազգային և համամարդկային համադրմամբ: Հայաստանում միշտ առաջնահերթ կարևորություն են ունեցել հոգևոր մշակույթն ու արժեքները: Այս իմաստով կարևոր է պետության դերը՝ երիտասարդ սերնդին ազգային արժեքների մատուցմամբ, հայրենասիրական ոգով և դրանց զուգահեռ՝ ժողովրդավարական, համամարդկային սկզբունքներով կրթելը: Պետության կողմից այս ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը ապահովելու համար պետք է տարվի համակարգված աշխատանք՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

դրեցին խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված մի շարք արժեքների վրա: Այս առումով ՀՀ քաղաքացիների առջև ծառայան մի շարք խնդիրներ կապված նոր

արժեքային կողմնորոշումների հետ: Ազգային և ժողովրդավարական նոր արժեքները եկան փոխարինելու խորհրդային արժեքային համակարգին, որը ձևավորվել էր տասնամյակների ընթացքում և հնարավոր չէր միանգամից դուրս մղել հասարակական գիտակցությունից: Այսօր դեռևս շարունակվում է հասարակության տարբեր շերտերում ընթացող փոփոխությունները կապված նոր արժեքային համակարգերի ընկալման և հնի վերաժևորման հետ: Նոր ձևավորվող քաղաքացիական հասարակության համար կարևորվում է հասարակական ժողովրդավարական գիտակցության ձևավորումը, որը պայմանավորված է մի շարք միմյանց փոխկապակցված գործոններով՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական նոր համակարգերի ձևավորում, հզոր-մշակութային նոր արժեքների գիտակցում և ընկալում, կրթական, դատաիրավական համակարգերի բարեփոխում, միջազգային ինտեգրացիա, գլոբալիզացիա և այլն:

Արժեքային նոր կողմնորոշումները ընդգրկում են ՀՀ հասարակական կյանքի բոլոր ոլորտները և անմիջականորեն առնչվում են հասարակության բոլոր տարիքային խմբերին: Համամարդկային ընդհանուր արժեքների վերաբերյալ Հայաստանի երիտասարդության կողմնորոշումներում, ըստ ուսումնասիրության, հատկապես ընդգծված են մարդասիրությունը (36,4%), բարությունը, գթասրտությունը, (31,4%), ազնվությունը, անկեղծությունը (33,0%), հայրենասիրությունը(22,8%), հոգևոր-մշակութային արժեքները (22,2%) և այլն: Ակնհայտ է, որ երիտասարդության շրջանում համամարդկային այս արժեքներն արդեն կարևոր դերակատարություն ունեն նրանց հոգևոր արժեքային կողմնորոշումներում, սակայն այս արժեքների կողքին արձանագրվում է նաև բավականին կարևոր այլ արժեքների (ազատամտություն. ազատատենչություն-0.9% և արդարություն. օրինականություն -0.5%) անտեսում, որի պատճառ կարելի է համարել ժողովրդավարական արժեքային համակարգի նկատմամբ նոր ձևավորվող և զարգացման փուլում գտնվող պատկերացումներն ու մոտեցումները:

ՀՀ ժամանակակից երիտասարդության արժեքային կողմնորոշումներում գերակշռում են հետևյալ պատկերացումներն ու մոտեցումները, որոնք առաջացնում են նաև համապատասխան խնդիրներ և պահանջում են հատուկ մոտեցում և լուծում:

4.4.1 Ժողովրդավարական արևմտյան արժեքային համակարգ

Հանրապետության երիտասարդության զգալի մասը ակտիվորեն մասնակցում է հասարակական գործընթացներին և ավելի մոտ է կանգնած ժողովրդավարական արժեքներին քան տարիքային ավագ խմբի բնակչությունը, որի մոտ դեռևս զգացվում է խորհրդային արժեքային համակարգի առկայությունը: Մեծ թվով երիտասարդներ ընդգրկված են տարբեր հասարակական կազմակերպություններում և ուսանողական միություններում, որը հնարավորություն է տալիս երիտասարդությանը շարժիչ ուժ

դառնալ հանրապետությունում և ազդել հասարակական մի շարք գործընթացների վրա: Երիտասարդության այս խմբի համար հստակ է արևմտյան արժեքային կողմնորոշումը, որը դրսևորվում է հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում: Այս արժեքային կողմնորոշման ձևավորմանը նպաստում է հանրապետության որդեգրած ժողովրդավարական ուղին, երիտասարդական մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը, կրթական համակարգի բարեփոխումները և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելը, արևմտյան երկրների հետ քաղաքական, տնտեսական, մշակութային շփումների զարգացումն ու ակտիվացումը և այլն:

4.4.2 Ազգային մշակույթ, արվեստ և հայրենասիրական դաստիարակություն

Ետխորհրդային շրջանի սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, սոցիալական անհավասարությունը և ընդհանուր կենսամակարդակի անկումը իրենց ազդեցությունն ունեցան ազգային ավանդական հոգևոր-մշակութային արժեքների վրա, որի արդյունքում դրանք ևս անկում ապրեցին: Փակվեցին մշակութային օջախները, սահմանափակվեցին բարձարժեք մշակույթի և արվեստի հետ շփվելու հնարավորությունները, հասարակական կյանք ներխուժեցին ցածրակարգ և անորակ մշակույթի ու արվեստի տարատեսակ ուղղություններ, հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցավ ազգային հոգևոր-մշակութային արժեքների անկում: Սակայն, այսօր հանրապետությունում աստիճանաբար ստեղծվում են բարենպաստ պայմաններ ազգային մշակույթի զարգացման համար, պետությունը կարևորում է ազգային մշակույթի զարգացումը և խթանում դրան ուղղված գործողություններն ու քայլերը: Բացվել, վերաբացվել և վերանորոգվել են մշակութային օջախներ, զարգանում են արվեստի տարբեր ճյուղեր, ակտիվացել և խորանում են այլ երկրների հետ մշակութային շփումները: Այս գործընթացներում ընդգրկված են մեծ թվով երիտասարդներ, որոնց հնարավորություն է ընձեռնվել մասնակից լինել նոր մշակութային արժեքների ձևավորմանը: Երիտասարդության արժեքային կողմնորոշումներում տեղի է ունենում ազգային արժեքների ընկալում և գնահատում, որը զերծ է խորհրդային ժամանակաշրջանին հատուկ գաղափարական կաղապարումից: Երիտասարդական մի շարք հասարակական կազմակերպություններ ունեն մշակութային ուղղվածություն, որոնց միջոցով օժտված երիտասարդները հնարավորություն ունեն լիարժեք գործելու:

Հոգևոր արժեքային համակարգում կարևորվում է հայրենասիրական դաստիարակության խնդիրը: Հայրենասիրությունը որպես արժեքային ինքնուրույն համակարգ անմիջականորեն առնչվում է ազգային հոգևոր-մշակութային ընկալումների հետ և երիտասարդության մոտ ձևավորվում է ընտանիքում,

դպրոցական տարիքում, որը հետագայում լրացվում է ուսումնական հաստատություններում, բանակում և հասարակական կյանքում ընդհանրապես: Հայրենասիրական դաստիարակության գործում իր ուրույն դերն ունի նաև Հայ Առաքելական Եկեղեցին, որը դարեր ի վեր եղել է հայ ժողովրդի հոգևոր շարժիչ ուժը: Երիտասարդության համար հայրենասիրական դաստիարակության լավագույն միջավայր է բանակը, որտեղ հայրենասիրական արժեհամակարգը առավել ցայտուն է դրսևորվում: Երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանը նպաստում է նաև զանգվածային լրատվության միջոցների ակտիվ գործունեությունը և դրանցով տարվող քարոզչությունը: Չնայած պետության կողմից տարվող հայրենասիրական դաստիարակությանն ուղղված ակտիվ քաղաքականությանը, այնուամենայնիվ, այս հարցում ևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք ընդհանուր են ողջ հանրապետության համար և պահանջում են միասնական և ընդհանրական լուծում:

4.4.3 Ոչ ֆորմալ արժեքային կողմնորոշումներ

Արևմտյան արժեքային համակարգի հետ շփումները երիտասարդության մոտ ձևավորում են ոչ միայն ավանդական պատկերացումներ, այլև Հայաստան են մուտք գործել և երիտասարդության մի հատվածի համար գերակայող են դարձել ոչ ավանդական համավոր արժեքային կողմնորոշումներ: Մեծ թվով երիտասարդներ ընդգրկված են ոչ ֆորմալ համարվող երիտասարական շարժումներում և խմբավորումներում: Այդ շարժումներից մի քանիսն անմիջականորեն առնչվում են արվեստի, երաժշտության որոշակի ուղղությունների հետ և երիտասարդության տվյալ հատվածի համար հոգևոր պահանջմունքների բավարարման միջոց են: Ոչ ֆորմալ արժեքային այս կողմնորոշումներին նպաստում է անմիջական կապը կրթության աստիճանի հետ և ոչ ֆորմալ խմբերում ընդգրկված երիտասարդության հիմնական մասը ուսանողներ են, որոնց համար տվյալ խումբը ներկայացնելը և արժեքային նմանատիպ կողմնորոշում ունենալը ժամանակավոր բնույթ ունի և հիմնականում վերաբերում է ուսանողական տարիքին: Հայաստանում գործող այդպիսի ոչ ֆորմալ երիտասարդական շարժումներ կան խմբեր են Ռոքերները (հարցված երիտասարդության 6,3 %-նախնտրում է Ռոք/Փոփ/.Ջազ երաժշտություն), Ռեպերները և այլն: Հարկ է նշել, որ այս տիպի արժեքային կողմնորոշում ունեցող խմբերն ու շարժումները կազմակերպչական տեսանկյունից թերի են գործում, զարգանում են հիմնականում տարերայնորեն և երիտասարդության շրջանում մեծ տարածում չունեն: Ի տարբերություն մշակութային ուղղվածություն ունեցող այս տիպի արժեքային կողմնորոշում ունեցող խմբերի և շարժումների, Հայաստանում գործում են նաև կազմակերպված ոչ ֆորմալ այնպիսի շարժումներ և խմբեր, որոնց ներկայացուցիչների համար արժեքային կողմնորոշումներում գերակայող են դարձել

կյանքի, կենսապայմանների, հասարակական միջավայրի և գիտակցության այս կամ այն խնդրի վերաբերյալ յուրահատուկ և յուրատեսակ պատկերացումներ, որոնք երիտասարդության որոշակի խմբերի համար ձևավորում են արժեքային յուրատեսակ համակարգ: Այս խմբերի մոտ գերակայում է խմբակային գիտակցությունը և խմբակային շահը, որը երբեմն կարող է հակադրվել հասարակության ընդհանուր շահերին և առաջացնել հասարակական դժգոհություն: Այս տիպի խմբերի արժեհամակարգը նույնպես հիմնականում ձևավորվում է տարերայնորեն, նմանատիպ արևմտյան արժեքային կողմնորոշում ունեցող երիտասարդության ներկայացուցիչների գործունեության արդյունքում: Այս տիպի ոչ ֆորմալ արժեքային կողմնորոշում ունեցող խմբերի շարքին կարելի է դասել բայթերներին, սափրագլուխներին և այլն:

4.4.4 Հոգևոր արժեքային նոր կողմնորոշում ունեցող խմբեր

Այս խմբերի թվին հիմնականում կարելի է դասել երիտասարդության այն հատվածի ներկայացուցիչներին, ովքեր Հայաստանում գործող ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների և ներփակ հոսանքների անդամ են: Հիմնականում հետխորհրդային շրջանում Հայաստան ներթափանցած և գործունեություն ծավալած մի շարք կրոնական կազմակերպություններ հասարակական գիտակցությանը ներկայացրեցին հոգևոր նոր արժեքներ, որոնց կրողը դարձան այդ կազմակերպություններին անդամագրված բազմաթիվ անձինք, այդ թվում մեծ թվով երիտասարդներ: Հոգևոր արժեքային այս նոր կողմնորոշումները երբեմն ունենում են բացասական ազդեցություն: Կրոնական մի քանի կազմակերպությունների դավանաբանությունն ու հասարակական կարգի, կենսակերպի և արժեքների վերաբերյալ յուրատեսակ պակերացումները այդ կազմակերպությունների երիտասարդ անդամներին հնարավորություն չեն տալիս լիարժեքորեն մասնակցելու հասարակական կյանքին, տեղի ունեցող հասարակական գործընթացներին: Ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների և աղանդների անդամ մի շարք երիտասարդներ խուսափում են իրենց հասակակիցների հետ անմիջական շփումներից, չեն ստանում լիարժեք կրթություն, գրեթե չեն ձևավորում ընտանիքներ, որովհետև խուսափում են խառնամուսնություններից, հասարակության մեծ մասի կողմից շարունակում են մնալ մերժված, լիարժեքորեն չեն ինտեգրվում հասարակության մեջ և ապրում են մեկուսացած համայնքներով:

Ոչ ավանդական կրոնական այս կազմակերպությունները իրականացնում են նաև ակտիվ մշակութային գործունեություն, որը երբեմն հանգեցնում է այնպիսի անցանկալի երևույթի ինչպիսին հոգևորությունն է: Այս կազմակերպություններն ունեն մշակութային օջախներ, կազմակերպում և իրականացնում են հզոր-մշակութային

միջոցառումներ, որոնցում ընդգրկված են մեծ թվով երիտասարդներ:

Ամփոփում

Հայաստանի հասարակական կյանքում ձևավորված այս և այլ արժեքային կողմնորոշումները երիտասարդության համար դարձել են հզոր-մշակութային կյանքի հիմնական շարժիչ ուժը, որի վերլուծությունը և արժևորումը պետք է դրվի պետական քաղաքականության հիմքում և պետությունը երիտասարդության նկատմամբ հզոր-մշակութային քաղաքականություն իրականացնելիս պետք է հաշվի նստի ձևավորված նոր արժեքային կողմնորոշումների հետ: Սակայն մի քանի արժեքներ երբեմն ունենում են բացասական հետևանքներ, մասնավորապես, անտեսվում են ազգային մի շարք արժեքներ, երիտասարդությունը հեռանում ազգային ակունքներից, մշակույթից, տարվում էժանազին արժեքներով, որի արդյունքում տուժում է հայրենասիրական դաստիարակությունը և հայրենիքի նկատմամբ պատասխանատվության զգացումը: Օտարածին տարատեսակ արժեքներով տարվելը մի շարք դեպքերում հանգեցնում է ազգային հզոր-մշակութային արժեքների մերժմանը: Արևմտյան արժեքներով տարվելը երբեմն հանգեցնում է արտագաղթի դեպի եվրոպական երկրներ, որի արդյունքում հանրապետությունից հեռանում են կրթություն ստացած և զարգացած երիտասարդներ: Հարկ է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանին հատուկ զաղափարախոսությանը փոխարինած ազգային և ժողովրդավարական արժեքային համակարգը չունի այն ազդեցությունը, որը ցանկալի էր: Երիտասարդական մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը, ուղղված այս խնդիրների լուծմանը տվել է որոշակի ցանկալի արդյունք, որը սակայն բավարար համարել չի կարելի, որովհետև հանրապետության երիտասարդության մեծ մասն, այնուամենայնիվ, ընդգրկված չէ այդ կազմակերպությունների մեջ և հաղորդակից չի դառնում այդ գործընթացներին: Հանրապետությունում սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններն ու բարեփոխումները իրենց ազդեցություն են թողնում ընտանիքում և դպրոցում դաստիարակվող և կայացող մի շարք երիտասարդների հոգևոր և հայրենասիրական դաստիարակության վրա: Հոգևոր բարձրակարգ արժեքները ստորադասվում են առօրեական, նյութական ոչ մնայուն և մակերեսային արժեքներին, որի արդյունքում երիտասարդության մի ստվար զանգված դառնում է արժեքային ոչ լիարժեք համակարգի կրող և իր համար կարևորում է հասարակության համար բացասական համարվող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են նյութապաշտությունը, պետության և հայրենիքի նկատմամբ պատասխանատվության բացակայությունը և քաղաքացիական պարտականությունների ոչ լիարժեք կատարումը:

4.5 Ազատ ժամանց

Ներածություն

«Երբ ... իշխանություններն օժանդակում և նպաստում են երիտասարդների մասնակցությանը, ազատ ժամանցի կազմակերպմանը, նրանք նպաստում են երիտասարդների սոցիալական ինտեգրմանը՝ երիտասարդներին օգնելով հակազդել ոչ միայն երիտասարդությանն առնչվող խնդիրներին, այլև ժամանակակից հասարակության մարտահրավերներին» - ասված է Տեղական և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիայում³⁴:


Երիտասարդների ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպման համար մշակվող ցանկացած քաղաքականություն կան գործողություն «պետք է երաշխավորի երիտասարդների նկատմամբ հարգալից վերաբերմունք ապահովող մշակութային միջավայր, նաև հաշվի առնի երիտասարդներին առանձնահատուկ տարբեր կարիքները, հանգամանքները և ձգտումները»:

Ո՞վ և ինչպե՞ս է կազմակերպում հայաստանցի երիտասարդի ազատ ժամանցը, համընկնու՞մ են արդյոք ազատ ժամանցի կազմակերպման երիտասարդի հնարավորություններն ու ցանկությունները, վերջապես, ինչպե՞ս է անցկացնում շաբաթային երիտասարդն իր ազատ ժամանակը և արդյո՞ք արդյունավետ: Չէ՞ որ հենց երիտասարդի ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպումից մեծապես կախված է երկրի զարգացման տեմպը՝ երիտասարդությանը որպես ռեսուրս օգտագործելու կարողությունը:

4.5.1 Իրավիճակը՝ հակիրճ

Ազատ ժամանցի և հանգստի կազմակերպումը լիովին մատչելի է հանրապետության բնակչության ընդամենը 4,3% համար:³⁵

Ազատ ժամանցի և հանգստի պահանջումների բավարարման մատչելիությունը. (%-ով)



³⁴ Ընդունվել է Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից 21 մարտի, 2003թ

³⁵ «Աղքատության ու գոյատևման պատկերը. հասարակության շերտավորման գործընթացները 33-ում», ՄԻԺԻ, Երևան, 2003, էջ 68

Ինչպես երևում է բերված թվերից, բավականին մեծ է «մատչելի չէ» պատասխանների տեսակարար կշիռը: Հետազոտության նյութերը, ֆոկլուս խմբային հարցումների արդյունքները նույնպես ցույց են տալիս, որ բնակչության գերակշիռ մեծամասնությունը քաղաքներում և գյուղերում չունի հանգիստն ու ժամանցը կազմակերպելու, նույնիսկ ընտանեկան տոները նշելու բավարար հնարավորություն: Հաճախ կազմակերպում են միայն երեխաների ծննդյան տոները, ընդ որում դրանց մակարդակը, հենց ֆոկլուս խմբային հարցումների մասնակիցների վկայությամբ, հեռու է բավարար լինելուց: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ինչպես բազմաթիվ այլ դեպքերում, համեմատությունը կատարվում է խորհրդային շրջանի հետ, երբ ազատ ժամանցի և ընտանեկան տոների կազմակերպումը բնակչության մեծ մասի համար որևէ բարդություն չէր ներկայացնում, ավելին՝ շատ հաճախ զանազան միջոցառումներ էին կազմակերպվում առանց ոչևէ կոնկրետ առիթի: Ազատ ժամանցի կազմակերպման հնարավորությունների կտրուկ նվազումը, բնականաբար, առաջին հերթին կապվում է նյութական սահմանափակ հնարավորությունների հետ:

4.5.2 Երիտասարդական ազատ ժամանց

Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները՝ հայաստանցի երիտասարդի ազատ ժամանցի կազմակերպման հիմնական ձևերը հեռուստատեսությունն է, երաժշտությունը և ընթերցանությունը, համապատասխանաբար՝ 30,5, 28,2 և 18,1 տոկոսներով: Կարելի է ենթադրել, որ երիտասարդների գերակշիռ մեծամասնությունն իր ազատ ժամանցն ուղղակի անցկացնում է տանը և օգտվում միայն ժամանցի կազմակերպման «անվճար» միջոցներից: Հատկանշական է, որ երիտասարդների 5,9% համար ազատ ժամանցի կազմակերպման նախընտրելի ձև է ինտերնետային ակումբ հաճախելը: Հարցման անցկացման ընթացքում նշվել են նաև ազատ ժամանցի կազմակերպման նախընտրելի այլ ձևեր, օրինակ՝ բար, սրճարան – 5,8%, ռադիո – 3,8% և միայն հարցված երիտասարդների 2,5%-ը նախընտրում է այցելել, օրինակ, մարզասրահ:


Ու՞մ հետ եք նախընտրում անցկացնել Ձեր ազատ ժամանակը հարցին 16–30 տարեկան երիտասարդները պատասխանել են հետևյալ կերպ. (%-ով)

| | | |
|----|------------------------|------|
| 1. | Միայնակ | 4.1 |
| 2. | Ընկերների հետ | 59.1 |
| 3. | Ընտանիքում | 31.7 |
| 4. | Հարևան-բարեկամների հետ | 5.1 |

Երիտասարդական քաղաքականության թիրախն, իհարկե, այն երիտասարդն է, որը գտնվում է ընկերների, այսինքն հասակակիցների շրջապատում: Եվ 59,1% բավականին «լավ» թիվ է, բավականին լավ միջավայր երիտասարդական աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար: Անհրաժեշտ է ուղղակի հաշվի առնել երիտասարդների ցանկություններն ու պահանջները և դրանք համադրել երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունների հետ:

Վերոնշյալը ավելի ակնառու է դառնում, երբ անդրադառնում ենք երիտասարդի ազատ ժամանցի կազմակերպման արդյունավետության ինքնագնահատականին:

Գնահատեք. խնդրեմ. Ձեր ազատ ժամանցի կազմակերպման արդյունավետությունը. (%-ով)



Պարզ երևում է, որ հարցվածների 41,4% սեփական ազատ ժամանցի կազմակերպումը արդյունավետ չի համարում: Միաժամանակ նրանք կազմում են հստակ պատասխան տվածների (երբ հաշվի ենք առնում սեփական ինքնագնահատական տվածների կարծիքը, առանց պատասխանել դժվարացողների/) 2/3-ը (67,2%): Ենթադրությունը միակն է՝ երիտասարդության առնվազն 2/3-ը սեփական ժամանցի կազմակերպումն արդյունավետ չի գնահատում և այստեղ անելիք ունի հենց երիտասարդական քաղաքականությունն իր բոլոր ասպեկտներով, ատրիբուտներով, պետական և ոչ պետական սեկտորներով:

Ամփոփում

Երիտասարդի ազատ ժամանցի կազմակերպումը նաև ձև է նրան առնչելու մեր ընդհանուր ժառանգությանը, որն ստեղծվել է միմյանց հաջորդող սերունդների ջանքերով: Երիտասարդները սեփական գործունեությամբ, նախաձեռնությունների ու նորարարության ունակություններով իրենց մասնակցությունն են ցուցաբերում ընթացող զարգացումներին: Ուստի կարևոր է, որ «արդյունավետ ազատ ժամանցն» իր բոլոր դրսևորումներով մատչելի լինի նրանց, ինչպես նաև խթանի երիտասարդների ստեղծագործական գործունեության հնարավորությունները, այդ թվում նաև նոր ոլորտներում:

Հիշենք, մարդն ամենաթանկ կապիտալն է, երիտասարդությունը ռեսուրս է, իսկ երիտասարդի ազատ ժամանակը բավականին շատ:

ԳԼՈՒԽ V

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն, մարդու առողջության պահպանումը մոտ 70 տոկոսով կախված է շրջակա միջավայրից և ապրելակերպից: Ներկայումս առկա են մեծաքանակ գիտական հիմնավորումներ այն մասին, որ քրոնիկ հիվանդություններով հիվանդացության և այդ պատճառով վաղ մահացության աճն առավելապես կապված է անառողջ, սխալ ապրելակերպի ու անբարենպաստ շրջակա միջավայրի ազդեցության հետ:

Երիտասարդներն աշխարհի տարբեր մասերում ունեն անառողջական խնդիրներ, որը պայմանավորված է սոցիալական ծանր պայմաններով, ինչպես նաև այնպիսի գործոնների առկայությամբ, ինչպիսիք են անլուրջ վերաբերմունքը առողջության նկատմամբ, վնասակար ավանդական սովորույթների արմատացումը և այլն:

Առողջ վարքագծի վերաբերյալ (առողջ սննդակարգ, ֆիզիկական ակտիվություն և առողջ սեռական կյանք) որոշումների կայացմանը հաճախ խոչընդոտում են ֆիզիկական, սոցիալական, տնտեսական ու մշակութային ավելի ընդարձակ միջավայրերը, որոնք իրենց ազդեցությունն ունեն անձանց, խմբերի և տեղական համայնքների կողմից կայացվող որոշումների վրա: Ավելին, շատ հաճախ առողջության ամենավնասակար վարքագծային մոդելները հանդիպում են ամենաաղքատ խմբերի շրջանում, որը սովորաբար ուղեկցվում է ծխելու, ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործմամբ, քանի որ ցածր եկամուտների ու կրթություն չունենալու հետևանքով նրանք հայտնվում են բազմաթիվ սթրեսային իրավիճակներում, այդ խմբերում մեծ է երիտասարդների տեսակարար կշիռը:

Վատառողջ լինելուն հաճախ նպաստում են անբարենպաստ միջավայրը, առողջության պահպանման ամենօրյա համակարգի բացակայությունը, տեղեկատվության բացակայությունը, բժշկական սպասարկման անհամարժեքությունը կամ անհամապատասխանությունը: Խնդիրը ներառում է անապահովությունը, շրջապատի ոչ սանիտարական վիճակը, սովը, ինֆեկցիոն, մակարոնիային, տարբեր մանրէներից ծագող հիվանդությունները, ծխախոտի, ալկոհոլի, դեղահաբերի օգտագործման պահանջարկի աճը, որոնք ունենում են անկանխատեսելի վնասակար հետևանքներ:

Առողջության պահպանումը և բժշկասանիտարական լուսավորությունը մեծ դեր են խաղում մարդու առողջության վիճակի բարելավման գործում: Այն օգնում է ձևավորել անձի վարքը և ապահովում է առողջության պահպանման ու շրջակա միջավայրի բարելավման վերաբերյալ բավարար գիտելիքներ: Ոչ ինֆեկցիոն հիվանդությունների

նկատմամբ մարդու զգայունության վրա կարող են ազդել գենետիկական, կենսաբանական, վարքագծային և շրջակա միջավայրի գործոնները: Չնայած գենետիկական կառուցվածքը կարևոր է որոշակի հիվանդությունների զարգացման հիվանդությունը որոշելու առումով, վարքագծային ու շրջակա միջավայրի ռիսկի գործոնների կրճատումը և վերահսկումը մնում է ոչ ինֆեկցիոն հիվանդությունների տարածվածության նվազեցմանն ու ընթացքի փոփոխմանն ուղղված աշխատանքների հիմնաքարը:

Խորհրդային ժամանակաշրջանում դեռահասների առողջապահական կրթությունը և հատկապես սեռական դաստիարակությունը մեծապես անտեսվել է: Հետագա անկախության տարիներին Հայաստանում տեղ են գտել ապրելակերպի արմատական փոփոխություններ, մեծ ներքին ու արտաքին արտագաղթ, և հասարակությունը ենթարկվել է օտար մշակույթների ազդեցությանը: Ավանդական աջակցության մեխանիզմները, ծնողները և ընտանիքում ու համայնքում մյուս չափահասները չեն կարող արդյունավետ աջակցել երիտասարդներին այս արագ փոփոխվող միջավայրում:

Ավելին, առողջապահության, կրթության, սոցիալական ոլորտների և այլ ոլորտների մասնագետները, որոնց երիտասարդները կարող են դիմել օգնության համար, հազվադեպ են ստացել ուսուցում սեռական հարցերի, սեռական և վերարտադրողական առողջության հարցերի կամ երիտասարդների խորհրդատվության վերաբերյալ: Սեռական հարցերի և սեռական առողջության վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրները ընկերները, ամսագրերը, ինտերնետը և այլն են: Առողջ ապրելակերպը և սեռական դաստիարակությունը դեռևս ներառված չեն դպրոցական ծրագրերի մեջ: Չնայած լայնորեն ընդունվում է, որ առկա է դպրոցներում սեռական դաստիարակության ներառման չբավարարված պահանջ, առաջընթացը պետական կրթական համակարգում շատ փոքր է:

ՀՀ Սահմանդրությամբ և Օրենքներով երաշխավորվում է բնակչության բժշկական

Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:
Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ սընճալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում է օրենքով:
ՀՀ Սահմանդրություն, Հոդված 38.
Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:
Յուրաքանչյուր ոք, իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ ստանալ անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:
Յուրաքանչյուր ոք, իրավունք ունի այդ ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն և սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին:
Այլ պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է տվյալ պետության օրենսդրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:
«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, Հոդված 4. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը

օգնության և սպասարկման պետական հոգածությունը, սակայն ներկայումս առկա են բազմաթիվ հիմախնդիրներ, որոնք պահանջում են պետական հոգածություն , ինչպես նաև հասարկության առավել իրազեկվածություն և սեփական առողջության նկատմամբ պատկերացումների և մոտեցումների արմատական փոփոխություն: Ստորև կներկայացվեն որոշակի մոտեցումներ, վերլուծություններ ՀՀ-ում երիտասարդության առողջության վերաբերյալ, որոնք հենված են Ձեկույցի շրջանակներում իրականացված սեփական սոցիոլոգիական հետազոտությունների, ՀՀ պետական վիճակագրական ծառայության տվյալների, ՀՀ առողջապահության նախարարության զեկույցների, և տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ուսումնասիրությունների, հաշվետվությունների վրա:

5.1 Երիտասարդների առողջական վիճակը

ՀՀ-ում մինչ այսօր չի իրականացվել երիտասարդության առողջության համընդհանուր հետազոտություններ, և քանի որ բժշկագիտության զարգացմանը զուգահեռ բացահայտվում և պարզաբանվում են մի շարք նոր հիվանդություններ, իսկ սոցիալական, հասարկական փոփոխությունները բերում են առողջության պահպանման նկատմամբ նորովի ձևավորվող վերբերմունքի , ապա խիստ արդիական է մնում երիտասարդների առողջության ուսումնասիրությանն ուղղված աշխատանքները:

Հայաստանի 1988 թվականի ավերիչ երկրաշարժը, դրան հետևած պատերազմը, տարածված աղքատությունը, գործազրկությունը և սոցիալական բևեռացումը ունեցան իրենց բացասական ազդեցությունը երիտասարդության առողջության վրա:

2003 թվականին հոգեկան խանգարումներով առաջին անգամ ախտորոշված հիվանդ անձանց թիվը հասավ 48-ի` 100,000 բնակչության հաշվով: Չնայած չկան պաշտոնական վիճակագրական տվյալներ Հայաստանում հոգեկան խանգարումների տարիքային պատկերի մասին, այնուամենայնիվ, տեղեկատվության անուղղակի աղբյուրները ցույց են տալիս, որ դեռահասներն ամենախոցելին են: ՀՀ պետական վիճակագրական ծառայության տվյալների համաձայն 2000թ-ին առաջին անգամ ախտորոշված տուբերկուլյոզով հիվանդների մեջ շուրջ 60% եղել են երիտասարդներ, որը բավականին անհանգստացնող ցուցանիշ է, ներկայումս ՀՀ առողջապահության նախարարությունը իրականացնում է տուբերկուլյոզի դեմ ազգային ծրագիր: Նույն պետական մարմնի տվյալների համաձայն 2004թ-ին առաջին անգամ ախտորոշված չարորակ նորագոյացություններով հիվանդների 2,1% երիտասարդներ են (15-29 տարիքային խմբերում):

Վերարտադրողական առողջության պահանջները արհամարհված են դեռահասների կողմից: Ինչպես Հայաստանում, այնպես էլ շատ երկրներում տիրում է տեղեկատվության և սպասարկման բացակայություն, որոնք կարող են օգնել

երիտասարդներին հասկանալ սեռական վերարտադրողական առողջության խնդիրները, որոնք հետագայում կօգնեն պաշտպանվել անցանկալի հղիությունից, կամ սեռական հիվանդություններից, ինչպես նաև ՄԻԱՎ-ից:

Դեռահասությունն այն ժամանակաշրջանն է, երբ վարքագծի շեղումները հաճախակի են պատահում, բայց դրանց մեծամասնությունը չի բացահայտվում և չի բուժվում: Վարքագծի շեղումներ ունեցող երիտասարդները ենթակա են դպրոցը լքելու, օրենքի հետ հակասության մեջ մտնելու և կարող են կանգնել «լիարժեք քաղաքացի չդառնալու» հիմնախնդրի առաջ: Ոգելից խմիչքի և թմրամիջոցների օգտագործումը մի ազդակ է, որը հաճախ հանգեցնում է չարաշահումների, բռնության, հանցագործության, բացասաբար է ազդում ուսման և մասնագիտական աշխատանքի վրա: Մյուս կողմից, ոգելից խմիչք և դեղեր օգտագործողները ավելորդ ռիսկի են ենթարկված լրջորեն վնասելու իրենց առողջական վիճակը՝ հարբածություն, գերդոզավորում, դժբախտ պատահարներ, վնասվածքներ, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններ, սեռական ճանապարհով տարածվող վարակներ: Ձեկույցի շրջանակներում իրականացված ոսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ երիտասարդների 1,1 տոկոսն իրենց համարում են հիվանդ և ունեն անհապաղ բուժման կարիք և ընամենը 43,5 տոկոսն է իրեն համարում լիովին առողջ, այս ցուցանիշները բավականին անհանգստացնող են:

Աղյուսակ 1. Երիտասարդների առողջական վիճակը իրենց գնահատմամբ

| Անհապաղ բուժման կարիք ունեցող | | | | լիովին առողջ | |
|-------------------------------|-----|------|------|--------------|---------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | Դժվ. են. պատ. |
| 1.1 | 5.0 | 14.4 | 35.3 | 43.5 | 0.7 |

Ջետազոտության ժամանակ պարզվել է, որ երիտասարդների ընդամենը 26.1 % է կյանքին լուրջ վտանգ չներկայացնող հիվանդությունների ժամանակ բժշկական օգնություն և խորհրդատվություն ստանալու նպատակով դիմում բժշկի (աղյուսակ 2), իսկ 67.5% նախընտրում են դիմել ընտանիքի անդամներին:

Աղյուսակ 2. Երիտասարդները կյանքին լուրջ վտանգ չներկայացնող հիվանդությունների ժամանակ ո՞ւմ կողմից են բժշկական օգնություն և խորհրդատվություն ստանում

| | | |
|----|-------------------------------|------|
| 1. | Բժիշկ | 26.1 |
| 2. | Ընտանիքի անդամներ | 67.5 |
| 3. | Ընկեր. ծանոթ. բարեկամ. հարևան | 5.8 |
| 4. | Ոչ մեկից | 0.6 |

Աղյուսակ 3. Երիտասարդների վստահությունը բժիշկների նկատմամբ

| Չեն վստահում | | | | լիովին վստահում են | |
|--------------|------|------|-----|--------------------|--------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | Դժվ. են պատ. |
| 51.2 | 14.0 | 19.6 | 1.4 | 13.2 | 0.6 |

Թե ինչքան երիտասարդների 50% -ից ավելին չեն վստահում բժիշկներին, առանձին ուսումնասիրման կարիք ունի, սակայն ցուցանիշը խիստ մտահոգիչ և ուշադրության արժանի է:

Աղյուսակ 4. Վերջին մեկ տարվա ընթացքում առողջական խնդիրներից ելնելով քանի առողջապահական հիմնարկներ հաճախելիությունը

| | |
|---------------------------------|-------------|
| 1 անգամ | 8.3 |
| 2 անգամ | 8.6 |
| 3 անգամ | 7.2 |
| 4 անգամ | 1.6 |
| 5 ել ավելի | 0.4 |
| Չեն հաճախել | 69.3 |
| Դժվարանում են պատասխանել | 4.6 |

Վերոհիշյալ տվյալները վկայում են, որ երիտասարդների մեծամասնությունը /69,3 տոկոս/ չեն հաճախում առողջապահական հիմնարկներ: Նրանց ընդամենը խիստ փոքրամասնությունն է, որ տարվա ընթացքում 4 կամ 5 անգամ և ավելի /համապատասխանաբար՝ 1,6 և 0,4 տոկոս/ հաճախում է առողջապահական հիմնարկներ: Մոտավորապես հարյուր երիտասարդից ութը տարեկան 1-2 անգամ, և յոթը՝ 3 անգամ առողջական խնդիրներից ելնելով հաճախում է առողջապահական հիմնարկներ:

Այս ցուցանիշները խոսում են երկու փաստի մասին. կամ երիտասարդները ինչ-ինչ պատճառներով չեն վստահում բժիշկներին, կամ տեղեկացված չեն և չեն գիտակցում առողջության հետ առընչվող բոլոր խնդիրների առկայության դեպքում մասնագետին դիմելու կարևորությունը:

5.2 Առողջ ապրելակերպ

Երիտասարդության շրջանում ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու պատկերը ուսումնասիրելու, ինչպես նաև առողջ ապրելակերպի վերաբերյալ տեղեկացվածության և գիտելիքների պարզաբանման համար, Ձեկույցի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում պարզվել է հետևյալը.

Աղյուսակ 5. Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու աստիճանը

| | | |
|----|--------------|------|
| 1. | Կանոնավոր | 7.4 |
| 2. | Երբեմն | 22.1 |
| 3. | Չեն զբաղվում | 70.5 |

Աղյուսակ 5-ից հետևում է, որ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր զբաղվում է երիտասարդության փոքրամասնությունը, ընդամենը՝ 7,4 տոկոսը, 22,1 տոկոսը զբաղվում են անկանոն, երբեմն, իսկ մեծամասնությունն ընդհանրապես չի զբաղվում /70,5 տոկոս/:

Աղյուսակ 6. Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու վայրը

| | | |
|----|-----------------------------|------|
| 1. | ՈՒՍՄԱՆ, աշխատանքի վայրում | 33.7 |
| 2. | Տանը, բակում | 46.3 |
| 3. | Այգում, զբոսայգում | 1.1 |
| 4. | Մարզասրահում, մարզակումբում | 18.9 |

Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող երիտասարդության 46,3 տոկոսը իրենց մարզումներն անցկացնում են տանը կամ բակում, 33,7 տոկոսը՝ ուսման կամ աշխատանքի վայրում, փոքրամասնությունը՝ /1,1 տոկոս/ զբոսայգում, և ընդամենը 18,9 տոկոսն է, որ այդ նպատակով հաճախում է մարզասրահ կամ մարզակումբ:

Աղյուսակ 7. Երիտասարդության տեղեկացվածության մակարդակը առողջության պահպանման և առողջ ապրելակերպի վերաբերյալ

| տեղեկացված չեն | | | | տեղեկացված են | |
|----------------|-----|------|------|---------------|--------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | Դժվ. են պատ. |
| 18.3 | 6.1 | 29.5 | 24.8 | 20.5 | 0.8 |

Ակնհայտ է, որ երիտասարդների շրջանում առկա է տեղեկացվածության բացակայություն, ընդամենը 20,5% է տեղեկացված առողջության պահպանման և առողջ ապրելակերպի վերաբերյալ, իսկ 18,3 % ընդհանրապես չունի տեղեկություն առողջ ապրելակերպի վերաբերյալ:

Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ Կառավարությունը բոլոր տիպի ուսումնական պլաններում ընդգրկի ծրագրեր՝ առողջապահության տարրական գիտելիքների և աշխատանքների վերաբերյալ: Հատուկ շեշտ պետք է դնել հիգիենայի պահպանման միջոցների ճիշտ ըմբռնմանը, ինչպես նաև առողջ միջավայրի զարգացմանը և կայացմանը: Այս ծրագրերը պետք է հիմնվեն երիտասարդության պահանջների և առաջարկությունների վրա:

Կառավարության և ուսումնական առողջապահական հաստատությունների, մասնագիտական ՀԿ-ների համագործակցությունը պետք է խրախուսվի, որպեսզի բարձրացվի երիտասարդի անձնական պատասխանատվությունը առողջ ապրելակերպի նկատմամբ: Պետք է անհրաժեշտ գիտելիքներ փոխանցվեն, յուրացնելու առողջ ապրելակերպի էությունը, ներառյալ սոցիալական և առողջապահական վարքագծի ուսուցանումը, որի բացակայությունը կարող է վատ ազդեցություն թողնել առողջության վրա:

Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի քարոզման և համապատասխան մշակույթի ձևավորման, առողջության վրա վնասակար ազդեցության գործոնների նվազեցման, հասարակական առողջության ամրապնդման, վերարտադրողական առողջության պահպանման և սեռավարակների, այդ թվում ՄԻԱՎ-ի տարածման նվազեցման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի ապահովմանը միտված պետական ծրագրեր և միջոցառումներ, այդ ծրագրերում հասարակական, ոչ կառավարական կազմակերպությունների ներգրավմամբ:

5.3 Առողջության պահպանման վերաբերյալ տեղեկատվության և ծառայությունների մատչելիություն

Անցումային շրջանի անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմանները, պետության կողմից ֆինանսավորվող առողջապահության բացակայությունը ունեցել է բացասական ազդեցություն ամբողջ համակարգի վրա: Վերջին տասնամյակի ընթացքում, հիվանդանոց այցելությունները և հիվանդանոցների զբաղվածության ցուցանիշները կտրուկ նվազել են՝ հիմնականում ֆինանսական սահմանափակումների պատճառով: 2003թ. այցելությունների միջին քանակը առողջապահական հիմնարկներ, որոնք տրամադրում են ամբուլատոր և դիսպանսեր բուժօգնություն, նվազել է մինչև 120 հաճախորդի մեկ հերթափոխի ընթացքում 10,000 բնակչի հաշվով:

Այս իրավիճակը մեծապես ազդում է մարդկանց առողջության վրա՝ բերելով հիվանդացության և մահացության ցուցանիշների աճ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերը չեն օգտվում բժշկական ծառայություններից քանի դեռ շատ ուշ չէ: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից 1998թ. իրականացված Կովկասի առողջապահական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոցելի խմբերին վերաբերող առողջական ցուցանիշները վատանում են:

Երևանում և Արարատի մարզում 2001-2002թթ. ընթացքում UNFPA աջակցությամբ իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների համար սեռական և վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունների մատչելիությունը շատ սահմանափակ է: Ուսումնասիրության ընթացքում հարցված երիտասարդների մեծամասնությունը (80%) երբեք չեն դիմել խորհրդատվության կամ առողջապահական ծառայությունների: Մատչելիությունը հատկապես սահմանափակ է այն երիտասարդների համար, որոնք իրենք չեն վաստակում եկամուտ, օրինակ ուսանողներ, մանկատների շրջանավարտներ, փողոցի դեռահասներ, գործազուրկ երիտասարդներ, և այլն:

Ավանդաբար, մոր և մանկան առողջության խնամքի և ընտանիքի պլանավորման, հղիության ընդհատման ծառայությունները նախատեսված են եղել ամուսնացած կանանց երեխաների խնամքի համար: Մշակութային ավանդույթների պատճառով ծառայությունները սահմանափակ են երիտասարդների համար, հատկապես, եթե նրանք ամուսնացած չեն, և երբեմն նույնիսկ ամուսնացած անչափահասների համար՝ մինչև նրանց առաջին հղիանալը: Ավելին, միայն փոքրաթիվ ծառայություններ տրամադրողներն ունեն հատուկ ուսուցում կամ բավարար փորձ՝ դեռահաս աղջիկների և տղաների սեռական և վերարտադրողական առողջության կարիքները բավարարելու համար, հետևաբար, բավարար չափով պատրաստ չեն սպասարկելու այս խմբին:

Ընտանիքի պլանավորման խորհրդատվությունը հիմնականում քաղաքներում գտնվող առողջապահական հիմնարկներում մայրական առողջության անբաժան մասն է: Սեռավարակների, ներառյալ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի, վերաբերյալ խորհրդատվությունը սեռավարակների և ՄԻԱՎ/ՉԻԱՅ կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների մի մասն է: Երիտասարդներն ունեն սահմանափակ հնարավորություն այդ հիմնարկներից օգտվելու համար:

Հակաբեղմնավորիչ միջոցները, ներառյալ՝ պահպանակները, կարող են ձեռք բերվել դեղատներում, բայց շատերի, և հատկապես դեռահասների համար դրանց գինը շատ բարձր է: Այս պայմաններում, սեռականորեն ակտիվ երիտասարդները ենթակա են անցանկալի հղիության, աբորտի, սեռավարակների/ՄԻԱՎ ռիսկերի և դրանց հետ կապված սոցիալական և առողջապահական հետևանքների: Ըստ առողջապահության նախարարության հաշվետվությունների, վերջին տարիներին անչափահասների շրջանում հղիությունների և սեռավարակների թիվը զգալիորեն ավելացել է:

Իրավական դաշտում խոշոր ձեռքբերում էր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002թ. դեկտեմբերին ընդունված ՀՀ օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»: Այս օրենքը ներառում է միջազգայնորեն ճանաչված սեռական և վերարտադրողական իրավունքները, որոնք սահմանվել են Պլանավորվող ծնողավարման միջազգային ֆեդերացիայի Մարդու իրավունքների սահմանումներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով դեռահասների իրավունքներին:

Առողջապահական ծառայություններից օգտվելու խոչընդոտները

Հայաստանի ժողովրդագրության և Առողջության Հարցերի Հետազոտության 2005 թվականի ուսումնասիրությունները ներառում են մի շարք հարցեր կնոջ առողջական խնամքի ստացման համար նրան հանդիպող խնդիրների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կարևոր է առողջական խնամք ստանալու նպատակով կնոջը հանդիպող հնարավոր խոչընդոտները հասկանալու և ուսումնասիրելու համար: Այս տեղեկատվության ստացման համար հարցում է անցկացվել 15-49 տարեկան կանանց շրջանում, թե արդյոք բժշկական խնամքի ստացման նպատակով նրանց համար խնդիր կհանդիսանան հետևյալ գործոնները՝

- թույլտվության ստացումը,
- խորհրդատվության համար անհրաժեշտ գումարի ձեռքբերումը,
- մինչև բուժհաստատություն հեռավորությունը,
- տրանսպորտի արժեքը,
- տրանսպորտից օգտվելու հնարավորությունը,
- միայնակ չգնալու ցանկությունը,

- մտավախությունը, որ այնտեղ չի լինի կին բուժաշխատող,
- մտավախությունը, որ այդ բուժաշխատողն անբարյացակամ կլինի,
- մտավախությունը, որ այնտեղ չեն լինի համապատասխան դեղամիջոցներ,
- մտավախությունը, որ կմատուցվի ցածրորակ բուժօժանայություն:

Կանանց և աղջիկների մեծամասնության համար /89 տոկոս/ համար նշված պատճառներից առնվազն մեկը մեծ խնդիր է հանդիսացել: Կանաց համար առողջական խնամքի ստացման հիմնական խոչընդոտ հանդիսանում է ֆինանսական միջոցների բացակայությունը: Հարցվողների երկու երրորդը /66 տոկոս/ նշել է, որ նրանց համար մեծ խնդիր է բուժման նպատակով անհրաժեշտ գումարի ձեռքբերումը, իսկ մեկ քառորդի /26 տոկոս/ համար՝ տրանսպորտային ծախսերը:

Որպես բժշկական խնամքի ստացման համար խոչընդոտ հանդիսացող որակական հատկանիշներ, կանանց կեսից ավելին նշել են /58 տոկոս/, որ մեծ խնդիր է վատ սպասարկումը, և 44 տոկոսը նշել է, որ բուժօժանատությունում չի լինի բարեհամբույր բուժաշխատող: Կանանց մեկ երրորդից ավելին նշել են, որ դեղորայքի անհասանելիությունն է իրենց համար մեծ խնդիր հանդիսանում /35 տոկոս/:

Անձնական խնդիրները նույնպես կարող են խանգարել կանանց ստանալ բժշկական օգնություն: Տասից չորս կնոջ համար խնդիր է հանդիսանում բուժօժանատություն միայնակ չգնալու ցանկությունը, մինչդեռ 24 տոկոսի մտահոգությունն է, որ այնտեղ չի լինի կին բուժաշխատող և 19 տոկոսն ասել են, որ նրանց համար խոչընդոտ է բուժում ստանալու նպատակով թույլտվության ստացումը:

Կանանց մասնաբաժինը, ում համար նշված պատճառներից առնվազն մեկը մեծ խնդիր է հանդիսանում՝ բարձր է ըստ բոլոր հիմնական բնութագրիչների: Հատկանշական են ցուցանիշի մարզային տատանումները, նվազագույնը 77 տոկոս՝ Լոռիում և առավելագույնը 100 տոկոս՝ Սյունիքում:

Պարզելու համար, թե որքանով են հասանելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որոշ տեսակները, զեկույցի շրջանակներում անցկացված հարցումները ցույց տվեցին (աղյուսակ 8), որ Երիտասարդության ընդամենը 38,8 տոկոսին է լիովին հասանելի շտապ օգնությունը: Նրանց մոտավորապես մեկ երրորդին լիովին հասանելի են պոլիկլինիկական առաջնային բուժօգնությունը և դեղամիջոցների ձեռքբերումը /համապատասխանաբար՝ 31,2 և 29,5 տոկոս/, իսկ մեկ հինգերորդին՝ ստացիոնար բուժօգնությունը և ավտոորոշումը /համապատասխանաբար՝ 18,6 և 19,1 տոկոս/:

Աղյուսակ 8. Որքանով երիտասարդներին հասանելի հետևյալ ծառայությունները.

| | Լիովին | Որոշ չափով է հասանելի | Այնքան էլ հասանելի չէ | Բոլորովին էլ հասանելի չէ | Դժվարացել է պատասխանել |
|--|--------|-----------------------|-----------------------|--------------------------|------------------------|
| Շտապ բուժօգնությունը | 38.8 | 37.0 | 12.6 | 8.9 | 2.7 |
| Առաջնային բուժօգնությունը/ պոլիկլինիկականը | 31.2 | 41.5 | 14.3 | 8.3 | 4.7 |
| Ստացիոնար բուժօգնությունը | 18.6 | 32.9 | 25.9 | 11.7 | 10.9 |
| Ախտորոշումը | 19.1 | 31.6 | 26.9 | 13.1 | 9.3 |
| Դեղամիջոցների ձեռքբերումը | 29.5 | 37.8 | 19.3 | 11 | 2.4 |

Աղյուսակ 9. Որքանով են պետպատվերով բուժումը համարում արդյունավետ

| | | |
|----|--------------------------|------|
| 1. | Շատ արդյունավետ | 7.0 |
| 2. | Արդյունավետ | 18.1 |
| 3. | Ոչ այնքան արդյունավետ | 38.3 |
| 4. | Անարդյունավետ | 16.2 |
| 5. | Դժվարանում եմ պատասխանել | 20.4 |

Երիտասարդների 38,3 տոկոսի համար պետպատվերով բուժումը այնքան էլ արդյունավետ չէ: Նրանց մոտավորապես մեկ վեցերորդը /16,2 տոկոս/ կարծում է, որ այն ընդհանրապես անարդյունավետ չէ: 18,1տոկոսի կարծիքով, որը փոքր-ինչ գերակշռում է նախկին խմբին, պետպատվերով բուժումն արդյունավետ է, և ընդամենը փոքրամասնության կարծիքով` /7 տոկոս/ շատ արդյունավետ: Պարզվում է , որ արդյունավետության նկատմամբ առկա կարծիքը պայմանավորված է իրագրվածության ցածր մակարդակով (աղյուսակ 10): Երիտասարդների 42,3 տոկոսը տեղյակ չէ պետպատվերով անվճար բուժօգնության մասին, նրանց մոտավորապես մեկ երրորդն է /31,7 տոկոս/, որ այդ մասին տեղեկություն ունի, իսկ մեկ քառորդն ընդհանրապես անտեղյակ է /26 տոկոս/:

Աղյուսակ 10. Երիտասարդների մոտ պետպատվերով /անվճար/ բուժօգնության/սպասարկման/ մասին տեղեկացվածությունը

| | | |
|----|--------|------|
| 1. | Այո | 31.7 |
| 2. | Մասամբ | 42.3 |
| 3. | Ոչ | 26.0 |

Վերլուծելով հետազոտությունների արդյունքները կարելի է նշել, որ Երիտասարդների շրջանում հիվանդությունների տարածվածությունը հիմնականում պայմանավորված է լիարժեք տեղեկացվածության և բժշկական սպասարկման մատչելիության հետ կապված խնդիրների առկայությամբ:

5.4 Սեռական և վերարտադրողական առողջություն (Անցանկալի վաղաժամ հղիություն)

Ներածություն

Յուրաքանչյուր երեխա պետք է ցանկալի լինի` լույս աշխարհ գալով ուրախություն և երջանկություն պարզևի ծնողներին: Սակայն ոչ միշտ է հղիությունը ցանկալի:

Անցանկալի հղիության կանխման բազմաթիվ մեթոդներ կան, մինչդեռ դրանք ոչ բոլորին են հասանելի: Հաճախ անցանկալի հղիությունը բեղմնականխման մեթոդներին չդիմելու, կամ էլ դրանց վերաբերյալ գիտելիքների և կիրառման

հմտությունների պակասի արդյունք է, երբեմն էլ՝ բռնության հետևանք:

Առավել հաճախ հանդիպող կանխորոշող գործոններից են անձնական, ընտանեկան կամ սոցիալական դրդապատճառները: Երբեմն հղիության արհեստական ընդհատումը կատարվում է բժշկական ցուցումներով, երբ հղիությունը սպառնում է կնոջ առողջությանն ու կյանքին: Ցավոք, հաճախ հղիության ընդհատումը սովորույթ է դառնում, ինչը կյանքից զրկում է բազմաթիվ չծնված մանուկների, որոնք գոյության իրավունք ունեն և վտանգի է ենթարկում հենց իրենց՝ կանաց, առավել հաճախ երիտասարդ կանանց առողջությունն ու կյանքը:

Անցանկալի վաղաժամ հղիությունը ՀՀ-ում

Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային տարեկան վիճակագրական տեղեկագրի՝ ՀՀ-ում գրանցված հղիության արհեստական ընդհատումների թիվը 2000 թվականի համեմատ նվազել է 1,1 անգամ (10,6 հազար 2004թ., 11,8 հազար 2000թ.)³⁶:

100 000 բնակչության թվով կատարված հղիության արհեստական ընդհատումների թիվն ըստ տարիների.

| Տարիներ | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. |
|---------------|--------|--------|--------|--------|--------|
| Գրանցված թիվը | 11,8 | 10,4 | 9,8 | 10,7 | 10,6 |

Հղիության արհեստական ընդհատումներ են կատարվում նաև առողջապահական համակարգից դուրս, որոնց հիմնական պատճառներն են.

- ա) կանայք արտասանուսնական կապերի արդյունքում ձեռք են բերում անցանկալի հղիություն, ինչը թաքցնելու նպատակով խուսափում են հղիության արհեստական ընդհատումներ կատարել բուժհաստատություններում,
- բ) հաճախ կանայք ի վիճակի չեն վճարել բուժհաստատություններում կատարվող հղիության ընդհատումների համար:

Հղիության արհեստական ընդհատումների թիվն ըստ տարիների (տարեկան).

| | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. |
|--|--------|--------|--------|--------|--------|
| Գրանցված դեպքերի թիվը 15-19 տարեկան տարիքային խմբում | 0,7 | 1,0 | 0,5 | 0,7 | 0,6 |
| Գրանցված դեպքերի թիվը 20-34 տարեկան տարիքային խմբում | 7,9 | 6,8 | 6,6 | 7,3 | 7,5 |

Ամփոփում

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով յուրաքանչյուր տարի աշխարհում կատարվում է 25 միլիոն հղիության արհեստական ընդհատում, այն երկրներում, որտեղ այն թույլատրված է և շուրջ 70 000 կանայք մահանում են հղիության արհեստական ընդհատումների հետ կապված բարդություններից: Հղիության արհեստական ընդհատումների բարդացումները կարող են պատճառ դառնալ այնպիսի հեռավոր հետևանքների, ինչպիսիք են կանանց սեռական օրգանների խրոնիկական բորբոքային հիվանդություններն են, հաջորդող

³⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005թ.: <http://www.armstat.am/StatData/2005/8%20Health.pdf>

հղիությունների չհասունացումը, հոգեսեռական խանգարումները և այլն:

5.5 ՄԻԱՎ/ՁԻԱՅ և սեռավարակներ

Ներածություն

Երիտասարդությունը՝ արագ զարգացման շրջան է, երբ երիտասարդները ձեռք են բերում նոր ընդունակություններ և բախվում են նոր խնդիրների: Դա հնարավորությունների ժամանակահատված է, սակայն նաև խոցելիության ժամանակաշրջան՝ վտանգավոր վարքագծի դրսևորման համար, որոնք կարող են իրենց հետևանքներն ունենալ ամբողջ կյանքի ընթացքում՝ հատկապես առողջության վրա:

Վտանգավոր վարքագիծը կարող է խաթարել առողջությունը և դեռահասների աճը: Օրինակ՝ չպաշտպանված սեռական հարաբերությունները կարող են հանգեցնել չնախատեսված հղիությունների կամ սեռավարակների, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի:

Յուրաքանչյուր երկրում երիտասարդներն ասում են, որ իրենք ունեն այնպիսի միջավայրի կարիք, որը նվազեցնում է վտանգավոր վարքագիծը և նպաստում է նրանց զարգացմանը:

Երիտասարդներին պետք է ուշադրություն դարձնել, քանի որ.

1. Նրանք հանդիսանում են աշխարհագրական ուժ
2. Երիտասարդները կազմում են երկրագնդի բնակչության 1/5 մասը
3. Նրանք հանդիսանում են տնտեսական ուժ
4. Նրանք իրենց նշանակալի ներդրումն ունեն իրենց ընտանիքներում վարձատրվող և չվարձատրվող աշխատանքի միջոցով
5. Այդ տարիքը՝ ձևավորման շրջան է, երբ բացառիկ հնարավորություն կա երիտասարդների մոտ ձևավորել առողջ վարքագիծ և սոցիալական վերաբերմունք:

Կարևոր չէ երիտասարդներին միայն տեղեկատվություն և ծառայություններ տրամադրելը: Գոյություն ունի կապ հասարակական մթնոլորտի և առողջական հետևանքների միջև: Մթնոլորտի պաշտպանիչ գործոններն ուղղում են հավասարակշռությունը դեպի դեռահասների առողջության գերակայումը:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Այսօր ՁԻԱՅ-ը լուրջ սպառնալիք է աշխարհի ողջ բնակչության համար, սպառնալիք՝ նրա համընդհանուր սոցիալական, տնտեսական և քաղաքական բարեկեցության ու միլիոնավոր մարդկանց առողջության համար: Սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային խորը փոփոխություններ ապրող մեր երկրում ՁԻԱՅ-ի տարածումը խթանող գործոններից են հիվանդության նկատմամբ յուրահատուկ բացասական և վախի վրա հիմնված վերաբերմունքը, ՄԻԱՎ վարակակիրների նկատմամբ խտրական կեցվածքը, հիվանդության մասին հասարակության տեղեկացվածության ցածր մակարդակը, նաև

սոցիալական հիմնախնդիրների առկայությունը:

Հայաստանի Հանրապետությունում մարդու ինունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: 1988թ. մինչև 2006թ. փետրվարի 28-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 390 դեպք, որից 370-ը՝ ՀՀ քաղաքացիների շրջանում:

2005թ. ընթացքում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 78 նոր դեպք, որից 75-ը ՀՀ քաղաքացիների շրջանում: 2006թ. ընթացքում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 8 նոր դեպք, որից 7-ը՝ ՀՀ քաղաքացիների շրջանում: ՄԻԱՎ վարակով հիվանդների ընդհանուր կազմում գերակշռում են տղամարդիկ՝ 289 մարդ (78,1%), կանանց մոտ արձանագրվել է վարակի 81 դեպք (21,9%): ՄԻԱՎ վարակի 6 դեպք (1,6%) է արձանագրվել երեխաների մոտ: ՄԻԱՎ-ով վարակվածների զգալի մեծամասնությունը (76,5%) 20-39 տարիքային խմբում է, իսկ 40%-ը՝ 16-30 տարիքային խմբում³⁷:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (54,7%) և հետերոսեքսուալ ճանապարհը (37,6%): Սրանցից բացի, Հայաստանում արձանագրվել են մորից երեխային, արյան և հոմոսեքսուալ ճանապարհներով ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումն ըստ փոխանցման ուղիների.

| | |
|--|-------|
| Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով | 54,7% |
| Հետերոսեքսուալ փոխանցման ուղի | 37,6% |
| Մորից երեխային | 1,3% |
| Արյան միջոցով | 0,5% |
| Հոմոսեքսուալ փոխանցման ուղի | 1,3% |
| Անհայտ | 4,6% |

5.5.2 ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ը երիտասարդների շրջանում

ՄԻԱՎ վարակով հիվանդներից 116-ի մոտ (կին՝ 20, երեխա՝ 4) ախտորոշվել է ՉԻԱՀ (32-ը՝ 16-30 տարիքային խմբում), ըստ որում, 41-ը՝ 2005թ. ընթացքում, 11-ը՝ 2006թ. ընթացքում: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով հիվանդների մահվան 81 դեպք, որից 19-ը՝ 16-30 տարիքային խմբում: Մահացածների թվում կան 13 կին և 2 երեխա³⁷:

16-30 տարեկան երիտասարդների խմբում ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումն ըստ փոխանցման ուղիների⁶.

| | |
|--|-------|
| Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով | 49,3% |
| Հետերոսեքսուալ փոխանցման ուղի | 46,0% |
| Արյան միջոցով | 0,7% |
| Հոմոսեքսուալ փոխանցման ուղի | 2,0% |
| Անհայտ | 2,0% |

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է մայրաքաղաք Երևանում՝ 182 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 50,1%-ը: ՄԻԱՎ վարակի

³⁷ ՀՀ ԱՆ ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալներ, 28 փետրվարի 2006թ

գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի և Լոռու մարզերն են՝ 8,3%:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հաշվարկային տվյալներով հանրապետությունում կա 2800-3000 ՄԻԱՎ-ով ապրող մարդ³⁷:

2002 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 316 որոշմամբ հաստատել ՄԻԱՎ/ՁԻԱՅ կանխարգելման ազգային ծրագիրը: Ծրագրի հիմնական խնդիրներից մեկը դեռահասների և երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և սեռավարակների կանխարգելում է:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ոլորտի խնդիրները հայտարարել է գերակայող և իրականացվող ծրագրերի ու միջոցառումների ցանկում առաջնությունը տվել է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի տարածման դեմ իրականացվող միջոցառումներին:

2005թ. երիտասարդների շրջանում անցկացվել է վարքագծային հետազոտություն, որի շրջանակներում հարցման է ենթարկվել 500 երիտասարդ, որոնց միջին տարիքը կազմել է 18,3³⁸:

Աղյուսակ 1

| Հարցման ենթարկված երիտասարդների բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի, ընտանեկան դրության, կրթության և բնակավայրի | | |
|---|--------------|-------|
| Բնութագրիչներ | Բացարձակ թիվ | % |
| Սեռը | | |
| արական | 195 | 39,4% |
| իգական | 300 | 60,6% |
| Ընտանեկան դրություն | | |
| չամուսնացած | 409 | 90,5% |
| ամուսնացած | 31 | 6,8% |
| քաղաքացիական ամուսնություն | 12 | 2,7% |
| Կրթություն | | |
| թերի միջնակարգ | 5 | 1,0% |
| միջնակարգ | 184 | 37,2% |
| միջին մասնագիտական | 25 | 5,1% |
| թերի բարձրագույն | 199 | 40,3% |
| բարձրագույն | 77 | 15,6% |
| այլ | 4 | 0,8% |
| Բնակավայր | | |
| քաղաք | 396 | 79,7% |
| գյուղական վայրեր | 101 | 20,3% |

Հարցման ենթարկվածների 15,6%-ն ունի բարձրագույն կրթություն, 40,3%-ը՝ թերի բարձրագույն, իսկ 37,2%-ը՝ միջնակարգ կրթություն:

Կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ հարցվածների 97,8%-ը լսել է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին, ընդ որում՝ մեծ մասը լսել է ՁԼՍ-ներից՝ 56,4%-ը և ընկերներից ու հասակակիցներից՝ 39,8%-ը:

³⁸ Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները (հոկտեմբեր-նոյեմբեր 2005թ.):

Հարցման ենթարկված երիտասարդների ՄԻԱՎ/ՉԻԱԳ-ի, սեռավարակների վերաբերյալ ստացած տեղեկատվության աղբյուրները. (%-ով)

| | |
|--|-------|
| ընտանիք | 14,2% |
| ընկերներ/հասակակիցներ | 39,8% |
| ՁԼՄ-ներ | 52,6% |
| դպրոց | 35,6% |
| սոցիալական/բուժաշխատողներ | 13,0% |
| խորհրդատվական ծառայություններ | 7,2% |
| այլ | 7,4% |
| *ընտրվել են մեկից ավելի պատասխաններ | |


Հարցվածների 82%-ը համարում է, որ հնարավոր է վարակված լինել ՄԻԱՎ-ով, բայց ունենալ առողջ արտաքին: 20,6%-ը թյուրիմացաբար կարծում է, որ հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակվել ՄԻԱՎ վարակակրի հյուրասիրած սնունդն ուտելու դեպքում, իսկ 39,1%-ը՝ մոծակի խայթոցի միջոցով: 19,9%-ի կարծիքով՝ պահպանակի օգտագործումը չի նվազեցնում ՄԻԱՎ-ով վարակման վտանգը, իսկ 24,4%-ը համարում է, որ հնարավոր չէ նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը միայն մեկ, հավատարիմ, ոչ ՄԻԱՎ վարակակիր զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով:

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունի հարցվածների 28,2%-ը: Գիտելիք ունեցող երիտասարդների 18,6%-ն ունենում է սեռական հարաբերություններ, ընդ որում՝ 27%-ը պահպանակ չի օգտագործել վերջին սեռական հարաբերության ժամանակ: Գիտելիք ունեցողների 64%-ը պատահական զուգընկերներ է ունենում. նրանց 81,3%-ը պահպանակ էր օգտագործել վերջին սեռական հարաբերության ժամանակ (տղաներ՝ 84,6%, աղջիկներ՝ 15,4%):

Հարցման ենթարկվածների մոտ 25,5%-ը նշել է, որ երբևէ ունեցել է սեռական հարաբերություն (տղաներ՝ 84,7%, աղջիկներ՝ 15,3%). նրանցից առաջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել 66,4%-ը (տղաներ՝ 25,7%, աղջիկներ՝ 78,9%), իսկ վերջին սեռական հարաբերության ժամանակ՝ 73,2%-ը (տղաներ՝ 91%, աղջիկներ՝ 9%): 44,1%-ը նշել է, որ վերջին 30 օրվա ընթացքում ունեցել է սեռական հարաբերություն: Հարցվածների միջին տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ եղել է 15,7 (տղաներ՝ 15,5, աղջիկներ՝ 16,9):

Սեռական կյանքով ապրողների 60,2%-ը նշել է, որ վերջին տարվա ընթացքում ունեցել է պատահական զուգընկեր (տղաներ՝ 63,3%, աղջիկներ՝ 42,1%):

Երիտասարդների պատահական զուգընկերների թիվը վերջին տարվա ընթացքում³⁸



Պատահական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել է 89,1%-ը: Վերջին մեկ տարվա ընթացքում մշտապես պահպանակ է օգտագործել սեռական կյանքով ապրողների 64%-ը: Իսկ ոչ միշտ կամ ընդհանրապես պահպանակ չօգտագործողները կազմում են 36%: Որպես պահպանակ չօգտագործելու հիմնական պատճառ նշվել է հաճույքի նվազեցումը՝ 60%:

Մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառները. (%-ով)

| | | |
|--|---|------|
| 1. | Ամաչում է գնել | 15,0 |
| 2. | Դժվար է օգտագործելը | 4,0 |
| 3. | Նվազեցնում է հաճույքը | 60,0 |
| 4. | Ամաչում է խնդրել զուգընկերոջն օգտագործել | 6,7 |
| 5. | Վստահում է զուգընկերներին | 15,0 |
| 6. | Զգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին | 4,0 |
| * հարցվածներին հնարավորություն է տրվել ընտրել մեկից ավելի պատասխան | | |

Հարցման ենթարկվածների 58%-ը համարում է, որ անձամբ իրեն ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգ չի սպառնում: Հարցվածների 4,8%-ը նշել է, որ երբեմն կամ մշտապես ունենում է հոմոսեքսուալ հարաբերություններ, ըստ որում՝ նրանց կեսն իգական սեռի է: Երբևէ թմրամիջոցներ է օգտագործել հարցվածների 7,9%-ը, որոնցից 2,7%-ը՝ ներարկային ճանապարհով: Առավել հաճախ օգտագործվող թմրամիջոցն է կանեֆիլ/մարիխուանան՝ 87,2%: Հարցվածների միջին տարիքն առաջին անգամ թմրամիջոց օգտագործելիս եղել է 16,4: Որպես թմրամիջոցների օգտագործումն սկսելու հիմնական պատճառներ նշվել են՝ հետաքրքրությունից ելնելով՝ 53,8% և հաճույքի համար՝ 66,7%:

Թմրամիջոցների օգտագործումն սկսելու պատճառները. (%-ով)

| | | |
|--|---|------|
| 1. | Հետաքրքրությունից ելնելով | 53,8 |
| 2. | Ընկերների դրամամբ | 17,9 |
| 3. | Հոգեբանական պատճառներից ելնելով (սթրես, դեպրեսիա) | 5,1 |
| 4. | Ցավի հարթահարում | 5,1 |
| 5. | Ֆիզիկական զգացողության բարելավում | 7,7 |
| 6. | Հաճույքի համար | 66,7 |
| 7. | Այլ | 2,5 |
| * հարցվածներին հնարավորություն է տրվել ընտրել մեկից ավելի պատասխան | | |

Հարցված երիտասարդների 1,8%-ը հետազոտվել է ՄԻԱՎ-ի, իսկ 2,6%-ը սեռավարակների վերաբերյալ: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված երիտասարդների 66,7%-ն իմացել է արդյունքների մասին:

Օգնության կարիք ունենալու դեպքում հարցվածների 50,2%-ը պատրաստ է դիմել ծնողներին կամ բարեկամներին, 42,8%-ն՝ առողջապահական հիմնարկներ, 17,2%-ն՝ ընկերներին, 7,2%-ը՝ դեռահասների բարյացակամ կենտրոններ և ՀԿ-ներ, 0,4%-ը՝ սոցիալական հիմնարկներ, իսկ 8,6%-ը չգիտի ունի դիմել (հարցվածներին հնարավորություն է տրվել ընտրել մեկից ավելի պատասխան):

Իրենց կյանքը բարելավելու համար հարցված երիտասարդները հիմնականում ցանկացել են ստանալ ֆինանսական աջակցություն:

Կյանքը բարելավելու համար ցանկալի աջակցության տեսակները. (%-ով)

| | | |
|--|---------------------------|------|
| 1. | Ֆինանսական աջակցություն | 20,2 |
| 2. | Աշխատանք | 6,0 |
| 3. | Հոգեբանական աջակցություն | 7,8 |
| 4. | Տեղեկատվական աջակցություն | 3,6 |
| 5. | Աջակցության կարիք չունեն | 10,2 |
| 6. | Զգիտեն | 4,0 |
| * հարցվածներին հնարավորություն է տրվել ընտրել մեկից ավելի պատասխան | | |

ՄԻԱՎ-ով չվարակվելու համար հարցվածների 27,8%-ն անհրաժեշտ է համարում պահպանակի օգտագործումը, 27,8%-ը՝ պատահական սեռական հարաբերություններից խուսափելը, 14,6%-ը՝ հավատարիմ զուգընկեր ունենալը: Տեղեկացված լինելու անհրաժեշտություն է նշել հարցվածների 10,6%-ը, 2,4%-ն անհրաժեշտ է համարում միանվագ ներարկիչների օգտագործումը, ևս 2,4%-ը՝ թմրամիջոցներ չօգտագործելը, 1,2%-ը՝ ժուժկալությունը: Հարցվածների 1,8%-ը համարում է, որ ՄԻԱՎ-ով չվարակվելու համար հարկավոր է խուսափել ՄԻԱՎ վարակակիրների հետ շփվելուց, 3,8%-ի կարծիքով՝ անհրաժեշտ է պահպանել հիգիենայի կանոնները, իսկ ըստ 1,6%-ի՝ պայքարել մարմնավաճառության դեմ: Հարցվածների ընդամենը 5%-ն ընդհանրապես չգիտի, թե ինչպես խուսափել ՄԻԱՎ-ով վարակումից³⁸:

Անփոփում

500 երիտասարդների շրջանում իրականացված վարքագծային հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ հարցման ենթարկված երիտասարդների 28,2%-ն ունի ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ³⁸:

Երիտասարդների շրջանում իրականացված վարքագծային հետազոտությունները բացահայտել են ռիսկային վարքագծի հետևյալ դրսևորումները.

1. թմրամիջոցներ է օգտագործում 7,9%-ը
2. վերջին մեկ տարվա ընթացքում մեկից ավելի պատահական զուգընկեր ունեցել 60,2%-ը
3. մշտապես պահպանակ օգտագործում է միայն 64%-ը³⁸:

Սեռավարակների տարածվածությունը ՀՀ երիտասարդության շրջանում

Զնայած նրան, որ մասնագետների կարծիքով Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների շրջանում աճում է սեռավարակների թիվը, սակայն պաշտոնական տվյալները չեն արտացոլում իրական վիճակը (գրացվում են սեռավարակների ոչ բոլոր դեպքերը): Գրանցման ընթացքում չի կատարվում դեպքերի սեռատարիքային բաշխում, ինչը բարդեցնում է իրավիճակի ճիշտ գնահատումը և հետևաբար անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների նպատակային իրականացումը:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, 2004թ. սիֆիլիսի գրանցված նոր դեպքերը տղամարդկանց շրջանում կազմում էր 4,3՝ 100,000 տղամարդկանց հաշվով (6,7՝ 2000թ.) և կանանց շրջանում՝ 4,3՝ 100,000 կանանց հաշվով (7,1՝ 2000թ.): Զնայած

այն փաստին, որ առաջին անգամ գրանցվել է գոնոռեայով ախտորոշված կանանց շրջանում գրանցված դեպքերի նվազում (25,9-ից 2000թ. մինչև 7,7՝ 2004թ.), առկա է տղամարդկանց շրջանում թվի աճ (21,8-ից 2000թ. մինչև 24,3՝ 2004թ. 100,000-ի հաշվով): Սիֆիլիսի և գոնոռեայի ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 18-39 տարիքային խմբում³⁹:

Տղամարդկանց շրջանում առաջին անգամ բացահայտված սիֆիլիսի ախտորոշումով գրանցված հիվանդների թվաքանակն ըստ տարիների.

| | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. |
|--|--------|--------|--------|--------|--------|
| Գրանցված դեպքերի թիվը 15-17 տարեկան տարիքային խմբում | 4 | 1 | - | - | - |
| Գրանցված դեպքերի թիվը 18-39 տարեկան տարիքային խմբում | 86 | 75 | 38 | 34 | 39 |

Կանանց շրջանում առաջին անգամ բացահայտված սիֆիլիսի ախտորոշումով գրանցված հիվանդների թվաքանակն ըստ տարիների.

| | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. |
|--|--------|--------|--------|--------|--------|
| Գրանցված դեպքերի թիվը 15-17 տարեկան տարիքային խմբում | - | 3 | 2 | - | - |
| Գրանցված դեպքերի թիվը 18-39 տարեկան տարիքային խմբում | 108 | 76 | 52 | 43 | 55 |

Փաստորեն, ՀՀ առողջապահության նախարարության տարեկան հաշվետվությունները վկայում են, որ 2000թ. գրանցվել է վերարտադրողական տարիքում կանանց շրջանում սիֆիլիսի նոր դեպքերի թվի նվազում (4,3՝ 100,000 վերարտադրողական տարիքի կանանց հաշվով 2003թ., համեմատած 7,1-ի հետ 2000թ.): Վերարտադրողական տարիքի կանանց շրջանում գոնոռեայի գրանցված նոր դեպքերի թիվը նույնպես նվազել է մինչև 22,1-ի՝ 100,000 վերարտադրողական տարիքի կանանց հաշվով 2004թ., համեմատած 63,3-ի հետ՝ 2000թ.³⁹:

Ամփոփում

Սեռական հարաբերությունն ունեցող երիտասարդների 4%-ը վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել է սեռավարակներ: Սեռավարակներով հիվանդացածների մեծամասնությունը բուժհաստատություններ է դիմել բուժման նպատակով:

2000 թվականին անցկացված հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում և կանանց, և տղամարդկանց 1%-ից պակասն է գրանցել սեռավարակներ, որը խոսում է այն մասին, որ առկա է թերգրանցում ամոթի կամ ենթադրվող դատապարտման պատճառով՝ կապված սեռավարակների հետ: Գլխավոր պատճառներից են նաև բուժօգնության դժվարանատելիությունը, ինքնաբուժման միտումները, ազգաբնակչության ցածր տեղեկացվածությունը: Նույնն է ցույց տալիս կատարված վերարտադրողական առողջության ուսումնասիրությունը: Այս դիտարկումները խոսում են այն մասին, որ

³⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005թ.: <http://www.armstat.am/StatData/2005/8%20Health.pdf>

սեռավարակների գնահատականների մասին առկա պաշտոնական տվյալները վստահելի չեն, քանի որ շատ դեպքեր մնում են չախտորոշված կամ չեն գրանցվում:

5.6 Ոգելից խմիչքի և ծխախոտի օգտագործում, թմրամոլություն

Դեռահասությունը կյանքի այն շրջանն է, երբ վարքագծային շեղումները, մասնավորապես, ալկոհոլի, ծխախոտի և թմրանյութերի օգտագործումը հաճախ են հանդիպում: Եթե այս շեղումները չեն հայտնաբերվում և ախտորոշվում ժամանակին, չեն ստանում բուժում, դրանք հաճախ բերում են բռնությունների, հանցագործությունների, հոգեկան խանգարումների և հոգեկան հետաճի և այլ բացասական սոցիալական դրսևորումների:

Հայաստանում առողջությանը սպառնացող ամենալուրջ վտանգներից մեկը ծխելն է, քանի որ դա չափազանց տարածված և արմատավորված է: Ներկայումս ՀՀ-ում հիմնական ծխողների թիվը կազմում է մեծահասակ բնակչության մոտավորապես 30%-ը, ընդ որում առավել շատ է հիմնական ծխող տղամարդկանց թիվը՝ մոտ 60%: Կանանց և դեռահասների շրջանում ծխելու տարածվածության մասին իրատեսական տվյալների ստացումը բավականին դժվար է, քանի որ նրանց մեծամասնությունը տարբեր հոգեբանական պատճառներով թաքցնում է այդ սովորության առկայությունը: Ձեկույցի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում պարզվել է հետևյալը.

Որքանով են երիտասարդները տեղեկացված ծխախոտի, ալկոհոլի և թմրամիջոցների վնասակար ներգործությունների մասին.

Ծխախոտ

| տեղեկացված չեն | | | | տեղեկացված են | |
|----------------|-----|------|------|---------------|-------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | Դժ. են պատ. |
| 0.2 | 1.0 | 17.8 | 18.3 | 62.7 | 0.0 |

ալկոհոլ

| տեղեկացված չեն | | | | տեղեկացված են | |
|----------------|-----|------|------|---------------|-------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | Դժ. են պատ. |
| 1.2 | 2.4 | 18.3 | 16.0 | 62.1 | 0 |

թմրամիջոցներ

| տեղեկացված չեն | | | | տեղեկացված են | |
|----------------|-----|------|------|---------------|-------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | Դժ. են պատ. |
| 3.2 | 1.8 | 19.3 | 14.0 | 61.1 | 0.6 |

Երիտասարդների գերակշռող մեծամասնությունը լիովին տեղեկացված է ծխախոտի, ալկոհոլի, թմրամիջոցների վնասակար ներգործությունների մասին /համապատասխանաբար՝ 62,7, 62,1 և 61,1 տոկոս/: Նրանց փոքրամասնությունն ընդհանրապես տեղեկություն չունի այդ մասին /0,2, 1,2 և 3,2 տոկոս/:

Արդյո՞ք երբևէ օգտվել են ստորև նշված նյութերից.

| | Կանոնավոր | Դեպից դեպք | Փորձել են | Երբեք | Դժ. պատասխանել |
|-----------|-----------|------------|-----------|-------|----------------|
| ծխախոտ | 28.0 | 7.2 | 13.8 | 50.9 | 0.1 |
| ալկոհոլ | 1.5 | 44.3 | 8.2 | 45.9 | 0.1 |
| թմրանյութ | 0.1 | 1.1 | 4.5 | 93.4 | 0.9 |

Երիտասարդների ճնշող մեծամասնությունն ընդհանրապես երբևէ չի օգտագործել թմրանյութ /93,4 տոկոս/: Նրանց կեսից մի փոքր ավելին /50,9 տոկոս/ երբեք չեն օգտագործել ծխախոտ, իսկ 45,9 տոկոսը՝ ալկոհոլ: Նրանց փոքրամասնությունը փորձել է ալկոհոլ /8,2 տոկոս/, փորձել, կամ երբևէ հազվադեպ օգտագործել է ծխախոտ /համապատասխանաբար՝ /13,8 և 7,2 տոկոս/, և թմրանյութ /համապատասխանաբար՝ 4,5 և 1,1տոկոս/: Երիտասարդների մի ոչ փոքր խումբ նշել է, որ երբևէ դեպքից դեպք օգտագործել է ալկոհոլ /44,3 տոկոս/: Նրանց մեկ երրորդից ոչ ավելին երբևէ կանոնավոր օգտագործել է ծխախոտ /28 տոկոս/, իսկ խիստ փոքրամասնություն են կազմում երբևէ կանոնավոր ալկոհոլ կամ թմրանյութ օգտագործածները /համապատասխանաբար՝ 1,5 և 0,1 տոկոս/:

Արդյո՞ք այժմ օգտվում են ստորև նշված նյութերից.

| | Կանոնավոր | Հաճախակի | Ղեպքից-դեպք | Երբեք | Ղժ. պատասխանել |
|-----------|-----------|----------|-------------|-------|----------------|
| ծխախոտ | 25.9 | 4.2 | 9.2 | 60.6 | 0.1 |
| ալկոհոլ | 0 | 8.1 | 44.8 | 47.0 | 0.1 |
| թմրանյութ | 0.1 | 0.0 | 0.0 | 98.5 | 1.4 |

Երիտասարդների ճնշող մեծամասնությունը նշել է, որ այժմ երբեք չի օգտվում թմրանյութից /98,5 տոկոս/, իսկ խիստ փոքրամասնությունն էլ նշել /0,1 տոկոս/, որ կանոնավոր օգտագործում է այն: Նրանց մեծ մասը /60,6 տոկոս/ այժմ ընդհանրապես չի օգտագործում ծխախոտ, իսկ կեսից մի քիչ պակասը՝ /47 տոկոս/ ալկոհոլ: Ալկոհոլ դեպքից-դեպք օգտագործում է երիտասարդների 44,8 տոկոսը: Երիտասարդների փոքրամասնությունը օգտագործում է ծխախոտ /4,2 տոկոս/ և ալկոհոլ /8,1 տոկոս/ հաճախակի: Նրանց 9,2 տոկոսը ծխախոտ օգտագործում է դեպքից-դեպք: Նրանց մեկ քառորդը /25,9 տոկոս/ կանոնավոր օգտագործում է ծխախոտ:

Այս սովորույթներից հրաժարվելու ձերբազատվելու փորձ արե՞լ են. թե՞ ոչ.

| | |
|-----|------|
| Այո | 55.4 |
| Ոչ | 45.6 |

Վերոհիշյալ վնասակար սովորույթներից ձերբազատվելու փորձ կատարվել է երիտասարդության մեծամասնության /55,4 տոկոս/ կողմից:

Ծխելու տարածվածությունը նվազեցնելու ուղղությամբ իրականացվում է հետևողական պայքար: Այսպես, մշակվել և ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնցով զգալիորեն սահմանափակվել է ծխախոտի գովազդը՝ ընդհուպ մինչև հեռուստատեսությամբ և ռադիոյով դրա արգելքը, ծխախոտի նկատմամբ հսկողության մասին օրենքի նախագծի մշակումը, զանգվածային լրատվության միջոցների հետ համատեղ միջոցառումներ և այլն: Հայաստանը ակտիվորեն մասնակցում է ծխախոտի դեմ պայքարի բնագավառում միջազգային գործընթացներին, մասնավորապես, ծխախոտի դեմ պայքարի միջազգային շրջանակային կոնվենցիայի բանակցային գործընթացին, ստորագրվել է “Եվրոպան առանց ծխախոտի” Վարչապյան դեկլարացիան:

Փորձագիտական գնահատումը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում Հայաստանում դիտվում է ալկոհոլի, թմրանյութերի և հոգեմետ նյութերի օգտագործման աճի միտում, հատկապես երիտասարդության շրջանում: 2003թ. պաշտոնապես գրանցվել են ալկոհոլիզմի և ալկոհոլային պսիխոզի առաջին անգամ ախտորոշման 212 դեպք (6.6 100,000 բնակչության հաշվով) և թմրամոլության առաջին անգամ ախտորոշման 16 դեպք (0.5 100,000 բնակչության հաշվով): Այնուամենայնիվ, պաշտոնական տվյալները չեն արտացոլում թմրամոլության իրական պատկերը, որովհետև ոչպաշտոնական ցուցանիշները գերազանցում են պաշտոնական տվյալները մոտ 10 անգամ:

Ըստ իրավախախտումների պաշտոնական վիճակագրության, 2003թ. բոլոր գրանցված հանցագործությունների 45%-ը կատարվել են 30 տարեկանից ցածր երիտասարդների, հիմնականում տղամարդկանց կողմից, և կապված էին թմրանյութերի շահագործման հետ: Թմրամոլների համարյա 65%-ը օգտագործում են հաշիշ (մարիխուանա), և 35%-ը՝ օփիում:

Հանրապետության ոստիկանության բաժիններում ներկայումս հաշվառված է 3500-4000 թմրամոլ: Սակայն, ըստ ոստիկանության օպերատիվ տվյալների, հանրապետությունում կա մոտ 20 հազար թմրամոլ, որոնցից գրեթե 2000-ը թմրանյութն օգտագործում է ներերակային ճանապարհով: Թմրանյութ օգտագործողները հիմնականում 19-30 տարեկան երիտասարդներ են (56%): Առաջին անգամ թմրանյութ օգտագործողների միջին տարիքը, ըստ հարցման տվյալների, 24 է: Առողջապահության նախարարության հանրապետական նարկոլոգիական կենտրոնի տվյալներով՝ 2004թ. օգոստոսի դրությամբ հանրապետությունում գրանցված է 215 թմրամոլ, որոնցից 37-ը ներերակային թմրամոլներ են:

2002թ. անցկացված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի նկատմամբ երկրորդ սերնդի համաճարակաբանական հսկման տվյալներով՝ թմրամիջոցների ներերակային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը 15%-ի սահմաններում է:

Երիտասարդության հակումը դեպի թմրադեղերը կարևորագույն խնդիրներից է մնում: Դրա հետևանքները ակնառու են մեր առօրյա կյանքում: Փողոցային բռնությունները, հատկապես, թմրադեղերի օգտագործման արդյունքում են պատահում:

Քանի որ գոյություն ունեն մի շարք դեղահաբեր, որոնք կախվածություն առաջացնող նյութեր են պարունակում. մարդիկ, շատ ժամանակ, զբաղվելով ինքնաբուժությամբ, օրինակ, քնաբեր հաբերի օգտագործումը, կարող է կանգնեցնել բավականին լուրջ խնդիրների առաջ: Հատկապես դա լինում է այն դեպքերում, երբ դեղորայք ներմուծելիս չի ստուգվում պարունակությունը:

Միջազգային հասարակությունը մեծ ուշադրություն է դարձնում ապօրինի ներմուծվող դեղորայքի կրճատմանը և դրանց չարաշահմանը՝ դրանով փորձելով կանխել թմրամոլությունը: ՀՀ-ում նույնպես այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են, խնդրի կարգավորմանն է ուղղված 2002թ. դեկտեմբերի 26-ին ընդունված և 2003թ. փետրվարի 10-ից գործող «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, սակայն խնդիրն առավել լուրջ ուշադրության կարիք ունի: Այդ խնդրի շրջանակներում շեշտը պետք է դնել բժշկական հաստատություններում բուժման ընթացքում ճիշտ դեղորայքի օգտագործման վրա:

Առաջարկվում են հետևյալ գործողությունները, որոնք կարող են նպաստել երիտասարդների շրջանում ոգելից խմիչքի, ծխախոտի և թմրամիջոցների օգտագործման նվազեցմանը.

- Երիտասարդական կազմակերպությունների մասնակցությունը ոգելից խմիչքի , ծխախոտի և թմրամիջոցների օգտագործման կրճատման ծրագրերում:
- Կանախարգելիչ ծրագրերը, որոնք կմեկնաբանեն և ցույց կտան ոգելից խմիչքի , ծխախոտի և թմրամիջոցների սպառնալիքը, վտանգը շատ կարևոր նշանակություն ունեն: Երիտասարդության ընդգրկելը տարբեր միջոցառումների մեջ կարևոր դեր կունենա այդ պայքարում: Երիտասարդական կազմակերպությունները պետք է ունենան կայուն և գործող ծրագրեր, որոնք կաջակցեն երիտասարդությանը վարել առողջ ապրելակերպ:
- ՀՀ Կառավարությունը, համագործակցելով համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների, մասնավորապես երիտասարդական կազմակերպությունների հետ, պետք է մշակի և իրագործի ոգելից խմիչքի, ծխախոտի և թմրամիջոցների օգտագործման կրճատման ծրագրեր:
- Երիտասարդության և ուսանողների շրջանում անհրաժեշտ է իրականացնել դասընթացներ դեղորայքների օգտագործման վերաբերյալ, հատկապես այն դեղորայքների, որոնք պարունակում են նարկոտիկ կամ հոգեմետ նյութեր:
- Անհրաժեշտ է ունենալ թմրամիջոցներից կախվածություն ունեցող, ծխախոտ ու ոգելից խմիչք օգտագործող երիտասարդության բուժումը և վերագանգնումը (ռեաբիլիտացիան) ապահովող կենտրոններ:
- Անհրաժեշտ է ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացնել երիտասարդության շրջանում ոգելից խմիչքի, ծխախոտի և թմրամիջոցների օգտագործման հիմանխնդիրների առավել խորը և մասնագիտական հետազոտություններ:
- Անհրաժեշտ է պայմաններ ստեղծել քաղաքացիական հասարակության ինստիտուտների (այդ թվում քաղաքացիների) համար կանխարգելիչ ծրագրերում ընգրկվելու գործում:

-
-
- Զբաղվածության կենտրոնների ստեղծումը հնարավորություն կտա ոգելից խմիչքի, ծխախոտի և թմրամիջոցների օգտագործողներին շեղվելու այդ վտանգավոր ուղուց: Երիտասարդությունը պետք է օգնի նրանց կրկին վերադառնալ առողջ հասարակություն:

Ամփոփում

Այսպիսով կարելի է փաստել, որ նեկայուն չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում իրականացվում են որոշ ծրագրեր երիտասարդության առողջության պահպանման, նրանց շրջանում առողջ ապրելակերպի քարոզման ուղղությամբ, սակայն չկա արդյունավետ գործող միասնական պետական քաղաքականություն նշված հիմնախնդիրների համար առավել կազմակերպված և նպատակաուղղված լուծումներ ապահովելու համար:

ԳԼՈՒԽ VI

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Երիտասարդության քաղաքացիական և քաղաքական մասնակցության կոնկրետ դրսևորումները որևէ երկրում երիտասարդության տեղի և դերի գնահատման առանցքային չափորոշիչներից են: Կախված նրանից, թե երիտասարդությունը որքանով է ներգրաված տեղական և համապետական մակարդակներում որոշումների կայացման գործընթացին կամ ինչ լծակներով է ազդում քաղաքականություն մշակող և իրականացնող սուբյեկտների վրա, կարող ենք խիստ որոշակի պատկերացում ստանալ նրա քաղաքացիական և քաղաքական մասնակցության վերաբերյալ: Տվյալ հիմնախնդիրը սերտորեն առնչվում է մի կողմից կոնկրետ ինստիտուտների ու կառույցների գործունեության հետ, իսկ մյուս կողմից ձևավորված ավանդույթների և առհասարակ քաղաքացիական և քաղաքական մասնակցության ազգային առանձնահատկությունների հետ: Առաջին դեպքում պետք է նկատի ունենալ կուսակցություններին, ՅԿ-ներին, արհմիություններին, ուսանողական միություններին ու ուսանողական այլ կառույցներին, ինչ-որ իմաստով նաև ՁԼՄ-ներին, որոնք երիտասարդության քաղաքացիական և քաղաքական մասնակցությունն ապահովող հիմնական ինստիտուտներն են: Ինչ վերաբերում է ավանդույթներին ու առանձնահատկություններին, ապա այս հարթության վրա կարևորվում են երիտասարդության ընտրական գործընթացներին մասնակցությունն ու ընտրական կուլտուրան, տարաբնույթ զանգվածային ակցիաներին մասնակցությունը, տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացումը և գենդերային խնդիրների լուծման գործող ավանդույթները:

Երիտասարդության քաղաքացիական մասնակցության խնդիրը կարևոր տեղ է զբաղեցնում Կառավարության պետական երիտասարդական քաղաքականությանն շրջանակներում: Այն դրսևորվում է երիտասարդական ծրագրերի ֆինանսական աջակցությամբ (ՅԿ պետական բյուջեյում միջոցներ են նախատեսված երիտասարդական ՅԿ-ների գործունեության ֆինանսավորման համար): Կարևոր է նաև Վարչապետին առընթեր երիտասարդական խորհրդի գործունեությունը, որը թեպետ խորհրդակցական մարմին է, սակայն լուրջ դերակատարում ունի պետական երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունների սահմանման և վերահսկման համար:

Հատկանշական է, որ մեր իրականության մեջ երիտասարդության քաղաքացիական և քաղաքական մասնակցության վերաբերյալ տիրապետում են խիստ իրարամերժ ու

հակասական դիրքորոշումներ ու մոտեցումներ, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

Այսպես կոչված «օպտիմիստները» գտնում են, որ երիտասարդները ընդգրկված են հասարակական ու քաղաքական գործընթացներում և ակտիվ մասնակցություն ունեն տարաբնույթ պետական, տնտեսական, մշակութային ու սոցիալական ծրագրերին: Նրանք ներգրավված են պետական ծառայության համակարգում, քաղաքական ու հասարակական կառույցներում, որոնց միջոցով կազմակերպում են իրենց գործունեությունը և մասնակցություն ունենում որոշումների կայացման գործընթացին՝ տեղական ու համապետական մակարդակներում: «Օպտիմիստները» լիովին բավարարված են հասարակության մեջ երիտասարդության ունեցած դերով և ավելորդ են համարում այս առումով ցանկացած արմատական նախաձեռնություն: Առավելապես նման դիրքորոշում են արտահայտում հասարակության ապաքաղաքական զանգվածը և երիտասարդության այն հատվածը, որն ունի կայուն ու բարձր վարձատրվող աշխատանք: Ինչ-որ իմաստով տվյալ խմբում կարելի է տեղավորել նաև իշխանամետ կուսակցությունների երիտասարդ ներկայացուցիչներին:

Վերջին շրջանում այս խմբից տարանջատվելու որոշ միտումներ արտահայտվում են «կոնֆորմիստ» երիտասարդների շրջանում: Նրանք առհասարակ դեմ են, որ երիտասարդությունը որևէ առանձնահատուկ դեր կամ արտոնյալ կարգավիճակ ունենա հասարակության մեջ:

«Բողոքականները» համոզմունք են հայտնում, որ երիտասարդությունը հանդես չի բերում իր ներուժին համարժեք քաղաքացիական ու քաղաքական մասնակցություն: Երիտասարդությունը ազդեցիկ գործոնից վերածվել է ինչ-որ խմբակային շահեր սպասարկող գործիքի, իսկ նրանց ճնշող մեծամասնությունը չի կարևորում տարբեր ոլորտներում իր մասնակցությունը: Ըստ «բողոքականների»՝ երիտասարդները հիմնականում դուրս են մղված տարբեր մակարդակներում որոշումների ընդունման գործընթացից և չունեն բավարար լծակներ քաղաքականություն մշակող ու իրականացնող սուբյեկտների վրա ազդելու: Պետք է նկատել, որ «բողոքականների» տեսակարար կշիռը բավական մեծ է մեր հասարակության մեջ: Այս խմբի ներկայացուցիչներ կարելի է համարել մարգարենակ (գյուղաբնակ) երիտասարդներին, գործազուրկ երիտասարդներին, մասամբ նաև կուսակցական և տարբեր ՀԿ-ներում ներգրավված երիտասարդներին:

Այս դասակարգումը խիստ պայմանական է և բնավ չի հավակնում դառնալ երիտասարդության քաղաքացիական ու քաղաքական մասնակցության մակարդակների ու դրսևորման առանձնահատկություններ վերաբերյալ նոր համակարգային մոտեցում: Սակայն միաժամանակ այն հնարավորություն է տալիս

որոշակի պատկերացում կազմել երիտասարդության դերի ու նշանակության վերաբերյալ: Իսկ առավել ամբողջական պատկեր կարելի է ստանալ երիտասարդության քաղաքացիական ու քաղաքական մասնակցության հիմնախնդիրը երկու հիմնական բաղադրիչների (քաղաքացիական մասնակցություն, քաղաքական մասնակցություն) բաժանելու և առանձին-առանձին ներկայացնելու միջոցով:

6.1 Քաղաքացիական մասնակցություն (հասարակական կազմակերպություններ, արհմիություններ, ուսանողական կառույցներ և ակումբներ)

Ներածություն

Երիտասարդության քաղաքացիական մասնակցությունն ապահովում են ինչպես ֆորմալ (ՀԿ-ներ, արհմիութենական կազմակերպություններ, ուսանողական միություններ, ինչ-որ իմաստով նաև ՁԼՄ-ներ), այնպես էլ ոչ ֆորմալ կառույցները (ուսանողական ակումբներ, երիտասարդական խմբեր):

Հայաստանում այս կառույցները գտնվում են կայացվածության տարբեր մակարդակներում և որպես հետևանք դրանց դերը երիտասարդության քաղաքացիական մասնակցության ապահովման և առհասարակ քաղաքացիական հասարակության ձևավորման գործում գնահատվում է իրենց իրական դերակատարմանը համարժեք: Այս իմաստով ՀԿ-ները փոքր ինչ առավել լավ վիճակում են, քան ուսանողական միությունները, իսկ արհմիութենական կազմակերպությունները ուղղակի չեն կատարում իրենց հիմնական գործառույթները:

6.1.1 Հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ)

ՀԿ-ների դերի ու նշանակության վերաբերյալ մեր պատկերացումները առարկայական դարձան հետխորհրդային շրջանում: Իսկ մինչ այդ դրանց գործունեությունը կրում էր բուտաֆորիկ բնույթ և որպես երկրորդական օղակներ առավելապես սպասարկող գործառույթներ էին կատարում:

Հայաստանի անկախացումից հետո ՀԿ-ները քաղաքացիական հասարակության առավել դինամիկ զարգացող ինստիտուտներից են: Դրանց գործունեությունը մեր երկրում կարգավորվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2001թ.-ի դեկտեմբերի 4-ին:

ՀԿ-ները բացառիկ կարևոր դեր ունեն.

- հանրությանը իրազեկելու և այլընտրանքային տեղեկատվություն մատուցելու գործում,
- հասարակության խոցելի և կարիքավոր խմբերի շահերի պաշտպանության ոլորտում,

- մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության բնագավառում,
- կոռուպցիայի դեմ պայքարի գործում,
- մարդկանց կրթելու և ժողովրդավարական արժեքներ տարածելու գործում:

Եթե ավելացնենք նաև վերջին շրջանում մի շարք ոչ կառավարական կազմակերպությունների համար գործունեության հիմնական ուղղություն դարձած քաղաքացիական վերահսկողությունը, որն իրականացվում է տեղական ու համապետական տարաբնույթ ծրագրերի շրջանակներում, ապա ՀԿ-ների գործունեության առարկայական տիրույթի վերաբերյալ պատկերն առավել ամբողջական կներկայանա:

Պետք է փաստել, որ բազմաթիվ երիտասարդներ առաջնորդի և կառավարչի հաստատուն որակներ ձեռք են բերում ՀԿ-ներում ծավալած իրենց գործունեության շնորհիվ: Շատերի համար ՀԿ-ները դիտվում են որպես սոցիալիզացիայի կարևոր ինստիտուտներ, որոնց միջոցով

ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված են 4000-ից ավել ՀԿ-ներ: Անշուշտ դրանցից ոչ բոլորն են գործող կառույցներ: Տարբեր գնահատականներով (ցավոք խորը ուսումնասիրություն տվյալ խնդրի առնչությամբ չի իրականացվել) գրանցված ՀԿ-ների մեծ մասը կամ չեն գործում կամ էլ, այսպես կոչված «մարդ ՀԿ-ներ» ու «Գոնգոներ» են: «Երրորդ համայնքում» ակտիվ գործունեություն ծավալում են ընդամենը 800-1000 ՀԿ-ներ, որոնք հիմնականում ներկայացնում են սոցիալական, մարդու իրավունքների պաշտպանության, բնապահպանական, կանանց հիմնահարցերի, փախստականների, հաշմանդամների, կրթության և երիտասարդության ոլորտները: Ընդ որում երիտասարդական ՀԿ-ները «Երրորդ համայնքի» առավել ներկայացուցչական և միաժամանակ նաև ակտիվ գործող կառույցներից են: Ըստ «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում» զեկույցի նախագծի երիտասարդական ՀԿ-ները թվաքանակով զիջում են միայն բարեգործական և մարզական կազմակերպություններին:

Նրանք հաղորդակից են դառնում համաշխարհային զարգացման գործընթացներին, ժողովրդավարության արժեքա-նորմատիվային համակարգին, նորարարություններին: ՀԿ-ների դերը խիստ ծանրակշիռ է ոչ ֆորմալ կրթության ոլորտում, այլընտրանքային տեղեկատվության մատուցման բնագավառում և մարդկանց կարողությունների ու հմտությունների զարգացման գործում:

Սրանով հանդերձ դեռևս վաղ է խոսել մեր երկրում քաղաքացիական հասարակության առանցքային օղակ համարվող` ՀԿ համայնքի կայացվածության մասին (նաև երիտասարդական ՀԿ դաշտի մասին):

Հատկանշական է, որ երիտասարդների խիստ փոքր տոկոսն է վստահում ՀԿ-ներին: «Երիտասարդության ազգային զեկույցի» շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հետազոտության տվյալներով նրանց ընդամենը 7.2%-ն է վստահում ՀԿ-ներին: Այս ցուցանիշը փոքր-ինչ բարձր է քաղաքական կուսակցությունների և արհմիութենական կազմակերպությունների համեմատությամբ` համապատասխանաբար 5% և 6.4%:

Այդուհանդերձ` ՀԿ համայնքը նպատակաուղղված ու արդյունավետ քաղաքացիական մասնակցության համար ապահովում է անհրաժեշտ տեղեկատվական, խորհրդատվական հիմքեր, բայց շատ դեպքերում չի հանդիսանում մասնակցային գործընթացի կազմակերպիչ ու կառավարիչ: Նման պայմաններում

որոշակիորեն փոքրանում է ՅԿ-ների դերը՝ հանրությանը մոբիլիզացնելու և առաջնորդելու գործում: Իսկ այս հանգամանքը իր հերթին պետական ու մասնավոր հատվածներին թույլ է տալիս հաճախ շրջանցել քաղաքացիական հասարակության ինստիտուտներին:

Երիտասարդության քաղաքացիական մասնակցության գործում խիստ նշանակալի պետք է լինի ՅԿ-ների դերը, որը նախ և առաջ պայմանավորված է այդ ինստիտուտների հիմնական առաքելություններով, նպատակներով ու խնդիրներով: Անշուշտ, տվյալ տիրույթում խնդիրները բազմաթիվ են, որոնք պահանջում են կոնկրետ լուծումներ: Այս առումով հատկապես կարևորվում են.

- երիտասարդության հիմնախնդիրներին ուղղված ծրագրերին ՅԿ-ների ներգրավվածության ապահովումը,
- կամավորականության գաղափարի ինստիտուցիոնալիզացիան, որը նախ և առաջ ենթադրում է կամավորականության շարժման համակարգում և համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծում (կամավորական գործունեության մասին օրենք): Այս խնդիրն օբյեկտիվորեն առնչվում է երիտասարդության քաղաքացիական մասնակցության հետ և առավելապես գտնվում է ՅԿ-ների գործունեության տիրույթում:
- ՅԿ-ների շրջանում խիստ ակտուալ հիմնախնդիրների շուրջ կոալիցիաների ձևավորում: Առանձնապես արդյունավետ կարող են գործել բազմաճյուղ և բազմաոլորտ կոալիցիաները, որտեղ բացի ՅԿ-ներից կարող են ներգրավվել քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ (ՁԼՄ-ներ, արհմիութենական կազմակերպություններ, ուսանողական միություններ և այլն):
- ՅԿ-ները առավել հաճախ պետք է նախաձեռնեն իրենց շահառուների շահերի պաշտպանությանն ուղղված նպատակային քարոզարշավներ:

6.1.2. Արհմիություններ

Յուրաքանչյուր ցիվիլիարխիկ հասարակության (Civiliarchic Society) համար արհմիություններն առանցքային դերակատարում ունեն քաղաքացիական հասարակության և սոցիալական պետության կայացման⁴⁰, ինչպես նաև մարդկանց աշխատանքային ու սոցիալական շահերի, իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում: Դա բացատրվում է նարանով, որ արհմիությունները հենվում են «օբյեկտիվ խմբերի» վրա, որոնք ի դեմս

| |
|---|
| Արհմիությունները քաղաքացիական հասարակության այն ինստիտուտներից են, որոնք ի դեմս գործատուների և ձեռներեցների ընկերակցությունների ունեն «բնականորեն տրված» իրենց «գործընկեր-հակառակորդ» կազմակերպությունները: Նրանց արդյունավետ «գործընկերություն-պայքարը» էական նշանակություն ունի ոչ միայն գործառուների, այլև աշխատանքի շուկայի և աշխատանքային հարաբերությունների հումանիզացիայի համար: |
|---|

⁴⁰ Տե՛ս Ալեքսանյան Ա. 2005: Ցիվիլիարխիկ դեմոկրատիա: Երևան, էջ 99-104:

գործառուների ունեն իրենց ընդգծված սոցիալական հենքը: Այս գործոնը հաճախ քաղաքականացնում է արհմիություններին կամ էլ ստիպում է նրանց քաղաքական միջոցներով լուծել իրենց առջև կանգնած սոցիալ-տնտեսական խնդիրները:

Ի տարբերություն ԱՄՆ-ի և արևմտաեվրոպական երկրների (Մեծ Բրիտանիայի, Գերմանիա, Ֆրանսիա), որտեղ արհմիությունները ստեղծվեցին⁴¹ XIX դարի վերջերին՝ Չայաստանում առաջին արհմիութենական կազմակերպությունները ձևավորվեցին Չայկական ԽՍՀ գոյության տարներին: 1921թ. փետրվարի 6-ին Երևանում Արհեստակցական միությունների առաջին կոնֆերանսում ստեղծվում է Չայաստանի արհեստակցական միությունների խորհուրդը (ՉԱՄԽ), որը միավորում էր 16 հազար բանվորներ և ծառայողներ: Այն ներկայումս կոչվում է Չայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա:

Արհեստակցական միությունները ԽՍՀՄ-ի գոյության շուրջ 70 տարվա ընթացքում փաստացիորեն հանդիսանում էին Կոմունիստական կուսակցության կենտրոնական ապարատի ենթակառույցներից մեկը և հասկանալի պատճառներով որևէ էական դերակատում չէին էլ կարող ունենալ գործառուների աշխատանքային ու սոցիալական իրավունքների պաշտպանության գործում:

Չայաստանի անկախության սկզբնական շրջանում արհմիությունները նախկին իներկցիայով շարունակեցին աշխատել և հայտնվեցին նոր սոցիալ-տնտեսական գործընթացներում (շուկայական տնտեսություն, մասնավոր սեփականություն, գործազրկություն, աշխատատեղերի կրճատում, աղքատություն, օտարերկրյա ներդրումներ և յալն), որն էլ հանգեցրեց վերջիններիս անկարողության բացահայտմանը: Ինչն էլ հետագայում հանգեցրեց արհմիությունների լուծարմանը կամ դերի նվազեցմանը:

«Աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնել և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանել կարող են արհեստակցական միությունները: Կազմակերպություններում արհեստակցական միության բացակայության դեպքում աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից աշխատողների ներկայացուցչության և շահերի պաշտպանության գործառուները կարող են փոխանցվել համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը» (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 23):

Չայաստանի անկախացումից հետո միայն 2000թ.-ի դեկտեմբերի 5-ին ընդունվեց «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը, 2001թ.-ի սեպտեմբերի 11-ին «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքը, իսկ ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը ընդունվեց միայն վերջերս՝ 2004թ.-ի նոյեմբերի 9-ին: Իսկ մինչ այդ գործում էր 1972թ.-ի հունիսի 16-ին ընդունված Չայկական ԽՍՀ Աշխատանքային օրենսգիրքը:

«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվեցին նմանատիպ միությունների կազմավորման և լուծարման կարգը, որի համաձայն

⁴¹ Այդ մասին տես *Schoenhoven, Klaus* 1987: Die deutschen Gewerkschaften. Suhrkamp, S.7-18, *Eisenberg, Christiane* 1986: Deutsche und englische Gewerkschaften. Goettingen, S.11-20.

«արհեստակցական կազմակերպություն հիմնադրվում է նրա հիմնադիրների (առնվազն երեք աշխատողի) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի (համաժողովի, համագումարի) որոշմամբ» (հոդված 4):

Աշխատանքային օրենսգրքի համաձայն կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը «գործատուի և տվյալ կազմակերպությունում աշխատողների արհեստակցական միության միջև կնքված գրավոր համաձայնությունն է» (հոդված 55): Ինչպես նաև Աշխատանքային օրենսգրքով կազմակերպությունում գործող արհեստակցական միությունը ճանաչվում է կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի կողմ (հոդված 56), որը հնարավորություն է տալիս արհեստակցական միությանը համախմբված կերպով պաշտպանել իր անդամների աշխատանքային շահերն ու իրավունքները: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական իրականության մեջ արհմիութենական շարժման ավանդույթներ չկային, ապա թերևս դրանով է բացատրվում այն ճգնաժամային իրավիճակը, որում հայտնվել են ներկայումս գործող արհմիությունները:

Շուկայական տնտեսության կայացման գործընթացում արհմիությունները չեն հանդիսանում երիտասարդ գործառույցների իրավունքների ու շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմ: Դա պայմանավորված է նրանով, որ արհմիությունները չունեն իրական լծակներ պայքարելու աշխատավարձերի ժամանակին վճարելու և գործատուների կանայականությունների դեմ, զբաղվածության և սոցիալական պաշտպանվածության դիմամիկ վերահսկման, ինչպես նաև ի վիճակի չեն վարել աշխատանքային պայմանագրերի հետ կապված բանակցություններ: Այս իմաստով կարևոր նշանակություն ունեցավ 2005թ. մարտի 24-ին ընդունված «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի ընդունումը և Աշխատանքի պետական տեսչության ստեղծումը: Այսպես, օրինակ, սոցիոլոգիական հարցման ընթացքում՝ հարցվածների միայն 6,4% է վստահում արհմիություններին, իսկ հարցվածների զգալի մասը 80,2% չեն վստահում արհմիություններին: Նմանատիպ մոտեցումն ամրագրված է նաև փորձագիտական հարցման արդյունքում, երբ 12 փորձագետներից 8-ը բացասական է գնահատում արհմիությունների գործունեությունը, որոնք հիշյալ հանգամանքը բացատրում են՝ աշխատավարձերի ցածր մակարդակով, աշխատանքային շուկայի անվերահսկելիությամբ, աշխատանքային օրենսդրության անկատարությամբ, «կառավարություն-գործատուների միություն-արհմիություններ» համագործակցության բացակայությամբ, ինչպես նաև արհմիությունների անբավարար գործունեությամբ: Փորձագիտական հարցման համաձայն՝ 8 փորձագետներից միայն մեկն է կարծում, որ Հայաստանում պաշտպանված են երիտասարդների աշխատանքային շահերն ու իրավունքները: Չնայած մեր իրականության մեջ արհմիությունների դերի բացասական ընկալմանը,

այնուամենայնիվ ունենք նաև դրական օրինակ կապված «Արմենթել» ընկերությունում «Հավատ» արհեստակցական կազմակերպության⁴² գործունեության հետ (13.12.2005թ. ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ), որը ստեղծվեց գործառույթների աշխատանքային շահերի ու իրավունքների պաշտպանության նկատառումներով՝ ի հակակշիռ այդ նույն ընկերությունում գործող արհմիության, որը պաշտպանում է ընկերության ղեկավարության շահերը:

6.1.3. Ուսանողական կառույցներ և ակունքներ

Բուհերի ուսանողական կազմակերպությունների, ինքնակառավարման մարմինների ձևավորում

ԽՍՀՄ փլուզմամբ դադարեց գոյություն ունենալ նաև կոմերիտմիությունը, որը համակարգում էր նաև բուհերում իրականացվող ուսանողական կյանքը: Շուրջ 3-4 տարի դադարից հետո, ուսանողների նախաձեռնությամբ բուհերում ստեղծվեցին ուսանողական խորհուրդները (ՈՒԽ)՝ ուսանողների (սովորողների) ինքնակառավարման, ներկայացուցչական մարմինները:

| | | |
|---|---|--------------------------------------|
| ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ միություն) | ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ (Ուսխորհուրդ, խորհրդարան, Ուսանողական միություն) | (Ուսխորհուրդ, Ուսանողական միություն) |
| Բուհերում սովորողների ինքնակառավարման, ներկայացուցչական ընտրովի մարմիններ: Ապահովում են ուսանողների մասնակցությունը բուհի կառավարման գործընթացում, պաշտպանում են ուսանողների իրավունքները, աջակցում են սոցիալական խնդիրների լուծմանը, կրթական, գիտական ու հոգևոր ծրագրերի իրականացմանն ու ազատ ժամանցի կազմակերպմանը: | | |

Հայաստանի պետական բուհերում ՈՒԽ-ները հիմնականում ձևավորվեցին 1993-95թթ. ընթացքում՝ երկրի համար բավականին ծանր ժամանակաշրջանում: Սակայն հարկ է նշել, որ այդ ժամանակ ուսանողական շարժումը ուներ բավականին մեծ ներուժ, դեռևս թարմ էին նախորդ տարիների համաժողովրդական շարժման հիշողությունները, բարձր էր ուսանողների քաղաքացիական մասնակցությունն ու պատասխանատվությունը:

| |
|---|
| ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՈՒԳԸ) |
| Բուհերում ուսանողների և ասպիրանտների (երիտասարդ գիտնականների) կամավոր, ներկայացուցչական, ինքնակառավարման, ընտրովի մարմիններ: Հիմնական նպատակը՝ նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը: Հայաստանի առաջին ՈՒԳԸ-ն հիմնադրվել է ՀՀ մայր բուհում՝ ԵՊՀ-ում 1947թ.: Հայաստանի անկախացումից հետո այն կրկին առաջինը վերահիմնադրվեց 1996թ. ԵՊՀ-ում: |

Ձևավորվող ՈՒԽ-ների կառուցվածքը տարբեր էր՝ կախված բուհի ուսանողների թվից և այլ առանձնահատկություններից, սակայն այդ մարմինները ձևավորվում էին ուսանողների միջնորդավորված ընտրության արդյունքում: Ընտրվում էին կուրսի, ֆակուլտետի կամ այլ միավորի ուսանողների ներկայացուցիչներ, որոնք բուհի ուսանողների ընդհանուր ժողովում ընտրում էին ղեկավար մարմիններ (Նախագահ, Նախագահություն):

⁴² Տե՛ս <http://havat.lurer.info>

Հարկ է նշել, որ ոչ պետական բուհերում ուսանողական կազմակերպությունները, համեմատած պետական բուհերի հետ, ձևավորվեցին ավելի ուշ, իսկ բազմաթիվ ոչ պետական բուհերում նման կառույցներ մինչ օրս գոյություն չունեն կամ նրանց գործունեությունը կրում է ձևական բնույթ, հատկապես երբ խնդիրը վերաբերում է ուսանողների մասնակցությանը բուհի կառավարմանը:

ՈՒԽ-ների ձևավորման շրջանից հետո պետական բուհերում վերաբացվեցին նաև ուսանողական գիտական ընկերությունները, որոնք որոշ բուհերում գործում էին դեռևս խորհրդային ժամանակաշրջանում և դադարեցին գործել 1988-91թթ. Այս կազմակերպությունների հիմնական նպատակն էր՝ նպաստել ուսանողների կրթական, գիտական և հոգևոր զարգացմանը:

Բուհերի ուսանողական կյանքում բավականին կարևոր տեղ էին զբաղեցնում նաև ուսանողական արհմիությունները: Արհմիությունները դեռևս ԽՍՀՄ-ի գոյության տարիներին և տոտալիտար ռեժիմի փոփոխությունից հետո գրեթե բոլոր բուհերում իներցիոն կերպով շարունակեցին գոյություն ունենալ, իսկ որոշ բուհերում էլ գրեթե փոխարինում էին ՈՒԽ-ներին: Արհմիությունների ուժեղ կողմը նրանց իրավական կարգավիճակն էր, որոշակի ֆինանսական միջոցների առկայությունը: Սակայն հետագայում ուսանողական արհմիությունները լուծարվեցին, միացան բուհի աշխատողների (դասախոսների) արհեստակցական կազմակերպություններին:

Ուսանողական կազմակերպությունների զարգացումը և գործունեությունը էական նշանակություն և ազդեցություն ունեցան Հայաստանի երիտասարդական ոլորտի կայացման վրա: Նախորդելով երիտասարդական ՀԿ-հատվածի ձևավորմանը՝ այդպիսով հանդիսացան «կազմակերպված երիտասարդության» ոլորտի շարժիչ ուժ: Դեռևս մինչև 2000-2001թթ. երկրի երիտասարդական դաշտի թե՛ պետական և թե՛ հասարակական հատվածի բազմաթիվ ակտիվ դերակատարներ կանգնած էին տարբեր պետական բուհերի ուսանողական կառույցների ձևավորման և զարգացման ակունքներում:

Ուսանողական կազմակերպությունների աշխատանքները

Ձևավորման փուլից հետո, 1990-ական թվականների կեսերին, ելնելով սոցիալ-տնտեսական իրավիճակից, առավել առաջնային էին ՈՒԽ-ների սոցիալական ծրագրերը: Կազմակերպությունների նախաձեռնությամբ կազմակերպվում էր անվճար սնունդ, գործում էր ուսանողական դեղատուն, տրամադրվում էր հունանիտար օգնություն և այլն:

| |
|--|
| <p>ՈՒԽ-ների գործունեությունը կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի.</p> <ul style="list-style-type: none">• ուսանողների շահերի պաշտպանություն, մասնակցություն բուհի կառավարման գործընթացին,• սոցիալական խնդիրների լուծում,• մշակութային, գիտա-կրթական միջոցառումների կազմակերպում,• արշավների, սպորտային միջոցառումների կազմակերպում,• միջբուհական համագործակցություն, արտաբուհական միջաջառումների կազմակերպում: |
|--|

Ներկայումս ուսանողների սոցիալական խնդիրների շարքում առավել կարևոր նշանակություն ունի ուսման վարձի խնդիրը, որը, ի դեպ, համեմատելով 1993-99թթ. շրջանի հետ, ունեցել է բավականին մեծ աճ (շուրջ 2-3 անգամ): Պետական բուհերի կողմից իրականացվում է ուսման վարձի զեղջման (հիմնականում 20-80%-ի սահմաններում) քաղաքականություն, սահմանված են որոշ խմբեր որոնց համար այս արտոնությունը կիրառվում է (ծնողագուրկ, հաշմանդամ, ազատամարտիկի, բուհի դասախոսի երեխաներ և այլն): Ուսման վարձի զեղջման հարցում ՈՒԽ-ները ունեն որոշակի դերակատարություն (տարբեր բուհերում տարբեր չափով՝ կախված այդ բուհում ձևավորված ավանդույթներից, ադմինիստրացիայի պատրաստականությունից և այլն), նրանց կողմից ներկայացվում են առաջարկություններ զեղջելու վերաբերյալ, կամ նրանք մասնակցում են դրանց քննարկմանը:

Մեկ այլ կարևոր խնդիր է նաև ուսանողների խրախուսումը: Բուհերում գործում է տարբեր անվանական կրթաթոշակների համակարգ, յուրաքանչյուր տարի կազմակերպվում է «լավագույն ուսանող» մրցույթ և այլն: Ուսանողների խրախուսման, պարգևատրման հարցում իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում ուսանողական կազմակերպությունները. ակադեմիական առաջադիմության հետ զուգահեռ հաշվի է առնվում նաև ուսանողների ներբուհական կյանքին մասնակցության աստիճանը և այլն:

1998թ. պետական աջակցությամբ հիմնադրվեց Համահայկական երիտասարդական հիմնադրամը (ՀԵՀ), որը էական աջակցություն է ցուցաբերում ուսանողական ինքնակառավարման մարմիններին: ՀԵՀ-ը էական նշանակություն ունեցավ ՈՒԽ-ների հնարավորությունների ընդլայնման, նրանց նախաձեռնություններին աջակցելու տեսանկյունից՝ մինչ այդ նախադեպը չունեցող ֆինանսական աջակցությամբ: ՀԵՀ-ի աջակցությամբ նոր որակ ստացան այն միջազգայնությունները, որոնք պահանջում են զգալի ֆինանսական միջոցներ:

Բուհերում ուսանողական ծրագրերի իրականացմանը որոշակի աջակցություն է ցուցաբերվում նաև երիտասարդական ծրագրերի համար նախատեսված պետական բյուջեի միջոցներով:

Ուսանողների մասնակցությունը ուսանողական կազմակերպություններում

Ուսանողն ընդունվելով բուհ՝ հնարավորություն է ստանում ընտրել և ընտրվել իր բուհի ՈՒԽ-ում: Անդամությունը ՈՒԳԸ-ում կատարվում է ավելի բարձր կուրսերում: Նրա մոտիվացիայից, պատրաստվածության աստիճանից և քաղաքացիական դիրքորոշումից է կախված նաև նրա մասնակցությունը իր բուհի ուսխորհրդում:

Հարցված ուսանողների 35%-ն է դրական պատասխանել ՈՒԽ-ին կամ ուսանողական ակումբին անդամակցելու հարցին, իսկ 39.5%-ը մասնակցել է ՈՒԽ-ի կամ ուսանողական ակումբի կողմից իրականացված որևէ միջոցառման:

Իրականացված հարցումների միջոցով որոշակիորեն պարզվել է ուսանողների բուհում սովորելու հիմնական շարժառիթը: Հարցված ուսանողների միայն 46%-ն է նշել բարձր որակավորում ստանալը որպես հիմնական շարժառիթ, ինչին պետք է առաջին հերթին կոչված լինեն բուհերը: Ուսանողների զգալի մի շերտ բուհ է հաճախում՝ ելնելով մի շարք այլ դրդապատճառներից (ապագայում պաշտոն զբաղեցնելը, որոշակի սոցիալական կարգավիճակ ձեռք բերելը, հետաքրքիր շփում ունենալը և այլն): Ակնհայտ է, որ նման ուսանողական շերտերի առկայությունը բավականին բարդացնում է ուսանողական ներբուհական կյանքի կազմակերպումը:

Միաժամանակ, այսօրվա ուսանողներին հուզող հիմնական խնդիրներից կարելի է առանձնացնել ուսման վարձը և սոցիալական այլ խնդիրներ: Օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ այսօր ՌԻՄ-ները ի վիճակի չեն լուծել ուսանողների բավականին մեծ թվի համար նշված խնդիրները (գործող ուսման վարձերի գեղջման համակարգը բավականին սահմանափակ է և հիմնականում վերաբերում է որոշ հստակ սահմանված խմբերին):

Ուսանողական տարբեր կազմակերպությունների կողմից բուհում նախաձեռնվում են տարբեր գիտակրթական ուղղվածության միջոցառումներ՝ գիտաժողովներ, սեմինարներ, կոնֆերանսներ և այլն: Հրատարակվում են ուսանողների, ասպիրանտների, երիտասարդ գիտնականների աշխատանքները: Այս ոլորտում մեծ է ՌԻԳԸ-ների դերը: Նշված միջաջառումները աչքի չեն ընկնում մասսայականությամբ, բայց ձևավորում են շատ կարևոր ներբուհական կյանքին հարիր մթնոլորտ:

Տարբեր պետական բուհերում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բավականին մեծ թվով ուսանողներ, ըստ էության, տեղյակ չեն իրենց ուսանողական կառույցների ձևավորման կարգից, գործունեությունից ու նախաձեռնություններից: Թեև այս հարցում առկա է որոշակի աշխատանք և առաջխաղացում՝ մասնավորապես, ուսանողների նախաձեռնությամբ հրատարակվում են տարբեր պարբերականներ:

Ըստ փորձագետների կարծիքների, մի շարք բուհերում ուսանողներից շատերը դժգոհ են, որ իրենց լիդերները, ընտրվելով իբրև իրենց շահերի պաշտպան, ըստ էության, դառնում են ադմինիստրացիայի կցորդ: Կան բուհեր, որտեղ ուսխորհրդի նախագահը միաժամանակ զբաղեցնում է ռեկտորի օգնականի պաշտոնը: Այս տեսանկյունից, ինչպե՞ս կարող է ուսանողական խորհրդի ղեկավարը առաջնորդել ՌԻՄ-ն, պաշտպանել ուսանողի շահերը, եթե ինչ որ խնդրում հարկավոր է ընդդիմանալ բուհի ղեկավարությանը և այլն:

Անցած 10 տարիները ցույց են տալիս, որ բուհերում ուսանողական կազմակերպությունների ձևավորման գործընթացի շուրջ դեռևս չեն կայացել ավանդույթներ: Կազմակերպությունների կառուցվածքը, ընտրական կարգերը (որոնք, ի դեպ, ինչպես նաև կազմակերպությունների կանոնադրությունները, հաստատվում են

բուհի ղեկավար մարմինների կողմից) հաճախ փոփոխվել են: Մեկ այլ կարևոր հարց է նաև ՈՒԽ-ներում կայուն սերնդափոխության և ժողովրդավարական ընտրությունների իրականացման հարցը (չոչափելի է նաև ադմինիստրացիայի ազդեցությունը):

Հատկանշական է նաև, որ հաճախ ուսանողական կառույցների լիդերները, ակտիվ անդամները չունեն արդի պայմաններին համապատասխան աշխատանքներ կատարելու գիտելիքներ, հմտություններ և փորձ, որը ազդում է նրանց կողմից կատարվող աշխատանքների որակի վրա:

Այս իրավիճակը վկայում է նաև մեկ խնդրի մասին. ուսանողների լայն զանգվածները չունեն բավարար չափով մոտիվացիա՝ մասնակցելու ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին, ի դեմս ՈՒԽ-ների՝ չեն տեսնում իրենց շահերի պաշտպան: **Միաժամանակ պետք է ընդգծել ուսանողական կազմակերպությունների կարևոր և անհերքելի նշանակությունը երկրում երիտասարդության քաղաքացիական մասնակցության զարգացման հարցում: Ուսանողական տարիների ընթացքում, մասնագիտության հետ միասին, այս կազմակերպությունների շնորհիվ ուսանողները կարող են ստանալ հասարակական աշխատանքի, ինքնակառավարման, տարբեր նախաձեռնություններով հանդես գալու որոշակի փորձ:**

Իրավական կարգավիճակ

Կարևոր և թերևս մինչ օրս վերջնականապես չլուծված խնդիր է նաև ուսանողական ինքնակառավարման կազմակերպությունների իրավական կարգավիճակի հարցը: ՈՒԽ-ները և ՈՒԳԸ-ները հանդիսանում են բուհի ներքին կառուցվածքային ստորաբաժանումներ (կանոնադրությունը հաստատվում է բուհի ղեկավար մարմինների կողմից):

Նրանք իրենց բնույթով հասարակական կազմակերպություններ են, բայց գրանցված չեն օրենսդրությամբ նախատեսված կարգով, չունեն ՀԿ-ի կարգավիճակ, որի պատճառով էլ չեն կարող օգտվել օրենքով ընձեռված մի շարք իրավունքներից և հնարավորություններից:

Ներկա կարգավիճակը թույլ չի տալիս ունենալ առանձին բանկային հաշիվ (ներկայումս բոլոր ֆինանսական գործողությունները կատարվում են բուհի միջոցով, բնականաբար՝ ադմինիստրացիայի համաձայնությամբ): Այս առումով լուրջ բարդություններ են առաջանում տեղական և միջազգային դոնոր կառույցների հետ աշխատելու համար և այլն:

Բավականին հեղիեղուկ է բուհերում ուսանողական ակումբների կարգավիճակը: Այս ակումբները ստեղծվում են նախաձեռնողների և համախոհների խմբի կողմից: Ակումբները հիմնականում միավորում են ուսանողներին ըստ որոշակի հետաքրքրության: Ակումբները ստեղծվում են բուհում գործող որևէ կառույցի (ՈՒԽ,

ՈՒԳԸ, ամբիոն կամ այլ օղակ) կողմից և հաճախ դիտարկվում են այդ կառույցների մաս:

Հարկ է նշել նաև, որ ուսանողներից կողմից ստեղծված և օրենսդրությամբ նախատեսված կարգով գրանցում ստացած ՀԿ-ները (ակումբ, միավորում և այլն), որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, բավականին դժվար են հնարավորություն ստանում գործել բուհում, բուհի ներսում կազմակերպել միջոցառումներ (համապատասխան տարածքները դժվարությամբ է տրամադրվում), նրանց համար ստեղծվում են արհեստական խոչընդոտներ: Այս կազմակերպությունները, թերևս լինելով նույն բուհի ուսանողների կողմից ստեղծված, դիտարկվում են իբրև «դրսի» կառույց: Նրանք լինելով առանձին գրանցված կազմակերպություններ՝ ավելի անկախ են և, ըստ էության, կարող են ավելի քիչ ենթակա ադմինիստրացիայի ազդեցությանը:

Ուսանողական ինքնակառավարում

ՈՒԽ-ների կարևորագույն գործառույթն է՝ ապահովել ուսանողների մասնակցությունը բուհի կառավարմանը: ՈՒԽ-ների ձևավորման շրջանում միայն ուսանողական կառույցի ղեկավարն էր հանդիսանում բուհի գիտական խորհրդի անդամ, իսկ որոշ բուհերում նա ընդգրկված էր ռեկտորատի կազմում: Հարկ է նշել, որ ԵՊՀ-ում նախկին կանոնադրության, համաձայն ուսանողների համար սահմանել էր 15% մասնակցության շեմ բուհի բարձրագույն ղեկավար մարմնում (Համալսարանի խորհուրդ), որը հրավիրվում էր տարին մեկ անգամ:

Հետագայում (1998-2000թթ.) ՈՒԽ-ների դերը՝ որպես բուհի կառավարմանը ուսանողների մասնակցությունը ապահովող մարմին, առավել կարևորվեց, երբ ստեղծվեցին հստակ մեխանիզմներ, որոնք ամրագրվեցին «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով (հոդված 15, 17): Այն հետևեց «Կրթության մասին» ՀՀ օրենքին (հոդված 27, կետ 5), որը հստակ, առնվազն 25% շեմ սահմանեց բուհի կառավարման մարմիններում ուսանողների մասնակցության համար:

Մինչև 2005թ. ուսանողների ներկայացուցիչները ՈՒԽ-ի միջոցով մասնակցում էին բուհի տարբեր պաշտոնյանների (ամբիոնի վարիչ, դեկան, ռեկտոր) ընտրություններին, որը հաճախ կրում էր խորհրդանշական բնույթ: 2005թ. վերջին, երբ կյանքի կոչվեց վերոհիշյալ օրենքների պահանջը, համաձայն որի ուսանողները 25% համամասնությամբ ընդգրկվեցին բուհերի կառավարման խորհրդի կազմում, էապես բարձրացավ ՈՒԽ-ների դերն ու նշանակությունը: Ուսանողների ներկայացուցիչները մասնակցեցին բուհի բարձրագույն ղեկավար մարմնի՝ խորհրդի նախագահի և ռեկտորի ընտրություններին և որոշ դեպքերում, ըստ դիտորդների կարծիքի, նրանց մասնակցությունը ուներ կարևոր նշանակություն: Այս երևույթը հետագայում նոր

որակական հարթություն կտեղափոխի բուհի ղեկավարություն-ՈՒԽ փոխհարաբերությունները:

Միաժամանակ, այն նոր մարտահրավեր է ուսանողական կազմակերպությունների համար: ՈՒԽ լիդերները պետք է լինեն ավելի նախաձեռնող, զգոն և կազմակերպված: Նրանք դառնում են էլ ավելի կարևոր ադմինիստրացիայի համար՝ այս դեպքում իրենց զբաղեցրած պաշտոնները պահպանելու տեսանկյունից: ՈՒԽ-ները դեռևս վերջնականապես կայացած չեն (անհրաժեշտ չափով չկան դեմոկրատական ավանդույթներ, ուսանողների մասնակցություն): Այս պայմաններում ադմինիստրացիայի որոշ ներկայացուցիչների համար այդքան էլ բարդ խնդիր չի հանդիսանում և բավականին գայթակղիչ է դառնում կառավարելի դարձնել ՈՒԽ ներկայացուցիչներին (օգտագործելով քննությունների և այլ գործոններ): Իրավիճակի նշված սցենարով զարգացումը կարող է ավելի թուլացնել ՈՒԽ-ներին, իսկ ՈՒԽ-ների կողմից նշված մարտահրավերները հաղթահարելու պարագայում նրանց աշխատանքներում կարծանագրվի նոր որակական աճ:

Անդրադառնալով ոչ պետական բուհերին՝ պետք է նշել, որ, ցավոք, ուսանողների մասնակցությունը բուհի կառավարմանը, որպես խնդիր, նույնիսկ չի քննարկվում: Շատ ոչ պետական բուհերի ղեկավարներ մտածում են, որ բուհը մասնավոր սեփականություն է և իրենց չի հետաքրքրում ուսանողների մասնակցությունը բուհի կառավարման հարցում:

Միջբուհական համագործակցություն

Ուսանողական կազմակերպությունների զարգացման հաջորդ փուլ հանդիսացավ նրանց միջբուհական համագործակցությունն ու միավորող կառույցների ստեղծումը: Նրանց կողմից համատեղ իրականացվել են բազմաթիվ կոնֆերանսներ, փառատոններ և այլն:

Պետական բուհերի ՈՒԽ-ները մի քանի անգամ նախաձեռնել են (սկսած 1994թ.-ից) ստեղծել հանրապետական միավորող (հովանոց) կառույց: Նման կառույցի ստեղծումը միանշանակ կուժեղացներ ՈՒԽ-ներին, կամրապնդեր նրանց դիրքերը բուհերում՝ հաղիսանալով այդ կազմակերպությունների *ցիվիլիարիսիկ լեգիտիմության չափանիշ*⁴³ և, ընդհանուր առմամբ, կմեծացներ ուսխորհուրդների դերն ու անկախությունը: Սակայն, գրեթե բոլոր ջանքերը չեն ունեցել երկարաժամկետ և արդյունավետ եզրահանգում:

Հարկ է նշել, որ ուսանողական կառույցները մեծ և ինչ որ տեղ վճռական դեր են ունեցել Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդի հիմնադրման գործում (1997թ.), որը հովանոց կառույց է երիտասարդական ՀԿ-ների, ՈՒԽ-ների և կուսակցությունների երիտասարդական թևերի համար:

⁴³ Տե՛ս *Ալեքսանյան Ա.* 2005: Ցիվիլիարիսիկ դեմոկրատիա, Երևան, 2005, էջ 95-96:

Ազատ ժամանցի կազմակերպում

Ուսանողական կազմակերպությունների աշխատանքային կարևոր օղակն է հանդիսանում նաև ազատ ժամանցին վերաբերող միջոցառումների կազմակերպումը: Այս խնդիրը վերլուծելիս անդրադառնանք նաև մի խնդրի. այն է՝ ինչպիսի՞ ազատ ժամանց կցանկանային ունենալ ուսանողները:

Իրականացված հարցումների միջոցով որոշակիորեն պարզվել են ուսանողների ազատ ժամանցի նախընտրելի ձևերը: Առավելապես որպես ժամանցի ձև նախընտրում են լսել երաժշտություն (46.7%), ընթերցանել (20.6%), դիտել հեռուստացույց (13.1%), ժամանակը անցկացնել ինտերնետ ակունքներում (10.3%), բարերում, սրճարաններում (9.3%). Ի դեպ, ինտերնետ ակունքներում նրանք հիմնականում նախընտրում են համացանցի տարբեր «չաթեր» և ցանցային խաղեր:

Նման իրավիճակում բավականին հետաքրքրություն են առաջացնում մշակութային ձեռնարկները՝ համերգներ, փառատոններ և այլն, իսկ գիտական միջոցառումները, տարբեր քննարկումները, սեմինարները դառնում են ավելի էլիտար՝ ուսանողների նեղ շրջանի համար:

Ամփոփում

Այսպիսով, ներկայիս պայմաններում անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել բուհերի ուսանողական կազմակերպությունների զարգացման ուղղությամբ:

Պետք է առաջին հերթին ուժեղացնել ՌԻՍ անդամների լիդերային հատկությունները, նրանց տալ համապատասխան աշխատանք կատարելու հնտություններ և գիտելիքներ, մասնավորապես՝ ուսանողներին մոտիվացնելու, ժողովրդավարության արժեքներ տարածելու, կազմակերպության աշխատանքները ճիշտ կազմակերպելու և այլ հարցերի շուրջ: Ուսանողական կառույցների ղեկավարների և ակտիվ անդամների համար պետք է կազմակերպվեն ուսումնական դասընթացներ:

Անհրաժեշտ է հստակեցնել և բարձրացնել ՌԻՍ-ների կարգավիճակը (միգուցե տարբերակներ մշակել նրանց իրավաբանական անձի կարգավիճակ տալու ուղղությամբ) և ստեղծել նրանց համար լրացուցիչ այլընտրանքային ֆինանսավորման հնարավորություններ:

Ուսանողական կազմակերպությունների զարգացման համար կարևորագույն գործոն են նաև միջբուհական աշխատանքները, ինչպես նաև միջազգային ինտեգրացիան և համագործակցությունը: Այս դեպքում կմեծանա աշխատանքի դաշտը, կստեղծվեն լրացուցիչ ֆինանսավորում ստանալու հնարավորություններ, կբարձրանա կազմակերպության նկատմամբ ուսանողների հետաքրքրությունը, կավելանա անկախության աստիճանը և այլն:

Ուսանողական կազմակերպությունները պետք է իրականացնեն բուհի ներսում թիրախային հետազոտություններ, և պարզեն իրենց ուսանողների ակնկալիքները կազմակերպություններից և փորձեն արձագանքել այդ խնդիրներին:

6.2 Քաղաքական մասնակցություն

Կազմակերպված քաղաքական մասնակցությունն ապահովող հիմնական ինստիտուտը քաղաքական կուսակցություններն են: Դրանց հիմնական գործառույթների և նպատակների շարքում են հասարակության քաղաքական սոցիալիզացիան, քաղաքական լիդերների առաջադրումը, քաղաքական արժեքների ու ավանդույթների տարածումը, իրենց անդամների քաղաքական պահանջունքների բավարարումն ու շահերի պաշտպանությունը, իրենց քաղաքական ծրագրերի կենսագործման համար օրինական ճանապարհներով իշխանության գրավումը և այլն:

Հայաստանում քաղաքական կուսակցությունների վերաբերյալ հասարակության մեջ իշխում են հիմնականում ոչ բարյացակամ ու անհանդուրժողական տրամադրություններ, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով:

1. Նախ տիրապետում է այն տեսակետը, ըստ որի կուսակցությունների ճնշող մեծամասնությունը կտրված են հասարակությունից, անտեղյակ են նրա անդամների խնդիրներին: Թերևս միայն ընտրությունների ժամանակահատվածում են նրանք «հիշում» ժողովրդին՝ վերջինիս մատուցելով անիրական խոստումների հարուստ տեսականի:
2. Կուսակցությունները, ըստ էության, չեն ապահովում հասարակության քաղաքական սոցիալիզացիան: Այսինքն հասարակության անդամների շրջանում չեն ձևավորում քաղաքական մասնակցության համապատասխան որակներ ու հմտություններ, ինչպես նաև քաղաքական վարքագծի կոնկրետ դրսևորումներ:
3. Կուսակցությունների գաղափարախոսությունների ու ծրագրերի և իրական գործելակերպի միջև առկա է լուրջ անհամապատասխանություն: Նրանց գործունեությունը առավելապես պոպուլիզմի տիրույթում է, որը էապես փոքրացնում է քաղաքական գաղափարներ ու արժեքներ տարածողի կուսակցությունների դերը:
4. Վերջապես Հայաստանում կուսակցությունները, ըստ էության, չեն իրականացնում նոր լիդերների ընտրության և առաջադրման կարևոր գործառույթը: Փաստորեն նրանց միջոցով չի լուծվում քաղաքական համակարգի կենսունակությունն ապահովող առանցքային խնդիրներից մեկը՝ քաղաքական սերնդափոխության խնդիրը: Այս հանգամանքը ուղղակի առնչվում է երիտասարդությանը, որն ի դեմս կուսակցությունների չի տեսնում իր քաղաքական կարիերայի առաջխաղացմանը նպաստող ինստիտուտի: Միայն այն հանգամանքը, որ 2003թ.-ի ԱԺ ընտրությունների արդյունքում ընտրվել են մինչև 30 տարեկան ընդամենը հինգ

պատգամավոր, որոնցից միայն երկուսն են կուսակցական⁴⁴ թերևս ասվածի լավագույն վկայությունն է:

Անդրադառնալով տարբեր կուսակցություններում երիտասարդության ներգրավվածության խնդրին նախ և առաջ պետք է տիրապետել դրանցում երիտասարդական կազմակերպված թևերի վերաբերյալ տեղեկատվությանը: Այս իմաստով հատկանշական է, որ ՀՀ – ուն գործող 80-ից ավել կուսակցություններից ընդամենը 30-ն ունեն երիտասարդական թևեր կամ մշտապես գործող երիտասարդական կառույցներ: Միանշանակ է, որ դրանց ճնշող մեծամասնությունը կանոնավոր, կազմակերպված կուսակցական գործունեություն չեն ծավալում, հետևաբար կարելի է արձանագրել, որ առավելապես նոսրացած կառույցներ են: Թերևս քիչ թե շատ ակտիվ գործող երիտասարդական թևեր և կառույցներ ունեն իշխող կոալիցիայի կուսակցությունները (ՀՅԴ, ՀՀԿ, ՕԵԿ), ՄԱԿ-ը, ընդդիմադիր՝ «Ազգային միաբանությունը», ՀԺԿ -ն, «Հանրապետություն» կուսակցությունը, ՀԺԱՄ-ը, «Ժողովրդական» կուսակցությունը: Զուգահեռ սրան Հայաստանում գործում են երկու կուսակցություններ (Հայաստանի երիտասարդական կուսակցություն, Հայաստանի առաջադիմական կուսակցություն, «Արդարություն» կուսակցություն), որոնց թե ղեկավար և թե շարքային անդամների ճնշող մեծամասնությունը երիտասարդներ են: Սակայն այս քաղաքական միավորներին չի հաջողվել մոբիլիզացնել երիտասարդությանը և խիստ վերապահումներով կարելի է շեշտել, որ նրանք ներկայացնում են երիտասարդության որոշակի ստվար զանգվածի շահերը:

Փաստորեն ակնհայտ է, որ երիտասարդները իրենց քաղաքական «առաջխաղացումը», քաղաքական պահանջներին բավարարումը տեսնում են հիմնականում կուսակցություններից դուրս: Հատկանշական է, որ «Երիտասարդական ազգային զեկույցի» շրջանակներում անցկացված զանգվածային հարցումների տվյալները վկայում են, որ երիտասարդության միայն 3.6%-ն է որևէ կուսակցության անդամ, իսկ 5%-ը վստահում է որևէ կուսակցության:


Իրերի նման կարգը էապես արժեզրկում է կուսակցությունների դերն ու նշանակությունը քաղաքական սերնդափոխության գործում և երիտասարդությանը մղում այլընտրանքային, երբեմն նույնիսկ հասարակության մեջ իրենց կարգավիճակին և կոչմանը ոչ հարիր ճանապարհների ընտրությանը: Թերևս նաև սրանով կարելի է բացատրել, այսպես կոչված, ապաքաղաքական, «նոմենկլատուրային» երիտասարդության ընդգծված հավակնությունները, որոնք քաղաքականացված, առավել ևս կուսակցականացված երիտասարդությանը իրական հակակշիռ չեն դիտում քաղաքական սերնդափոխության գործում:

⁴⁴ Տես «Հայաստանի հանրապետության Ազգային ժողով. երրորդ գումարում» Երևան 2004 և www.parliament.am կայքը

Քաղաքական մասնակցության տիրույթում առանցքային խնդիրներից է երիտասարդության ընտրական մասնակցությունը: Պետք է նշել, որ Հայաստանում երիտասարդությունը, որպես կանոն, ակտիվ մասնակցություն չի ունենում թե տեղական, թե համապետական ընտրական գործընթացներին: Երիտասարդների շրջանում խիստ մեծ է արեսենտիստների (ընտրությունների չմասնակցողներ) տեսակարար կշիռը: Նրանք իրենց չմասնակցությունը հիմնականում բացատրում են տարբեր դրդապատճառներով.


- բացարձակ անտարբեր են քաղաքական գործընթացների և առհասարակ քաղաքականության նկատմամբ,
- իրենց մեկ ձայնը որոշիչ չեն համարում («մեկ ձայնի սինդրոմ»),
- չեն վստահում ընտրությունների արդարությանն ու թափանցիկությանը:

Ձեկույցի շրջանակներում անցկացված հարցումների արդյունքներով վերջին երեք տարվա ընթացքում որևէ քաղաքական ընտրության մասնակցել են երիտասարդների 37.5% -ը,



ովքեր իրենց մասնակցությունը բացատրել են հետևյալ շարժառիթներով.

Իսկ չմասնակցողները (62.4%) իրենց դիրքորոշումները բացատրել են հետևյալ կերպ.



Խիստ ցածր է երիտասարդության մասնակցությունը զանգվածային բողոքի ակցիաներին, հանրահավաքներին ու երթերին:

«Երիտասարդական ազգային զեկույցի» շրջանակներում անցկացված զանգվածային հարցումների տվյալներով երիտասարդների միայն 11.4%-ն է մասնակցել հանրահավաքների ու բողոքի այլ ակցիաների, իսկ 88.4%-ը ընդհանրապես մերժում է քաղաքական մասնակցության այս ձևը, համարելով այն ոչ արդյունավետ, կամ ուղղակի արկածախնդրություն:

Ամփոփում

Ակնհայտ է, որ երիտասարդությունը քաղաքական մասնակցության առումով ունի ընդգծված խնդիրներ: Դրանք մի կողմից սահմանափակում են նրանց հնարավորությունները որոշումների կայացման գործընթացում որոշակի ազդեցության ունենալու առումով, իսկ մյուս կողմից արգելակում են մեր երկրում բնականոն սերնդափոխության գործընթացը:

Միանշանակ է, որ երիտասարդության ակտիվ ու ազդեցիկ քաղաքական մասնակցությունն առավելապես պայմանավորված է մեր երկրում կուսակցությունների՝ որպես քաղաքական սոցիալիզացիայի կարևորագույն օղակների, դերի բարձրացումով: Սրան կարող են նպաստել ինչպես ընտրական օրենսգրքում նախատեսված համամասնական (կուսակցական ցուցակներով) տեղերի ավելացումը, այնպես էլ գաղափարաքաղաքական հստակ ուղղվածություն ունեցող կուսակցությունների գործունեությունը, որի պարագայում առաջին պլան կմղվի կենսունակ գաղափարների ու քաղաքական ծրագրերի միջև պայքարը:

Պակաս կարևոր չէ նաև երիտասարդության ակտիվ մասնակցությունը ընտրական գործընթացներին: Ընդ որում պետք է նկատի ունենալ ոչ միայն քաղաքական ընտրությունների քվեարկության փուլին երիտասարդության մասնակցությունը, այլ նաև ընտրական գործընթացի կազմակերպմանն և կառավարմանը նրանց ակտիվ ներգրավումը (հանձնաժողովների անդամների կարգավիճակով, տարբեր դիտորդական առաքելություններին մասնակցությամբ, «Exit poll»-երի ներգրավմամբ և այլն):

Խիստ կարևոր է նաև մտավոր ու կազմակերպական բարձր ներուժով օժտված, քաղաքական լիդերի որակներ դրսևորող երիտասարդների ընդգրկումը կուսակցությունների համամասնական ցուցակների անցողիկ տեղերում: Անշուշտ, նման մոտեցումը, առավելապես պայմանավորված է թե գործող իշխանությունների, և թե ընդդիմության քաղաքական կամքով: Մի բան ակնհայտ է, որ նման հասարակական պահանջ մեր երկրում առկա է:

6.3 Երիտասարդական տեղեկատվություն

Ներածություն

Այսօրվա հասարակությունը բնութագրվում է շարունակաբար փոփոխվելու հսկայական արագացմամբ: Խիստ կերպով աճել են ինֆորմացիոն հոսքերը եւ անհատի համար հասանելի տվյալների հենքերի ծավալները: Ծայր աստիճան զարգացել են մարդու գիտակցության հետ “խաղալու” մանիպուլյացիոն մեթոդները (անհատի մակարդակում ինֆորմացիոն կուլտուրայի եւ ինֆորմացիոն անվտանգության շարունակական դեգրադացիայի ֆոնի վրա): Եթե ժամանակին

հարստության հիմնական աղբյուրներն էին հողը, արտադրական հզորությունները, նավթը, ապա այսօր առաջին տեղում է տեղեկատվությունը:

Երիտասարդ մարդու արժանավայել կյանքի ապահովումը այսօր անհնար է առանց տեղեկատվության եւ հաղորդակցության հասանելիության, եւ այս է պատճառը, որ Երիտասարդական Ազգային Քաղաքականության գնահատման թե՛ Եվրոպական եւ թե՛ միջազգային ինդիկատորների շարքում⁴⁵⁴⁶ այսօր կարելուրագույներից մեկն է համարվում Երիտասարդական տեղեկատվությունը: Տվյալ խնդրին է նվիրված նվիրված գեկույցի այս ենթագլուխը:

6.3.1 Երիտասարդության տեղեկացվածության մակարդակը

Մինչ Երիտասարդության տեղեկացվածության աստիճանի եւ տեղեկատվության տարբեր խնդիրների քննարկմանն անցնելը, անհրաժեշտ է նշել, որ այսօր Չայաստանում դեռեւս բացակայում է հատուկ երիտասարդությանն ուղղված եւ երիտասարդությանը հետաքրքրող թեմաներով տեղեկատվություն հավաքող, համակարգող եւ տրամադրող որեւէ ընդհանուր համակարգ: Այս ծառայությունը մատուցվում է տաբեր հասարակական կազմակերպությունների կողմից որոշակի փոքր թիրախ խմբերի համար, բուհերում կան տեղեկատվական ամսագրեր, ՀՀ Մշակույթի եւ Երիտասարդության հարցերի նախարարության կողմից 2004 թվականից լույս է ընծայվում “Նոր Չայացք” երկշաբաթաթերթը: Սակայն նշված տեղեկատվական միջոցները ծածկում են խիստ փոքր եւ սպեցիֆիկ թիրախ խումբ՝ այն է հիմնականում կազմակերպված երիտասարդությունը, որը չի կազմում ՀՀ երիտասարդության նույնիսկ մեկ տոկոսը:

Եթե Երեւանում կան թեկուզ եւ խիստ սահմանափակ, բայց որոշ չափով հասանելի տեղեկատվական աղբյուրներ, ապա մարզերում այս խնդիրը շատ ավելի լուրջ է: Այժմ ՀՀ Կառավարության կողմից նախաձեռնվել է մարզային երիտասարդական կենտրոնների ստեղծման ծրագիր և դրանց հիմնումը, ինչպես նաև 2006 թվականից ՀՀ Մշակույթի եւ Երիտասարդության հարցերի նախարարության կողմից ստեղծված «Անկախության սերունդ» հեռուստահաղորդումը (եթեր է տրվում երկշաբաթյա հաճախականությամբ) կարող են նպաստել այս խնդրի լուծմանը: Սակայն, անհայտորեն անհրաժեշտ է պետական եւ հասարակական սեկտորների համատեղ ուժերով մշակել եւ իրականացնել լայնամասշտաբ ծրագրեր երիտասարդությանը համապատասխան տեղեկատվություն տրամադրող Երիտասարդական Տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ:

⁴⁵ Basic indicators of a national youth policy. International Council of National Youth Policy, www.icnyp.net

⁴⁶ 11 Indicators of national youth policy. Presented by the Directorate of Youth and Sport of the Council of Europe during the launch of the National Action Plan for Youth Policy in Romania in 2001


Չեղարքրական է քննարկել, թե որո՞նք են այսօրվա երիտասարդի տեղեկատվության ստացման աղբյուրները, եւ որքանո՞վ են դրանք մատչելի: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ երիտասարդության Ազգային Ձեկույցի հարցման բոլոր բլոկներում էլ ներառված էր տեղեկատվական բլոկը, եւ ուսումնասիրելով այդ մասերում ստացված տվյալները, նույնպես կարելի է անել հետեւություն տեղեկատվության եւ տեղեկացվածության հանընդհանուր պակասի մասին:

Այսպես, այն հարցին, թե պետության կամ համայնքի կողմից երիտասարդ ընտանիքին տրվող աջակցության ի՞նչ հնարավորությունների մասին եք տեղեկացված, հարցվածների 95.1%-ը պատասխանել են, որ ընդհանրապես տեղեկացված չեն: Մասամբ տեղեկացվածության որոշակի մակարդակի մասին կարելի է խոսել ՄԻԱՎ/ՁԻԱՂ-ի եւ սեռավարակների ազդեցության վերաբերյալ հարցում, որտեղ հարցվածների ընդամենը 16%-ն է պատասխանել, որ տեղեկացված են, իսկ 31.6%-ը կամ տեղեկացված են մասամբ, կամ դժվարանում են պատասխանել, ինչը նույնպես խոսում է տեղեկացվածության ցածր աստիճանի մասին: Վատ է վիճակը նաեւ պետպատվերով եւ անվճար բուժօգնության վերաբերյալ տեղեկացվածության ոլորտում: Այստեղ հարցվածների միայն 31.7%-ն են տեղեկացված այս խնդրի շուրջ, իսկ հարցվածների 42.3%-ը տեղեկացված է մասամբ, կամ տեղեկացված չեն (26%):


Չեղարքրական է, որ բավականին դրական պատասխաններ են ստացվել ծխախոտի, թմրանյութերի եւ ալկոհոլի բացասական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության հարցում: Այստեղ հարցվածների 62.7%-ը (ծխախոտ), 61.1%-ը (թմրանյութ) եւ 62.1%-ը (ալկոհոլ) պատասխանել են, որ իրենք տեղեկացված են:

Տարօրինակորեն բարձր գնահատական է ստացվել նաեւ առողջության պահպանման և առողջ ապրելակերպի մասին երիտասարդության տեղեկացվածության մակարդակի վերաբերյալ հարցում: Այստեղ հարցվածների 74.8%-ը բավարարից գերազանց է գնահատել իրենց իմացության աստիճանը: Այս տվյալը համադրելով Խորհրդային Միության փլուզումից հետո առ այսօր բոլոր սպորտային խմբակների եւ ակումբների անմխիթար վիճակի հետ, եւ առողջ ապրելակերպ կիրարկող անձանց ակնհայտորեն ցածր տոկոսների հետ, կարող ենք հետեւություն կատարել այս ոլորտի վերաբերյալ նույնիսկ նվազագույն գիտելիքների ծավալի բացակայության մասին, որի պատճառով հարցվողները ի վիճակի չեն օբյեկտիվորեն գնահատել իրենց իմացության աստիճանը:

Չարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրներն են ՁԼՄ-ները: Մասնավորապես, առավելագույն տեկոսը հավաքել է հեռուստատեսությունը: Չարցվածների 89%-ը որպես տեղեկատվության աղբյուր նշել է հեռուստատեսությունը եւ 49%-ը՝ ռադիոն, իսկ 35.5-ը եւ 25.5%-ը համապատասխանաբար՝ գրքերը եւ մամուլը [նկար 1.]:




Պետք է ասել, որ երիտասարդների տեղեկատվության ստացման աղբյուրների մասն բաշխումը բավականին լուրջ անհանգստություն է առաջացնում, երբ դիտարկվում է հեռուստատեսության եւ ռադիոյի տեղեկատվական արժեքի եւ նրանց կողմից տարածվող արժեքային կողմնորոշումների եւ տեղեկատվության հավաստիության ցածր աստիճանի կոնտեքստում: Հատկապես անհանգստացնող հանգամանք է հեռուստատեսությամբ տարածվող բռնության եւ սեռական սանձարձակության անընդհատ քարոզչությունը, ինչպես նաեւ նորմալ կրթական ծրագրերի գրեթե համատարած բացակայությունը:



Մյուս կողմից երբ դիտարկվում է տեղեկատվական աղբյուրների մատչելիության խնդիրը [նկար 2.], ապա պարզ է դառնում, որ տեղեկատվական տեխնոլոգիաները պետական առաջնահերթություն հայտարարված երկրում, առաջին եւ ամենաբարձր տոկոս հավաքած “ամնատշելի” տեղեկատվական աղբյուրն է ինտերնետը: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մատչելիության ցածր աստիճանի մասին է խոսում նաեւ համակարգչային տեխնիկայից չօգտվողների հարաբերականորեն մեծ տոկոսը (60.6%):

Որպես անմատչելի տեղեկատվական աղբյուրներ են նշվել նաև կինոն և թատրոնը (հարցվածների 41%) և թանգարանները (48.9%): Թանգարանների անմատչելիության խնդիրը ամենայն հավանականությամբ կապված է կրկին անգամ մարզերի և Երեւանի տեղեկատվական ծառայությունների տեսանկյունից խիստ անհամաչափ զարգացման հետ: Չնայած իրենց



հարաբերականորեն էժան գների, թանգարանների մեծամասնությունը տեղաբաշխված լինելով Երեւանում, մեծամասամբ անմատչելի են մարզաբնակ երիտասարդության համար:

Հաջորդը ինքնակրթության աղբյուրների վերաբերյալ հարցերն էին և երիտասարդների կարիքները տեղեկատվական դաշտում: Այստեղ նույնպես [նկար 3.] տեղեկատվության աղբյուրների տեսանկյունից գրանցվում է նույն օրինաչափությունը, որը գրանցված էր տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրների ուսումնասիրման ժամանակ: Գերիշխող տեղ են գրավում հեռուստատեսությունը և ռադիոն, որոնք հարցվածների համապատասխանաբար 43.1%-ի և 86.5%-ի կարծիքով կարելի է նշել որպես ինքնակրթման աղբյուր: Ուրախալի է, որ հանրային գրադարանների զանգվածային փակման ֆոնի վրա, հրացվածների 56.3%-ը այնուամենայնիվ ինքնակրթության միջոցների մեջ նշել է գրքերը և ամսագրերը:

Ամփոփելով պետք է նշել, որ երիտասարդական տեղեկատվության համակարգի բացակայության պայմաններում երկրում նրա փոխարինողն են դառնում ՁԼՄ-ները, որը խիստ կոժվարացնի համակարգված պետական երիտասարդական քաղաքականության վարումը:

Մինչդեռ, երբ դիտարկում ենք երիտասարդների տեղեկատվական պահանջները [Աղյուսակ 1], ապա պարզ է դառնում, որ երկիտասարդությունը ունի հստակ կերպով գիտակցված կարիքներ, իրավական (32.6%), մշակութային (28.2%), առողջապահական (19.4%), կրթական (18.6%) և գիտական (13.1%) ոլորտներում, որոնց տրամադրումը կարող է դառնալ մշակված երիտասարդական տեղեկատվական համակարգի խնդիրը:

Աղյուսակ 1. Երիտասարդների տեղեկատվական կարիքները.

| Ի՞նչ բնույթի տեղեկատվության կարիք ունեք | |
|--|-------------|
| 1.Իրավական | 32.6 |
| 2.Առողջապահական | 19.4 |
| 3.Քաղաքական | 6.4 |
| 4.Գիտական | 13.1 |
| 5.Մշակութային | 28.2 |
| 6.Կրթական | 18.6 |
| 7.Բոլորից | 1.8 |
| 8.Տնտեսական. քիզնեսի մասին | 0.4 |
| 98.Չունենմ | 5.4 |
| 99.Դժ. պատ | 1.2 |

Անփոփում

Ընդհանրացնելով վերը նշված տեղեկատվությունը կարելի է նաեւ հետեւյալ հետեւությունները.

ա. Հայաստանի երիտասարդությունը կարիք ունի հստակ կերպով մշակված եւ պետական աջակցություն ունեցող երիտասարդական տեղեկատվական համակարգի:

բ. Երկրում կաղում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները երիտասարդների համար հասանելի դարձնելու ոլորտը:

գ. Հաշվի առնելով ՁԼՄ-ների հսկայական դերը, որը երեւում է հարցման բոլոր բլոկներում, ցանկալի է մշակել այս լրատվամիջոցները առավել արդյունավետ օգտագործելու, դրանց կրթական առժեքն ավելացնելու եւ վնասակար ազդեցությունը մինիմիզացնելունն ուղղմած միջոցառումներ:

դ. Հաշվի առնելով մարզերի եւ Երեւանի ասսիմետրիկ զարգացումը, հատուկ ուշադրություն պետք է դարձվի մարզաբնակ երիտասարդների տեղեկատվական ապահովման վրա:

6.4 Գենդերային խնդիրներ

Ներածություն

Գենդերային իրավիճակի ընդհանրական վերլուծությունը միջազգային հանրությանը ներկայացվել է ՄԱԿ-ի 1995թ. կանանց դրության վերաբերյալ Պեկինյան չորրորդ խորհրդաժողովում, որտեղ ձևակերպվել են գենդերային հիմնահարցերը և առաջիկա գործողությունների ծրագրերը: Ընդունված բանաձևերի իրագործման ընթացքի մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ զարգացող երկրներում, այդ թվում և Հայաստանում, առկա գենդերային անհավասարությունը դանդաղեցնում է տնտեսական աճը և աղքատության կրճատման գործընթացը, և այն ակնհայտ շեշտադրված բնույթ է կրում ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսություններում:

Նպատակաուղղված լինելով ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով ամրագրված կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի համաձայնագրի (Հայաստանը վավերացրել է 1993թ.) կատարմանը՝ ՀՀ կառավարությունն հաստատել է Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը⁴⁷:

2004 թ. Կառավարությունն հաստատեց «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004 – 2010թթ. ազգային ծրագիրը»⁴⁸:

Ծրագիրը նպատակաուղղված է տարբեր միջազգային փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը և նպաստելու է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանը՝ որպես ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն կառուցելու և քաղաքացիական հասարակություն կերտելու նախապայման:

6.4.1 Գենդերային ասպեկտներ

Զնայած Հայաստանի բնակչության 50%-ից ավելին, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների 60%-ից ավելին կանայք են, սակայն հատկապես քաղաքական մակարդակում որոշումների կայացման գործընթացում կանայք գրեթե կշիռ չունեն: Այսպես, վերջին ընտրությունների արդյունքում ձևավորված ԱԺ-երում կանայք կազմել են ոչ ավել քան 5%: Սահմանափակ է եղել ղեկավար կանանց թիվը նաև գործադիր իշխանության մարմիններում՝ լավագույն դեպքում ունեցել ենք միայն 1 կին նախարար: Նմանատիպ պատկեր է նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Կանանց և տղամարդկանց հավասարաչափ մասնակցությունն առկա է կառավարման միջին օղակներում: Կանանց թվի գերակշռություն է նկատվում , մասնավորապես, կրթության, առողջապահության, մշակույթի և սպասարկման ոլորտներում:

Հարցման արդյունքները մեզ կարող են հուշել, որ երիտասարդ սերնդի մակարդակում կին ղեկավարի /նշանակվող կամ ընտրվող/ նկատմամբ վստահությունն ավելի մեծ է՝ համեմատած հայաստանյան հասարակական հարաբերություններում առկա իրավիճակի հետ: Այսպես, 16–30 տարեկանների 33.8%-ը կընտրեր կին համայնքի ղեկավար, 39.7%-ը կընտրեր ՀՀ կին Նախագահ, 46.5%-ը կընտրեր կին պատգամավոր, իսկ 55.2%-ը սեփական աշխատավայրում իր անմիջական ղեկավար կընտրեր կնոջ:


⁴⁷ ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 26-ի թիվ 406 որոշում:

⁴⁸ ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի թիվ 645 որոշում:

Սակայն վերը բերված թվերը կարող են միայն համեստ լավատեսության առիթ հանդիսանալ: Հայաստանի կազմակերպված երիտասարդության, որին կարելի է համարել այսօրվա «երիտասարդական իշխանություն», և որտեղ կայացվում են ոլորտի հիմնական որոշումները, կազմում կանայք են միայն առաջնորդների 17.5%-ը:⁴⁹

Մինչդեռ, ըստ նույն հետազոտության⁴⁹ արդյունքների, կազմակերպված երիտասարդության ներկայացուցիչների կեսից ավելին կանայք են:

Կազմակերպված երիտասարդության և երիտասարդ առաջնորդների գենդերային կազմը.



Այլ

ասպեկտ. Հայաստանում տնտեսության բոլոր բնագավառներում կանանց և տղամարդկանց գործունեության հավասար իրավունքներն ամրագրված են օրենսդրությամբ, սակայն այսօր կանանց ֆինանսա-տնտեսական գործունեությունը հիմնականում սահմանափակվում է մանրածախ առևտրով և փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ: Այսօր գրանցված գործազուրկների ընդհանուր թվում կանայք կազմում են մոտ 2/3-ը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել ծանր սոցիալ-տնտեսական վիճակում գտնվում են բազմազավակ և կանանց կողմից գլխավորվող ընտանիքները: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, օրինակ, տնային տնտեսություններում գլխավորը կին է 28,2%:⁵⁰

Տնային տնտեսություններն ըստ գլխավորի սեռի՝ տոկոսներով.

| | Կին | տղամարդ |
|----------|------|---------|
| քաղաք | 30.7 | 69.3 |
| գյուղ | 24.3 | 75.7 |
| ընդամենը | 28.2 | 71.8 |

Դեռևս չլուծված խնդիր է կանանց եկամուտների ցածր մակարդակը:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ Հայաստանում սովորողների ընդգրկվածության առումով սեռային որևէ խտրականություն չկա: Հատկանշական է նաև, որ տարրական կրթության ոլորտում հավասար ընդգրկվածության ավանդույթները Հայաստանում գալիս են դեռևս 19-րդ դարից: Եթե հիմնական կրթության ոլորտում (1-8-րդ դասարաններ) տղաների և աղջիկների թիվը


⁴⁹ Ա. Մխիթարյան, «Կազմակերպված երիտասարդության դերը հասարակական նոր հարաբերությունների ձևավորման գործընթացում»; «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Հայաստան» տեղեկագիր թ1(3), 2005, Երևան:

⁵⁰ ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ, Երևան, 2004թ.:

գրեթե հավասար է, ապա ավագ դպրոցում աղջիկները կազմում են սովորողների շուրջ 51,8%-ը: Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում կանայք կազմում են արդեն մոտ 66%, իսկ բարձրագույն (պետական և ոչ պետական) ուսումնական հաստատություններում կանանց տեսակարար կշիռը 49,7% է: Ինչ վերաբերվում է հետբուհական կրթական համակարգում կանանց ավելի փոքր թվին՝ 34,2%, ապա դա հիմնականում պայմանավորված է ասպիրանտուրայում սովորող տղամարդկանց թվով՝ շուրջ 65,9%, մինչդեռ մագիստրատուրայում ավելի բարձր է կանանց տեսակարար կշիռը՝ 51,9%:

Հետաքրքիր է նաև սեռային բաշխվածությունն ըստ տարբեր մասնագիտությունների. ստորև բերված են ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի վիճակագրության ուշագրավ տվյալներ:

Բարձրագույն պետական մասնագիտական կրթության ուսանողների բաշխվածությունն ըստ մասնագիտական ուսուցման, 2003/2004թթ, տոկոսներով.




1-մանկավարժություն, 2-արվեստ, 3-առողջապահություն, 4-իրավագիտություն, 5-տնտեսագիտություն, 6-գյուղատնտեսություն, 7-արդյունաբերություն և շինարարություն, 8-այլ (աղջիկների ընդհանուր թիվը՝ 26872, տղաներինը՝ 27192)

Վերջին տասնամյակում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխություններն իրենց հետքն են թողել երիտասարդ կանանց վիճակի վրա. գլուխ բարձրացրեցին սոցիալական հիվանդությունները, վատացավ վերարտադրողական առողջությունը: Տագնապային է ժողովրդագրական վիճակը. երկու անգամ կրճատվել է ծնելիությունը և ութ անգամ բնական աճը:

Այսօր հանրապետությունում առկա և ուշադրություն պահանջող խնդիրներից է տարբեր բնույթի բռնությունների դեպքերը և հարկադրանքի միջոցով կանանց մի շարք իրավունքների ու ազատությունների սահմանափակման հարցերը: Կարևոր պատճառներից կարելի է առանձնացնել դեռահասների և երիտասարդության բարոյասեռական դաստիարակության արդյունավետ համակարգի բացակայությունը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների 24%-ի կարծիքով մեր երկրում կանանց նկատմամբ խտրականություն գոյություն ունի, իսկ ևս 17%-ը կարծում է, թե կանայք Հայաստանում մասամբ են խտրականության ենթարկվում:

Ըստ Ձեզ մեր երկրում կանանց նկատմամբ գոյություն ունի՞ խտրականություն.



Ընդ որում պետք է նշել, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը կարծում է, որ Հայաստանում կանայք ենթարկվում են հոգեբանական ճնշման (80,6%): Հայ երիտասարդների 7,1%-ի կարծիքով կանանց նկատմամբ խտրականությունը կարող է արտահայտվել ֆիզիկական բռնության, իսկ 3,3%-ի կարծիքով՝ սեռական բռնության ձևերով:

Դժվար է ճշգրիտ գնահատել կանանց նկատմամբ բռնությունների մակարդակը, քանզի մեր երկրում դեպքերի մեծամասնության մասին տեղեկությունները դուրս չեն գալիս ընտանիքի սահմաններից, պարզապես ոչ մի տեղ չեն գրանցվում: Նշենք միայն, որ ՀՀ ոստիկանության կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, օրինակ, որ 2001–2003թթ. հանրապետությունում ակնհայտ բռնությունների զոհ են դարձել համապատասխանաբար 52, 51 և 55 կին:

Հայաստանի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկում նաև կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիկինգի երևույթի վերացման ուղղությամբ: Մշակվել է ՀՀ-ից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի կանխման միջոցառումների ազգային ծրագիր⁵¹:

Ամփոփում

Ներկայումս հանրապետությունում կանանց հիմնախնդիրներով զբաղվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության կազմակերպման վարչության մոր և մանկան առողջության պահպանման բաժինը: 2000թ. ստեղծվել է ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդ, որը գործում է հասարակական հիմունքներով և խորհրդակցական բնույթ ունի:

Հարկ է նշել, որ Հայաստանի պետական երիտասարդական քաղաքականությունը իր մեջ պետք է ներառի բավականաչափ ռեսուրսներ, արդեն գոյություն ունեցող կառույցներին զուգահեռ, երիտասարդ սերնդի մակարդակում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար:

⁵¹ ՀՀ կառավարության 2004թ. թիվ 58-Ն որոշում:

ԳԼՈՒԽ VII

ԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Ներածություն

Ձեկույցի այս գլուխը նվիրված է երիտասարդության իրավական ոլորտի իրավիճակի և խնդիրների ներկայացմանը: Իրավական ոլորտ գլխի մեջ ներառված են իրավական դաշտ, իրավական իրազեկություն և իրավունքների պաշտպանություն և քրեական արդարադատություն ենթագլուխները:

Ձեկույցի իրավական դաշտ ենթագլխում ներկայացված են քաղաքացիության, քաղաքացիական, կրթության, աշխատանքի, ընտանեկան, զինապարտության, այլընտրանքային ծառայության, ընտրական և ոչ կառավարական կազմակերպություններին ու կուսակցություններին անդամակցության հարաբերությունների բնագավառներում երիտասարդության իրավունքներն ու պարտականությունները:

Ձեկույցի իրավական իրազեկություն և իրավունքների պաշտպանություն ենթագլուխը նվիրված է երիտասարդության իրավական իրազեկության և իրավունքների պաշտպանության բնագավառներում առկա հիմնախնդիրների վեր հանմանը և կատարված աշխատանքների ներկայացմանը:

Ձեկույցի քրեական արդարադատություն ենթագլուխը նվիրված է ՀՀ դատական համակարգի, ինչպես նաև երիտասարդության շրջանում տիրող քրեական իրավիճակի և թրաֆիկինգի ամփոփ ներկայացմանը:


7.1 Իրավական դաշտ

Ներածություն

Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի⁵² համաձայն՝ պետական երիտասարդական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է հանդիսանում երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի ստեղծումը: Այս առնչությամբ պետք է արձանագրել, որ ներկա ժամանակաշրջանում ՀՀ-ում դեռևս ընդունված չէ երիտասարդության ոլորտը կարգավորող առանձին օրենք, ինչը հնարավորություն կտա համակարգված կարգավորման ենթարկել նշված բնագավառի իրավահարաբերությունները: Ներկայումս մշակված է «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունման պահանջը վաղուց արդեն հասունացել է: Այս ամենը հիմնավորվում է նաև սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով: Մասնավորապես, հետազոտության


⁵². «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ» կառավարության որոշում, ընդունվել է 14.12.1998թ.-ին:

ընթացքում տրված «Ի՞նչ եք կարծում. երիտասարդության մասին պե՞տք է ընդունել առանձին օրենք» հարցին հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.



Վերը նշված հարցի վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդության մասին օրենքի ընդունումը առավել շատ կարևորում է հարցվող երիտասարդների 25-ից 30 տարեկանների խումբը՝ 67.9%, առավել քիչ՝ 16-ից 18 տարեկանների խումբը՝ 64.8% և 18-ից 25 տարեկանների խումբը՝ 61.2%։ Նման օրենքի ընդունումը առավել շատ կարևորում են արական սեռի ներկայացուցիչները՝ 68.6%, առավել քիչ իգական սեռի ներկայացուցիչները՝ 61.4%։ Երիտասարդության մասին օրենքի ընդունումը առավել շատ կարևորում են ՀՀ մարզերի քաղաքային բնակավայրերի երիտասարդները՝ 71.9%, ավելի քիչ ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի երիտասարդները՝ 61.4% և ՀՀ մայրաքաղաք Երևանի երիտասարդները՝ 59.7%։ Ըստ ՀՀ մարզերի՝ երիտասարդության մասին օրենքի ընդունումը առավել շատ կարևորում են ՀՀ Լոռու մարզի երիտասարդները՝ 82.7% և Շիրակի մարզի երիտասարդները՝ 78.1%, իսկ նման օրենք չեն ցանկանում, որ ընդունվի ՀՀ Սյունիքի մարզի երիտասարդները՝ 26.0% և Արմավիրի մարզի երիտասարդները՝ 20.9%։

Հետազոտության ընթացքում տրված «Ըստ Ձեզ ո՞ր ամենակարևոր հարցը պետք է կարգավորվի երիտասարդության մասին օրենքով» հարցին տրվել են հետևյալ պատասխանները.



Վերը նշված հարցի վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդներին հիմնականում հուզում են աշխատանքային և կրթության բնագավառի իրավահարաբերությունները և երիտասարդների իրավունքների պաշտպանության խնդիրները։

Ձեկույցի այս մասում կներկայացվեն երիտասարդության որոշ իրավունքներ ու պարտականություններ, որոնք առանձնահատուկ են հատկապես երիտասարդների համար: Խոսքը վերաբերում է երիտասարդների քաղաքացիության, քաղաքացիական, կրթության, աշխատանքի, ընտանեկան, զինապարտության, այլընտրանքային ծառայության, ընտրական և ոչ կառավարական կազմակերպություններին ու կուսակցություններին անդամակցության հարաբերությունների բնագավառներում երիտասարդության իրավունքներին և պարտականություններին:

7.1.1 Երիտասարդության քաղաքացիության իրավական կարգավորումը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, մինչև 16 տարին լրանալը՝ ծննդյան վկայականը, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը: «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքը⁵³ հստակ սահմանում է ՀՀ քաղաքացիության ձեռք բերման հիմքերն ու կարգը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ կարող է դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե նա, օրենքով սահմանված կարգով, վերջին երեք տարիներին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կարող է բացատրվել հայերեն լեզվով և ծանոթ է Հայաստանի Հանրապետության

Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

ՀՀ Սահմանադրության⁵⁴ մեջ կատարված փոփոխությունների շնորհիվ, որոնք հանրաքվեի միջոցով ընդունվեցին 27.11.2005թ.-ին, սահմանվեց նաև երկքաղաքացիության ինստիտուտի վերաբերյալ դրույթ, ըստ որի, երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվելու են օրենքով:

7.1.2 Քաղաքացիական իրավահարաբերություններ

Ինչպես հայտնի է՝ քաղաքացին կարող է քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցել միայն այն դեպքում, եթե օժտված է քաղաքացիական իրավունակությամբ և գործունակությամբ:

Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է նրա մահվամբ: Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ 18 տարեկան դառնալու պահից:

Այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է

⁵³. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 06.11.1995թ.-ին:
⁵⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 27.11.2005թ.-ի հանրաքվեով:

ամուսնանալ մինչև 18 տարեկան դառնալը, քաղաքացին լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից: Ամուսնության հետևանքով ձեռք բերված գործունակությունը լրիվ ծավալով պահպանվում է նաև մինչև 18 տարեկան դառնալն ամուսնալուծվելուց հետո: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասները, առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության, իրավունք ունեն՝

- տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները,
- իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ,
- օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք,
- կնքել կենցաղային մանր գործարքներ, օրենքով նախատեսված այլ գործարքներ և այլն⁵⁵:

7.1.3 Կրթություն բնագավառի իրավահարաբերություններ

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ հետևյալ կրթական ծրագրերով.

1. բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով՝
 - բակալավրի
 - մագիստրոսի (կլինիկական օրդինատորի)
 - դիպլոմավորված մասնագետի
2. հետբուհական մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝

⁵⁵ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ.-ին:

- հետազոտողի
- 3. լրացուցիչ կրթական ծրագրերով՝
 - վերապատրաստման,
 - մասնագետների որակավորման բարձրացման⁵⁶:

7.1.4 Աշխատանքի բնագավառի իրավահարաբերություններ

Երիտասարդների աշխատանքային իրավունքները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ աշխատանքային օրենսգիրքը⁵⁷: ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրության, արդարացի և պետության կողմից սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների, ինչպես նաև հանգստի իրավունք: Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը նշանակում է, որ յուրաքանչյուրն ազատորեն ընտրում է իր մասնագիտությունը և զբաղմունքի տեսակը: Աշխատանքի ազատությունը բացառում է հարկադիր աշխատանքը:

Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Աշխատանքային իրավունակությունը և իր գործողություններով աշխատանքային իրավունքներ ձեռք

Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Աշխատաժամանակի կրճատ տևողությունը 18 տարեկան աշխատողների համար սահմանվում է շաբաթական 36 ժամ:

բերելու և իրականացնելու, իր համար աշխատանքային պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (աշխատանքային գործունակություն) ՀՀ-ում լրիվ ծավալով ծագում է տասնվեց տարեկան դառնալու պահից: Մինչև 18 տարեկան անձինք չեն կարող ներգրավվել կատարելու՝

- ծանր աշխատանքներ,
- թունավոր, քաղցկեղային կամ առողջության համար վտանգավոր գործոնների ազդեցությամբ արտադրություններում աշխատանքներ,
- աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ հնարավոր է իոնացած ճառագայթման ազդեցությունը,
- աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ առկա է դժբախտ պատահարների կամ մասնագիտական հիվանդություններով հիվանդանալու մեծ հավանականություն, ինչպես նաև աշխատանքներ, որոնց անվտանգ իրականացումը պահանջում է բարձր զգոնություն կամ փորձառություն:

⁵⁶ «Կրթության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 14.04.1999թ.-ին:

⁵⁷ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004թ.-ին:

Հղի և մինչև 1 տարեկան երեխա խնամող կանանց չի թույլատրվում ներգրավել մոր և մանկան առողջության վրա բացասական ազդեցություն ունեցող վնասակար պայմաններով և վտանգավոր գործոններով աշխատանքների կատարմանը:

7.1.5 Ընտանեկան բնագավառի իրավահարաբերություններ

Ընտանեկան հարաբերություններում երիտասարդների իրավունքները կարգավորում է ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը⁵⁸:

Ամուսնացող անձինք ամուսնացողներից մեկի բնակության վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին են ներկայացնում ամուսնության համատեղ գրավոր դիմում, որի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը տալիս է ամուսնության պետական գրանցման վկայական:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է նաև ՀՀ-ում ամուսնալուծության կարգն ու պայմանները: Ամուսնալուծությունը ընտանեկան օրենսգրքով նախատեսված

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ կանանց համար՝ տասնյոթ, իսկ տղամարդկանց համար՝ տասնութ տարեկանի հասնելը:

դեպքերում կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, ինչպես նաև դատական կարգով:

Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները լուծում են համատեղ՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից:

Ընտանեկան հարաբերություններում երիտասարդների կարևոր իրավունքներից է նաև իր անունը, ազգանունը և հայրանունը փոխելու իրավունքը: 16 տարին լրացած անձն իրավունք ունի սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը և ազգանունը: 16-ից 18 տարեկան անձը իր անվան փոփոխումը կատարում է ծնողների, որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի) գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, բացառությամբ մինչև նրա՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչվելու դեպքերի:

7.1.6 Ձինվորական եւ այլընտրանքային ծառայության բնագավառի իրավահարաբերություններ

Ձինվորական և այլընտրանքային ծառայության բնագավառի հարաբերությունները կարգավորվում են «Ձինապարտության մասին⁵⁹» և «Այլընտրանքային ծառայության մասին⁶⁰» ՀՀ օրենքներով:

⁵⁸ ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004թ.-ին:

1990թ. Հայաստանի անկախության և ինքնիշխանության կայացման գործընթացում առանցքային դերակատարում է ունեցել Ազգային բանակի ստեղծմանն ու կայացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, որոնք պայմանավորված էին ԽՍՀՄ-ի տոտալիտար համակարգում առկա քաղաքական անորոշությամբ: Պարտադրված պատերազմական իրավիճակը Հայաստանի սահմանամերձ հատվածներում և Լեռնային Ղարաբաղում ստիպեցին նորանկախ պետության ղեկավարությանը ձևավորել արդյունավետ պաշտպանության և զինվորական ծառայության համակարգ: Բանակը Հայաստանի ամենամեծ «երիտասարդական կազմակերպությունն է», ինչով էլ գլխավորապես պայմանավորված այն հանգամանքը, որ երիտասարդության շրջանում բավականին մեծ է վստահությունն ու ուշադրությունը բանակի նկատմամբ: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն, հարցվողները պետական կառույցներից ամենաշատը 43,4% վստահում են բանակին և ամենացածրն է բանակին չվստահողների թիվը: Միաժամանակ հարցվածների զգալի մասը՝ 76,8% կողմ է պրոֆեսիոնալ բանակի գաղափարին, ինչը նույնպես վկայում է բանակի նկատմամբ երիտասարդության ուշադրության մասին:

Չնայած այն հանգամանքին, որ 1990թ.-ի օգոստոսի 23-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագրով⁶¹, 1991թ.-ի հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության և կրոնական

Ձինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է: Ձինծառայող են համարվում զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիներն ու ռազմաուսմանական հաստատությունների կուրսանտները:

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով⁶², ինչպես նաև 1995թ.-ի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ⁶³ (հոդված 15, 23, 48) ամրագրվել էին մտքի, խղճի և դավանանքի ազատություն իրավունքը, այնուամենայնիվ՝ պարտադիր զինվորական ծառայության և կրոնական դավանանքի ու հանոգմունքների փոխհարաբերության հակասականությունը պահպանվել էր մինչև 2004թ.-ը:

1998թ.-ին սեպտեմբերի 16-ին ընդունված «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստումը, զորակոչը, զինվորական ծառայությունը, պահեստազորում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերություններ: Հիշյալ օրենքի համաձայն Հայաստանում զինվորական հաշվառման նախազորակոչային տարիք է սահմանված 16-18 տարեկան, իսկ զորակոչային՝ 18-27 տարեկան:

⁵⁹ «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.09.1998թ.-ին:

⁶⁰ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 17.12.2003թ.-ին:

⁶¹ «Հայաստանի անկախության մասին» հռչակագիր, ընդունվել է 23.08.1990թ.-ին:

⁶² «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 17.06.1995թ.-ին:

⁶³ ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 05.06.1995թ.-ի հանրաքվեով:

Սակայն պարտադիր զինվորական ծառայության կարգավարմանը զուգընթաց առաջացավ զորակոչային տարիքի երիտասարդության իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդիր, որը պայմանավորված էր հայ

Այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է և չունի պատժի, անձի պատվի և արժանապատվության նվաստացման բնույթ:

երիտասարդության համար նոր երևույթներով, որոնցից էր նաև այլընտրանքային ծառայության պահանջը: Այլընտրանքային ծառայության հետ կապված հիմնահարցերը կարգավորվեցին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի հիմնական խնդիրն է կարգավորել Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանել այլընտրանքային ծառայության զորակոչ կազմակերպելու և անցկացնելու կարգը: Ըստ այդ օրենքի՝ այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

- ա) այլընտրանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն,
- բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

Այլընտրանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը: Հիմնական խնդիրն այլընտրանքային ծառայության ոլորտում կապված է ծառայության ժամկետների հետ, մասնավորապես «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետ է սահմանվում 36 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության՝ 42 ամիս: Սոցիոլոգիական հետազոտության մասնակիցների 35%-ը բացասաբար է վերաբերվում այլընտրանքային ծառայությանը, 33,3%-ը ունի չեզոք և միայն 15,9%-ը դրական վերաբերմունք: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ այլընտրանքային ծառայության դերն ու նշանակությունը դեռևս համարժեքորեն չի ընկալվում երիտասարդության կողմից:

7.1.7 Ընտրական բնագավառի իրավահարաբերություններ

Ընտրական բնագավառի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտրական օրենսգրքով⁶⁴:

Համայնքի ղեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, իսկ ավագանու անդամ՝ 21 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունեցող, ՀՀ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի: Տեղական

Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ:

ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ՀՀ ընտրական օրենսգրքով ՀՀ քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված՝ ընտրական իրավունքով օժտված անձանց վրա:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: ՀՀ Ազգային ժողովը ընտրվում է հինգ տարի ժամկետով և կազմված է հարյուր երեսունմեկ պատգամավորից:

7.1.8 Հասարակական կազմակերպություններին և կուսակցություններին երիտասարդների անդամակցության բնագավառի իրավահարաբերություններ

Հասարակական կազմակերպություններին և կուսակցություններին երիտասարդների անդամակցության բնագավառի հարաբերությունները կարգավորվում են «Հասարակական կազմակերպությունների մասին⁶⁵» և «Կուսակցությունների մասին⁶⁶» ՀՀ

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, հասարակական կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Կուսակցության անդամներ կարող են լինել 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

օրենքներով: Հասարակական կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել անչափահաս անդամների իրավունքների ու պարտականությունների առանձնահատկությունները: Եթե հասարակական կազմակերպություն հիմնադրել ցանկացող տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, ապա պայմանագիրը կնքում է իր օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

⁶⁴ ՀՀ ընտրական օրենսգրք, ընդունվել է 05.02.1999թ.-ին:
⁶⁵ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 04.12.2001թ.-ին:
⁶⁶ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 03.07.2002թ.-ին:

Ամփոփում

Ամփոփելով պետք է նշել, որ այսօր երիտասարդության համար Հայաստանում ունենք բավական բարենպաստ իրավական դաշտ, չնայած նրան, որ դեռևս չի ընդունվել երիտասարդության մասին առանձին օրենք: Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ներկայումս անհրաժեշտ է ընդունել «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, որի նախագիծը արդեն երկար ժամանակ շրջանառության մեջ է: Եվ այս ուղղությամբ նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է բարձրացնել երիտասարդության հարցերով զբաղվող համապատասխան պետական մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցության մակարդակը:

7.2 Իրավական իրազեկություն և իրավունքների պաշտպանություն

Ներածություն


Հայաստանում վերջին տարիների ընթացքում իրականացվող դատաիրավական ռեֆորմները և բարենպաստ իրավական դաշտը, թվում էր թե լուրջ նախապայմաններ կստեղծեն երիտասարդության իրավական իրազեկության մակարդակի բարձրացման ու երիտասարդության իրավունքների պաշտպանության առումով: Սակայն վերը նշված դաշտի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս առումով թեև պետական համապատասխան մարմինների, երիտասարդական հասարակական և ուսանողական կազմակերպությունների կողմից որոշակի աշխատանքներ կատարվում են, սակայն Հայաստանում երիտասարդության իրավական իրազեկության մակարդակը և երիտասարդության իրավունքների պաշտպանության ընդհանուր պատկերը դեռևս չի կարելի բավարար համարել:

7.2.1 Իրավական իրազեկություն

Անդրադառնալով երիտասարդության իրավական իրազեկության ներկա մակարդակին, պետք է նշել, որ վերջին տարիների ընթացքում լիարժեք կերպով չի իրականացվել երիտասարդության իրավական իրազեկության մակարդակի բարձրացմանը ուղղված համակարգված, մատչելի պետական և/կամ ոչ կառավարական ծրագիր: Այդ պատճառով իր իրավունքների վերաբերյալ երիտասարդության իրազեկության մակարդակը մնում է բավական ցածր: Երիտասարդության մեծամասնությունը ինչպես տեղյակ չէ մարդու հիմնարար իրավունքներին և դրանց պաշտպանության մեխանիզմներին, այնպես էլ տեղյակ չէ իր առօրյա իրավունքներին ու դրանց պաշտպանության մեխանիզմներին, քանի որ ինչպես արդեն նշվեց Հայաստանում գրեթե չի պատրաստվում մատչելի տեղեկատվություն ինչպես մարդու հիմնարար իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների, այնպես էլ երիտասարդության առօրյա

իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ և այդ տեղեկատվությունը չի հասցվում երիտասարդության լայն շերտերին:


Այս ամենը հիմնավորվում է նաև սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով: Դետազոտության ընթացքում տրված «Արդյո՞ք Դուք ծանոթ եք մարդու սահմանադրական և այլ իրավունքներին» հարցին հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.



Վերը նշված հարցի ըստ հարցվողների սեռերի, տարիքային խմբերի, քաղաքային ու գյուղական բնակավայրերի և ԶԶ մարզերի բնակվող երիտասարդության վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ ամփոփ պատկերը.


Ըստ սեռերի.

Ըստ սեռերի վիճակագրական տվյալների մարդու սահմանադրական և այլ իրավունքներին առավել իրազեկ են արական սեռի ներկայացուցիչները, քան իգական սեռի ներկայացուցիչները:




Ըստ տարիքային խմբերի.

Ըստ տարիքային խմբերի վիճակագրական տվյալների մարդու սահմանադրական և այլ իրավունքներին առավել իրազեկ են հարցվող երիտասարդների 20-ից 25 տարեկանների խումբը, առավել քիչ՝ 16-ից 18 տարեկանների և 25-ից 30 տարեկանների խմբերը:



Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի երիտասարդության.

Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի երիտասարդության մարդու սահմանադրական և այլ իրավունքներին առավել իրազեկ են ՀՀ մայրաքաղաք Երևանի, ավելի քիչ ՀՀ մարզերի գյուղական և քաղաքային բնակավայրերի երիտասարդները:



Հետազոտության ընթացքում տրված «Ի՞նչ բնույթի տեղեկատվության կարիք ունեք» հարցին հարցվողների 32.6%-ը պատասխանել են «իրավական», որը կազմել է այս հարցի պատասխանների ամենամեծ տոկոսը: Ըստ հարցվողների տեղեկատվություն ստանալու իրենց հիմնական աղբյուրներն են հանդիսանում հեռուստատեսությունը, ռադիոն, գրականությունը, մամուլը, տեղեկատվական թերթիկները և ինտերնետը:

Այս ամենը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ այսօր երիտասարդությունը կարիք ունի ստանալ մատչելի իրավական տեղեկատվություն իր սահմանադրական և առօրյա իրավունքների, ինչպես նաև դրանց պաշտպանության մեխանիզմների մասին:

Խոսելով բնակչության, այդ թվում երիտասարդության իրավական իրազեկության վերաբերյալ վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացված աշխատանքների մասին պետք է նշել, որ այդ աշխատանքները կատարվել են և՛ պետության, և՛ քաղաքացիական հասարակության կողմից: Կատարված աշխատանքներից կարելի է առանձնացնել մի քանիսը.

| |
|---|
| Իրազեկ և իր իրավունքների պաշտպանությունը երիտասարդությունը և քաղաքացիական հիմնական հենասյունն ու գրավականն է: |
|---|

Հեռուստա և ռադիո հաղորդումներ.

Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ 2004թ.-ի վերջից հեռարձակվում է «Իմ իրավունքը» հեռուստածրագիրը⁶⁷: Հայաստանի հանրային ռադիոընկերությունը նույնպես ունի իրավաբանական բնույթի ռադիոհաղորդաշար:

Այս ուղղությամբ աշխատանքներ են կատարվել նաև քաղաքացիական հասարակության կողմից, մասնավորապես «Ֆեմիդա» ՀԿ-ն մի քանի տարի շարունակ հեռարձակում է դատական նիստերի լուսաբանմանը ուղղված հեռուստածրագիր, Նմանատիպ գործունեություն իրականացրել են այլ ՀԿ-ներ նույնպես: Այստեղ պետք է ավելացնել, որ որոշ հեռուստաընկերություններ նույնպես պատրաստում և հեռարձակում են իրավաբանական բնույթի հեռուստահաղորդումներ, օրինակ՝ «Արմենակոր» և «Երկիր Մեդիա» մասնավոր հեռուստաընկերությունները:

ՀՀ օրենսդրության էլեկտրոնային տարբերակ.

«Դատաիրավական բարեփոխումների ծրագրի» շրջանակներում պատրաստվել և 2006թ.-ի սկզբից ինտերնետ համացանցում է տեղադրվել ՀՀ օրենսդրության էլեկտրոնային՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը⁶⁸: ՀՀ Ազգային ժողովի և Կառավարության վեբ կայքերում արդեն մոտ մեկ տարի է ինչ պարբերաբար տեղադրվում են իրենց կողմից ընդունված օրենքներն և որոշումները, ինչպես նաև օրենքների նախագծերը: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի շարք ՀԿ-ները իրենց շահառու սոցիալապես անապահով երիտասարդներին և ուսանողներին անվճար հիմունքներով տրամադրում են իրավական ակտերը կամ դրանց որոշ մասը՝ տպագրված վիճակում:

Տեղեկատվական թերթիկներ.

Միայն վերջին երկու տարիների ընթացքում Հայաստանի Երիտասարդ Իրավաբանների Ասոցիացիան ⁶⁹(այսուհետև՝ ՀԵԻԱ) կողմից հրատարակվել և

⁶⁷ Տե՛ս <http://www.imiravunq.com/> վեբ կայք:
⁶⁸ Տե՛ս <http://www.arlis.am/> վեբ կայք:
⁶⁹ ՀԵԻԱ-ի վերաբերյալ այս և հետագա մյուս տվյալները բերված են ՀԵԻԱ-ի <http://www.avla.am/> պաշտոնական վեբ կայքից:

բնակչության, այդ թվում երիտասարդության շրջանում տարածվել է 49 անուն մատչելի տեղեկատվական թերթիկներ՝ 5000 օրինակ յուրաքանչյուր տեղեկատվական թերթիկից: Ընդհանուր առմամբ բոլոր տեղեկատվական թերթիկները միասին հրատարակվել են 245000 տպաքանակով: Վերոհիշյալ տեղեկատվական թերթիկներից 31 անուն թերթիկները ՀԵԻԱ-ն պատրաստել է համապատասխան ՀՀ նախարարությունների և ՀՀ Կառավարությանը առընթեր մարմինների հետ համատեղ՝ պետության կողմից հասարակությանը, այդ թվում երիտասարդությանը մատուցվող հանրային ծառայությունների վերաբերյալ: Նմանատիպ գործունեություն իրականացրել են այլ ՀԿ-ներ նույնպես՝ սակայն ավելի համեստ մասշտաբներով:

Մամուլի միջոցներ.

2005թ.-ից հրատարակվում է «Իմ իրավունքը» շաբաթաթերթը: Հանրապետական մամուլից հանրության, այդ թվում երիտասարդության իրավական իրազեկության մակարդակի բարձրացմանը ուղղված աշխատանքներ իրականացնում են «Իրավունք» շաբաթաթերթի «Հետաքննություն» հավելվածը, «Առավոտ» և «Հայկական ժամանակ» օրաթերթերը, ինչպես նաև այլ մամուլի միջոցներ:

Հանրային իրազեկման սեմինարներ.

Այս ուղղությամբ Հայաստանի գրեթե բոլոր մարզերում արդեն մի քանի տարի է ինչ լուրջ աշխատանքներ կատարում «Պատանեկան նվաճումներ» ՀԿ-ն, «Փրոջեքթ Հարմոնի» ամերիկյան կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը և այլ հասարակական կազմակերպություններ:

Իրավական իրազեկման կենտրոններ.

ՀՀ մշակույթի և երիտասարդության նախարարությունը մինչև 2006թ.-ի վերջ նախատեսում է ՀՀ Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում հիմնադրել երիտասարդության կենտրոններ⁷⁰, որոնք զբաղվելու են նաև երիտասարդների իրավական իրազեկման հարցերով: Երիտասարդների իրավական իրազեկման հարցերով զբաղվող կենտրոններ ունեն նաև մի շարք հասարակական կազմակերպություններ:


7.2.2 Իրավունքների պաշտպանություն

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը մանրամասն սահմանում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները: Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ

⁷⁰ Այս տվյալները վերցված են «Երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարությունից»:

իրավունքներ և ազատություններ: Ըստ բարեփոխված ՀՀ Սահմանադրության յուրաքանչյուր ոք, այդ թվում յուրաքանչյուր երիտասարդ ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք, այդ թվում օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը: Ըստ երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարության երիտասարդ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն ապահովվում է համապատասխան օրենսդրական, իրավական դաշտի ստեղծմամբ և հետագա զարգացմամբ, երիտասարդ քաղաքացիների, տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, իրավունքների և ազատությունների ցանկացած սահմանափակումների արգելմամբ, եթե դրանք սահմանված չեն օրենքով⁷¹: Այս ամենը վկայում է, որ այսօր ՀՀ-ում երիտասարդների իրավունքների բնագավառը կարգավորող իրավական դաշտը ընդհանուր առմամբ կարելի բնութագրել բարենպաստ, ինչը հնարավոր չէ ասել գործնական դաշտում երիտասարդների իրավունքների ներկա վիճակի և դրանց պաշտպանության մեխանիզմների մասին: Անդրադառնալով երիտասարդության իրավունքների խախտումներին պետք է նշել, որ այդ ամենը արդյունք է հիմնականում իր իրավունքների վերաբերյալ երիտասարդության իրազեկության ցածր մակարդակի, որն էլ իր հերթին բերում է իր իրավունքների անմիջական պաշտպանության երիտասարդության անկարողությանը: Այս ամենը իր հերթին հիմնավորում է այն փաստը, որ Հայաստանում դեռևս առկա չէ երիտասարդների իրավական իրազեկման և իրավունքների պաշտպանության գործուն, միասնական և մատչելի համակարգ: Այս առումով հետաքրքիր են նաև սոցիոլոգիական հետազոտության արդյունքները:

Հետազոտության ընթացքում տրված «Դուք Ձեզ իրավական առումով պաշտպանված զգում ե՞ք» հարցին հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.



⁷¹ «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ» կառավարության որոշում, 22.12.1998թ.:

Ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, ըստ հարցվողների խախտվում են հիմնականում երիտասարդության աշխատանքի, կրթության, սեփականության/բնակարանի, խոսքի ազատության, ամուսնաընտանեկան և բուժօգնություն ստանալու իրավունքները: Ավելի քիչ են խախտվում երթերի, ցույցերի, հանրահավաքների, ազատ տեղաշարժվելու, տեղեկատվություն ստանալու և խղճի ազատության իրավունքները: Հետազոտության ընթացքում տրված «Վերջին երկու տարում իրավական բնույթի որևէ խնդիր ունեցե՞լ եք հետևյալ ոլորտներում» հարցին հարցվողների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական խնդիրներ չեն ունեցել հարցվողների 58.4%-ը, իսկ իրավաբանական խնդիրներ ունեցողներն էլ այդ խնդիրները հիմնականում ունեցել են հետևյալ չորս բնագավառներում՝ աշխատանքի 26.4%, կրթության 12.5%, սեփականության/բնակարանային 5.6% և խղճի ազատության 4.9%:

Հետազոտության վիճակագրական տվյալները նաև փաստում են, որ դատարանները, որպես երիտասարդների իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության միջոց, բավարար վստահություն ու հեղինակություն չունեն հայաստանյան երիտասարդության շրջանում, որի հիմնական պատճառը դատարաններում տիրող կոռուպցիոն ռիսկերի բարձր մակարդակն է: Այս ամենի կողքին ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 21.02.2006թ.-ին ընդունած իր թիվ 92 որոշմամբ ընդունել է «ՀՀ դատական համակարգի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի» նախագիծը, որը հաստատման համար ուղարկվել է ՀՀ կառավարությանը: Վերոհիշյալ ծրագրով նախատեսվում է շարունակել դատաիրավական բարեփոխումները, որի հիմնական նպատակը անկախ, արդյունավետ և արդար դատարանի ստեղծումն է, ինչը երկրում կոռուպցիայի նվազեցման հիմնական գրավականն է:

Խոսելով երիտասարդության իրավունքների պաշտպանության բնագավառում առկա խնդիրների և թերությունների մասին անհրաժեշտ է նաև նշել այս բնագավառում պետական համապատասխան մարմինների և քաղաքացիական հասարակության կողմից կատարված դրական աշխատանքների մասին: Մասնավորապես, այսօր Հայաստանում գործում են բնակչության, այդ թվում երիտասարդների իրավունքների ու ազատությունների իրավական պաշտպանության այլ միջոցներ ևս, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

Մարդու իրավունքների պաշտպան.

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը նոր ինստիտուտ է և այն Հայաստանում սկսել է գործել 2003թ.-ի վերջից: Ըստ օրենքի մարդու իրավունքների պաշտպանը անկախ է և չի ենթարկվում պետական և տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի: Մարդու իրավունքների պաշտպանը

քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով նախատեսված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները: Անչափ կարևորելով Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, միաժամանակ պետք է նշել, որ հայ հասարակության գիտակցության մեջ այն դեռևս չի արմատավորվել, որպես մարդու իրավունքների պաշտպանության անկախ ազգային ինստիտուտ, քանի որ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի լիարժեք կայացման համար դեռևս որոշակի ժամանակ է անհրաժեշտ:

ՀՀ փաստաբանների պալատ.

Մարդու իրավունքների, այդ թվում երիտասարդության իրավունքների պաշտպանության համակարգում կենտրոնական դերը պատկանում է փաստաբանական ինստիտուտին: Փաստաբանությունը անկախ և ինքնակառավարվող փաստաբանական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման համակարգի մեջ: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը քրեական գործերով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով և հետևյալ դեպքերում.

ա) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով,

բ) խեղման և առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Վերը նշված անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է փաստաբանների պալատը պետության հաշվին՝ հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով:

Իրավապաշտպան կազմակերպություններ.


Պետք է նշել, որ Հայաստանում արդեն ձևավորվել են իրավապաշտպան կազմակերպությունների մի խումբ, որոնք քիչ թե շատ արդյունավետությամբ իրականացնում են բնակչության, այդ թվում երիտասարդներին համապատասխան իրավաբանական օգնության տրամադրումը և նրանց խախտված իրավունքների

վերականգնումը: Հայաստանյան իրավապաշտպան կազմակերպությունները երիտասարդների իրավունքների պաշտպանության ոլորտում հիմնականում իրականացնում են հետևյալ աշխատանքները.

- Մատուցում են անվճար իրավաբանական խորհրդատվություն, որը կարելի համարել արդեն կայացած բնագավառ, քանի որ բնակչության, այդ թվում երիտասարդության սոցիալապես անապահով խավերին արդեն շուրջ 8 տարի է, ինչ անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրվում է համակարգված և շարունակական տեսքով: Անվճար իրավաբանական խորհրդատվության համակարգը ներառում է բանավոր իրավախորհրդատվությունը, բանավոր և գրավոր իրավաբանական տեղեկատվության տրամադրումը, դիմումների, բողոքների և գրավոր այլ փաստաթղթերի կազմումը: Չնայած այս ամենին, այստեղ էլ դեռ շատ աշխատանք կա կատարելու, մասնավորապես անհրաժեշտ է ընդլայնել մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների աշխարհագրությունը,
- Իրականացնում են քրեական գործերով անվճար պաշտպանություն և քաղաքացիական գործերով անվճար ներկայացուցչություն, ներառյալ դատական ներկայացուցչություն, որը դեռևս չի կարելի համարել կայացած բնագավառ: Այս բնագավառում առաջատար կազմակերպություններ են համարվում ՀՀ փաստաբանների պալատը, ՀԵԻԱ-ն, Հելսինկյան հասարակական կազմակերպությունները, սպառողների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունները և այլ իրավապաշտպան կազմակերպություններ: Այստեղ նույնպես դեռ լուրջ աշխատանք կա կատարելու:

Իրավապաշտպան կազմակերպությունների կողմից երիտասարդությանը մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների շրջանակը հիմնավորվում է նաև սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով:

«Եթե դիմել եք ոչ պետական իրավապաշտպան կազմակերպություններին. ապա ինչպի՞սի օժանդակություն եք ստացել» հարցին հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.



Ամփոփում

Ամփոփելով, ևս մեկ անգամ պետք է նշել, որ երիտասարդության իրավական իրազեկության մակարդակի բարձրացման և իրավունքների պաշտպանության առումով թեև պետության և քաղաքացիական հասարակության կողմից կատարվել են որոշակի աշխատանքներ, առանձին դեպքերում ունենք նաև լուրջ հաջողություններ, սակայն երիտասարդության իրավական իրազեկության մակարդակը և իրավունքների պաշտպանության ընդհանուր պատկերը Հայաստանում դեռևս չի կարելի գնահատել զոհացուցիչ, քանի որ երիտասարդության իրավական իրազեկության և իրավունքների պաշտպանության մակարդակը դեռևս մնում է բավական ցածր, համապատասխան պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միավորների կողմից այդ ուղղություններով կատարվող աշխատանքները բավարար չեն, իսկ դատարանները, իրավապահ մարմինները և ոչ պետական իրավապաշտպան կազմակերպությունները հայաստանյան երիտասարդության շրջանում դեռևս բավարար վստահություն չեն վայելում: Ուստի անհրաժեշտ է պետական համապատասխան մարմինների և քաղաքացիական հասարակության ներդաշնակ համագործակցության և միասնական աշխատանքների շնորհիվ ավելի բարելավել երիտասարդության իրավական իրազեկության մակարդակի բարձրացմանը և իրավունքների պաշտպանությանը ուղղված մեխանիզմները, դրանք դարձնել ավելի արդյունավետ, վստահելի և մատչելի:

7.3 Քրեական արդարադատություն

Ներածություն

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները, դատական իշխանությունը բաժանում է երկու հիմնական բնագավառների՝ սահմանադրականի և ընդհանուր իրավասության: Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ: Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: ՀՀ-ում արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է: Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Խոսելով թրաֆիկինգի մասին պետք է նշել, որ այն շատ տարածված է երիտասարդների շրջանում, քանզի դա հասարակության այն շերտն է, որն ավելի զգայուն է կատարվող փոփոխությունների նկատմամբ, ավելի շատ է հակված ինքնադրսևորման: Հետևապես մարդկանց առևտրի թիրախ ավելի շատ դառնում են

երիտասարդները: Այս կարգի երիտասարդների շրջանում շատ են երիտասարդ կանայք և աղջիկները: Անօրինական միգրացիայի, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկվելու պատճառներից մեկը մարդկանց թյուր պատկերացումն է արտասահմանում սպասվելիքի վերաբերյալ: Մարդկանց ապօրինի փոխադրմանը նպաստող հիմնական գործոններն են՝ տնտեսականը և սոցիալականը⁷²:

7.3.1 Քրեական արդարադատություն

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ հանցագործության սուբյեկտ է հանդիսանում 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է այն հանցագործությունների շարքը, որոնց համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում 14 տարեկանից (օրինակ՝ սպանություն, գողություն, ավազակություն, բռնաբարություն և այլն): Բացի դրանից, կան նաև որոշ այնպիսի հանցագործություններ, որոնց սուբյեկտ կարող է հանդիսանալ միայն 18 տարին լրացած ֆիզիկական անձինք: Այդպիսի հանցագործություններից են ալիմենտ վճարելու պարտականությունը չկատարելը, անչափահասին հանցանքի կամ հակահասարակական գործողությունների կատարմանը ներգրավելը և այլն:

Քրեական արդարադատությանը դատական իշխանության իրականացման ձևերից է, որը հանդիսանում է միմիայն դատարանների գործունեությունը: Քրեական արդարադատությանը՝ որպես պետության կողմից իրականացվող գործունեության հատուկ տեսակի, ներգրավում են մի շարք պետական և այլ մարմիններ ու պաշտոնատար անձինք: Որպես այդպիսին հանդիսանում են ոստիկանությունը և հետաքննության այլ մարմիններ (օրինակ՝ հարկային մարմինները, մաքսային մարմինները, հրշեջ հսկողության մարմինները, զորամիավորումների, զինվորական հիմնարկների պետերը՝ համապատասխան հանցագործությունների վերաբերյալ գործերով) դատախազությունը, փաստաբանների պալատը և այլն: Վերը նշված բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունները դատարանի գործունեության նկատմամբ կրում են օժանդակ և ապահովող բնույթ: Դրանք բոլորն էլ կոչված են օժանդակելու դատարանին արդյունավետ իրականացնելու դատական իշխանություն և արդարադատություն՝ որպես նրա հիմնական ֆունկցիա:

Ըստ 2005թ.-ի Հայաստանի վիճակագրական տարեգրքի իրավական վիճակագրության⁷³ հանցագործություն կատարած դատապարտված երիտասարդների կազմը ըստ տարիքի և զբաղմունքի հինգ տարիների կտրվածքով ունի այսպիսի տեսք.

| Հանցագործություն կատարած երիտասարդների տարիքը՝ ըստ թվաքանակի | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|--|------|------|------|------|------|
| 14-17 | 263 | 251 | 201 | 198 | 222 |
| 18-24 | 1590 | 1333 | 1148 | 1239 | 1148 |
| 25-29 | 1166 | 943 | 835 | 745 | 736 |

⁷² «Երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարություն:

⁷³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, իրավական վիճակագրություն, 2005թ.:

| Հանցագործություն կատարած երիտասարդների զբաղմունքը | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|------|------|------|------|------|
| Սովորողներ | 131 | 110 | 103 | 88 | 125 |

| Հանցագործություն կատարած երիտասարդների տարիքը՝ ըստ տոկոսային հարաբերակցության | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|------|------|------|------|------|
| 14-17 | 3.9 | 4.6 | 4.2 | 4.3 | 5.1 |
| 18-24 | 23.4 | 24.3 | 23.8 | 27.1 | 26.4 |
| 25-29 | 17.2 | 17.2 | 17.3 | 16.3 | 17.0 |

Ըստ ՀՀ ոստիկանության⁷⁴ պաշտոնական տվյալների երիտասարդության կողմից կատարվող հիմնական հանցագործություններից են՝ գողությունը, խուլիգանությունը, առողջությանը ծանր վնաս պատճառելը, կողոպուտը, ավազակությունը և այլն: Նշված հանցագործությունների տարածվածությունը երիտասարդության շրջանում պայմանավորված է ինչպես երկրի սոցիալ տնտեսական վիճակով (գործազրկության և աղքատության բարձր մակարդակ, սոցիալական ոչ բարենպաստ պայմաններ և այլն), այնպես էլ երիտասարդության հոգեբանական կրիմինոլոգիական առանձնահատկություններով:

Պաշտոնական վիճակագրական տվյալները փաստում են, որ ավելի շատ հանցագործություններ են կատարում 18-24 տարեկան երիտասարդների խումբը: Բավական բարձր է նաև 25-29 տարեկան երիտասարդների խմբի կողմից կատարված հանցագործությունների քանակը: Վերը նշված երիտասարդների երկու խմբերի համեմատ ավելի քիչ հանցագործություններ են կատարում 14-17 տարեկան երիտասարդների խումբը: 2000-2004 թվականների կտրվածքով աճել է 14-17 և 18-24 տարեկան երիտասարդների խմբերի կողմից կատարվող հանցագործությունների քանակը, շատ չնչին կերպով նվազել է 25-29 տարեկան երիտասարդների խմբի կողմից կատարված հանցագործությունների քանակը:

Այս ամենը հիմնավորվում է նաև սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով: Մասնավորապես, «Նշեք. խնդրեմ. թե Ձեզ համար ո՞ր արժեքներն են առավել կարևոր (մինչև 3 պատասխան)» հարցին հարցվող 1000 երիտասարդներից միայն 0.5%-ն տվել «արդարություն և օրինականություն» պատասխանը: Սա խոսում է, որ երիտասարդները իրենց համար առաջնային չեն համարում արդարության և օրինականության գաղափարները, որն էլ իր հերթին բերում է օրենքների խախտումների և երիտասարդության շրջանում հանցագործության աճին:

7.3.2 Թրաֆիկինգ

Վերջին ժամանակներում բավականին շատ է հատկապես խոսվում թրաֆիքինգի՝ որպես տարածված ծանր հանցագործության և դրա հետևանքների մասին: Նախ, պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ ևս նախատեսված են դրույթներ, որոնք պատասխանատվություն են սահմանում մարդկանց առևտրի համար: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի համաձայն՝ «մարդկանց առևտուրը մարմնավաճառության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարազոր վիճակի կամ կախյալ վիճակի հասցնելու, ինչպես նաև մարդու օրգանները վերցնելու նպատակով

⁷⁴ ՀՀ ոստիկանության տվյալներ, թիվ 31/155 գրություն ուղղված ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարին, 26.11.2005թ.:

մարդկանց հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալն է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, առեւանգելու, խարդախության, այլ խաբեության, իշխանությունը չարաշահելու կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ մեկ այլ անձնավորության վերահսկող անձի համաձայնությունն ստանալու նպատակով՝ վճարման կամ շահ ստանալու տեսքով կաշառելու միջոցով»⁷⁵: Գոյություն ունեն մարդկանց առևտրի նաև այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ հարկադիր ամուսնությունը, շահագործումը ապօրինի կամ օրինական «սեքս բիզնեսում», հարկադիր կամ պատվերով ծննդաբերությունը, մարդու ներքին օրգանների վաճառքը և այլն: Այնուամենայնիվ, դրանցից ամենատարածվածը կանանց և աղջիկների վաճառքն է, արևսպես կոչված՝ «սեքս-արդյունաբերության աշխարհ»:

Միջազգային կազմակերպությունների զեկույցները արձանագրում են, որ տարեկան միլիոնավոր մարդիկ են ենթարկվում թրաֆիքինգի: Իսկ ի՞նչ է անում Հայաստանն այս հանցագործության կանխման ուղղությամբ. չէ՞ որ ապօրինի միգրացիայի տեսակետից Հայաստանը ելքի, տարանցիկ և նշանակման երկիր է: 2003թ.-ի մարտին ՀՀ կողմից վավերացվել են «Կազմակերպված հանցագործության դեմ պայքարի» ՄԱԿ-ի համաձայնագիրը և թրաֆիքինգին առնչվող երկու արձանագրությունները⁷⁶: 2002թ.-ի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2004 թվականի հունվարի 15-ի N 58-Ն որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի կանխման» հայեցակարգը և «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի կանխման 2004-2006 թվականների միջոցառումների ազգային ծրագիր»-ը⁷⁷:

Թրաֆիքինգի զոհերի ճնշող մեծամասնությունը կանայք և երեխաներն են: Հայաստանում թրաֆիքինգի աճը պայմանավորվում է մի շարք գործոններով. մարդկանց կողմից ստեղծված և բնական աղետներով, ինչպիսիք են պատերազմներն ու երկրաշարժերը, անցումային գործընթացները, որոնք ազդում են սոցիալական և տնտեսական իրավիճակի վրա, նաև գործազրկության և աղքատության աճը մարդկանց դարձնում են անպաշտպան և խոցելի:

Հայաստանում առայժմ չկա պաշտոնական ամբողջական տեղեկատվություն ինչպես մարդկանց առևտրի, այնպես էլ կազմակերպված մարմնավաճառքային ծավալների մասին: Այս բացը լրացնելու համար ՄԱԿ-ն և հայաստանյան մի շարք ՀԿ-ներ համապատասխան ուսումնասիրություն⁷⁸ են

⁷⁵ ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 18.04.2003թ.:
⁷⁶ «Կազմակերպված հանցագործության դեմ պայքարի» ՄԱԿ-ի համաձայնագիր և թրաֆիքինգին առնչվող երկու արձանագրություններ, 2003թ.:
⁷⁷ ՀՀ կառավարության N 58-Ն որոշում, 15. 01.2004թ.:
⁷⁸ «Երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարություն»:

կատարել, որի արդյունքները ցույց են տալիս, որ սեռական շահագործման ենթարկվածների և վաճառվածների 65%-ը 30-ից ցածր տարիքի կանայք են: Ապօրինի փոխադրվածների գերակշիռ մասը քաղաքաբնակ է, հիմնականում՝ Երևանից (32,6%), Գյումրիից (30,26%) և Վանաձորից (18,6%): Ապօրինի փոխադրված կանանց շուրջ 50%-ի համար մուտքի երկրում արհեստականորեն ստեղծվել են այնպիսի գոյապայմաններ, որ նրանք ստիպված են եղել դիմել մարմնավաճառության, թեև մեկնողների մի մասը նախապես է իմացել, որ արտասահման է մեկնում մարմնավաճառությամբ ապրուստի միջոցներ վաստակելու նպատակով: Համաձայն ՄՄԿ-ի 2001 թվականին տպագրված «Հայաստանում կանանց և երեխաների վաճառքի մասին» զեկույցի⁷⁹ սովորական աշխատանք գտնելու հույսով մեկնել է 76,2%-ը, մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով՝ 18,6%-ը, բիզնեսի համար՝ 1,7%-ը, արձակուրդն անցկացնելու համար՝ 1,7%-ը: Մեկնողների շրջանում մեծ թիվ են կազմել ամուսին չունեցող կանայք՝ 72,1%, որից 14%-ը՝ այրի, իսկ 2,3%-ը՝ ամուսնալուծված, 11,6%-ը՝ ամուսնացած չի եղել:

Ամփոփում

Ամփոփելով, պետք է նշել, որ երիտասարդության շրջանում հանցագործությունների կանխման և հանցավորության մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ: Նախ՝ անհրաժեշտ է վերանայել քրեական օրենսդրությունը (նյութական և դատավարական), ինչպես հանցագործությունների սահմանման և դրանց համար պատասխանատվության, այպես էլ քրեական արդարադատությանը ներգրավված մարմինների կառուցվածքի և գործունեության մասով: Հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել պատիժն իրականացնող հիմնարկներում պատիժ կրող անձանց պահելու պայմաններին, ինչը էական նշանակություն ունի ռեցիդիվի և հանցագործությունների կրկնակիության բացառման կամ գոնե դրանց նվազեցման համար: Երիտասարդության շրջանում հանցագործությունների կանխման համար կարևոր է մի շարք այլ գլոբալ միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված կլինեն երկրում առակա սոցիալական, տեսական, մշակութային, հոգեբանական, գաղափարախոսական և այլ խնդիրների վերացմանը: Անդրադառնալով թրաֆիկինգի հիմնախնդրին, անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ պետական համապատասխան մարմինները համագործակցելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ ավելի արդյունավետ դարձնեն թրաֆիկինգի դեմ պայքարի քաղաքականությունը և միջոցառումները, կատարելագործվեն այդ բանգավառի իրավական դաշտը և թրաֆիկինգի զոհերի իրավունքները պաշտպանելու նպատակով թրաֆիկինգի զոհերին ցուցաբերեն համալիր աջակցություն:

⁷⁹ «Հայաստանում կանանց և երեխաների վաճառքի մասին» զեկույց, ՄՄԿ, 2001թ.:



**Հետազոտություններ, պաշտոնական վիճակագրական եվ
կազմակերպությունների վեբ կայքերի տվյալներ.**

1. Սոցիոլոգիական հետազոտություն, «Սոցիում» ՀԿ, մարտ, 2005թ.,
2. «Իմ իրավունքը» հեռուստաժրագրի <http://www.imiravunq.com/> վեբ կայք,
3. ՀեԻԱ-ի <http://www.ayla.am/> պաշտոնական վեբ կայք,
4. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի <http://www.arlis.am/> վեբ կայք,
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, իրավական վիճակագրություն, 2005թ.,
6. «Հայաստանում կանանց և երեխաների վաճառքի մասին» զեկույց, ՄՄԿ, 2001թ.:

Նորմատիվ ակտեր եվ այլ փաստաթղթեր.

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 05.07.1995թ.-ին,
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 27.11.2005թ.-ի հանրաքվեով,
3. «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ» կառավարության որոշում, ընդունվել է 14.12.1998թ.-ին,
4. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 06.11.1995թ.-ին,
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ.-ին,
6. «Կրթության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 14.04.1999թ.-ին,
7. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004թ.-ին,
8. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004թ.-ին,
9. «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.09.1998թ.-ին,
10. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 17.12.2003թ.-ին,
11. «Հայաստանի անկախության մասին» հռչակագիր, ընդունվել է 23.08.1990թ.-ին,
12. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 17.06.1995թ.-ին,
13. ՀՀ ընտրական օրենսգիրք, ընդունվել է 05.02.1999թ.-ին,
14. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 04.12.2001թ.-ին,
15. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 03.07.2002թ.-ին,
16. «Երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարություն»,
17. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003թ.-ին,
18. ՀՀ կառավարության N 58-Ն որոշում, 15, 01, 2004թ.,
19. ՀՀ ոստիկանության տվյալներ, թիվ 31/155 գրություն ուղղված ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարին, 26.11.2005թ.:

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՍՓՅՈՒՌՔ**

8.1 Հայկական Սփյուռք

Ներածություն

Հայերը դարեր շարունակ հայտնի են եղել իրենց տոլերանտությամբ, բացությամբ, հյուրասիրությամբ: Եվ դա է պատճառը, որ դեռևս հինգերորդ դարից սկսած հայերն ապրել են այլ երկրներում՝ կազմելով սեփական համայնքներ և աշխուժորեն ընդգրկվելով տարբեր ազգերի հասարակական կյանքում: Սակայն շատերին հայտնի հայկական սփյուռքը ձևավորվել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Օգտվելով աշխարհում գոյություն ունեցող իրավիճակից Օսմանյան Թուրքիայի քաղաքական ու ռազմական ղեկավարությունը ավելի դաժանացրեց դեռ վաղուց ծրագրած հայատյաց քաղաքականությունը: Ողջ Արևմտյան Հայաստանը, որը գտնվում էր Թուրքիայի տիրապետության տակ, դատարկվեց. հայ բնակչությունը տեղահանվեց կամ սպանվեց: Տեղի ունեցավ Հայոց Ցեղասպանությունը. ավելի քան մեկուկես միլիոն հայ ուղղակի ոչնչացվեց: Եղեռնից/հայոց ցեղասպանություն/ մազապուրծ հայերը հանգրվանեցին Արևելյան Հայաստանում/այսօրվա ՀՀ/, Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Ռուսաստանում, Հունաստանում, Բուլղարիայում, Կիպրոսում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և աշխարհի շատ այլ երկրներում: 1915թ. ապրիլի 24-ից, երբ սպանվեց ժամանակի հայ մտավորականության վերնախավը, անցել է 91 տարի... աշխարհում այսօր ապրող գրեթե տասը միլիոն հայերից միայն մեկ-երրորդն է ապրում իր հայրենիքում:

Սփյուռք

Հայրենիքի և սփյուռքի միջև կապը միշտ սերտ է եղել: Սփյուռքում գործել և այժմ էլ գործում են բազմաթիվ ու բազմապիսի կառույցներ, այդ թվում նաև երիտասարդական: Սփյուռքը մեծ ազդեցություն ունի Հայաստանի՝ տարբեր մակարդակներում համաշխարհային ինտեգրման գործընթացներում, տարբեր երկրների հետ կառուցվող հարաբերություններում: Անկախացումից հետո Հայաստանում կատարված ներդրումների զգալի մասն իրականացրել են արտասահմանցի հայազգի քաղաքացիները: Զգալի է նաև անհատական և ավելի կազմակերպված ֆինանսական ու նյութական օգնությունը, որը Հայաստանին ցուցաբերում է հայկական սփյուռքը: Եվ պատահական չէ, որ հետազոտության արդյունքում այն հարցին, թե ո՞րն է սփյուռքի դերը ՀՀ առջև ծառայած խնդիրների հաղթահարման գործում, ըստ հերթականության պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

| | |
|---------------------------------|--------------|
| 1. Ներդրումներ | 45.2% |
| 2. Հումանիտար օգնություն | 28.5% |
| 3.Լոգիստ | 12.6% |

Հայաստանում պետական մակարդակում գործում են տարբեր կառույցներ, որոնք համակարգում կան աջակցում են սփյուռքին՝ տարբեր բնագավառներում: Իրականացվում են Հայրենիք – Սփյուռք տարբեր մշակութային, մարզական, տնտեսական և այլ տիպերի միջոցառումներ:

Հատկապես վերջին տարիներին վարվում է հատուկ պետական քաղաքականություն՝ Հայաստան-Սփյուռք կապերն ավելի ամրապնդելու, Սփյուռքում հայապահպանության խնդիրներին արդյունավետ լուծումներ գտնելու առումներով: Եվ դա չի վրիպել հարցման ենթարկվածների ուշադրությունից: Ինչպե՞ս կգնահատեիք պետական քաղաքականությունը ՀՀ-Սփյուռք կապերի ամրապնդման գործում հարցին «արդյունավետ» պատասխան են տվել հարցվածների 24,9%, իսկ հարցվածների գրեթե կեսը՝ 47,8%-ը այն ավելի շատ արդյունավետ, քան ոչ արդյունավետ է գնահատել:

Հայաստան – Սփյուռք կապերն ու համագործակցությունը կարևորվում է հատկապես երիտասարդ սերնդի մակարդակում: Այս ոլորտում արդեն ավանդույթ է դարձել «Բազե» համահայկական երիտասարդական հավաքը, որը կազմակերպվում է Համահայկական երիտասարդական հիմնադրամի կողմից՝ տարին 1-2 անգամ: Այն մարզամշակութային երիտասարդական փառատոն է, որին տարբեր համայնքների երիտասարդներ առանձին թիմերով մասնակցում են տարբեր մրցույթների:

Ամեն տարի կազմակերպվում է նաև Համահայկական երիտասարդական ֆորումը Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնի նախաձեռնությամբ: Մասնակիցները ևս տարբեր համայնքների հայ կազմակերպված երիտասարդության ներկայացուցիչներ են:

Երիտասարդության ոլորտում կան Հայրենիք – Սփյուռք համագործակցության բազմաթիվ այլ նախաձեռնություններ և արդյունքում երիտասարդությունն այդ համագործակցությունը բավականին արդյունավետ է գնահատում: Այսպես, հարցվածների միայն 9,5% է կարծում, թե «համագործակցություն չկա», մինչդեռ երիտասարդների մոտ 48% ՀՀ – սփյուռք համագործակցությունը գնահատում է առավել ակտիվ ու արդյունավետ /տես աղյուսակը/:

Գնահատեք ՀՀ-սփյուռք երիտասարդական համագործակցությունը

| Ակտիվ արդյունավետ | | | | Համագործակցություն չկա | |
|-------------------|------|------|-----|------------------------|--------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | Դժվ. են պատ. |
| 27.4 | 20.4 | 22.1 | 6.9 | 9.5 | 13.7 |

Կարելի է նշել նաև Հայաստանում ու սփյուռքում գործող երիտասարդական կազմակերպությունների կարևոր դերն այս գործընթացներում:

8.2 Միջազգային համագործակցություն

Ներածություն

20-րդ դարի վերջին տարիներին մեր հասարակությունը քայլ կատարեց խորհրդային փակ համակարգից (“երկաթե վարագույրի քաղաքականություն”) դեպի ավելի բաց հասարակարգ: Նույն շրջանը բնութագրող տնտեսական լուրջ ճգնաժամի ֆոնի վրա խիստ տրամաբանական էր Հայաստանից առաջին մեկնողների մեծ ալիքը, որը հիմնականում արտահայտվում էր զանգվածային արտագաղթի տեսքով: Եվ մեկնողների այս ալիքի բավականին ծանրակշիռ մասն էին կազմում երիտասարդները:


Սակայն այսօր, երբ իրավիճակը բավականին բարելավվել է և Հայաստանը սկսել է մասնակցել բազմաթիվ միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված միջազգային համագործակցության ծրագրերի, կարելու է վերլուծել երիտասարդների մասնակցությունը այս միջազգային համագործակցության գործընթացներին եւ պարզել, թե ինչպիսի՞ն են այսօրվա հայ երիտասարդի հնարավորությունները եւ մոտեցումները այս դաշտում: Ազգային Ձեկույցի այս մասում կքննարկվեն երիտասարդների միջազգային շարժունության խնդիրները, միջազգային համագործակցության արդի վիճակը, ինչպես նաեւ փորձ կկատարվի վերլուծել երիտասարդների միջազգային համագործակցության գործընթացներին մասնակցելու խոչընդոտները եւ դրանց վերացման հնարավոր ուղիները:

Այսօրվա օրեցօր փոփոխվող աշխարհում, որտեղ հաճախ գլոբալիզացիոն եւ ինտեգրացիոն գործընթացների ազդեցությունը առանձին անհատների վրա երբեմն ավելի մեծ ազդեցություն է գործում քան ներքին քաղաքական եւ սոցիալ-տնտեսական տեղաշարժերը, երիտասարդների հասարակական կյանքին մասնակցելու տարբեր ասպեկտների մեջ առանձնահատուկ կարեւորություն են ձեռք բերում երիտասարդների մասնակցությունը միջազգային համագործակցության և ինտեգրացիայի գործընթացներին:

Այսօրվա երիտասարդը ապրում է այնպիսի աշխարհում, որը բնութագրվում է միջազգային շարժունության շատ ավելի մեծ հնարավորություններով եւ աստիճանով, քան խորհրդային Հայաստանը: Հատկանշական է, որ Ազգային Ձեկույցի ուսումնասիրության շրջանակներում հարցվածների 76.8 %-ը ցանկություն են հայտնել մեկնել արտասահման, եւ եթե մեկ տասնամյակ առաջ խիստ առաջ քիչ էր հավանականությունը, որ մեկնման պատճառների շարքում կնշեն հանգիստը եւ շրջագայությունները, ապա այսօր 39.1% տնտեսական դրդապատճառների ֆոնի վրա իր կայուն տեղն է գրավում 32.6% տուրիզմի եւ հանգստի համար մեկնելու մոտիվացիան: Ինչեւէ ուսումնասիրությունը ցույց է տալիս նաեւ, որ հարցվածների

71%-ը, արտերկիր մեկնելու ցանկություն ունենալով հանդերձ, 16 տարին լրանալուց հետո հնարավորություն չի ունեցել մեկնել արտերկիր:

Եթե սոցիալ-տնտեսական պատճառներով մեկնողների մեկնման ալգորիթները բավականին հստակ են, ապա միջազգային համագործակցության ծրագրերին մասնակցության խնդիրը դեռ մնում է խիստ սահմանափակ խմբի մենաշնորհ: Հարցման նպատակներից էր պարզել թե ինչպիսի՞ն է միջազգային համագործակցության աստիճանը ըստ հարցվող երիտասարդների ինքնագնահատականի: Տարօրինակ չէ, որ հարցվածների ընդամենը 5.8%-ն է համարում երիտասարդության մասնակցությունը միջազգային ծրագրերին ակտիվ եւ արդյունավետ: Հարցվածների 25%-ը մասնակցությունը հինգ բալանոց համակարգում գնահատել է երեք, իսկ 24.5%-ը համարում են, որ միջազգային համագործակցությունը ընդհանրապես չկա (տես նկար 1):



Եվ դա խիստ օրինաչափ է, քանի որ միջազգային համագործակցության ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ, որոնք խիստ ցածր զարգացվածության աստիճանի վրա են գտնվում հարցված երիտասարդների զգալի տոկոսի մոտ: Մեր կարծիքով միջազգային համագործակցության ցածր զարգացվածության աստիճանի կարեւորագույն պատճառն է տեղեկացվածության պակասը: Այսօր հանրապետությունում բացակայում են երիտասարդական տեղեկատվության միջոցները, որոնք երիտասարդ մարդկանց կտրամադրեին համակարգված եւ բազմաբնույթ տեղեկատվություն այդ թվում նաեւ միջազգային համագործակցության ծրագրերի եւ հնարավորությունների մասին: Այստեղ խիստ հետաքրքիր տվյալ է միջազգային համագործակցության աստիճանի վերաբերյալ հարցին հարցման մասնակիցների “պատասխանել դժվարացողների” զգալի տոկոսը, որը կազմում է հարցվածների ընդհանուր թվի 25.4%-ը: Մեր կարծիքով այս տվյալը խոսում է հենց միջազգային համագործակցության վերաբերյալ

տեղեկացվածության խիստ ցածր աստիճանի մասին: Այսինքն մարդիկ այնքան տեղեկացված չեն այս ոլորտի մասին, որ դժվարանում են նույնիսկ ընդհանուր առմամբ գնահատել այս ոլորտի զարգացվածության աստիճանը:

Մինչդեռ երիտասարդների միջազգային համագործակցության ծրագրերի խրախուսման համար միայն Եվրոպական մակարդակում ստեղծված են մի բազմաթիվ լուրջ հնարավորություններ:

| ԵՎՐԱՆՈՐՀՈՒՐԴ |
|--|
| <p>Եվրախորհուրդը, որին մեր երկիրն անդամակցում է արդեն 2001թ.-ի, իր ստեղծման առաջին իսկ տարիներից երիտասարդական աշխատանքի եւ երիտասարդական քաղաքականության խթանումը համարում է իր առաջնահերթ կարեւորության խնդիրներից մեկը: Չորս տարին մեկ անգամ Եվրախորհրդի հովանու ներքո հավիրվում է Եվրախորհրդի անդամ երկրների երիտասարդության Ոլորտի Պատասխանատու Նախարարների Կոնֆերանսը, որը որոշում է Եվրոպական երիտասարդական Քաղաքականության առաջիկա երեք տարիների առաջնայությունները: Եվրապորհրդի կազմում գործում է երիտասարդության եւ Սպորտի հարցերով Տնօրինությունը, որը հանդիսանում է Եվրոպական երիտասարդական Քաղաքականության իրականացման հիմնական գործադիր օղակներից մեկը: Եվրախորհուրդը տնօրինում է նաեւ Եվրոպական երիտասարդական հիմնադրամը, որը ֆինանսական աջակցություն է տրամադրում միջազգային երիտասարդական նախաձեռնություններին: Ստրասբուրգում (1972) եւ Բուդապեշտում (1995) գործում են Եվրոպական երիտասարդական Կենտրոնները, որտեղ տարեկան կազմակերպվում են շուրջ մի քանի տասնյակ ուսոցողական եւ այլ բնույթի ձեռնարկներ:</p> |
| ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ |
| <p>Եվրոպական միությունը նույնպես ունի երիտասարդական քաղաքականության եւ երիտասարդական նախաձեռնությունների աջակցման ծրագրերի բավականին երկար պատմություն: 2000թ.-ից Եվրոպական Հանձնախմբի կողմից հաստատվել է գործում է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ծրագիրը, որին արդեն շուրջ 5 տարի է հանարավորություն ունեն մասնակցելու ոչ Եվրոպական մության անդամ, այսպես կոչված գործընկեր պետությունների երիտասարդները: Ի դեպ Հայաստանը գտնվում էր ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ծրագրի առաջնահերթ կարեւորության երկրների ցանկում:</p> <p>ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ծրագիրը հիմնականում միտված է սահմանափակ հնարավորություններ ունեցող երիտասարդների (նրանք, ովքեր ապրում են անբարենպաստ մշակութային, աշխարհագրական կամ սոցիալ-տնտեսական տարածաշրջաններում, կամ հաշմանդամ են) ներգրավմանը երիտասարդական միջազգային ծրագրերում:</p> <p>Ծրագրի Հայաստանի համար բաց Գործողություններն են երիտասարդական Փոխա-նակության ծրագրերը, Եվրոպական Կամա-վորական Ծառայությունը եւ Աջակցության ծրագրերը:</p> <p>Չնայած, որ Հայաստանը արդեն մի քանի տարի է կարող էր մասնակցել այս Ծրագրի աշխատանքներին մեր մասնկացությունը մինչեւ վերջին մեկ ատրի եղել է շատ ցածր մակարդակի վրա:</p> |

Ամեն տարի բազմաթիվ հայ երիտասարդներ մասնակցում են Եվրախորհրդի⁸⁰ եւ Եվրոպական Միության⁸¹ միջազգային ծրագրերի շրջանակներում կազմակերպված մի շարք ծրագրերի: Վերջին երկու տարում, ըստ փորձագիտական գնահատականների, իրականացվել են շուրջ 20-25 միջազգային երիտասարդական ծրագրեր, որոնք ֆինանսավորվել են Եվրախորհրդի Եվրոպական երիտասարդական Հիմնադրամի եւ Եվրոպական Հանձնախմբի ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ծրագրի կողմից: Սակայն ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ այս հնարավորություններից օգտվող երիտասարդները եւ երիտասարդական կազմակերպությունները կազմում են Հայաստանի երիտասարդության մի չնչին մասը:

Հետաքրքրական է, որ Եվրոպական Միության ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ծրագրի 2000-2006 թթ. աշխատանքների ամփոփման փուլում, երբ գնահատում էին Կովկասյան

⁸⁰ "Եվրոպական երիտասարդական Քաղաքականություն, Կառույցներ եւ Ծրագրեր" Ուսուցողական ձեռնարկ, 2005, Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն Հիմնադրամ
⁸¹ "GO EAST" Information Leaflet on YOUTH Programme of European Commission, 2004, published by SALTO-EECA Resource Center

տարածաշրջանի մասնակցությունը ծրագրին, ի հայտ է բերվել, որ այս տարածաշրջանի հետ համագործակցության ծրագրերը շատ քիչ են: Այս փաստից ելնելով 2007-2013 թթ. ծրագրի նոր տարբերակի հաստատման ժամանակ, քննարկվել է մեր ռեգիոնը ծրագրի գործունեության շրջանից հանելու խնդիրը, ենթադրաբար հիմնվելով այն բանի վրա, որ եթե չկան ծրագրեր, ապա չկա դրանց վերաբերյալ հետաքրքրություն թե՛ Արեւմտյան Եվրոպայի երիտասարդների մոտ, եւ թե՛ Կովկասյան երկրների երիտասարդների եւ երիտասարդական կազմակերպությունների մոտ: Մինչդեռ Հայաստանում այս հնարավորության մասին առաջին տեղեկատվությունը ստացվել է 2004թ., երբ ծրագիրը արդեն բաց էր մեր երկրի համար շուրջ երեք տարի⁸²⁸³:

Միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության պակասը կապված է նաեւ երիտասարդների լեզվական եւ համակարգչային գրագիտության խնդրի հետ: Քանի որ միջազգային համագործակցության հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը չի համակարգվում եւ հայկականացվում (թարգմանվում) երիտասարդական տեղեկատվական համակարգերի կողմից (որոնք դեռ չեն ձեւավորված), այս խնդրի լուծումը մնում է երիտասարդի վրա: Սակայն հարցումը ցույց է տվել, որ հարցվածների ընդամենը 21%-ն է տիրապետում, որեւէ եվրոպական լեզվի, իսկ համակարգչային տեխնիկայից չեն օգտվում հարցվածների 60,6%-ը:

Երիտասարդության Ազգային Ձեկույցի շրջանակներում իրականացված ուսումնասիրության հետազոտված խնդիրներից էր նաեւ երիտասարդների մոտեցումները տարածաշրջանում մեր հարեւան երկրների (հատկապես Ադրբեջանի եւ Թուրքիայի) հետ համագործակցության ծավալման խնդրի ուսումնասիրումը, ինչպես նաեւ այն հարցը թե որ երկրների երիտասարդության հետ են ցանկանում առավելապես շփվել հայ երիտասարդները:

